



Հարգելի՛ ընթերցող.


ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>*

*Էլ. փոստ՝ [info@armin.am](mailto:info@armin.am)*



# ԱՅՐԵ-ԼԻՎ

Հայերեն . պատմերեն  
և աղբաբեզմուներեն  
խաչերի ժաղավածու

Երևան .. Անշնորական գրուշ ..  
1987

# ԱՅՐԵ-ԼԻՎ

խաչերի ժաղավածու

Երևան .. Անշնորական գրուշ ..  
1987

Աշխատասիրությամբ՝  
Հ. ԲԱԽՉԻՆՅԱՆԻ

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ

Ավելի քան 130 տարի է, ինչ բանասիրական, գրականագիտական միտքը ուսումնասիրում է Սայաթ-Նովայի բազում անհայտներով ու առեղջածներով լի կյանքն ու գործը: Բազմամյա որոնումների և հետազոտությունների ընթացքում սայաթնովագիտությունը ծշտել է աշուղդանաստեղծի կենսագրության որոշ հարցեր, առկա տվյալների հիման վրա կատարվել են մի շարք հավանական ենթադրություններ ու վարկածներ: Ցուրաքանչյուր սերունդ իր ժամանակի գրականագիտական-տեսական մտքի դիրքերից փորձել է մեկնաբանել ու արժեքավորել բանաստեղծի գրական ժառանգությունը, բացահայտել ներքին շերտերը...

Հարություն (Արութին) Սայաթ-Նովան ծնվել է 1722 թվականին (ավանդաբար՝ ընդունված է 1712-ը), Զարթիի մայրաքաղաք Թիֆլիսում: Նրա հայրը՝ մահտեսի Կարապետը (ծագումով՝ աղանացի), 18-րդ դարի սկզբներին Հայեափից գաղթել է Թիֆլիս և այստեղ ամուսնացել հավաքարցի Սառայի հետ (ծագումով՝ սանահնեցի): Երբ լրանում է Արութինի 12 տարին, նրան հանձնում են արհեստի (ջուկակության). Երկու տարի անց արդեն շնորհալի պատանին դառնում է հմուտ արհեստագործ: Մասուկ հասակից Արութինը կապում է նաև երգ-երաժշտությանը, սովորում է նվազել մի քանի լարային գործիք: Ապագա բանաստեղծի նախնական կրթությունը, ըստ երևությունից, սահմանափակվում է տառածանաչությամբ և այն տարրական գիտելիքների լուրացմամբ, որ կիսաճորու (գելիսի) պատանին կարող էր ստանալ ընտանիքում կամ այն ժամանակված Թիֆլիսի հայոց դպրատներից մեկում: Հետագալում նա իր հմացությունը խորացնում է հիմնականում ինքնակրթությամբ, իսկ երբ արդեն նվիրվում է աշուղական արվեստին, համապատասխան գիտելիքներ ու փորձ է ծեռք բերում իր փիր-ուստաղից՝ վարպետ-ուսուցիչը: Մի քանի որոշակի է, որ Սայաթ-Նովան իմացել է երեք այլորեն (հայկական, վրացական, արաբական) և տիրապետել առնվազն չորս լեզվի (հայերեն, վրացերեն, թուրքերեն, պարսկերեն):

Մի հավանական ենթադրությամբ: Սայաթ-Նովան պատանի հասակում (մեր հաշվումներով՝ 1736—1741 թթ.) գերի է տարվել և մինչև տասնինը տարեկան հասակը դեգերել Արևելի որոշ երկրներում: Գերեվարության նման դեպքության համախառնական ավարառությունը կողմից պարբերաբար ասպատակվող Քարթիի տարածքում: Հավանական է նաև այն կարծիքը, որ պատանի Արութինը, ըստ երևություն որպես երգիշ-նվագածու, մասնակցել է նաև Նադիր-Շահի կազմակերպած հնդկական արշավանքին (1738—1739 թթ.): Դրանից մի քանի տարի անց, 1741—1742 թթ. միջև, Արութինին փրկազնում է արքայազն Հերակլը և ընդունում է նրան վրացական արքունիք որպես երգիշ-երաժիշտ: Այստեղ էլ հենց քանամյա Արութինը սիրահարվում է վրաց Թեյմուրազ Բ արքայի դուստր (Հերակլի ըռույր) Աննա Բատոնիշվիլուն և միաժամանակ սկսում է ստեղծագործել՝ վրացերեն ու աղբեցաներեն, ըստելով Սայաթ-Նովա աշուղական մականունը՝ (բառացի՝ Պրսկանի թոռ):

«Քըսան տարուց, էշիս ընկած, լալ կըծախեմ սովորաբին...»

Վկայել է բանաստեղծը իր աղբեցաներեն ինքնակենսագրական երգում և նույնը հաստատել նաև հայերեն խաղերից մեկում: Ուշագրավ է, որ Սայաթ-Նովայի ինքնագիր երգարանում (Դավթար) ամենավաղ թվակիր խաղը գրված է 1742 թվականին, երբ բանաստեղծը եղել է քան տարեկան:

**Սայաթ-Նովա**  
**Ա 181 Խաղերի ժող. (Սայաթ-Նովա. /Աշխատասիրութ.՝ Հ. Բախչինյանի), — Եր.: Սովետ. գրող, 1987.—284 էջ:**

Ժողովածուն ընդգրկում է XVIII դարի հայ խոշորագույն աշուղդանաստեղծի Սայաթ-Նովայի ողջ գեղարվեստական ժառանգությունը:

Ներկայացված են երգչի հայերեն խաղերի ընագրերը և վրացերեն ու աղբեցաներեն երգերի գեղարվեստական թարգմանությունները՝ թիֆլիսահայ բարբառով:

Հրատարակում է բանաստեղծի ծննդյան 275-ամյակի առթիվ:

Ա 4702080100 (188)

705 (01) 88

ԳՄԴ 8421

© «Սովետական գրող» հրատարակչություն, կազմելու, թարգմանելու, առաջարանի, բառարանի և ծնակորման համար, 1987

Մինչև երեսուն տարեկան հասակը Սայաթ-Նովան ուսանում և հմտանում է իր բարդ արվեստի մեջ և դառնում է վարպետ աշուղ՝ մտնելով մրցասպարեզ: Դա հանգուցային շրջան էր բանաստեղծի կյանքում: Այս ժամանակ է, որ նա, իր հսկ վկայությամբ, սկսում է ստեղծագործել նաև մայրենի լեզվով: Նույն այս ժամանակ, հանգամաների բերումով, բանաստեղծի սերը ոլորդական ըլթացք է ստանում, և ծակատագրի դաժան հարվածը նպաստում է հանձարեղ երգչի մի շարք գլուխգործոցների ստեղծվելու:

Լինելով վրաց Հերակլ Բ թագավորի հովանափրյալ՝ Սայաթ-Նովան որպես ժողովրդասեր բանաստեղծ իր երգով ու երգիծական սուր խոսքով նպաստում է առաջադեմ միապետի քաղաքական ծրագրերի իրագործմանը: Ըստ այդմ, արքունական բանաստեղծը վաստակում է հոգեսոր ու թագաղական դասի ներկայացուցիչներից շատերի թշնամանքը: Վերջիններս նշակակ դարձնելով նրա հանդուզն սերը արքայաքրոջ հանդեպ, ամբաստանում ու վարկաբեկում են նրան Հերակլի առջև և հասնում այն բանին, որ 1752 թվականին երեսնամյա երգիչը վտարվում է արքունիքից:

Շուրջ երկու տարի, մինչև 1754 թվականի ապրիլ ամիսը, արքունական երգիչը գտնվում է վտարման մեջ: Սակայն թագավորին ուղղված աղերսագրերով կարողանալով ցուց տալ իր անմեղությունը, Սայաթ-Նովան վերստին ընդունվում է արքունիք, որտեղ շարունակում է գործել 1754 թվականի ապրիլից մինչև 1759 թվականի կեսերը: Դա բանաստեղծի ստեղծագործական կյանքի ամենաբեղուն շրջանն էր, եթե անհավասար ու անհասանելի սիրո տառապանքից ծնվում են նրա լավագույն երգերը: Այս շրջանում առավել սուր շեշտեր է ստանում բանաստեղծի բողոքի ծալից, որն արդեն երբեմն կամա թե ակամա ուղղվում ու խոցում է նաև նրա հովանափոր միապետին՝ Հերակլ արքային: Որպես ժողովրդից եւած մեծ ու ծշմարիտ բանաստեղծ Սայաթ-Նովան չէր կարող ծառայել աշխարհի հղորներին, քանի որ կոչված էր պաշտպանել «խիդի», նաշարի, տնանգի» դատը, լինել «խալիսի նոցար»: Բնականաբար նման բանաստեղծի առկայությունը թե՛ արքունիքում և թե՛ հասարակութան մեջ վտանգավոր էր, ուստի և պատահական չէ, որ նրան ոչ միան երկրորդ անգամ վտարում են պալատից, այլև ստիպում են հազնել հոգնորականի սրբ:

Եւ աղայաթ հոււրմի-հե՛քի, սուլը ի՞նչ է, ա՛սա ինծի,  
Վուր հացըըրի իմ չուգեցած սիի ու սուր լիքասըն ինծի:—

Այսպես հայերեն խաղերից մեկում դառնորեն բողոքում է երգիչը իրեն բոնությամբ քահանա դարձնող Հերակլ արքայի դեմ և նույնը երկրորդում վրացերեն հայտնի խաղի մեջ:

Միկ կարայում սըքվորութիւն չիմ ուզու:

Կենսասեր բանաստեղծի համար աշխարհիկ կյանքից հեռանալը հիրավի սուր ու սգվորություն էր, քանի դա նշանակում էր բաժանում թե՛ սիրած կոչքից, որ նրա հիմնական ներշնչանքի աղբուրն էր և թե՛ նույնքան սիրելի արքեստից, որ ստեղծվում էր այդ ներշնչանքով:

Սայաթ-Նովան քահանա է օծվում 1759 թվականի կեսերին: Հատկանշական է, որ Ռաքթարում ամենաուշ թվակիր խաղը այդ տարվա ապրիլի սկզբին գրված «Աշխարհս մե փանջարա ե» հայտնի երգն է, որ հոգնած-բեզարած բանաստեղծը ինքը ասես հրաժեշտ է տալիս աշխարհին: 1759 թվականը ևս շրջադարձային է Սայաթ-Նովայի կյանքում: Պալատից վտարված և քահանայութան բլուարտված երգիչը, որ դեռ 37 տարեկան էր, ամուսնում է լոռեցի (այգեթասցի) Սարմարի հետ, որից ունենում է չորս զավակ (Մելիքսեթ, Օհան, Սարիհամ, Սառա): Բայց խաղաղ ու հանգիստ չի անցնում նաև ամուսնացյալ քահանայի կյանքը: Ստեփանոս անունով վերակրութան Սայաթ-Նովան նույն այդ ժամանակ վտարվում է նաև Վրաստանից: 1761 թվականին արդեն նա Պարսկաստանի Գիլան նահանգի Էնգելի նավահանգստում է, ուր սպասավորում է տեղի հայոց եկեղեցում: Այստեղ նա գրագրում է Գրիգոր Նարեկացու «Մատեան Ոլորդգործեան» երկը. մի աշխատանք, որն, անտարակույս, այդ ժամանակ նրա հոգեվիշակի լավագույն արտահայտությունն է եղել: Մի քանի տարի անց Սայաթ-Նովան—Տեր Ստեփանոս ուղարկվում է Զաքարայալի շրջանի Կամի հայաբնակ ավանը: Այստեղ էլ նա շարունակում է զբաղվել գրչությամբ՝ ընդորինակելով աստվածաշնչան որոշ գրքերի և տոմարա-

կան աշխատությունների մի ժողովածու: Կրոնավորության տարիներին Սայաթ-Նովա—Ստեփանոսը, անշուշտ, ոչ նախկին արդյունավետությամբ ու ոգեշնչումով, շարունակում է բանաստեղծել: Ինչպես գրում է Պարույր Սևակը. «Ռժվար թե Սայաթ-Նովայի նման մեկը ի վիճակի լիներ միանգամից և ընդմիշտ վերջ տալու իր ստեղծագործական մտքին, միանգամից և առմիշտ խցելու իր կյանքի պողոթկուն ակունքը»<sup>1</sup>: Հիրավի, այլ աղրուղիներից մեզ հասած սայաթնովյան խաղերի մի մասը, ինչպես ցուց է տալիս դրանց քննությունը, վերաբերում է երգչի կրոնավորության շրջանին:

1768 թվականին վախճանվում է Սայաթ-Նովայի կինը՝ Մարմարը: Գործող եկեղեցական օրենսդրության պահանջով Սայաթ-Նովա—Տեր Ստեփանոսը քահանան ընդունում է կուսակրոնություն, որպես Հաղպատականքի միաբանության անդամ: Սակայն քանի որ այդ ժամանակ Հաղպատի ս. Նշան վանքը արդեն ավեր ու ամայի էր, վանքի առաջնորդը իր միաբաններով հանդերձ բնակվում էր Թիֆլիսում, Բերդի մեծ եկեղեցում (ս. Գևորգ), որ Հաղպատի թեմի առաջնորդարանն էր: Այդ եկեղեցու խցերից մեկում պիտի ապրեր նաև աբեղա Ստեփանոսը, մինչև հարմար առիթ լիներ Հաղպատ մեկնելու համար: Այդ առիթն ստեղծվում է մոտ տասը տարի հետո: 1778-ին աբեղա Ստեփանոսը վանքի առաջնորդ Աբրահամ Վարդապետի և մյուս միաբանների հետ փոխադրվում է Հաղպատ, որտեղ ստանձնում է լուսարարի պաշտոնը: Ժողովրուի մեջ տարածված է եղել հետևյալ հայտնի երկտողը.

Հաղպատու լուսարար Սայաթ-Նովեն իմ.

Սե կանթեղիս վառելու ծեթ չունիմ:

1786 թվականի սկզբներին լեզգիների նոր արշավանքի հետևանքով վերստին ամայանում է Հաղպատը, և Սայաթ-Նովան վանքի միաբանության հետ կրկին հաստատվում է Թիֆլիսում, որտեղ ապրում է մինչև 1792 թվականը:

Որոշ ժողովրդական ավանդությունների վկայությամբ Սայաթ-Նովան կրոնավորության տարիներին երեւմն-երբեմն զաղտնաբար շարունակել է մասնակցել աշուղական մրցավեճերին և ուրախ հավաքություններին: Սայաթ-Նովան, որ բանաստեղծի հախուն խառնվածք և արքունական երգի ու ժողովրդական բանաստեղծի անցյալը է ունեցել, ըստ երևույթին, չէր կարող զերծ մնալ աշխարհից ու աշխարհիկից: մանավանդ որ կուսակրոնության շրջանում հիմնականում ապրել է այն կենսուրախ քաղաքում, ուր անց էր կացուել իր լավագույն տարիները:

1793—1794 թվականների միջև Հաղպատի առաջնորդ Պավիթ եպիսկոպոսը իր միաբանների հետ, որոնց թվում էր նաև Սայաթ-Նովան, կրկին վերապատում է Սալյարավանը: Այստեղ էլ հենց լոթանասուն անց բանաստեղծի հանդիպում է երիտասարդ սարկավագ Հովհան Խելչագիլու հետ: այդ հանդիպման մարմանան նկարագրությունը տրված է Հովհան Արքալազին «Կալմասորա» («Կալմասունք») գրքում:

1795 թվականի ամռանը պարսից շահ Աղա-Մահմադը վիթխարի բանակով արշավում է Անդրկովկաս: Գալիք պատուհանից խուսափելու համար Հաղպատի միաբանությունը վերահաստատվում է մայրաքաղաքի առաջնորդարանում: Վերադառնալով Թիֆլիս, Սայաթ-Նովան իր որդիներին ուղարկում է Մողոնկ, իսկ իսքը մնում է Բերդի եկեղեցում: Սեպտեմբերի 12-ին պարսից զորքը ներխուժում է Թիֆլիսի: Յոթօրյա ավերածությունների ու կոտորածի ժամանակ աշխատակում է նաև Ստեփանոս—Սայաթ-Նովան: Նրա խոշտանգված մարմինն ամփոփում են Բերդի եկեղեցու (ս. Գևորգ) բակում: Մեծ բանաստեղծի գերեզմանը այսօր դարձել է սրբազն ու մայիսին նշվում է համաժողովրդական Վարդապետունը...

<sup>1</sup> Սայաթ-Նովայի գրչագրած այս երկու ծեռագրերը այժմ գտնվում են Մաշտոցի անվան Մատենադարանում (ծեռ. № № 4270, 10838):

<sup>2</sup> Պարույր Սևակ, Սայաթ-Նովա, Ե., 1969, էջ 349:

Սայաթ-Նովայից պահպանվել են ավելի քան 120 ադրբեջաներեն, 30-ից ավելի վրացերեն և մոտ 70 հայերեն խաղեր: Իր այս գեղարվեստական ժառանգությամբ նա բացառիկ տեղ է գրափում երեք ժողովուրդների գրականության մեջ:

Սայաթ-Նովան լավագույն համատեղում է աշուղին և բանաստեղծին. այսինքն՝ նրա մեջ խաչածները են ժողովրդա-գուսանական (աշուղական) և անհատական-բանաստեղծական տարրերը: Ինչպես բոլոր աշուղները, Սայաթ-Նովան սիրեցել ու խարսխաբանել է, օգտագործելով աշուղական բանարվեստ ու երաժշտությունը: Բայց նա սոսկ աշուղական երգերի ու մոտիվների մշակող-ձևարար չէր, այլ ստեղծել է իրեն և միայն իրեն բնորոշ պատկերներ, դրանց մեջ զնելով իր անձնական խոր ներշշանքը և ապրումները, իր ներաշխարհը. իր ազգային ոգին ու անհատականությունը: Սայաթ-Նովան առաջինը և ամենից ավելի լավ ինքն է խոսել իր այդ անհատականության—ուրիշության մասին՝ գրելով իր ամենահանրահայտ տողերը.

Ամեն մարթ չի կանա խըմի՝ իմ ջուրըն ո՛ւրիշ ջըրեն է.

Ամեն մարթ չի կանա կարրաւ՝ իմ գիրըն ո՛ւրիշ գըրեն է...

Որպես բանաստեղծ Սայաթ-Նովան խոր կապերով առնչվել է իր հեռավոր ու մերձավոր նախորդների գրական ավանդություններին և իր բարերար ազդեցությունը թողել հետագա շրջանի հայ, վրաց և ադրբեջանական գրականության վրա:

Սայաթ-Նովայի ստեղծագործությունը ընդգրկելով լեզվական երեք համակարգ, ներկայացնում է որպական-գեղարվեստական տարրեր մակարդակներ: Դրանք ունեցել են նաև որոշ չափով տարրեր կիրառական նշանակություն: Լինելով վրաց արքունիքի բանաստեղծը, Սայաթ-Նովան ինչ-որ չափով տուրք է տվել այն պալատական-ներբողական ոժին, որն ընդունված էր պարսկական պալատական բարերի ազդեցության տակ գտնվող վրաց արքանիքում: Նա վրացերեն է գրել նաև իր զարդարված պարսկական հաղերի մեջ մասը, որոնք հիմնականում հորինվել են՝ պատասխան տալու օրվա խնդիրներին: Որոշ չափով տարրեր է նաև Սայաթ-Նովայի վրացերեն սիրեցը: Արքունական բանաստեղծն իր սիրած կնոջ հետ հաղորդակցվել է նրա մայրենի լեզվով՝ իր վրացերեն սիրեցից անմիջականորեն ուղրելով նրան: Ըստ այդմ, այդ երգերն ունեն առավել նեղ-անձնական, մտերմիկ, այսպես ասած՝ «նամակագրական» բնույթ:

Ադրբեջաներեն խաղերը, ավելի քան վրացերեն ու հայերեն երգերը, գրված են աշուղական բանարվեստի կաղապարներով և մեծ մասամբ ստեղծված են աշուղական մրցավեճերի համար: Ուստի և ալստեղ Սայաթ-Նովան ավելի շատ աշուղ է, քան բանաստեղծ: Մինչեւ նա կատարայի աշուղ-բանաստեղծ է հայերեն խաղերի մեջ: Ալստեղ նրա վրձնահարվածներն ազատ են ու վստահ, գոլուեր՝ շենշող ու շացուցիչ, զգացմունքը՝ անմիջական ու թրթուն: Նրա հայերեն սիրեցը նման է անմնացորդ ինքնայրման, խրատական խոսքը գերծ է ծանծրալի խրատաբանությունից, բողոք ցասկոտ է և տառապանքը՝ վարակիչ: Ալստեղ նրա տաղանդը դուրս է հորդում աշուղական կաղապարներից, և անձնական զգացմունքը ծեռք է բերում ընդհանրական, համամարկային արժեք: Անշուշտ, որոշ վրացերեն և ադրբեջաներեն երգեր կարող են որպահպես գերազանցել որոշ հայերեն խաղերի, բայց, ընդհանուր առմամբ, հայերեն երգերն իրենց գեղարվեստական արժեքով անհամեմատ բարձր են վրացականից և ադրբեջանականից: Դրա պատճառը մայրենի լեզվի ընձեռած ստեղծագործական ազատությունն է, ազգային բանաստեղծական դրամավոր ավանդությունների օգտագործումը:

Որպես աշուղ-բանաստեղծ, Սայաթ-Նովան ունեցել է երկու հիմնական սնուցարան՝ բանահյուսություն և գրականություն: Նրա եռալեզու ստեղծագործությունը խարսխված է հոգևոր մշակութային հարուստ հիմքի վրա, որն այս կամ այն չափով ներառում է հայ բազմադարյա և բազմահարուստ ժողովրդական բանահյուսությունը, քիչսունեական-եկեղեցական գրականությունը, միջնադարյան հայ տաղերգությունն ու ժողովրդա-գուսանական քնարերգությունը, վրաց բանահյուսությունն ու գրականությունը, աշուղական բանարվեստը, ընդհանուր:

Ելմերվ ժողովրդի ծոցից, Սայաթ-Նովան ժառանգել է նրա կենսազգացողությունն ու ոգին, յուրացը և ադրբերի ընթացքում կուտակված նրա իմաստությունը: Արանով է նա դարձել հիրավի

մեծ ու ծշմարիտ ժողովրդական բանաստեղծ: Հիմնականում իր մեծ նախորդի՝ Նադաշ Հովսարանի քանարերգության միջոցով՝ Սայաթ-Նովան առնչակցվել է միջնադարի հայ աշխարհիկ տաղերգությանը՝ դառնալով նրա վերջին խոշոր ներկայացուցիչը:

Մեծ մարդասեր ու մարդեքու էր Սայաթ-Նովան, և այդ մարդասիրության մեջ է ամենից առաջ նրա ստեղծագործության կենդանության ու անմահության գաղտնիքը: Աշուղ-բանաստեղծի մարդասիրությունը, բնականաբար, առավել վառ արտահայտություն է գտել նրա ստեղծագործության լավագույն մասը կազմող սիրեցության մեջ: Թումանյանի խոսքը սամաց, այդ «հոյակապ սիրահարը» բռնված սիրո հրեհով», սիրո լուսի տակ է տեսնում մարդուն ու աշխարհը: Ուստի և մարդու կատարայի վիճակը այն գեղեցիկ կինն է՝ Գոզալը, որին սիրում ու գովերգում է նա: Սայաթ-Նովան երգել է հրական կնոջը՝ նրան հավասարեցնելով աստվածության, աստվածապաշտությունը փոխարինելով մարդապաշտությամբ: Սակայն որքան էլ նրա պատկերած կինը աստվածության ու կատարելության դրոշը է կրում, այսուհետեղ գեղեցկությամբ, որպես ընության զարդն ու գլուխգործոցը:

Սայաթ-Նովան մի կողմից օգտագործելով ու զարգացնելով ընդհանրական, ավանդական պատկերները, մյուս կողմից՝ իր բանաստեղծական վառ երևակալությամբ ստեղծելով նոր, ինքնատիպ, անհատական պատկերներ, կարողացել է ըստ ամենալի իր խոսքի ուժով վերատարդի կանացի կատարայի ու կենդանի գեղեցկությունը: Այլ կերպ ասած, նա յուրացը է իր նախորդ սիրեցուների լավագույն գեղարվեստական փորձը և հարստացը ու կատարելության հասցը կնոջ արտաքին գեղեցկության գովեզը, որ ի վերջո մի փառաբանություն-օրիներգ է՝ ուղղված մարդ-արարածին, մարդկային գեղեցկությանը: Երգչի պատկերած ու գովերգած կանացի դիմանակարը, անցյալի մեծագույն գեղանկարիների կտավների պես, այսօր էլ հուզում և հմայում է իր շենշող գուներով:

Սայաթ-Նովան ոչ միայն կնոջ գեղեցկության մեծ երգի է, այլև սիրո տառապանքի ու ողբերգության ինքնօրինակ արտահայտիչ: Նրա հոգում իշխող ամենամատքին զգացմունքը սերն է այն կնոջ հանդեպ, որին պատկերել ու աստվածացը է իր գովերգերում:

Ինչպես նկատել է Մ. Աբեղյանը, Սայաթ-Նովան իր սերը երգում է «զուտ անձնական շեշտերով: Այդ սերը մի հիմնական գաղափար չէ»<sup>2</sup>: Իր այդ անձնական զգացմունքները երգին արտահայտել է բանաստեղծական մեծ ուժով, համաժամանակա և կամամարդկային հնչեղությամբ:

Սայաթ-Նովայի սերը նաև տառապալից է ու ողբերգական: Հետևելով երգչի կենսագրության մեջ հայտնի դրվագներին և դրանց ուղղակի արձագանք սիրեցերին, տեսնում ենք, թե ինչպես աստիճանաբար վերանում է նախապես «սիրող ու տիրող» երգչի վայելքի ծարավն ու բերկանքի ծգուումը, տեղի տալով թախժին, վշտին, տառապանքին: Եթե Սայաթ-Նովայի սերը չունենար ողբերգական ընթացք, և նա մնար որպես սոսկ սիրո վայելքի, «փոխադուրն ըմբռնված», երջանիկ սիրո երգի, ինչպիսին անհիմ կերպով համարում են նրան որոշ ուսումնասիրողներ, ապա մենք չեինք ունենա այն մեծ ողբերգու-բանաստեղծին, որպիսին է իրականացնել Սայաթ-Նովան:

Իր խոռվահով հոգեվիճակները պատկերելիս մեծ սիրեցուն երբեմն կատարել է իսկական բանաստեղծական գյուտեր:

Որպան էլ ծանր ու անամոք է Սայաթ-Նովայի ցավն ու տառապանքը, որքան էլ անհուս են նրա սիրո ծիչերը, այնուհաները նրան բնորոշ չէ դառնալությունը ու մոայլ մելամադանը: Նա, ինչպես հրաշալիորեն բնութագրելու է Հ. Թումանյանը, «զգում է, որ երգում, վերցանում է ինքը, բայց մուստ է արի ու բարի, անշար ու անաշառ, վեհ ու վսեմ, որպես աշխարհի ու մարդու մեծ բարեկամ... Զայրացավ, բայց երբեք չչարացավ, ցավեց, բայց երբեք չանհիթեց»<sup>3</sup>: Սայաթ-Նովայի սիրող սիրուց այսօր էլ շարունակում է այրվել, առանց դառնություն:

<sup>1</sup> Հ. Թումանյան Սայաթ-Նովա հոդվածներ և ծառեր, Ե., 1963, էջ 27:

<sup>2</sup> Մ. Աբեղյան, Երկեր, հ. 7, Ե., 1970, էջ 540:

<sup>3</sup> Հ. Թումանյան, Սայաթ-Նովա, Ե., 1963, էջ 27:

պատճառող ծխի, լուս ու ջերմություն պարզելով իրեն մերժեցողին, շարունակելով իր «անվարծ նոքարությունը»:

Իր անհատական, բանաստեղծական ինքնատիպ քնարով երգելով սիրո տառապանքը, Սայաթ-Նովան կատարելության հասցրեց հայ սիրերգությունը, որ դարեր շարունակ մշակվել ու հարստացել էր հայ ժողովրդական և գուսանական երգերում ու միջնադարյան տաղերգուների ստեղծագործություններում: Նույնքան նշանակալից է հայ սիրերգուի դերը նաև վրաց և ադրբեցանական քնարերգության մեջ:

Սայաթ-Նովայի սիրո ողբերգության հիմքը իշխող սոցիալական ու դասային անհավասարությունն էր: Գիտակենով այդ, բանաստեղծը ծառացել է այդ անհավասարության և դրանից բխող հասարակական չարիքների դեմ: Ըստ այդմ մեր սիրերգուն վերածվել է նաև հասարակական արատները դատապարտող խարազանող բանաստեղծի՝ ստեղծելով սոցիալական բովանդակության մի շարք ուշագրավ երգեր: Իր ադրբեցաներն խաղերից մեկում նա ֆրիկան բողոքի ծայնով ներկայացրել է սոցիալապես անհավասար հասարակության վիճակը.

*Սարթ կա ուրախ, մարթ կա տըխուր ու փոշման.*

*Մեկին մըսիսալ, Էն մեկին՝ հինգ բաթման...*

*Վուրըն ախկատ, վուրըն օսկով մե զանգին,*

*Վուրին գինի, վուրին աղոս մե բանգի...*

*Մեկին դամ ու վայիլք, մեկին՝ ցավ ու սուր...*

Այն իրականության մեջ, որտեղ իշխում են չարիքը, ոտնահարվում են մարդկային բարոյականության նորմերը, բարոյալքում է ողջ հասարակությունը: Այդ արատավոր հասարակության դեմ դատ է բացում մարդասեր բանաստեղծը.

*Սարթուս էիթիբար չըմընաց, դարի ծեռնեմեն դադ կոնիմ,*

*Դիփ խառնակիչ ու ավիրող չարի ծեռնեմեն դադ կոնիմ:*

Երբեմն Սայաթ-Նովան հասարակական ու մարդկային արատներին անդրադարձել է իրեն բնորոշ երգիծանքով, ծաղրութանակելով իրենց ծագմամբ պարթեցող անմիտ ազնվականներին, «քույնի խոտի պես» աճող չար ու նենգ մարդկանց, անկիթթա-անբաններին ու վախկոտ-պարծենկոտներին: Սակայն Սայաթ-Նովան չափազանց զգայուն լինելով իր անծնական ու հասարակական ցավ ու վշտերի հանդեպ և ունենալով առավել ողբերգական խառնվածք՝ ավելի շատ հակված է եղել ողբալու: Անծնական և հասարակական ցավերի համախառն-միաձուլվ ողբը հաճախադեպ երևույթ չէ քնարերգության պատմության մեջ: Սայաթ-Նովան ստեղծել է այդ կարգի մի քանի խաղեր, որոնց մեջ աչքի է ընկնում հատկապես «Աշխարս մե փանջարա ե» հայտնի երգը:

Չար ու արատավոր աշխարհում մարդասեր բանաստեղծը ստանձնում է նաև իրատառութարոյականությունը: Սայաթ-Նովայի բարոյագիտական հայացքները ծնված են քրիստոնեական բարոյականության վրա և բխում են նրա հիմնական նորմերից: Սակայն բանաստեղծը աստված, վանք ու հոգի սիրելու, սրբակենցաղ լինելու ընդհանրական, քրիստոնեական «հոգեցահ» խրատներից զատ քարոզել է նաև բարոյական գեղեցիկը, բարին, որ գիտակցել է իր կենսափործով ու իմաստությամբ: Խոհա-խրատական բանաստեղծության մեջ էլ Սայաթ-Նովան փայլել է իր անհատականությամբ ու հումանիզմով և մինչև օրս էլ շարունակում է կատարել իր բարձր առաքելությունը:

Սայաթ-Նովան իր մարդասիրությամբ ու մարդերգությամբ, իր մեծ սիրով ու տառապանքով, անծնական ու անանձնական ողբերգությամբ ու բարոյախոսությամբ լինելով իր ժամանակի ժողովունդը, դուրս է եկել ժամանակի շավից, միշտ մնալով որպես «կենդանի ներկայություն» երեք ժողովուրդների կյանքում ու գրականության մեջ: Բայց նա մեկ կամ երեք ժողովը դիմականությունը չէ, այլ, ինչպես Վ. Բրյուսովը է ասել. «Իր հանձնիր ուժով դարձել է բովանդակ մարդկության սիրելին... Այսպիսի բանաստեղծներով, ինչպես Սայաթ-Նովան է,

կարող է և պետք է պարծենա բովանդակ ժողովուրդը. որանք երկնքի վեհ ընծաներն են, որ ուղարկվում են ոչ ամենքին և ոչ հաճախակի. որանք նախախնամության ընտրյալներն են որոնք օրինենք են դրոշմում իրենց դարի և իրենց հայրենիքի վրա»<sup>1</sup>:

\* \* \*

Սայաթ-Նովայի խաղերի ներկա իրատարակությունը ամփոփում է գուսան-բանաստեղծի ողջ գեղարվեստական ժառանգությունը: Հայերեն խաղերը որոշ բնագրային ծշտումներով վերահրատարակում ենք մեր կազմած ակադեմիական հատորից (Ե., 1984), փոխելով, սական, դրանց հաջորդականությունը: Այստեղ խաղերը դասավորված են այն հերթականությամբ, ինչպես երգչի ինքնագիր Շավիթարում է<sup>2</sup>: Ա հավելվածում ընդգրկված են այն խաղերը, որոնք պահպանվել են երգչի որոյն՝ Օհանի (Իվան Սերյոզով) կազմած ժողովածում<sup>3</sup>, իսկ Բ հավելվածում՝ այլ աղբյուրներից հասած խաղերը, որոնց մի մասը (հատկապես վերջին երկուաը) թերևս չի պատկանում Սայաթ-Նովայի գրչին: Ժողովածուի մեջ չենք ընդգրկել խաղերի տարբերակները, ինչպես և հետագայում կատարված բացահայտ իմիտացիա-նմանակությունները:

Կրացերեն և աղբյուրաներեն խաղերը ներկայացնում ենք Ս. Հասրաթյանի և մեր գեղարվեստական թարգմանությամբ: Ս. Հասրաթյանի թարգմանությունները նույն հաջորդականությամբ վերահրատարակում ենք նրա կազմած ժողովածուի վերջին իրատարակությունից (Ե., 1963): Դրանցից անմիջապես հետո խաղը դասավորությամբ ներկայացնում ենք մեր թարգմանությունները: Երգչի մեկ քառալեզու և երկու երկլեզվայ խաղերը, որոնք թարգմանել են Ս. Հասրաթյանը, ընդգրկել ենք աղբյուրաներեն երգերի բաժնում, ինչպես երգչի Շավիթարում է: Աղբյուրաներեն երգերի հիմնական բաժնում գետեղված են Շավիթարում պահպանված, իսկ հավելվածում՝ այլ աղբյուրներից հասած խաղերը:

Ժողովածուն ունի անվանացանկ և ընդարձակ բացատրական բառարան:

ՀԵՆՐԻԿ ԲԱԽՉԻՆՅԱՆ

<sup>1</sup> Ա. Բրյուսով, Հայաստանի և հայ կուլտուրայի մասին, Ե., 1967, էջ 38, 102:

<sup>2</sup> Այս ծեռագիրը գտնվում է Ե. Զարենցի անվ. Գրականության և արվեստի թանգարանում (Սայաթ-Նովայի ֆոնդ, № 1): Հմմտ. Սայաթ-Նովայ, Խաղեր, նմանականություն, Ե., 1963:

<sup>3</sup> ՍՍՀՄ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի Լենինգրադյան բաժանմունք (Վրաց ծեռագրերի ֆոնդ, ծեռ. Հ-21):



1

Շատ սիրուն իս, շախաթայի ասողին խար չիս անի.  
Անջաղ գըցիս եշխի մեշըն, հիդ կեհաս՝ քար չիս անի:

Եշխըն հե՞ստի կըրակ ունի՝ վո՞ւնց կու երվի, վո՞ւնց կերթա.  
Թեզուզ նընգնիմ ծովի մեշըն՝ հովնալու ձար չիս անի:

Բաս աշուղըն վո՞ւնց դիմանա էտ քու տըվաժ կեծակուն.  
Դուն ինքնակալ թաքավուր իս՝ բեհուբազար չիս անի:

Թե՛վուր սարերուն հանդիբիս, կու հալիս մումի նըման.  
Թե՛վուր քաղաք տիղ հանդիբիս, կու քանդիս՝ վար չիս անի:

Իսկի բեհուբազար չունի շախաթայի չասողըն.  
Ե՛նդու համա, Սա՛յաթ-Նովա, շատ ելթիբար չիս անի:

Էս դիվանի խիստ լավս է. ովոր սովրի, օղորմի աս: Հիմի գուգիմ, թե հայեվար ասիմ.  
ամեն աստուած: Յիս՝ մղոսու վուրթի Արութինս, պատուց ինչորի յարսուն տարին գլուխ որի  
ամենան խաղին, ամա սուրբ Կարապետի կարողութենով սովորեցա քամանչեն ու չոնգուրն ու  
(թ) ամբուրեն:

2

Դարդ մի՛ անի, ջա՞ն ու ջիգար, միտկըտ դիվաց չըտեսնե,  
Ա՛չկ խավրի, ա՛նգած խովանա՝ երեսըտ թաց չըտեսնե:

Վո՞ւնց արեգագըն շուղկըն տա, վո՞ւնց լուսինըն լուս անե.  
Ա՛վալ քու տեսնողըն միոնի՝ քիզ գըլսիբաց չըտեսնե:

Դուն գըլուխըտ մահի կու տաս, չիս էլ քիզիդ կու միոնիմ.  
Միր եղնեն թամամ աշխարըս սով քաշե՝ հաց չըտեսնե:

Թեվուր չըգամ ու չըտեսնիմ, հազար բաբաթ բան կոսիս.  
Քա՛շկա մարթ վո՞ւնց գա, վո՞ւնց խուսի, վո՞ւնց քի տըխրաժ չըտեսնե:

Աստուծու բերնեմեն առնիս մըխիթարիչ սուրփ հոցին.  
Ե՛լ վաղ միոնի Սայաթ-Նովեն՝ ծիդըտ գըցաժ չըտեսնե:

Էսպես դիվանի, լավ տեղ ասած, որն գրոց հայերեն տառ է, որն վրաց. թուրքերեն էլ  
ուզում էի հետն խառնել, բայց չխառնեցի:

**Անգամ արա բարիթավուր.**  
 Զընա՛, հիդըն խաղ մի՛ անի,  
 Յարի սիրտըն դաղ մի՛ անի,  
 Ետ կըրակըն չաղ մի՛ անի,  
 Չաղ շուռ արի  
 Յարտուն տարի.  
 Յարին բերամաղ մի՛ անի:

**Բերամաղ չըլի միզանից,**  
 Չըհիուանա անմիղ բանից.  
 Յարըն նազով հոցիս հանից.  
 Հանած ծառ է,  
 Եշխով վառ է,  
 Չի վախենա սովթան-խանից:

**Խանի պես դիվան իս անում,**  
 Շահզադի պես սան իս անում,  
 Ետ ինչ թավուր բան իս անում.  
 Բանըտ բանդ է,  
 Պոռշըտ դանդ է,  
 Քաղցըր լիզվով ջան իս հանում:

**Ջան չուսիմ յարի ծեռնեմեն,**  
 Հիվանդ իմ եշխի կըռնեմեն,  
 Դիդ ասիս ծուցիտ նըռնեմեն.  
 Նըռիտ օսկով,  
 Քաղցըր խոսկով  
 Կրակ իս վեր ածում բերնեմեն:

**Բերնիտ մեշըն լալ է, գո՛զալ,**  
 Հաքիտ զարըն ալ է, գո՛զալ,  
 Ետ ի՞նչպէս խիալ է, գո՛զալ,  
 Ետ խիալով նազ իս անում,  
 յա՛ր, ամա՞ն:

\* \* \*

**Նազ իս անում, իխտի՛ար իս,**  
 Հիդ աշխարիս բարե՛բար իս,  
 Հընդու եկած դալա՛մքար իս.  
 Պա՛լամ քաշած,  
 Զանս է մաշած,  
 Զանս հանեցիր, ջադո՛ւքար իս:

**Ջադո՛ւքար իս փել ու փանդով,**  
 Շիրազու շուշա իս դանդով,  
 Ալնաբանդ իս խաթաբանդով,  
 Զամ-հալիլա,  
 Լալ ու թիլա,  
 Զանս հանեցիր ետ փըրսանդով:

**Ետ փըրսանդով համ իս անում,**  
 Ռաստամազըտ նամ իս անում,  
 Աբա խաթըրըտ ջամ իս անում.  
 Զամ իս շինի,  
 Դոշտ է սինի,  
 Շամամնիրըտ դամ իս անում:

**Դամ ու դովրան իս համաշա,**  
 Ռաստա-դաստա մազըտ քաշ ա,  
 Հաքածըտ զար ու դումաշ ա.  
 Որ մաշ զարով,  
 Գու լա տարով,  
 Ով քիզի գուքա թամաշա:

**Թամաշա իս, վարթի ռանգ իս,**  
 Շով տեսած օսկու մահանգ իս,  
 Սանթուր ու քամանչա, չանգ իս՝  
 Բարակ ծեռնով սազ իս անում,  
 յա՛ր, ա՛ման:

\* \* \*

Սազ իս անում, դուր իս գալի,  
Բաղչի մեջըն շուր իս գալի,  
Փունչ մանուշակ նուր իս գալի.  
Նուր գովելի,  
Անպատմելի.  
Վարթի մեջըն շուր իս գալի:

Շուր իս գալի բջլբուկի պես,  
Հուտըտ գուքա սընբուկի պես,  
Սուփրի մեջըն թալգուկի պես  
Դաստա կապած,  
Ուհնին կըպած,  
Բաց իս էլի դուն գովի պես:

Գով իս կոկոր՝ տերիվակալ,  
Չիս թառամի՝ արիվակալ,  
Թաքավլոր իս բարիվակալ,  
Բա՛րով տամ քիզ.  
Մըտիկ տու միզ.  
ԶԵ թե ամսով՝ օրիվակալ:

Օրն ի օրըն շատանում իս,  
Էշխի մեջըն մոդանում իս,  
Սըրտի դարդըս հիդ անում իս.  
Հիդ արա, տի՛ս,  
ԹԵ թաբիր իս.  
Խիլքըն գըլխես հա՛ տանում իս:

Տարար խիլքըս, հելքան արիր.  
Բարակ միջկըտ սելքան արիր,  
Էտ կըրակով բիրյան արիր.  
Հալքաթ մահիս հազ իս անում,  
յա՛ր, ա՛ման:

\* \* \*

Հազ չունիմ խային յարեմեն,  
Չիս շոգվում անգին քարեմեն,  
Թաք չանցկենաս իղրարեմեն.  
Իղրար անիս,  
Հոքիս հանիս,  
Պըրծընիմ ահուզարեմեն:

Ահուզար իմ քաշում, ամա՞ն,  
Քիզնից ուրիշ չունիմ գուման.  
Շուցիտ մեջըն չայիր-չիման,  
Չի՛ման ասիմ,  
Մուրախսաս իմ,  
Սըրտումս ունիմ իղրար-իման:

Իղրար-իմանեն չանցկենամ.  
Առանց քիզ մին օր վո՞նց կենամ.  
Բերնումըս ոընիմ սանձ՝ կենամ.  
Սանձահարիմ,  
Սիրտըս վարիմ'  
Ասիընանալու գանձ կենամ:

Գանձ իս սիրով ու սիրեկան,  
Ղիմեթ ունիս անգին ական,  
Լալ ու ջավահիր պատվական.  
Պատիվ անիմ,  
Քանի չան իմ,  
Չուն աշխարս է անցողական:

Անց մի՛ կենա, թե հալալ իս,  
Մի մոր ծըժած, մի մոր դալ իս.  
Ուաբով ունիմ, թեգուզ հալիս,  
Չունցի իլլիմազ իս անում,  
յա՛ր, ա՛ման:

Իլրիմազը էս ե, ջանում,  
Օրըս հիդըտ կես ե, ջանում,  
Եշխըն Եստու պես ե, ջանում,

Ջանում, ջան իս,

Անձման իս.

Աշխարս ուս ու տես ե, ջանում:

Ուս ու տես արա, իմացի.

Մըտիկ արա աղ ու հացի.

Թաք իդրարին դըրուտ կացի.

Կաց իդրարին,

Ակիլ շարին,

Յիփ միուանիմ, վըրես լացի:

Լացիս, աչկըտ զայի անիս,

Դաստա ռեհան փայի անիս,

Արտասունքըտ չայի անիս.

Չայու ջուր իս,

Խիստ տըխուր իս.

Ադալաթըտ շահի անիս:

Շահի գուրիաթ թաբաղըն

Չի հարցընի դուզուն-դաղըն.

Վա՛ թե Ել չըխոսին վաղըն.

Վաղըն գուցամ,

Նըստիմ ու լամ,

Ասիմ բարիթավուր խաղըն:

Խաղ իս Էլի, Սայաթ-Նովա,

Դաղ իս Էլի, Սայաթ-Նովա,

Բաղ իս Էլի, Սայաթ-Նովա.

Գլուխըտ փիանդազ իս անում,

յա՛ր, ա՛ման:

Էսպես լավ բարիթավուր յարանա. Արութինի ասած:

Էսպես լավ բարիթավուր-յարանա, որ (ինչ որ) աշուղ օղլանի հետ պատահելու է, բոլորը  
սրա մեջ է գրած:

Ոիբա ու Ենգիդունիա, զարբար ու զար իս, գովե՛լի,  
Հընդու դիարեմեն Եկած զար-դալամքար իս, գովե՛լի,  
Շատ սովդաքար քիզ կու պըտո՞ն դուն անգին քար իս, գովե՛լի,  
Անտակ ծովի միշեն հանած անգին գովիար իս, գովե՛լի:

Յիփ դու բաղչեն սելրան կեհաս՝ ծովի նըման գուցա ալիտ,  
Գըլուխըտ պահելով արա՝ նամ չըդիբչի խաթունալիտ,  
Տեսնողըն հելրաթ կու մընա էտ քու սիրուն մահ-ջամալիտ,  
Աշխարումըն նուր դուս Եկած թազա նուզբար իս, գովե՛լի:

Արի միզիդ մե լա՛վ կացի, դուրբան ըլիմ մուրվաթումըն.  
Ման Եկա յիրգիր՝ չըտեսա էտ քու նըման չուրաթումըն,  
Վո՛նց Հընդու դիարումըն կա, վո՛նց Փըռանգի սուրաթումըն.  
Քաշվիլ իս քարգահի մեշըն. ուրիշ թահար իս, գովե՛լի:

Թարիփըտ դավթար իմ արի, փիլ պիտի, վուր գիրքըն տանե.  
Դուն քու մըսկի հիդ մի՛ եհա, Էտ խիալըն մըսկետ հա՛նե,  
Մեշկըտ՝ հադիդեմեն քաշած սիրմա մավթուլի նըման է,  
Աշխարիս շըվաք իս անում՝ սալբու-չինար իս, գովե՛լի:

Յիս քիզանից չիմ հիուանա, թե չըհասնի մահիս վադեն,  
Յիփ միուանիմ, շա՛ղ տու վըրես դաստամազի թիլի շադեն.  
Հենչաք ըլի՛ ո՛ւրախ կենաս. Սայաթ-Նովեն առնե դադեն.  
Շատ մարթ կոսե, թե յար ունիմ, դուն ո՛ւրիշ յար իս, գովե՛լի:

Էս դաստա-բեղաստա երգի հանգով է:

## 5

Յիս մե ղարիբ բջլբովի պես, դուն օսկե ղափազի նըման.  
Երեսը դի վուտիտ տակըն՝ անցկաց փիանդազի նըման.  
Յա՛ր, քիզի խոսիլ իմ ուզում՝ շահի իլթիմազի նըման.  
Աշալիբ սուրիաթի տեր իս՝ ռանգըտ է գուլգազի նըման:

Յա՛ր, մըտիլ իս բաղչի մեջըն, աշալիբ սելրան իս անում.  
Շուլկըտ արեգակի նման է՝ տեսնողին հելրան իս անում.  
Զիգարըս կրակիս տըվի, երվում իմ՝ բիրյան իս անում.  
Վո՛նց մե գոզալ չէ ունեցի ետ քու արած նազի նըման:

Հենց իմացի, յա՛ր, քու դուլն իմ, թանգ հախով գընած չըրաղ իմ.  
Քու դըռանըտ նընգած ըլիմ, ով տեսնե, ասե՝ տուսաղ իմ.  
Էշխեմետ հիվանդացիլ իմ, վո՛նց միոնում իմ, վո՛նց թե սաղ իմ.  
Շովի պես ուրդան իմ տալիս, գըժվիլ իմ Արազի նըման:

Ով կու տեսնե, ջունուն կովի՝ բարգ երեսիտ խալ իս անում.  
Ե՛լ ջուքամըն դո՛ն կու քաշիս, ջուն մահիս խիալ իս անում.  
Յա՛ր, իս քիզ բարով իմ տալիս. ջուռ իս գալի՝ դալ իս անում,  
Շունքի խոսկըտ անց է կենում բելլու շահ-անդազի նըման:

Սայաթ-Նովեն ասաց՝ գուկամ, չիմ լացլի, թե ծար ունենամ.  
Ել իի՞ն կու քաշիմ ես դուսեն՝ թուղլի ահուզար ունենամ.  
Յա՛ր, քիզ վըրեն արք ունենամ, մե լավ իխտիար ունենամ՝  
Առնում, տանիմ մեջիսնիրըն՝ օսկեջըրած սազի նըման:

Ես Արութինի ասած է դազալի:

Ես երկու երգերը մի հանգով են, ովոր սովորի, Դոստիի երգի ծայնով թող ասե, թե որ չի-  
մանաս, հարցրու, թե Գոզալլար լընաղինա դաստա-բեղաստա թարփանուր:

## 6

Յիս քու դիմեթըն չիմ գիղի՝  
Զավահիր քարի նըման իս.  
Տեսնողին մեջլում կու շինիս՝  
Լեյլու դիդարի նըման իս:

Աշխարումըս իմըն դո՛ն իս,  
Բեմուրվաթ իս, մուրվաթ չունիս,  
Պըռոշնիրըտ նաբաթ ունիս՝  
Դանդ ու շաքարի նըման իս:

Դադա պիտի, թարիփտ ասե,  
Ակուեթըտ յաղութ-ալմաս է,  
Ռանգըտ փըռանգի ատլաս է՝  
Զար-դալամբարի նըման իս:

Մազիրըտ նըման ուեհանի,  
Դուն ուրիշ խիալ մի՛ անի,  
Ռա՛հմ արա, հոքիս մի՛ հանի՝  
Մուրվաթով յարի նըման իս:

Վո՛նց դիմանամ էսչափ չարին՝  
Աշկեմես կաթում է արին.  
Սա՛յաթ-Նովա, նազլու յարին  
Գընած նոցարի նըման իս:

Եսպես Արութինի ասած թասլիք:

Ուստի՝ գուքաս, դարի՛ք բըլեռվ,  
Դու մի՛ լացի, լի՛ն իմ լալու.  
Դու վարթ պըտու, լի՛ն գոզալին.  
Դու մի՛ լացի, լի՛ն իմ լալու:

Արի՛, բըլեռ՛վ, խո՛սի բառըն,  
Օխնըվի քու էկած սարըն.  
Քի վարժն էրից, ինձ՝ իմ յարըն.  
Դու մի՛ լացի, լի՛ն իմ լալու:

Ման իմ գալի դիդարի հիդ,  
Վունց դարիք բըլեռվ խարի հիդ.  
Դու վարժի հիդ, լիս յարի հիդ.  
Դու մի՛ լացի, լի՛ն իմ լալու:

Սալբով նըման կանանչ իմ,  
Ե՛կ, խո՛սի, ծալիստ ծանանչ իմ,  
Դու վա՛րթ կանչե, լիս յա՛ր կանչիմ.  
Դու մի՛ լացի, լի՛ն իմ լալու:

Դա՛րիք բըլեռվ՝ ծալնըտ մալում,  
Յիս ու դուն էրվինք մե հալում,  
Սալաթ-Նովեն ասաց՝ զա՛լում,  
Դու մի՛ լացի, լի՛ն իմ լալու:

Արութինի ասած երկու թասլիք:

Խոսկիրըտ մալում իմ արի՛ անարատ, մաքուր իս, ա՛խպեր.  
Օսկե փարշումըն լըցըցած անմահական ջուր իս, ա՛խպեր.  
Խըմողըն վո՛նց կու կըշտանա՝ դուն կաթնե ախպուր իս, ա՛խպեր.  
Աշխարքըն ծով՝ դուն մեշըն նավ, ման գուքաս, փըրփուր իս, ա՛խպեր,  
Վախում իմ, թե ինձ ել էրիս՝ անհանգչիլի հուր իս, ա՛խպեր.

Հուր իս՝ էշխով կըրակած,  
Խոսք իմ ասում առակաց,  
Իմ սիրմա-էրծաթ ա՛խպեր,  
Օսկեջըրով վարակած:

Աշաք միզիդ ինչ իս կամում, ինչ է ասում ետ քու փալըտ.  
Խսկի չի՛ս գալի, չի՛ս ասում «Աշաք ինչ է, բա՛նդա, հալըտ».  
Ա՛ստված վըկա, սիրտըս էրից շելրանի նըման ման գալըտ.  
Յիս քիզանից չի՛մ հինանա, թեգուզ դուս գա խաթուխալըտ.  
Թեգուզ սիրիս, թեգուզ ատիս, թե գուզե համբուրիս, ա՛խպեր:

Համբուրիմ սիրով համբուր,  
Վունցոր խեշին է դաստուր.  
Ով քիզ խայան մըտիկ տա՝  
Դառնա էրկու աշկով կուր:

Քիզիդ բաս ո՞վ կարա բըռնի՛՝ հազար բաբաթ բառ իս էլի.  
Խոսկիրըտ անգին ջավահիր՝ Ասմավուրու ծառ իս էլի.  
Հուտըտ աշխարըս է զավթի՛ բալասանի ծառ իս էլի.  
Չըկա քիզ պես էշխի ջունուն՝ կըրակ նընգած վառ իս էլի.  
Ծատ մարթիք քիզիդ կու էրիս. Ետ լեզվի տեր վուր իս, ա՛խպեր:

Վուր լիս ասիմ՝ իմա՛ցի,  
Էշխի մեշըն հիմացի.  
Ինձ հուրյան-բիրյան արիր,  
Ասում իս, թե դիմացի:

Խիւթը գըլխեմես տարիլ իս, միրթ ու թոքըս զարդ իս արի,  
Սիրտըս փուրումըս սպանեցիր, Եշխըտ քիզի նարդ իս արի,  
Ինձ հուրյան-բիրյան շինեցիր. աջա՛բ դուն էլ դարդ իս արի,  
Յիփ քի սիրով մեհման անիմ, վի կացի, թե մարդ իս, ա՛րի,  
Ուրախա՛ցի, ուրախացո՛ւ. չունքի միզ մոդ հուր իս, ա՛խպեր:

Հուր իս, սիրով սիրական,  
Քիզի դուկուղ պատվական  
Հազար թուրլու կերակուր,  
Սուրփի գինի անապական:

Համաշա իմ լարի ծամփին կանգնած իմ՝ տալիս իմ դովա.  
Աշխարքըն աշխարով կըշտացավ, իմ սիրտըն քեզանից սով ա.  
Ցըրտ՝, շա՛ղ տու վուտիտ տակըն, Եշխետ դառա հավաջովա.  
Խոկի չի՛ս գալի, չի՛ս ասում. «Խիստ իս լալի, Սա՛լաթ-Նովա».  
Չըլի՛ միտկըտ մոլորվիլ է, սըրտումըտ պըխտուր իս, ա՛խպեր.

Պըխտուր սիրտըտ պարզ արա,  
Բըլբուլի պես փարզ արա,  
Աստըծուն փա՛ռք, Թաղկումն իս՝  
Դարդըտ Խանին արզ արա:

Արզ իմ անում հազարին,  
Հա՛ զարբարին, հա՛ զարին.  
Սիրտըս լարալու արիր՝  
Աչկըս գուլա հա՛ զարին:

Հազարին հազար պիտի,  
Էրած սըրտին ծար պիտի,  
Յիս մե Եշխի ջունուն իմ՝  
Ինձ մե դողորու լար պիտի:

Յարի լիզուն բըլբուլ է,  
Դաստամազըն սըմբուլ է.  
Սալաթ-Նովեն լալիս է,  
Մակա՞մ դարիբ բըլբուլ է:

Էսպես մուխամմազ բայաթիով. Արութինի ասած:

9

Էսօր իմ լարին տեսա, բաղչի մեջըն ման գալով,  
Գեղինըն զարթարվեցավ իմ լարի օսկե նալով.  
Բըլբուլի պես պըտուտ եկա վարթի վըրա՝ ծեն տալով,  
Զունուն ելավ խիւթըս գըլխես, սիրտըս տըխուր, աչկըս լալով.  
Հուկս ուսիմ իմ ստիդողիմեն՝ միր դուշմանս ըլի էս հալով:

Յա՛ր, Էտ քու նազ ու դամզով ջանըս փել ու փանդ իս արի,  
Խըմիլ իս Եշխով շարբաթըն՝ պըռոշնիրըտ դանդ իս արի.  
Խաթուխալով, քաղցըր լիզով շատ ինձպեսին բանդ իս արի.  
Տո՛ւր դանակըն, ինձի սպա՞նե. մի՛ ասի՛ ոիշխանդ իս արի.  
Չունքի մահըս լարիմեն է, թուղլի միոնիմ լավ գոզալով:

Տարին տասներկու ամիս մազիրըտ հուսած կուլի.  
Պըռոշեմետ միդր է կաթում, թողնիս՝ յախետ թաց կուլի.  
Գարնան շընչի [ծաղկի] նըման կարմիր վարթըտ բաց կուլի.  
Ինչ օքուտ է քու բաղմընչուն՝ դարիբ բըլբուլն լաց կուլի.  
Մուրվաթ չունիս, պըտուտ գութա բաղչի վըրա՝ ծըկծըկալով:

Յիփ քու սուրաթըն կու քաշին՝ նաղշումըն շընուք կու տաս.  
Կու վըռվըռաս ծըրաքի պես՝ սաղչումըն շընուք կու տաս.  
Մըշկով լիքըն բըրոյի պես՝ թաղչումըն շընուք կու տաս.  
Բաց կուլիս կարմիր վարթի պես՝ բաղչումըն շընուք կու տաս.  
Բամին ոիրչի փոթլիտ մեչըն՝ հուտըտ գութա վըռվըռալով:

Յիս էլ որիշ լար չունիմ, էս գըլխեն վա՛ղ իմացի.  
Ա՛նգած արա, մա՛տաղ իմ քիզ, էս խոսկըս սա՛ղ իմացի.  
Մըտի՛կ արա քու ստիդողին՝ տուզ-նամագ-ա՛ղ իմացի.  
Սալաթ-Նովին մի՛ շըգրեցնի՝ Եշխեմետ տուսաղ իմացի.  
Խիւթըս գըլխեմես տարիլ իս քու, բեմո՛ւրվաթ, գարդիշ տալով:

Էսպես լավ մուխամմազ, Արութինի ասած:

Գուգիմ ումբրըս հենց անց կացնիմ՝ օրըս մունաթ չըքաշե.  
Թեզուզ հազար դարդ ունենամ՝ դարըս մունաթ չըքաշե.  
Ղաստ անիմ, բարու հանդիբիմ՝ չարըս մունաթ չըքաշե.  
Գըլուխըս չարեն ռադ անիմ՝ սարըս մունաթ չըքաշե.  
Երեսըս հայալու պահիմ՝ արըս մունաթ չըքաշե:

Հիռու տիղացեն գալիս իմ՝ խիթի զարար շահ իմ բերի.  
Հուզրես լիքն է անգին լալով, ջավահիքուն ահ իմ բերի.  
Հընդու միշեմեն դոս եկած դիմեթով մաթահ իմ բերի.  
Տեսնողըն թահրըն չի գիդի՝ մե հեստի քարգահ իմ բերի.  
Հեստի տիդ դուքան բաց անիմ՝ զարըս մունաթ չըքաշե:

Մե բիոըս Փըռանգի ատլաս է, տալիս է շովդ ու շափաղաթ.  
Մե բիոըն՝ զար-դալամքարի, տիդ ունե վունցոր մաքաղաթ.  
Մե բիոըս Զինումաշինին կու առնե թամամ, փարաղաթ.  
Մե բիոըն ենգիդունիա է, մե բիոըն՝ փարչալի խալաթ.  
Վո՛նց ծնիլ գուցե, վո՛նց կըտրիլ՝ կարըս մունաթ չըքաշե:

Մե բիոըն դըրմըզ ու զափուանգ, մե բիոըն էլ ջանջափիլ ա.  
Մե քանի բիոըս դարիչին, մե բիոըն էլ դարանփիլ ա,  
Բերնիրըն վըրա չէ գալիս, հակնիրըն է սիլա-սիլա.  
Աստակ ծովի միշեն հանած ակնիր ունիմ՝ լալ ու թիլա.  
Մարքարիտըս շադա-շադա՝ շարըս մունաթ չըքաշե:

Շատ մարթ եստունք կու իմանա, կոսե. «Հալբաթ սա զանգին ա».  
Չին գիդի, թե ուշկ ու միտկըս հազար մե բաբաթ հանգին ա.  
Մարիփաթով քաղցըր լիզուն դիփունի վըրա անգին ա.  
Սայաթ-նովեն ենդուր գուլա՝ գըլուխըն մահու ծանգին ա.  
Աստված սիրողն ինձ ազատե՝ լարըս մունաթ չըքաշե:

Սուխամմազ, Արութինի ասած:

Դուն էն հուրին իս, վուր գեմի կու զավթե,  
Զունքի ինձ զավթեցիր խափով, նազա՞նի.  
Արիվիլք, արիվմուտ, հարավ ու հյուսիս  
Զըկա քիզի նըման չափով, նազա՞նի:

Շատ մարթ քու էշխեմեն կու դառնա լիզիդ,  
Արի մե ուա՞հմ արա, լա՛վ կացի միզիդ,  
Գուգիմ, թե համաշա դամ անիմ քիզիդ՝  
Սանթուրով, քամանչով, դափով, նազա՞նի:

Դարդիրըս շատացավ՝ ասիլ իմ ուզում.  
Աչկեմես արտասունք հոսիլ իմ ուզում.  
Համաշա, լա՛ր, քիզիդ խոսիլ իմ ուզում.  
Միրտս չէ կըշտանում գափով, նազա՞նի:

Հայալու իս՝ ադաբ ունիս, ար ունիս,  
Զերիտ դաստա կապած սուսանբար ունիս.  
Տո՛ւր, ինձի սըպա՞նե՝ իխտիար ունիս.  
Հենչաք ըլի՝ կենաս բափով, նազա՞նի:

Սայաթ-նովեն ասաց՝ արգ անիմ Խանին.  
Դաբով ունիմ՝ քու խաթրու ինձ սըպանին.  
Հենչաք ըլի, լա՛ր, գաս իմ գերեզմանին,  
Ամիս խուղըն վըրես ափով, նազա՞նի:

Ղափիա-լարանա. Արութինի ասած:

Եշխըն վառ կըրակ է՝ երվելով գուքա.  
Շատ մարթ կոսե՝ յիս յարի հիդ ման գուքամ...  
Ես դարդեմեն ով չե քաշի՝ վո՞ւ քաշե.  
Ով յար սիրե, ել չասե թե՝ ջան գուքամ:

Շատ մարթ կա՝ են գըլխեն սըրտում ունե դամ.  
Բազի մարթ չե քաշի՝ եշխեմեն է խամ.  
Ինչ ասիս կոնիլ տա՛ սերն է անըսկամ.  
Հալվեցա, մաշվեցա. ել ի՞նչ ջան գուքամ:

Եշխըն վուր կա՝ հազար բաբաթ հանգ ունե.  
Ուշկ ու միտկըն կու քընեցնե՝ բանգ ունե.  
Բըռնածըն չի թողնի՝ դայիմ չանգ ունե.  
Եսդու համա խան հիդ կեհամ, խան գուքամ:

Թե դուն եշխի հիդ մանգալըն հարցընիս՝  
Չի դիմանա Ռոստոմ-Զալըն՝ հարցընիս,  
Թե բեմուրվաթ յարի հալըն հարցընիս,  
Ասում է թե՝ սուլթան գուքամ, խան գուքամ:

Սալաթ-Նովեն ասաց շատ ի ջանք դըրի.  
Մե բափա չըտեսա հում կաթնակիրի.  
Ովոր ինձ չի սիրի՝ յիս է՛լ չիմ սիրի.  
Մերըն սեր կու բերե՝ սիրեկան գուքամ:

Դափիա, եսպես աշուղ օղլանի օգութլամա. Արութինի ասած, լավն է:

Զենըտ քաղցըր ունիս՝ լա՛մզով կու խոսիս,  
Նա պահե քիզ, ումնոր ծա՛ռա իս, գո՛զալ.  
Մեչկըտ ջերանի է, ուանգըտ՝ շաքարի,  
Փոանգըստանու եկած խա՛րա իս, գո՛զալ:

Ղո՛մաշ ասիմ՝ շուրեղեն է, կու մաշվի,  
Սա՛լի ասիմ՝ ախըր մին օր կու տաշվի,  
Զե՛լրան ասիմ՝ շատ մարթ քիզիդ կու լաշվի,  
Բաս վո՞նց թարիփ անիմ՝ մա՛րա իս, գո՛զալ:

Թե մանիշակ ասիմ՝ սարեմեն կոսին,  
Թե ջավահիր ասիմ՝ քարեմեն կոսին,  
Թեվուր լուսին ասիմ՝ տարեմեն կոսին.  
Արեգագի նըման փարա իս, գո՛զալ:

Գուգիմ, թե համաշա դըռանըտ գամ ուխտ՝  
Աչկիրըտ, կա՛րմիր վարթ, նուր բացարած տուխտ,  
Լիզուտ գըրիչ ունիս, ծեռըտ՝ գուզազ թուխտ.  
Ժովեմեն դուս եկած զարա իս, գո՛զալ:

Սիրասիրմըտ սըրտիս մեչըն ցանեցիր,  
Նազ ու դամզով, լա՛ր, իմ հոքիս հանեցիր,  
Ես քու Սալաթ-Նովուն դո՞ւն սըպանեցիր.  
Գըլխիտ եկած դադեն առա յիս, գոզա՛լ:

Ուափիա. Եսպես լավ յարի վրա. Արութինի ասած է:

Շատ մարթ կոսե՝ յիս յարիմեն հասրաթ իմ՝  
Լելի-Մեջլումն էլ չէ էլի ես հալով.  
Մարթ պիտի համաշա բերանըտ տընդդե.  
Խոսկ իս ասում առակավուր-մասալով:

Լիզուտ քաղցըր ունիս՝ շաքար ու շարթին.  
Մազիրըտ ուհան է՝ փաթըթած վարթին,  
Քի զարթարած տեսնիմ հիդ ծաղկազարթին՝  
Հաքիլ ըլիս զար-զարթաբըն՝ խաս ալով:

Յա ինձ կորցըցեք, յա մե բան արեք,  
Խըփե՛ցեք, մե տիղըս մե նըշա՛ն արեք.  
Թեգուզ էստու համա քարասպան արեք՝  
Զի՞մ կըշտանում գոզալի հիդ խոսալով:

Աջար վո՞ւնց դիմանամ յիս էսչափ դարին,  
Աչկեմեն արտասունց դուս գուքա՝ արին,  
Օրըն իր շափաթով կարոտ իմ յարին,  
Վունցոր դարիբ բըլբու՝ վարթին տիսալով:

Խիլըս տարավ՝ շադուքարին չի՛մ տեսի.  
Բեմուրվաթին, բեհղրարին չի՛մ տեսի.  
Սայաթ-Նովեն ասաց՝ յարին չի՛մ տեսի.  
Սան իմ գալի, արտասունքըս հուսալով:

Դափիա. Էսպես վարսադ. Արութինի ասած մե սիրունի վրա:

Առանց քիզ ի՞նչ կոնիմ սոյբաթն ու սազըն.  
Զեռնեմես վեր կոժիմ չանգիրըն մեմեկ.  
Զունքի ուշկ ու միտկըս իրար շաղեցիր՝  
Փահմես կու հիոացնիմ հանգիրըն մեմեկ:

Մե դուգունըն էրկու դաղին ի՞նչ անե,  
Մե նոցարըն էրկու աղին ի՞նչ անե,  
Մե բաղմանչին էրկու բաղին ի՞նչ անե,  
Փելվանդ գուգե թազա տընգիրըն մեմեկ:

Դուրթ ին ասի փիր-ուստաքար-դաղիրըն.  
«Բաղ շինեցի, վարթըն քաղից վադիրըն»  
Զափեն յիս քաշեցի, սափեն՝ յաղիրըն.  
Ռաղիփեն էկավ միզ ես ուանգիրըն մեմեկ:

Առանց քիզ ի՞նչ կոնիմ աշխարիս մալըն.  
Զի՞մ անի քալագըն, չի՛մ անի դալըն.  
Կու հաքնիմ մազեղեն, կու հաքնիմ շալըն.  
Կերթամ ու ման գուքամ վանքիրըն մեմեկ:

Բըլքամ մե մարթ ուաստ զա, վուր ինձ խըրատե,  
Գոզա՛լ, քու էշխեմեն սիրտըս ազատե.  
Կանց յոթըն իմաստնասիրացըն շատ է  
Ես քու Սայաթ-Նովու բանքիրըն մեմեկ:

Արութինի ասած յարանա, յավ դափիա:

Աշխարհումըս ախ չիմ քաշի, քանի վուր ջա՞ն իս ինծ ամա.  
Անմահական ջըրով լիքըն, օսկե փընջան իս ինծ ամա.  
Նըստիմ, վըրես շըվաք անիս՝ զարբաք վըրան իս ինծ ամա.  
Սուլս իմացի, Ե'նենց սպանե՝ սուլթան ու խան իս ինծ ամա:

Մեշկըտ սալբու-չինարի պէս, ռանգըտ Փըրունգի ատլաս է,  
Լիզուտ շաքար, պըռուշըտ դանի, ակուքըտ մարքրիտ, ալմաս է.  
Օսկու մեշըն մինա արած, աշկիրըտ, ակնակապ թաս է.  
Պատվական անգին շավահիր, լալ-Բահեշխան իս ինծ ամա:

Յիս ես դարդին վո՞նց դիմանամ, մակա՞մ սիրտըս ունիմ քարած,  
Արտա՛նունքս ա՛րուն շինեցիր, խիլքըն գըլիսես ունիմ տարած,  
Նոր բաղ իս, նուր բաղչի մեշըն՝ բոլորքըտ վարժով չափարած.  
Վըրետ շուր գամ բըլբուկի պէս՝ սիրով սելրան իս ինծ ամա:

Քու Եշխըն ինծի մաստ արավ. յիս զարթուն իմ, սիրտս է քընած.  
Աշխարս աշխարով կըշտացավ, իմ սիրտըս քիզնից սով մընաց.  
Յար, քիզ ինչո՞վ թարիփ անիմ՝ աշխարումըս բա՞ն չըմընաց.  
Կրակե, ծովեմեն դուս եկած, ոաշ ու շելրան իս ինծ ամա:

Ի՞նչ կուկի մեկ հիդըս խոսիս, թեվուր Սայաթ-Նովու յար իս.  
Ճուղիըտ աշխարըս բընկիլ է՝ արեգագի դեմըն փար իս.  
Ճուտով հիլ, միխակ, դարիչին, վարթ, մանուչակ, սուսանբար իս,  
Կարմըրագուն՝ դաշտի ծաղիկ, հովտաց շուշան իս ինծ ամա:

Էսպես դազալի, դաստա-բեղաստա թարփանուրի ծենում. Արութինի ասած: Սրա հատը  
դիմացն է:

Էսպես Արութինի ասած, ովոր սովորի, թողություն շնորհե:

Ինծ սիրեցիր, Եշխըն նընգար, խաղի դավթար իմ քիզ ամա.  
Մի՛ քաղի փըշի ծաղիկըն՝ վարթ, սուսանբար իմ քիզ ամա.  
Զիմ թողնի արեգագումըն՝ բաղչի սաշար իմ քիզ ամա.  
Յիս քու մահըն վո՞նց կու խընդրիմ՝ նուլլ ու շաքար իմ քիզ ամա:

Ել քու բաղին մըտիկ արա, ուրիշ բաղեն վարթ չին տա քիզ.  
Աղ ու հացըն մի՛ դեն գըցի, շափթենըն մեկ մըտիկ տու միզ.  
Թեգուզ աշխարըս պըտուտ գաս՝ չիս տեսնի ինծի պէս ազիզ.  
Թաք ուրիշ գոզալ շըսիրիս՝ իղրարով յար իմ քիզ ամա:

Թաք յիս մորես չէ՛ի ծընի. վա՞յ Են օրին՝ յիս քիզ տեհա.  
Դու բըլբուկ իս, յիս՝ կարմիր վարթ. չափս, թե վարթըն ջալր կեհա.  
Մե փուքըր Էտենց դիմա՞ցի, շուտով Հընդըստան մի՛ եհա.  
Անգործիլ, անխարջ ու բըրիի, մանդիլի զար իմ քիզ ամա:

Ա՛ստված վըկա, դիմիշ արած գըլուխըս քիզ մատաղ ըլի.  
Ե՛կ, քիզիդ սիրով դամ անիմ, ով գուգե բեղամաղ ըլի.  
Յիս քու խոսկեն չիմ անց կենա, թաք քու դամաղըն չաղ ըլի.  
Թեգուզ անմահութին ուզիս, սիրով կու ծարիմ քիզ ամա:

Քու դարդըն ինծի պառվեցուց. ո՞մըն ասիմ, Սայաթ-Նովա.  
Մի՛ գըցի ծեռնեմեն ծեռըն՝ օսկե թաս իմ, Սայաթ-Նովա,  
Փուանգըստանու միշեն ելած՝ զար ատլաս իմ, Սայաթ-Նովա,  
Ժա՛լե դավթարըտ, դո՛ւթին դի՛ ուանգ ու ռուքար իմ քիզ ամա:

Պազալի. Ես Արութինը ու իր սիրեկանը որ խոսել էին, Են է. սիրեկանն ասել է ուղղակի  
Սայաթ-Նովայի երեսին, քրոնիկոնի 442-ին (1754):  
Էսպես ասել է մեկ հավատարիմ սիրեկանն, և մյուս երեսին՝ Սայաթ-Նովան, ապրիլի 1-ին,  
քրոնիկոնի 442-ին (1754):

Ի՞նչ կոնիմ հեքիմըն, ի՞նչ կոնիմ ջարեն՝  
Քու տըվածըն ուրիշ դիղ է, ո՛ւրիշ դիղ,  
Երում է մըհլամըն, չէ լավսում յարեն.  
Քու տըվածըն ուրիշ դիղ է, ո՛ւրիշ դիղ.  
ուրիշ դիղ, ա՛ման, ո՛ւրիշ դիղ:

Ասաց թե. «Հիռա՛ցի գըլխեմես, գընա՛.  
Քու ասածըն ուրիշ տիղ է, ո՛ւրիշ տիղ.  
Ետ քու արարմունքսըն քիզի չի՛ մընա,  
Քու ասածըն ուրիշ տիղ է, ո՛ւրիշ տիղ.  
ուրիշ տիղ, ա՛ման, ո՛ւրիշ տիղ»:

Ասի թե. «Էշխեմետ չի՛մ հանքչում տանըս,  
Զեռներըս թուկացավ՝ չէ շինում բանըս,  
Երվեցավ ջիգարըս, մաշվեցավ ջանըս.  
Քու տըվածըն ուրիշ դիղ է, ո՛ւրիշ դիղ.  
ուրիշ դիղ, ա՛ման, ո՛ւրիշ դիղ»:

Ասաց. «Իմ դիղեմեն քիզ չըկա չարա,  
Գընա՛, թե խիլք ունիս՝ գըլխիտ ձար արա,  
Թե չէ անիլ կու տամ քիզ փարա-փարա.  
Քու ասածըն ուրիշ տիղ է, ո՛ւրիշ տիղ.  
ուրիշ տիղ, ա՛ման, ո՛ւրիշ տիղ»:

Յիս բըլբուկ իմ, վարթըս մընաց խարումըն.  
Կըրակ դըրիր սըրտիս խուցի յարումըն.  
Վո՛ւնց գըրանքումըն կա, վո՛ւնց դավթարումըն.  
Քու տըվածըն ուրիշ դիղ է, ո՛ւրիշ դիղ.  
ուրիշ դիղ, ա՛ման, ո՛ւրիշ դիղ:

Ասաց թե. «Թի զարար շինեցիր շահըտ.  
Կըտրեցիր ադաբըտ, կըտրեցիր ահըտ.  
Մի՛ վիթի արունըտ, մի՛ շանց տա մահըտ.  
Քու ասածըն ուրիշ տիղ է, ո՛ւրիշ տիղ.  
ուրիշ տիղ, ա՛ման, ո՛ւրիշ տիղ»:

Ասի թե. «Մազիրըտ սիրմա իս անում,  
Հենց գիդիս՝ չի՛մ գիդի, յա՛ր, չի՛մ իմանում.  
Սերըտ ինձ մահ դառավ՝ ել չի՛մ դիմանում.  
Քու տըվածըն ուրիշ դիղ է, ո՛ւրիշ դիղ.  
ուրիշ դիղ, ա՛ման, ո՛ւրիշ դիղ»:

Թաքավուրի թագի լայիդ քարըն իմ,  
Շիրինի պես Փահրադի դիդարըն իմ,  
Յիս է՛ն գըլխեն Սայաթ-Նովու յարըն իմ.  
Քու ասածըն ուրիշ տիղ է, ո՛ւրիշ տիղ.  
ուրիշ տիղ, ա՛ման, ո՛ւրիշ դիղ»:

Հիդըս խո՛սի, մի՛ կենա խըռովի պես.  
Տալդա տըվիր՝ գեմիս տարար ծովի պես.  
Կու միոնիմ. չիս տեսնի Սայաթ-Նովի պես.  
Քու տըվածըն ուրիշ դիղ է, ո՛ւրիշ դիղ.  
ուրիշ դիղ, ա՛ման, ո՛ւրիշ դիղ»:

Եսպես շիրվանի հանգում, որ ասում է՝ «Յոլարումըզդան. Արութինս ու իր սիրենանն ասում  
են իրար:  
Սեպտեմբերի 3-ին, քրոնիկոնի 444-ին (1756):

Դաստամագըտ սիմ ու շարբաք, նամ շաղ էկած ռեհան է.  
Ունքիրըտ դալամով քաշած, էրեսըտ զարնըշան է.  
Ակըոքնիրըտ լալ ու մարքրիտ, ուանգիտ մարթ կու երանե.  
Թաք լիս միոնիմ՝ դուն սաղ ըլիս, էշխըտ իմ գերեզման է.  
Նազիտ միոնիմ, նազ մի՛ անի. նազըտ ինձ կու սըպանե:

Վուր բըլբուփին վարթըն [խափե, աբա] խարին թամա՛մե.  
Ումնոր կանց միօի լավ սիրիս՝ Աստված չարին թամա՛մե:  
Դիդարետ կարոտ մընացի. էրկու տարին թա՛մամ է.  
Թաք լիս միոնիմ՝ դուն սաղ ըլիս, էշխըտ իմ գերեզման է.  
Նազիտ միոնիմ, նազ մի՛ անի. նազըտ ինձ կու սըպանե:

Թառամեցավ կարմիր վարթըն, բաղըն բըլբուկ չէ գալի,  
Սիրտըս յարալու շինեցիր, էրվում իմ մըրմընջալի.  
Էշխեմետ հիվանդացիլ իմ, պառկած իմ դըժար հալի.  
Թաք լիս միոնիմ՝ դուն սաղ ըլիս, էշխըտ իմ գերեզման է.  
Նազիտ միոնիմ, նազ մի՛ անի. նազըտ ինձ կու սըպանե:

Մեջլումի պես սարն իմ նընգի, Լելլումեն խաբար չունիմ.  
Էշխեմետ սիրտըս էրվում է, հովանալու ծար չունիմ.  
Աստված վրկա, աշխարհոմըս լիս քիզ ավել յար չունիմ.  
Թաք լիս միոնիմ՝ դուն սաղ ըլիս, էշխըտ իմ գերեզման է.  
Նազիտ միոնիմ, նազ մի՛ անի. նազըտ ինձ կու սըպանե:

Սայաթ-Նովեն ասաց՝ զա՛լում, աչկըս լալիս է արին,  
Հում կաթնա՛կիր՝ Աթամի զա՛թ, նա՛լաթ քու էլթիբարին.  
Իղրարեմեն շուտ անցկացար, ո՞ւր է յարասուն տարին.  
Թաք լիս միոնիմ՝ դուն սաղ ըլիս, էշխըտ իմ գերեզման է.  
Նազիտ միոնիմ, նազ մի՛ անի. նազըտ ինձ կու սըպանե:

Մեջլումի պես կորավ յարըս,  
Լե՛լի ջան, ման իմ գալի  
յա՛նա-յանա.  
Էրվեցավ խունի ջիգարըս,  
Արնի պես աչկս է լալի.  
յա՛նա-յանա, յա՛նա-յանա:

Բըլբուփի նըման լացիլ իմ,  
Աշկիրըս արնով թացիլ իմ,  
Էշխեմետ հիվանդացիլ իմ.  
Պառկած իմ դըժար հալի.  
յա՛նա-յանա, յա՛նա-յանա:

Էշխեմետ դառիլ իմ յիգիդ,  
Հալվեցա, մաշվեցա քիզիդ,  
Ուա՛հմ արա, մե խո՛ս միօիդ.  
Բեմո՛րվաթ, ծեն իմ տալի.  
յա՛նա-յանա, յա՛նա-յանա:

Էրվում իմ, կանչում իմ աման.  
Ծոցըտ բաղ, ունքիրըտ քաման.  
Աշխարիս մեչըն քիզ նըման  
Չիմ տեսած, ման իմ գալի  
յա՛նա-յանա, յա՛նա-յանա:

Սանո՛ւսկ՝ բաց արած հովին,  
Կարմիր վա՛րթ, ծա՛ղիկ հուտովին,  
Ծատ մի՛ լացնի Սայաթ-Նովին,  
Ա՛չկի լուս, կըսկըժալի.  
յա՛նա-յանա, յա՛նա-յանա:

Եսպես թասիբ-մուխալիփի հանգում, հինգ յարփաղի (տերևավոր). քրոնիկոնի 442-ին (1754):

Եսպես Արութինի ասած, մարտի 1-ին, քրոնիկոնի 442-ին (1754):

Եշխեմեն Ենպես վառվիլ իմ,  
Վունց Մեջլում՝ յա՞ր իմ ասում  
Ենտիդե՛մեն,  
Գոզալի տիսուն կարոտ իմ՝  
Հի՛դ քաշվի սա՛ր իմ ասում,  
Ենտիդե՛մեն, Ենտիդե՛մեն:

Ուրբան իմ ծոցիտ նըռանըն,  
Հոքիս տամ շիմշատ կըռանըն,  
Թաք պառկիմ յարի դըռանըն.  
Գըլխոքըս քար իմ ասում,  
Ենտիդե՛մեն, Ենտիդե՛մեն:

Հաքիլ իս ատլաս-խասեմեն,  
Խըմեցուր ծիոհիտ թասեմեն,  
Համաշա էշխիտ քասեմեն  
Երվում իմ, օա՛ր իմ ասում.  
Ենտիդե՛մեն, Ենտիդե՛մեն:

Բաղ կու սիրիմ, յիս բաղման չիմ,  
Բաղի տիրուչըն ծանանչ իմ,  
Բըլբուկ իմ, սիրով վա՛րթ կանչիմ.  
Հիդ քաշվի խա՛ր իմ ասում.  
Ենտիդե՛մեն, Ենտիդե՛մեն:

Մեջլիսներու խաղըն դուն իս,  
Վանքերումըն տաղըն դուն իս,  
Սալաթ-Նովու բաղըն դուն իս.  
Կարոտ իմ, բա՛ր իմ ասում,  
Ենտիդե՛մեն, Ենտիդե՛մեն:

Ես երկու խաղերն են ծենով՝ Բըլբուն նստած է վարթին, յավ կանչեր նա վարթի համա:  
Արութինի ասած, ապրիի 5-ին, քրոսիկոնի 445-ին (1757):

Բըլբուկի հիդ լաց իս էլի,  
Վարթի նըման բաց իս էլի,  
Վարթաջըրով թաց իս էլի.  
Թա՛ց իս էլի.

Չըկա քիզի նըման,  
Չըկա քիզի նըման.  
Քիզ նըման,  
Քիզ նըման  
Դո՛ւն իս, աննըմա՛ն:

Սիրունութինտ էլավ արբար,  
Մազիր ունիս սիմ ու շարբար.  
Քի սազ գուքա դուշլու զարբար.  
Որ՛ ւշլու զարբար.

Չըկա քիզի նըման,  
Չըկա քիզի նըման.  
Քիզ նըման,  
Քիզ նըման  
Դո՛ւն իս, աննըմա՛ն:

Էրեստ է շամշ ու դամար,  
Զանըս դուս գուքա քիզ ամար.  
Միչկիտ ունիս օսկե քամար.  
օ՛սկե քամար.

Չըկա քիզի նըման,  
Չըկա քիզի նըման.  
Քիզ նըման,  
Քիզ նըման  
Դո՛ւն իս, աննըմա՛ն:

Հաքիտ զարըն ալ իս արի.  
Բըլբուկի հիդ լալ իս արի.  
Բարգ էրեսիտ խալ իս արի.  
խա՛լ իս արի.

Չըկա քիզի նըման,  
Չըկա քիզի նըման,  
Քիզ նըման,  
Քիզ նըման  
Դո՛ւն իս, աննըմա՞ն:

Դարդըս ասիմ՝ գուլան սարիր.  
Ես ի՞նչ բան եր, վուր դուն արիր.  
Սայաթ-Նովուն ջունուն արիր,  
ջո՛նուն արիր.

Չըկա քիզի նըման,  
Չըկա քիզի նըման,  
Քիզ նըման,  
Քիզ նըման  
Դո՛ւն իս, աննըմա՞ն:

Քրոնիկոնի 440-ին (1752), մարտի վերջին:  
Էսպես բելիր դափի հանգով թասլիք՝ օսմանցոց մուղամ:

23

Կունցոր վուր դարիբ բըլբուկըն մե տարով բաղին կարոտ է,  
Ենենց գուլա քու սիրողըն՝ ծենիտ արաղին կարոտ է.  
Դուն ուրիշի հիդ մի՛ խոսի, քու ծուրտըն աղին կարոտ է.  
Հասիլ է ծուցիտ շամամըն՝ օսկե թաքաղին կարոտ է:

Մե զադ չըկա՝ գուման ածիմ, ասիմ՝ է՛ն նըման է գունքըտ,  
Անդալամ, անզարնիշ քաշած օսկու պես է փալլում ունքըտ.  
Բոյեմետ չուրս մատն ավելի, լըցվիլ է դոշտ ու թիկունքըտ.  
Զարով, աբրեշումով հուսած մազիրըտ շաղին կարոտ է:

Դուն խոմ է՛ն գլմեն գոված իս, լիս քիզ նուրմեկ գովիմ, ա՛րի.  
Ծուցըտ վարաղնած հուցրա է, հոտ ունե մուշկ ու ամբարի.  
Իրեք հարուր վացուն ու վից՝ ամեն անթամըտ դարարի.  
Կուռըտ շիմշատ, մատնիրըտ մում՝ բըրոլե ծաղին կարոտ է:

Յիս էլ ուրիշ լար չիմ սիրի, աշխարումըս դո՛ւն իս իմըն.  
Թե մե շափաթ քիզ չիմ տեսնի, կու կըտրիմ քամանչիս սիմըն.  
Թեգուզ թաքավուրըն կանչե, թեգուզ Լողմայի հեքիմըն՝  
Կո՞ւր մե դարդըս կու հասկանան՝ դուգունըս դաղին կարոտ է:

Գիշեր-ցերեկ ման իմ զալի՝ եշխետ յա՛նա-յանա, գո՛զալ,  
Ա՛նգած արա, մա՛տաղ իմ քիզ՝ մե քիչ կա՛մաց գընա, գո՛զալ,  
Աշխարըս ո՞ւմն է մընացի, վուր ինձ ու քիզ մընա, գո՛զալ,  
Սակամ միուա՛վ Սայաթ-Նովեն. անգաճըտ խաղին կարոտ է:

Էսպես Դիբա ու ենգիդունիայի հանգում, որ մուսաղասու (պես) կասեն: Արութինի ասած.  
Քրոնիկոնի 446-ին (1758):

Մե խոսկ ունիմ իլթիմազով, ա՞նգած արա, ո՞վ աչկի լուս,  
Սըրտումըս ինթիզար ունիմ, քու տիսըն բա՛րով, ա՛չկի լուս,  
Աջաք քիզ ի՞նչ գեթ իմ արի՝ կենում իս խըռով, ա՛չկի լուս,  
Աշխարս աշխարով կըշտացավ, յիս քիզանից՝ սով, ա՛չկի լուս:

Սակավ օչով յար չէ սիրի՝, ես ի՞նչ արիր, ես ի՞նչ բան ա.  
Եշխեմետ ջունուն իմ ելի, ման իմ գալի յանա-յանա.  
Ես դարդեն օչով չըքաշե, վուր մե դանգին չի դիմանա.  
Սիրտըս լուրի պես խորվեցիր Եշխիտ կըրակով, ա՛չկի լուս:

Դոստիրըս դուշման շինեցիր, յադերուն ի՞նչպես դոստ անիմ.  
Անցկացած օրըն չիմ տեսնում, քանի գուրգե վուր դաստ անիմ.  
Ա՛ստված վըկա, խիստ դըժար է, գըլուխըս ի՞նչպես դուս տանիմ.  
Յիս մե փուրըր նավի նըման, քու Եշխըն է՛ ծով, ա՛չկի լուս:

Գուգիմ բերանըս բաց անիմ, գովերտ ասիմ թարիփի պես.  
Տաս տարի է ման իմ գալիս փաղիշահի շարիփի պես.  
Օխտըն տարի էլ ման գուրգամ՝ սազըն ծենիս, Ղարիբի պես.  
Բուրքա Շահսանամըս դուն իս, էլ չունիմ օչով, ա՛չկի լուս:

Թեգուզ հազար դարդ ունենամ, յիս սըրտումըս ա՛հ չիմ ասի.  
Իմ հուրմի-հեթիմըն դուն իս, յիս էլ ուրիշ շահ չիմ ասի.  
Սույաթ-Նովեն ասաց՝ զա՛յում, յիս էն մահին մա՛հ չիմ ասի,  
Հենչաք ըլի՝ դո՛ւն վըրես լաս, մազըտ շաղ տալով, ա՛չկի լուս:

Ես էլ էն հանգով. Արութինի ասած, քրոնիկոնի 446-ին (1758):

Անգին ակըն վըրետ շարած, անբան օսկու ոախտ իս, գո՛զալ,  
Աստված քիզ ու նըրա՞ն պահե, ոմ իիդ վուր նըվախտ իս, գո՛զալ,  
Բըլբովին լիզու շինեցիր՝ դուն վարթի դըրախտ իս, գո՛զալ,  
Վարթըն մե ամիս ումբր ունե՝ դուն ամենան վախտ իս, գո՛զալ:

Մեմեկ, մեմեկ էլ չի ասվի՝ թարիփըտ դառավ քովիչով.  
Պատիրըտ զարով, զարբարով, դոշամետ՝ խալով, խալիչով.  
Տախտակնիրըն՝ երժաթեմեն, միխիրըն՝ օսկե գովիչով.  
Խոսրով փաշալեմեն թողած, դուն Թովուզի թախտ իս, գո՛զալ:

Սկանդարի-Զովլարի թողած ջավահիր իս, անգին լալ իս.  
Պանգըն դանգի միշեն հանած, հիդքաշած մըսխալ-մըսխալ իս.  
Յիփ դուն սերանգահըն կեհաս, օչով այնումըտ չէ գալիս,  
Փաք չունիս փաշազադիմեն, անդամ, առանց սախտ իս, գո՛զալ:

Թեգուզ մըտոց ձարտար ըլի, կանց Սողոմոն դա՛դա ըլի,  
Թեգուզ մարքարիտով լիքըն, թեգուզ սադափ, սա՛դա ըլի,  
Թեգուզ արե՛զագ, լուսնի՛ակ, թեգուզ հուրիզա՛դա ըլի.  
Ետ քու ամեն մարիփաթով դիփունին կու ախտիս, գո՛զալ:

Յիրգնուց վըրետ ծուն է էկի՝ փունչ մանիշակ նուր իս, ջա՛նում.  
Մողըտ նըստողըն կու էրփի՝ ետ նազի տեր վուր իս, ջա՛նում.  
Դիու Սայաթ-Նովեն չէ միհի՝ դուն ինչի՝ տըխուր իս, ջա՛նում.  
Թաք յիս միոնիմ, դուն սաղ ըլիս, գերեզմանըս վաղ տիս, գո՛զալ:

Ես էլ էն Դիբայի հանգում, Արութինի ասած:  
Աստված թողություն շնորհե սիրեկանն սպանած Արութին Սայաթ-Նովին, քրոնիկոնի  
446-ին (1758):

**Թամամ աշխար պըտուտ էկա, չըթողի Հաբաշ, նազա՞նի,  
Չըտեսա քու դիդարի պես՝ դուն դիփունեն բաշ, նազա՞նի.  
Թե խամ հաքնիս, թե զար հաքնիս, կու շինիս դումաշ, նազա՞նի.  
Էլորու համա քու տեսնողըն ասում է վաշ, վաշ, նազա՞նի:**

Դուն պատվական շավահիր իս, ԵՌՆԵԿ քու առնողին ըլի.  
Ով կու գըթնե, ա՞յս չի քաշի, վա՛լ քու կորցընողին ըլի.  
Ա փսուս, Վուր շուտով միհոի է, լուսըն քու ժընողին ըլի.  
Ասրի էր, մեկ էլ էր բորի թիզի պես նաղաշ, նազա՞նի:

Դուն է՝ գրիսեն ջուհարդար իս, Վըրետ զարնօշան է քաշած.  
Դաստամագիտ թիլի մեչըն մե շադա մարջան է քաշած.  
Աչկիրդու օսկե փիալա՛ չարխեմեն փընջան է քաշած.  
Թերթերուկը նիտ ու նաշտար, սուր դալամթրորաշ, նազա՞ն:

Երեսըտ, փարսեվար ասիմ, Նըման է շամշ ու դամարին.  
Բարակ միջիտ թիրման շալըն նըման է օսկե քամարին.  
Ղալամըն ծեռին չէ կանգնում, մաթ շինեցիր նաղաշքարին.  
Յիկ նրստում իս' թութի ոուշ իս, լիփ կանգնում իս' ոաշ, նազա՞նի:

Յիս էն Սալյաթ-Նովասին շիմ, վուր ավգի վըրա հիմանամ. Աշաբ միզիդ ի՞նչ իս կամում, սըրտետ մե խաբար իմանամ. Ո՞ւն կըրակ, հա՞քածըտ կըրակ, վո՞ւր մե կըրակին դիմանամ. Հընդու դալամքարու վըրեն ծածկի իս մարմաշ, նազա՞նի:

Ես ել Ղիքա ու ենգիղունիսայի հանգում, որն որ մուսադասու պես կասեն, Արութինի ասած, քրոնիկոնի 446-ին (1758):

Յա՞ր, քիզ իսկի զավալ չըլի՝ քու դուշմընին՝ շառ բացարած.  
Հուտըտ աշխարհս բըռնի է՝ բալասանի ծա՛ն բացարած.  
Թըխտիրըտ օսկե վարաղով, Ասմավուր իս՝ ծառ բացարած.  
Տեսնորն շարքըն չի գիտի, Լուսին ա՛սո պատճառ բագարած:

Ամեն մարթ չի կանա մըտնի՝ էշխիտ ջուրըն հիդ է, զա՛լում.  
Մըտնում է յարսուն կարմունջըն. չասիս թե՛ մե՛ գիդ է, զալո՞ւմ,  
Ունքիրս սալիդ սադախ է, թերթերուկըն նիտ է, զա՛լում.  
Մըտնողըն ել չի դուս եհա՞ դուռ, մահու պատճառ. բացարած:

Բարակ մեջկըտ դարդուղամիշ, Երեսըտ թալգովի նըման.  
Օրըն յարսուն ռանգ կու փոխիս, Վո՛նց մեկը չէ տովի նըման.  
Յիկ խաղում իս' Վըռքըռում իս օցի բերսի հովի նըման.  
Սութըն տիղըն լուս իս տայի առանց կոռոակ՝ Այր բագարաժ:

**Բարովողին բարով չիս տա՝ թաքակուրի սալամի պես.  
Զեռնիրըտ սիպտակ մաքաղաթ, լիզուտ օսկե դալամի պես.  
Զարուարբաք դրո՞շ՝ ման իս գալիս ալամի պես.  
Տեսնողըն էնպես կիմանա՝ շահ իս օալիս՝ օար բաօարած:**

Յա՞ր, քիզանից հիուանալըս միոնելուս վերա դըժար ա.  
Լիզուտ քաղցըր, խոսկըտ քաղցըր, ակըռքնիրըտ անգին քար ա.  
Իրեք ըստան ու տաս խալըն երեսիտ բոլորքըն շար ա,  
Վունցոր Սայաթ-Նովու լիզուն՝ լոթանասրուն բար բատարա՛:

Էս Ել Ոհքա ու Ենգիղունիայի հանգում, Արութինի ասած, հոկտեմբերի 9-ին, ցըռնիկոնի 446-ին (1758):

Եշխեմետ անդանակ էլա, եկ մո՛րթե՛ ջալլաթըն դուն իս.  
Մի՛ սպանի հասրաթեմետ՝ սըրտիս խջջալաթըն դուն իս.  
Թաքավորի քարխանեմեն դուն էկած խալաթըն դուն իս.  
Հինդ ու Հաբաշ, Արաբըստան, Խորասնու Քալաթըն դուն իս:

Բարգ Էրեսըտ՝ կըրակ նընգած օսկու նըման ջիռանում է,  
Ենդու համա քու տեսնողի խիլքըն գըլիսեն հիռանում է.  
Ով չէ տեսի, տիստ է ուզում, ով տեսնում է՝ միռանում է.  
Օսկե վարաղով վարաղնած սուրաթ-մաքաղաթըն դուն իս:

Շատըն քու Եշխեն կու միռնի, չի դիմանա ինթիզարի.  
Տարենըն մե զամ բաց կուկիս, մա՛թահ Շահրադէլ բազարի.  
Ե՛րնեկ ըլի քու տիրուչըն՝ մըտիկ տալեն չի բեզարի.  
Ամառն ու ծըմիռըն ժաղկած, գուբաղ ու բաղաթըն դուն իս:

Մուզդ ունե էն նազըշքարըն, վուր թահրըտ դալամով հանա,  
Շակտետ ունքըն չի կանա գա, քանի գուզե վուր շատ շանա,  
Ենդու համա ժարավ մարթըն քու ջըրեմեն չի կըշտանա.  
Շիրազու շուշումըն ածած՝ նաբաթե շարբաթըն դուն իս:

Ե՛րնեկ մողըտ նըստող յարին, վուր քիզի պես համդամ ունե.  
Խայան յարի չէ ուստ էկի, քիզանից խաթըրջամ ունե.  
Սայաթ-Նովեն, վուր քիզ ունե, աշխարումըս ինչ դամ ունե.  
Խաթաբանդով չարա-չարդախ, քոշկ ու ամարաթըն դուն իս:

Ես ել Դիբա ու Ենգիդունիալի հանգում. Արութինի ասած, սեպտեմբերի 6-ին, քրոնիկոնի  
446-ին (1758):

Ինձ ու իմ սիրեկան յարին մե տարի բերած գիդենաց.  
Ա՛խ քաշելեն սըրտիս մեշըն արունըն մերած գիդենաց.  
Գիշեր-ցերեկ յարի խաթրու ջիգաթըս էրած գիդենաց.  
Աշկըս թաց, բերանըս ցամաք, լիզուս հիդքերած գիդենաց:

Սիրտըս փուրումըս թուլացավ անգալներու զախ անելեն,  
Ուշկ ու միտկըս խառնվեցավ խուրըն-խուրըն խաղ հանելեն,  
Աշկեմես ջուխարըն գընաց յարեն կարոտ ա՛խ անելեն.  
Ել ապրելու ումիկ չունիմ, իմ օրըս կերած գիդենաց:

Երած-խորված ման իմ գալիս, մե տիդ չըկա մար ունենամ.  
Լիզվով չիմ կանացի ասի, թեգուզ խոսկըս փար ունենամ.  
Ափսուսալու հազար ա՛փսուս, լիս էս դադա դար ունենամ.  
Եշխեն ուշկ ու միտկըս կապած, ինձ ջըրի տարած գիդենաց:

Սիրտըս փուրումըս սըքուր է, ալ աշկիրըս լաց է անում.  
Ծովըն նընգած ամբի նըման դոշս ու լախես թաց է անում.  
Քանի վուր մըհլամ իմ դընում, դուգունս էլ խիստ բաց է անում.  
Հալվե՛ցա, արնա՛քամ էլա՝ յարես հիդարած գիդենաց:

Ով տեսնում է, ես է ասում՝ «Կա՛յ քու դարին, Սա՛յաթ-Նովա,  
Համաշա քիզ պիտի տեսնինք՝ աշկըտ արին, Սա՛յաթ-Նովա,  
Ինչո՛վ չելավ, չըռաստ էկար մե լավ յարին, Սա՛յաթ-Նովա».  
Ումբրըս երազի պես գընաց՝ ծառըս չըխերած գիդենաց:

Են ել Դիբա ու Ենգիդունիալի ծեսում, հանգըն դազալի: Արութինի ասած, քրոնիկոնի  
447-ին (1759):

Ենդուր աչկըս չեցամաքում՝ սըրտիս մեջըն արին մընաց.  
Վունչինչ դարով չըլավացավ՝ մըհլամըս հիդ լարին մընաց.  
Եշխեմեն հիվանդ պառկեցա, աչկըս ծանապարին մընաց.  
Յիկ միռա՝ իժում տիս էկավ՝ նազըն բեհղրարին մընաց:

Գարունքվան վախտըն լըցկի է, երանի ծիզ, ծաղկած վա՛րիր,  
Թե բըլբուին բաղն դրգեցիք, մանիշակով լիքըն սա՛րիր,  
Բաս ինչի՞ ձենքն չեց գալիս, սա՛լըու-չինար, ետ ի՞նչ արիր,  
Ցուխկըտ բըլբուին սըպանից՝ կարմիր վարթըն խարին մընաց:

Ալ պուճպութեն ասաց խափե սարումըն դարիբ բըլբուին.  
Յիկ բըլբուն միտքըն ածավ ուեհնով կըպած թայիգուին.  
Ով վաղ գընաց, վարթըն քաղից, չասին, թե պետկ է բըլբուին,  
Վա՛լ քու դարին, դա՛րիբ բըլբու, վուր լեշըտ չափարին մընաց:

Խոսկիրըտ քա՛ղցըր, քա՛ղցըր է, լիզուտ շաքար ու նաբաթ է,  
Խըմողին վընաս չի անի՝ ձեռիտ բըռնածըն շարբաթ է.  
Շափաթըն օխտն օր ին ասի՝ քու հաքածըն նուր բաբաթ է.  
Հաքի իս բեհեզ ժիրանին՝ ծալած դալամքարին մընաց:

Աշուղի լիզուն բըլբու է, օրինանք ունե, նալաթ չըկա.  
Շահի մոդ խոսկն անց կու կենա, սըպանելու շալլաթ չըկա.  
Լեքիմ ու դադաստան չըկա, մե դըրուստ ադալաթ չըկա.  
Մե մարթ չըկեր՝ ազատիլ էր, Սայաթ-Նովեն դարին մընաց:

Էս էլ Դիբա ու Ենգիդունիալի ծենում, Արութինի ասած է, հունիսի սկզբին, քրոնիկոնի  
446-ին (1758):

Պատկիրքըտ դալամով քաշած, թահրըտ ուանգե-ուանգ իս անում.  
Էրեսըտ խալըն ծածկում է, մազիրըտ խափանգ իս անում.  
Բացվի իս կարմիր վարթի պես, բըլբուի հիդ հանգ իս անում.  
Ակոնքըտ օսկումըն շարած, պըռոշըտ մահանգ իս անում:

Էրեսըտ նուր լուսնի նըման քանի կեհա, կու բուլըրվի,  
Ռաստամազըտ նամ չի ուզի՝ առանց հուսիլ կու օլըրվի,  
Էնդու համա քու տեսնողըն իր Շամփեմեն կու մոլըրվի.  
Յիկ մըտնում իս մեջիսումըն, շանգ-շուխի-շաբանգ իս անում:

Էրեսըտ տեսնելու գուքան քաղաք-քաղկով, գիդ՝ գիդի պես.  
Միոնողըն քիզմեն կու առնե անմահական ոդի՝ ոդի պես.  
Յիկ տիդեմետ ժաժ իս գալի, շըխշըխկում իս շիղշիդի պես.  
Ի՞նչ կոնիս սանթուր-քամանչեն՝ գուքսըտ չընգուր-չանգ իս անում:

Շուցիտ մեջըն վարթ, մանիշակ, սըմբով ու սուաան իս շինի.  
Քու տերըն բաղըն ի՞նչ կոնե՝ քու հուտըն ուեհան իս շինի.  
Բամին մեջըն անց է կենում՝ մազիրըտ ելքան իս շինի.  
Աշխարքըն ծով, դուն մեջըն նավ, ման իս գալի, լանգ իս անում:

Տասնեմետ մեկըն չին ասի, թեգուզ աշխարըս քիզ գովին.  
Նովափար, ծա՛ղիկ ծովալին, մանուշակ՝ բաց արած հովին.  
Բաս քու Եշխին վո՛նց դիմանամ. շուրըն տանե Սայաթ-Նովին.  
Թե տեսնողըտ մեկ էլ տեսավ՝ դիվանա-դաբանգ իս անում:

Էս էլ Դիբա ու Ենգիդունիալի հանգում. Արութինի ասած, մարտի վերջին, քրոնիկոնի  
447-ին (1759):

Զիս ասում, թե լաց իս էլի.  
Բա՛րով տեսա, ի՞մ սիրեկան,  
Վարժի նըման բաց իս էլի  
    խարերով,  
    խարերով.

Բա՛րով տեսա, ի՞մ սիրեկան:

Արի մե դարդս իմացի,  
Եշխեմետ համան իմ լացի.  
Օրըս եսպէս անց է կացի՝  
    դարերով,  
    դարերով.

Բա՛րով տեսա, ի՞մ սիրեկան:

Յիփ կու հաքնիս ալ ու ատլաս,  
Տեսնողին կու շինիս մաս-մաս.  
Ոռշիտ պիտի լալ ու ալմաս՝  
    շարերով,  
    շարերով.

Բա՛րով տեսա, ի՞մ սիրեկան:

Յիս քիզ գովիմ խաղի մեչըն.  
Ծամամնիրըտ թաղի մեչըն.  
Ման իս գալի բաղի մեչըն՝  
    յարերով,  
    յարերով.

Բա՛րով տեսա, ի՞մ սիրեկան:

Սալաթ-Նովեն վո՛ւնց որնջանա.  
Աչկիրըտ օսկե փընջան ա.  
Ոուշմանի լիզուն մընջանա՝  
    չարերով,  
    չարերով.

Բա՛րով տեսա, ի՞մ սիրեկան:

Եսպէս թասիք:

Թեգուզ քու քաշըն մարքրիտ տան՝  
    բրո՛յի-բրո՛յի,

Թեգուզ քու քաշըն ալմաս տան՝  
    բրո՛յի-բրո՛յի.

Յա՛ր, չի՞մի տա, չի՞մ հիռացնի  
    քիզ քու յարեմեն,  
    բարեբարեմեն:

Չի՞մ քաշվի եկած մահեմեն,  
Պաղիփի տըված ահեմեն՝  
    բրո՛յի-բրո՛յի.

Թեգուզ ուաղամ գա շահեմեն,  
Յա՛ր, չի՞մի տա, չի՞մ հիռացնի  
    քիզ քու յարեմեն,  
    բարեբարեմեն:

Թեգուզ քու քաշըն ալմաս տան՝  
    բրո՛յի-բրո՛յի,

Թեգուզ քու քաշըն մարքրիտ տան՝  
    բրո՛յի-բրո՛յի.

Յա՛ր, չի՞մի տա, չի՞մ հիռացնի  
    քիզ քու յարեմեն,  
    բարեբարեմեն:

Գուլ իս անգին-ից, նուն հանգով:

Լալեքըն ուանգով,  
Վարթըն բացիլ է.  
Սուսան-սըմբովով,  
Ուրիթ բըլբովով  
Բաղըն լըցիլ է:

Մո՛տ բաղչեն նազով,  
Քիզ գովիմ սազով,  
Յա՛ր, իլթիմազով:

Պատվական շինած,  
Նըման նըմանած  
Լեյլու դիդարին.  
Յա՛ր, ուշկոս գընաց,  
Մազիրըտ մընաց  
Վրա մուհաջարին:  
Բաղըն զարթարած,  
Բըլբովըն քընած  
Վարթի սաջարին:

Մո՛տ բաղչեն նազով,  
Քիզ գովիմ սազով,  
Յա՛ր, իլթիմազով:

Հաքիլ իս ատլաս,  
Թուրլու զար ու խաս.  
Սալբու դա՛լ ոռվուն,  
Զեղիտ ունիս թաս,  
Լըցնիս ու ինծ տաս,  
Ղուրբան իմ քովուն:  
Թաք դու բաղչեն գաս,  
Անիս մասնեմաս  
Քու Սալաթ-նովուն.

Մո՛տ բաղչեն նազով,  
Քիզ գովիմ սազով,  
Յա՛ր, իլթիմազով:

Էսպես Արութինի ասած, Թասիրըն չինի, Նուլն հանգով, Մայիսի 2-ին, քրոնիկոնի 445-ին  
(757):

Յանի վուր ջան իմ,  
Յա՛ր, քի դուրբան իմ,  
Աբա ի՞նչ անիմ.  
Արտասուզ անիմ,  
Շատ հոքուց հանիմ,  
Յա՛ր, դադետ տանիմ:  
Ասիր՝ ջեյրան իմ,  
Թուր քի սե՛յր անիմ,  
Յա՛ր, մըտիկ անիմ.

Մո՛տ բաղչեն նազով,  
Քիզ գովիմ սազով,  
Յա՛ր, իլթիմազով:

Մազիրըտ դաստա,  
Պըռոշըտ փըստա,  
Հեյրանի վախտ է.  
Եկ նընգնինք չոլըն,  
Կուր հասնինք գոլըն.  
Զեյրանի վախտ է:  
Բըլբովըն՝ վարթին,  
Վարթըն՝ բաղաթին.  
Սեյրանի վախտ է.

Մո՛տ բաղչեն նազով,  
Քիզ գովիմ սազով,  
Յա՛ր, իլթիմազով:

Շուր գանք համդամով,  
Յիրգնային նամով  
Թումիըն թացիլ է:  
Խաղ կանչինք հանգով,

Խըմե՛ցուր ծեռիտ թասեմեն,  
Զո՛ւր իմ ասում, [տո՛ւր քասեմեն].  
[Մըն]ացի սըկու մասեմեն.

ԱՇԿԻ լուս, զո՛ւր իմ ասի,  
[Հուր չիմ ասի, հուր] չիմ ասի,  
Թուր չիմ [ասի], տուր չիմ ասի:

Գո՛զալ, Աստված քիզի լա՛վ տա,  
Զուզողի աշկերուն.ցավ տա.

Անգալի խոսկին մի՛ ավտա.

Աչկի լուս, [զ]ո՛ւր իմ ասի,  
[Ս]ուր չիմ ասի, սուր չիմ ասի.  
Զու[ր] չիմ ասի, սուր չիմ ասի:

Ով քիզի այան մըտիկ տա,

Աբելին Կայան մըտիկ տա.

Ինչ աշկ քիզ խայան մըտիկ տա,

Զանում յար, կո՛ւր իմ ասի.

Նուր չիմ ասի, նու[ր չիմ ասի],

[Կուր իմ ասի, նուր չիմ ասի]:

Ովոր ինձ շինից դիվանա՝

Սուրփ Կարապիտեն խիվանա.

Վաղի երեսըն սիվանա.

ԱՇԿԻ լուս, մո՛ւր իմ ասի.

Զուր չիմ ասի, [չուր չիմ ասի,

Մուր իմ ասի, չուր չիմ ասի]:

Էշխեմետ խըմած, մաստ էկած,

Գըլուխըս մահին ոաստ էկած.

Սայաթ-Նովեն իմ' տիստ էկած.

ԱՇԿԻ լուս, ո՛ւր իմ ասի,

Սուր չիմ ասի, սուր չիմ ասի,

Տուր չիմ ասի, [սուր չիմ ասի]:

Արի ինծ անգած կալ, ա՛ դիվանա սիրտ,  
Հա՛յա սիրե, ա՛դաբ սիրե, ա՛ր սիրե.

Աշխարքըս քունն ըլի, ի՞նչ պիտիս տանի՝  
Աստված սիրե, հո՛քի սիրե, յա՛ր սիրե:

Են բանն արա, վուր Աստղօնու շարքումն է,  
Խըրատնիրըն գըրած Հարանց վարքումն է.  
Յիրիք բան կա՛ հոքու, մարմնու կարքումն է՝  
Գի՛ր սիրե, ղա՛լամ սիրե, ղա՛վթար սիրե:

Ե՛կ, ա՛րի սիրտ, մընա դուն մե դամաղի,  
Հալալ մըտիկ արա հացի ու աղի.  
Հենց բան արա՝ մարթ վերետ չըժիժաղի.  
Խըրա՛տ սիրե, սա՛բըր սիրե, շա՛ր սիրե:

Հըպարտութին շանիս՝ դուր գուքաս Տերիտ,  
Խոնարդութին արա կանց քիզ դեկերիտ,  
Աստված դիվունանցըն մին հոքի երիտ.  
Ա՛ղկատ սիրե, ղո՛նադ սիրե, տա՛ր սիրե:

Սա՛յաթ-Նովա, Ե՛րնեկ քիզ, թե Ե՛ս անիս.  
Հոքուտ խաթրի մարմնուտ ումբըըն կես անիս.  
Թե գուզիս, վուր դադաստան շըտեսանիս՝  
Վա՛նք սիրե, անապատ սիրե, քա՛ր սիրե:

Ուշամա. Արութինի ասած, մայիսի 1-ին, քրոնիկոնի 441-ին (1753):

Դուն է՞ն գըլխեն իմաստուն իս, խիլքտ հիմարին բար մի՛ անի,  
Էրազումըն տեսածի հիդ միզի մե հեսար մի՛ անի,  
Յիս խոմ է՞ն գըլխեն էրած իմ, նուրմեկանց քաբար մի՛ անի,  
Թեվուր գիղիմ բեզարիլ իս, ուրիշին սաբար մի՛ անի:

Զըկա քիզ պես հուզմի-հեքիմ, դուն Ռոստոմի-Զալ՝ թաքա՛վուր.  
Ասկըտ ասկերումըն գոված՝ հանդ հնսիս, գոզալ թաքա՛վուր.  
Թե եսանց էլ սուչ ունենամ՝ գլուխըս արա տալ, թաքա՛վուր.  
Մըտի՛կ արա քու Ստիդողին՝ նրիախ տիդ դազար մի՛ անի:

Յարալուն հեքիմն էնդուր գուզե՝ դի՛դ տալու է, ցա՛վ տալու չէ.  
Քանի գուզե արբար ըլի՛ դուլըն աղին դավ տալու չէ.  
Դու քու սիրտըն ի՛ստակ պահե, յադի խոսկըն ավտալու չէ.  
Աստծու սերըն կանչողի պես, դըռնեմետ ջուղար մի՛ անի:

Ամեն մարթ չի կանա խըմի՝ իմ ջուրըն ո՛րիշ ջըռեն է.  
Ամեն մարթ չի կանա կարթա՝ իմ գիրըն ո՛րիշ գըրեն է.  
*Իմաստ* Բունհաթըն ավազ չիմանաս՝ քարափ է, քարուկըրեն է՝  
Սելափի պես առանց ցամքիլ, դուն ջուտով խարաբ մի՛ անի:

Քանի գուզե քամին տանե՛ ծովեմեն ավազ չի պակսի.  
Թեգուզ ըլիմ, թեգուզ չըլիմ մեջիսներուն սազ չի պակսի,  
Թե կու պակսիմ, քի՛զ կու պակսիմ՝ աշխարիս մե մազ չի՛ պակսի.  
Սայաթ-Նովու գերեզմանըն Հինդ, Հաբաշ, Արաբ մի՛ անի:

Էսպես Արութինի ասած. քրոնիկոնի 441-ին (1753):

Աջար քա՛նի ժամանակ է, թաք գիղենամ տա՛րիտ, է՛րնեկ.  
Վո՛նց ուտիլ գուզե, վո՛նց խըմի՝ մողըտ նըստող յա՛րիտ էրնեկ.  
Բացվիլ իս կարմիր վարթի պես, փաթութ սուսանբա՛րիտ էրնեկ.  
Բըլբուկին լալով ման կոծիս գիշեր-ցերեկ՝ խա՛րիտ էրնեկ:

Հուտըտ աշխարըս բըռնիլ է, բերնումտ ունիս զանշափիլըն.  
Կանց քիզ լավ հուտ չի ունենա Հընդու էկած դարանփիլըն.  
Գիշեր-ցերեկ գութսիտ մեջն իս, ծեղիտ ունիս [հուտով հիլըն].  
Դիբչում է ալ պըռոշնիրուտ, ո՛ւնքիտ, սամանդա՛րիտ էրնեկ:

Շատըն հասրաթետ կու միրնի, սըրտումըն կունենա զարուր.  
Ով չէ տեսի՝ մե՛կ ա՛խ կոնե, ով կու տեսնե՝ հազար հարուր.  
Ջու զաթըն քու նըման կովի, կըշտիտ ունիս օսկե բարուր.  
Բալքա մեկ էլ դեղեն բերե՛ նըման բարեբա՛րիտ է՛րնեկ:

Մե նաղշըտ Արաբ անցկացավ, մե նաղշըտ Հընդըստան գընաց,  
Մե նաղշըտ Ղըրիմ անցկացավ, մե նաղշըտ Դաղըստան գընաց,  
Մե նաղշըտ Ուրումել կացավ, մեկըն Փըռանզըստան գընաց.  
Ով քու սուրաթըն տեսնում է, ասում է՝ թահա՛րիտ էրնեկ:

Արի նըստի՛, Սա՛յաթ-Նովա, խոսկըտ ասա լամզ ու բասով.  
Սազին խիլքըտ չըտանուլ տաս էտ խիալով, էտ հավասով.  
Զեղիտ բըռնամըն բըրոլ է. ա՛ծա, խըմի՛նք օսկե թասով.  
Շատ աջայիր մեհմանդար իս, սուփիր սազանդա՛րիտ էրնեկ:

Էսպես Արութինի ասած. քրոնիկոնի 443-ին (1755):

Մոդըտ նըստողըն կու հարփի՝ դուն բանգ ու բոզա իս, ա՛զիզ,  
Դիվանա Փահլուկ կու շինիս տեսնողին՝ ա՛զա իս, ա՛զիզ,  
Ինչտեղ կուպի շընուք կու տաս՝ մեջլիսի մազա իս, ա՛զիզ.  
Մազեն մե սահաթ լավ կուպի, դուն համան թա՛զա իս, ա՛զիզ:

Մե խոսկըտ կանց շաքար քաղցըր, մե խոսկըտ վառ՝ քուրա-քուրա.  
Մե նըմանըտ ուաշի նըման, մե նըմանըտ՝ շուրա-շուրա.  
Մարքարիտով լիքըն կալ իս, սադափնիրըտ թուրա-թուրա.  
Երժաթե կոխապեքով կոխապած, դուն օսկե ուազա իս, ա՛զիզ:

Երեսըտ առվուտվան արիվ՝ քանի կեհա կու զարգանա.  
Թաքավորի քարիսանի զա՛ր՝ ծառըն ծառեն չի թարգանա.  
Թե սուչ ունենամ՝ սըպա՛նե, թե չէ նըհախ մի՛ բարգանա.  
Մե ծեռըտ ջուր, մե ծեռըտ արուն՝ շալլաթի, ջազա իս, ա՛զիզ:

Տեսնողըն նաղշըտ կու տընդիե են թովուզի բըմբովի պես.  
Չընի տակեն նուր դուս էկած, արիվ դիբած սըմբովի պես.  
Թուդ վըրետ լալով պըտուտ գամ, վարթին կարոտ բըլբովի պես.  
Դուն ինձնից շուտով մի՛ թըռչի՝ շավարդան-բա՛զա իս, ա՛զիզ:

Եշխեմետ հիվանդացիլ իմ. վո՛նց զարար, վո՛նց շահ ին ասում.  
Հեքիմնիրըս ափսոսում ին՝ ծընգան տալով վա՛ր ին ասում.  
Կանչողըս դարդակ է գընում. «Ա՛խ, Սալաթ-Նովա»ին ասում.  
Թաք դուն տիս գաս, վիր կու կենամ, թե սազիս սա՛զա իս, ա՛զիզ:

Էսպես Արութինի ասած, քրոնիկոնի 446-ին (1758):

Աչաք քու սիրտըն ո՛վ շինից՝ խոնարից, հիզնից բեղամաղ.  
Քանի գուզե մարթ վուր հարփի, վո՛նց կուփի վազնից բեղամաղ.  
Յա՛ր, իս քիզ ինչ գեթ իմ արի՝ նըստած իս միզնից բեղամաղ.  
Քամեցիր եշխիտ մանգանով. լի՛ս պիտիմ քիզնից բեղամաղ:

Ինչ քիզանից հինացիլ իմ, իմ շանումըս շան չէ մըտի.  
Ուշկ ու միտկըս դուն իս տարի, ծեռիս մեչըն բան չէ մըտի.  
Հենց գիդիմ, թե չուրս տարի է քաղաքըն քարզան չէ մըտի.  
Ուախտարի նըման նըստած իմ՝ իշարից, միզնից բեղամաղ:

Հալբաթ սերըն կես է էլի, վուր միզի ատիլ է ուզում.  
Չուրս տարեկան երեխի պես՝ յարըս խըրատիլ է ուզում.  
Բըոնիլ է եշխի դանակըն, սիրտըս կըտրատիլ է ուզում.  
Շատ մարթ կա նըստած լացլեխս, գոզալի նազնից բեղամաղ:

Թեգուզ իմա՛ցի, կարթա՛ցի իմաստնասիրաց առակըն.  
Եշխեմետ ջունուն իմ էլի, վեր էկավ սըրտիս վարակըն.  
Ա՛ստված վըկա, մարթ չըքա՛շե՝ դըժար է եշխի կըրակըն.  
Տեսա արունոտ շեյրանըն՝ վուրսնուրթի նիզնից բեղամաղ:

Անցկացավ աշունքվա վախտըն, սալբիքըն խաղալ է ուզում.  
Հասավ գարունքվան հուսանըն՝ բըլբովըն էլ գալ է ուզում.  
Սալաթ-Նովեն առանց նընգիր ծիդըն գըցած լալ է ուզում.  
Զառ կորցըրած խոնթկարի պես նըստած է խազնից բեղամաղ:

Արութինի ասած, քրոնիկոնի 447-ին (1759):

Աշխարհս մե փանջարա է. թաղերումեն բեզարիլ իմ.  
Մըտիկ տըվողըն կու խուցվի. դաղերումեն բեզարիլ իմ.  
Երեգ լավ էր, կանց վլոր եսօր, վաղերումեն բեզարիլ իմ,  
Մարթ համաշա մե՛կ չի ըլի, խաղերումեն բեզարիլ իմ:

Դովլաթն Եթիբար չունե, լիփոր կերթա իր շըքարով.  
Լավ մարթն էն է՝ գըլուխըն պահե աշխարումըս Եթիբարով.  
Աշխարհս միզ մընալու չէ՝ իմաստնասիրաց խաբարով.  
Գուզիմ թըլոչի պես. բաղերումեն բեզարիլ իմ:

Ո՛վ կոսե, թե լիս կու ապրիմ առուտեմեն ինչրու մուտըն.  
Աստըծու ծեռումըն իիշտ է մարթու աշխարք ելուտըն.  
Ղուրթս էնդուր ծամփա չէ գընում՝ շատացիլ է խալխի սուտըն.  
Քըսա՛նըն՝ մե՛ դոկ չին պահում. աղերումեն բեզարիլ իմ:

Աշխարհս միզ մընալու չէ, քանի նըստինք զող ու սափին.  
Հում կաթնա՛կիր-Աթամի զա՛թ, նա՛լաթ՛ըլի էտ քու բափին:  
Հանփիրութինըս հատիլ է, չիմ դիմանում խալխի գափին.  
Ղոստիրըս դուշման ին դառի. յաղերումեն բեզարիլ իմ:

Սայաթ-Նովեն ասաց՝ դարդս կանց մե ծարըն շատացիլ է.  
Չունիմ վաղվան քաղցըր փառքըս, հիմի դարըն շատացիլ է.  
Բըլըուի պես էնդուր գուլամ, վարթիս խարըն շատացիլ է.  
Զի՞ն թողնում վախտին բացվելու. բաղերումեն բեզարիլ իմ:

Էսպես Արութինի ասած, ապրիլի սկզբին, քրոնիկոնի 447-ին (1759):

Ամեն սազի մեչըն գոված, դուն թամամ տասն իս, քամա՛նչա,  
Նաքազ մարթ քիզ չի կանա տեսնի՝ դուն նըրա պասն իս, քամա՛նչա,  
Ղա՛ստ արա՝ է՛լ լավ օրերու եդիվըն հասնիս, քամա՛նչա.  
Քիզ ինձնից ո՛վ կանա խըլի՝ աշուղի բասն իս, քամա՛նչա:

Անգաճըտ Էրժաթեն պիտի, գըլովսըտ ջավահիր քարած,  
Կութըտ շիրմայեմեն պիտի, փուրըտ սադափով նախշ արած,  
Սիմըտ օ՛սկեն քաշած պիտի, երկաթըտ փանջարա արած,  
Օչով դիմեթըտ չի գիոի. լալ ու ալմասն իս, քամա՛նչա:

Ճիպուտըտ վարաղնած պիտի՝ թահր ունենա հազար ունգով.  
Զարըտ ուաշի կուտեն պիտի, վուր դուն խոսիս քաղցր հանգով.  
Շատին զարթուն կու լուսացնիս, շատին կու քընեցնիս բանգով,  
Անուշահամ գինով լիքըն դուն օսկե թասն իս, քամա՛նչա:

Աժողիտ Է՛րկու կու շինիս, առաջ չայի, դափա գուզիս,  
Կու մենձըրվիս այվընումըն, պարապ վախտի ուափա գուզիս.  
Յիփ վեր գուքաս մեշլիսումըն, քաղցըր զող ու սափա գուզիս,  
Բոլորըտ գոզանիր շարած, մեշլիսի կեսն իս, քամա՛նչա:

Շատ տըխուր սիրտ կու խընդացնիս, կու կըտրիս իիվընդի դողըն.  
Յիփ քաղցըր ձայնըտ վիր կոնիս, բաց կուլի իիդըտ խաղողըն.  
Խալխին էս իլթիմազն արա՝ ասին. «Ա՛պրի քու ածողըն»,  
Քանի սադ է Սայաթ-Նովեն, շատ բան կու տեսնիս, քամա՛նչա:

Էսպես Արութինի ասած. քրոնիկոնի 447-ին (1759):

Արի համով դո՛ւուղ արա, խալխի նոքար, Սա՛յաթ-Նովա.  
Ամեն մարթ չի կանա ծանգի շահ ու շըքար, Սա՛յաթ-Նովա.  
Ով քիզի լիոի պարզիվէ, դուն տու շաքար, Սա՛յաթ-Նովա.  
Ղա՛ստ արա՝ շուշետ չըկոտրին, չըխըփին քար, Սա՛յաթ-Նովա:

Թեգուց դըրրատանըն պահ տաս՝ ծեժով չի խըրատվի խիվըն.  
Ինչըու անծնեն չըդու եհա անախտիի են չար դիվըն.  
Բեղասըլ ասըլ չի՛ դառնա, թոլով չի՛ սիպտակի սիվըն,  
Ծուոըն փետըն չի՛ դըրբատի ուանդան, դո՛ւրգար, Սա՛յաթ-Նովա:

Թեգուց իմանաս, գիդենաս աստղերու համբարքըն սիրուն.  
Անբարի գուրծըն կորած է՝ կա՛րթա Հարանց վարքըն սիրուն.  
Ավիտարանի խոսկիրըն մարքարիտ է, կարքըն՝ սիրուն.  
Մի՛ ամի խուզի առջիվըն լալ ու գովիհար, Սա՛յաթ-Նովա:

Թե էս կենաց փառքըն չուզիս՝ էն կենաց ալմասըն կու տան.  
Թե հոքուտ խաթիր շալ հաքնիս՝ զար քաշած ատլասըն կու տան.  
Թեվուր լալով զըխօում անիս՝ անմահացըն մասըն կու տան.  
Խոստովանիս արած միխկըտ՝ չանիս ինքար, Սա՛յաթ-Նովա:

Վուրտիդ հարսնիք, վուրտիդըն սուք, վուրտիդ սուրաթ խաղ է ըլում.  
Վուրտիդ ժամ, վուրտիդ պատարաք, վուրտիդ սիրով տաղ է ըլում.  
Թեվուր հոքուտ կամքն իս անում, մարմինտ բեղամաղ է ըլում.  
Վո՞ր մե դարդին կու դիմանաս, դուն ջըրա՛տար, Սա՛յաթ-Նովա:

Էսպես Արութինի ասած, քրոնիկոնի 446-ին (1758):

Բեղասլին վուր խոսեցընիս, լալ անհիլըն ինչի՞ն է շահ.  
Ուանգըն վուր սևադեն նընգնի՝ ալ անհիլըն ինչի՞ն է շահ.  
Սարթ վուր քու խոսկով միուանի՝ գալ անհիլըն ինչի՞ն է շահ.  
Պատանքին մե՛ ուանգն է հերիք՝ չալ անհիլըն ինչի՞ն է շահ:

Սարթ պիտի թանգ հախ տա, առնե խոսկիրըն փիր-ուստադեմեն.  
Ուանգըն ուանգերուն ծածկում է, հուզըթքըն լիքն է սադեմեն.  
Թեգուց զար-զարբար հաքընիս, վուր չըլի ասըլզադեմեն...  
Սիվ արաբի ծակտի վըրա խալ անհիլըն ինչի՞ն է շահ:

Լավ մարթն էն է՝ սիրով անե բարի հրիշտակնիրու կամքըն.  
Իմաստունի՞րն էլ չըտեսան էս աշխարի հուտն ու համքըն.  
Չուրս գըլխանի ուաշի վըրեն աջալըն դըրիլ է թամքըն.  
Աշխարըս միզ մընալու չէ՝ մալ անհիլըն ինչի՞ն է շահ:

Մեր ու մանուկ բաժանվեցան, մանուկն է՛նդուր ունի լալու.  
Սատանեն մե դամք է դըրի՝ Աթամի զաթըն վուրսալու.  
Շատըն սատանեն է տանում՝ վիրչըն մընում է վա՛լ տալու.  
Վուր չէ Ուտնիելի նըման՝ կալ անհիլըն ինչի՞ն է շահ:

Շուր երիտ չարխի-փալագըն դովլաթըն միզնից խըռով ա.  
Ում հաքին իին շալ ին տեսնում, էլ չին ասում, թե էս ո՞վ ա.  
Յարովըտ մեկ մըհլամ չունիս, Ենդուր գուլաս, Սա՛յաթ-Նովա.  
Զարեքըն դիղըտ չին գիդի՝ փալ անհիլըն ինչի՞ն է շահ:

Քրոնիկոնի 447-ին (1759):

Հիմքը Վերըստին նուրեցին, չաղ արին, Մողնու սուրփ Գև՛ուրք,  
Քար ու կիրըտ ոխչըրի կաթ շաղ արին, Մողնու սուրփ Գև՛ուրք,  
Աչ ու ծախ կախեցին՝ բրոլէ ծաղ արին, Մողնու սուրփ Գև՛ուրք,  
Յիրգնուց լուաճն վըրետ կամար-թաղ արին, Մողնու սուրփ Գև՛ուրք:

Պատիրըտ կարմիր ագուրով, սընիրըտ տաշ մարմար քարով,  
Հընդու միշեմեն դուս Եկած վարաքուրըտ՝ դալամքարով,  
Թագիրըտ անգին ակնիրով, ըզգիստըտ զարբարով, զարով.  
Քիմըտ ու խաչկալըտ դրախտի բաղ արին, Մողնու սուրփ Գև՛ուրք:

Վիրնատունտ՝ սանդալե տախտակ, ուանգըն է տորոնի նըման.  
Հոքով ու մարմնով կու սըրփի, ով քիզ գուքա մոնի նըման.  
Տապանակ ուխտի կըտակավ խորանտ Ահարոնի նըման.  
Սիաբանքըտ քաղցըր ծայնով տաղ արին, Մողնու սուրփ Գև՛ուրք:

Եշխեմետ հիվանդացիլ իմ, դի՛ղի համա իմ լալի.  
Վայսում իմ, թե դարդըն հալե, ի՛ղի համա իմ լալի.  
Շահի կարքած վեթիլի պես գի՛ղի համա իմ լալի.  
Տանեն դուս արածի նըման տի՛ղի համա իմ լալի:

Մե տիդ հուքմի-հեքիմ ըլկա՝ դուտըն Եհամ, կանչիմ հա՛րա.  
Կի կենա Լողմայի հեքիմըն, բալքամ դարդիս անե չարա.  
Տի՛ս, թե ի՞նչպես է շըփոթվի, դուն իմ խի՛լին մըտիկ արա.  
Զուրն ելավ, գերանըս տարավ, ժի՛ղի համա իմ լալի:

Սիրտըս Եշխեմեն Էրած է, դուգունըն, դաղըն ի՞նչ կոնիմ.  
Վո՞նց դոբա ունե, վո՞նց չափար, իիս Ենաես բաղըն ի՞նչ կոնիմ.  
Ասղի լարըն կըտըրվի է, դարդակ սադաղըն ի՞նչ կոնիմ.  
Նիտըս քարումըն կոտրեցի, թի՛ղի համա իմ լալի:

Պալամըն գիրըս չէ գըրում՝ մե չուրացած թանքի նըման.  
Խոսկիրըս մեմեկ չի ասվի՝ իմաստններու բանքի նըման.  
Մեչըն չիմ կանացի մըտնի, ծովի ծածկած վանքի նըման.  
Խոստովնահերըս հիոացավ, մի՛ղի համա իմ լալի:

Գիղումըն՝ մելիք-տանուտեր, քաղաք տիղըն՝ սուլթան-խան իս.  
Բաղումըն՝ վարթ ու մանուշակ, սարումըն՝ սըմբուկ-սուսան իս.  
Ղաբուլ ունե Սայաթ-Նովեն՝ թաք քու ծեռով դուն սըպանիս.  
Սիոնելուս համա չիմ հոքում, ցի՛ղի համա իմ լալի:

Եսպես Արութինի ասած. քրոնիկոնի 446-ին (1758):

Հուտըտ աշխար բըռնից, Փըռանգի մա՛ջոամ,  
Դաստամազըտ դառավ սիմ ու աբրեշում.  
Կըռնիրըտ շիմշատ է, մատնիրըտ է մում.  
Ծուցըտ բաղչա ունիս, յեշկըտ է դամիշ:

Յիս կանչում իմ մերանին,  
Ըսկըսպնական մերանին.  
Թուղ դոստիրըն շատանան,  
Թըշնամիքըն մեռանին.  
Ասի թե՝ յիս քու ախպեր,  
Քու մերն ինծի մեր անին:

47

Յիս կանչում իմ լալանին.  
Բաղեշխանեն լալ անին.  
Վա՛ թե հասրաթետ միոնիմ,  
Բըլբուլ լիզուս լալ անին.  
Դոստիրըտ հիոռու կանգնին,  
Յադիրըն գան՝ լալ անին:

Քի սազ գուքա ալ դումաշըն, նազա՞նի.  
Եկ ծակատիտ կա՛պէ զարլու մուղալիշ.  
Զեռիտ բըռնե օսկեցըրած մըկրատըն,  
Խուճուծ-խուճուծ կավերուտ տուր արալիշ:

Յիս կանչում իմ յարանին.  
Թեշնիս, վարսաղ, յարանին.  
Ո՞վ ասավ, թե նըհախ տիղ  
Յարիտ մեշըն յար անին.  
Ավիտարանըն կու տա  
Խոնար մարթուն երանին:

Պատվական տեսնելու նովարու նա՛շար,  
Բըլբովին գըժվեցնող թոփ վարթի սա՛շար,  
Աշկիրուտ ունցիրըտ ելավ մուկաշար.  
Թերթերուկիտ մազըն՝ զար, օսկու զարնիշ:

Յիս կանչում իմ զայանին.  
Նու ու Այիբ զայ անին.  
Դո՛ն իս ասի՛ նըհախ տիղ  
Յարի սիրտըն զայ անին.  
Ծա՛ն եր քաշի, չեր ոդիմնա  
Էս իմ քաշած զայանին:

Բեմուրվաթ յա՛ր, խիթըն գըլխես մի՛ տանի.  
Դարդիրըս շատացավ քանի մե քանի  
Գիղիմ վուր, յա՛ր, դուն ինծ լայիդ չիս անի՛  
Դուն մե թաքավուր իս, յիս մե խիղօ դավրիշ:

Յիս կանչում իմ մասանին.  
Սե ու Այիբ մաս անին.  
[Յիս քիզնից չիմ հիռանա,  
Գուգե ինծ անմաս անին].  
Սայաթ-Նովեն քու յարն է,  
Թեգուզ մասնեմաս անին:

Դաստամազըտ նըման սըմբով-սուանի.  
Վախում իմ, թե սերըտ սիրտըս կես անի.  
Կու միոնիմ, ել ինծի պես չիս տեսանի.  
Քու Սայաթ-Նովեն իմ, մի՛ անի դիմիշ:

Քրոնիկոնի 441-ին (1753), Արութիսի ասած. ուուբայի-բայաթի-բասիր:

## Ա ՀԱՎԵԼՎԱԾ

**1 (48)**

Փահրադըն միուած, Շիրինս ասաց՝ դարեն երված իմ.  
Քաշվիլ է վարթըն, մոդ չի թողնում, չարեն երված իմ.  
Բըլբուլըն ասաց՝ վարթիս խաթրի խարեն երված իմ.  
Տանումեկ ամիս մունչ իմ կացի՝ տարեն երված իմ.  
Աստված կու սիրիս, զար մի՛ հաքնի, զարեն երված իմ,  
Մեջլումի նըման ման իմ գալի, յարեն երված իմ:  
  
Զըկա փաշայի խազինումըն մալ քիզի լայիդ.  
Հալա չին գործի Քիրմանումըն շալ քիզի լայիդ.  
Օսկե մատնումըն դըրիլ իս դուն լալ քիզի լայիդ.  
Հաքիլ իս ատլաս՝ ռանգն է գուլգազ—ալ քիզի լայիդ.  
Աստված կու սիրիս, զար մի՛ հաքնի, զարեն երված իմ,  
Մեջլումի նըման ման իմ գալի, յարեն երված իմ:  
  
Խոսկիրըտ քաղցըր, լիզուտ շաքար—շարթի միչումըն.  
Գարունքվան ծա՛ղիկ, բաց իս ելի մարտի միչումըն.  
Մազիրըտ ուհան՝ փաթըթած է վարթի միչումըն՝  
Կանանչ տերևեն նամ չըկաթի զարթի միչումըն.  
Աստված կու սիրիս, զար մի՛ հաքնի, զարեն երված իմ,  
Մեջլումի նըման ման իմ գալի, յարեն երված իմ:  
  
Սալաթ-Նովեն իմ, Էնդուր գուլամ, դարդիրըս արբար.  
Մազիրըտ ուհան, կլապիտոն է, հուսիրըտ շարբար.  
Բարակ դամաթիտ խիստ սազ գուբա դիբա ու զարբար.  
.

Աստված կու սիրիս, զար մի՛ հաքնի, զարեն երված իմ,  
Մեջլումի նըման ման իմ գալի, յարեն երված իմ:

Էս մուստագաթի ձենով է, շատ լավն է Սալաթ-Նովայի ասած (Ժան. Օհանի):

**2 (49)**

Աչկ ու ունքըտ վեր իս թողի, հուքմըտ մե ոուս ցարի բաբաթ.  
Աշաբ քիզ ի՞նչ գեթ իմ արի. խոսում իս դուն չարի բաբաթ.  
Ով քիզի խայան մըտիկ տա, սիրտըն դառնա քարի բաբաթ.  
Թեգուզ պա՛հե, թեգուզ սպա՛նե դըռանըտ նոքարի բաբաթ:  
  
Դըռանըտ նոքար չիս պահի, թաքավուր իս՝ դուկ սըպանող.  
Խոսկըս առա՛կով իմացի, Լուսնի ասղ՝ փուգու սըպանող.  
Բացվիլ իս բաղի միչումըն, կա՛րմիր վարթ՝ բըլբու սըպանող.  
Կըտրի՛ տու, քանի կըտրում է քու թուրըն սարդարի բաբաթ:  
  
Յա՛ր, ինձ մե ծամփա կանգնեցու՝ կենամ խաթըրջամի նըման.  
Գիշեր ու ցերեկ լալիս իմ, աչկիրըս է նամի նըման.  
Թուդ դըռանըտ նընգած ըլիմ օտար-բարեկամի նըման.  
Անգալին Ա՛ստված սըպանե, Փահրադ-Շիրնի դարի բաբաթ:  
  
Գարնան շընչի ծաղկի նըման կարմիր վարթըն բաց է ըլում.  
Ի՞նչ օրուտ է քու բաղմընչուն, վուր բըլբուլըն լաց է ըլում.  
Պըռոշեմետ միդր է կաթում, թողնիս, լախետ թաց է ըլում.  
Էնդու համա քաղցր իս խոսում. լիզուտ է շաքարի բաբաթ:  
  
Սարթ իր խոսկով կու ծանանչվի, գուզե շահի վեզիր շինին.  
Բեղասըն ասըլ չի դառնա, թեգուզ վեքիլ, նազիր շինին.  
Թե կամենաս, ամենան տիդ քու ասածըն հազիր շինին,  
Սա՛լաթ-Նովա, խոսկըտ ա՛սա բելլու քամանդարի բաբաթ:

**3(50)**

Կիսամուրազ մի՛ սըպանի,  
Չունքի արիր տեր, նա՛զանի.  
Թե քիզ ավել լադ լար սիրիմ,  
Ումբրեն չանիմ խեր, նա՛զանի:

Աշխարումը [դուն իմ] ջան իս,  
Դուն իմ շահ իս, սուլթան-խան իս  
Ի՞նչ կովի միզ մըտիկ անիս  
Հազարեն մե ջեր, նազա՞նի:

Դարիբ դավրիշ իմ, հաջ չունիմ.  
Գըլխիս էրծաթե թաջ չունիմ.  
Յիս քիզ ավել իլաջ չունիմ.  
Դուն դառի ինձ տեր, նազա՞նի:

Կըրակ տըվիր կրակեն ավել.  
Չախմախ էլ ունիս դու, դավ էլ.  
Աշխարումը քիզնից ավել  
Ո՞վ ասաց թե՝ կե՛ր, նազա՞նի:

Սայաթ-Նովեն իմ, ճար չունիմ,  
Յիս վարթըն իմ, մին խար չունիմ.  
Թե դուն ասիր լադ լար չունիմ.  
Իղրարըտ ետ եր, նազա՞նի:

Եսպես լավ գարեհիի ծայնով. Սայաթ-Նովայի ասած (Ժան. Օհանի):

**4(51)**

Հընդու քաղաքեմեն հանաժ ջավա՛իր, լա՛լ արմանալու,  
Ինչի դիբչիս՝ նաղաշ կոնիս, օսկե փա՛րգալ արմանալու.  
Ամեն մարթ չի կանա ծարի շահ ու շըքար արմանալու.  
Մարթ հիդըտ չի կանա խոսի, Ռոստոմի-Զա՛լ արմանալու:

Ճիմշատի ծա՛ն՝ բըհամ եկած, շենքըտ տաշիլըն ի՞նչ կոնե.  
Երանի է քու տիրուչըն. լադին լաշիլըն ի՞նչ կոնե.  
Էրեսիտ խաս ա՛ մուրասա. դալամ քաշիլըն ի՞նչ կոնե.  
Կարմիր ու կանանչ ու ծերմակ, սարիսար, ալ արմանալու:

Դուն հիշտ դիմիշ անելու չիս, Ծըրաք վառած, դըժար ծարած.  
Ովոր էրեսըտ կու տեսնե, խիլըն կու դառնա շըվարած.  
Անգին լա՛դութ, անգին ա՛լմաս՝ բոլորքըտ ջավահիր շարած,  
Սկանդարի-Զուլդարի թողած ջընադ-հեքալ արմանալու:

Համաշա սեյրան իս անում, Վարթ ու մանուշակ քաղում իս,  
Շուշա-Բըրոյէ գուլա՛բդան՝ բերնետ վարթաջուր մաղում իս.  
Թաքավուրի թաջի չի՛ղա, օսկե թիլըտ շաղմաղում իս.  
Վուրսնուրթի ծեռնեմեն փախած ջե՛լրան, մա՛րալ արմանալու:

Յա՛ր, քիզնից հիուանալըս միոնելուս վըրա դըժար ա.  
Էշնեմետ Մեջլում իմ դառի. ի՞նչպես անիմ ինձի չարա.  
Ավելի չէ՛, Սայաթ-Նովեն քիզի ծառա ու նոքար ա.  
Նըրանից ծեռըտ քաշիլըն՝ շատ ա ետ ալ արմանալու:

## 5 (52)

Խաբար գընաց բըլբուկի մոդ. «Վարթըն քու գալուն մընում է,  
ծըխկընիրըն բացրացիլ է, վըրեն շոտ գալուն մընում է.  
Առավուտուց զանգակի պես քաղցըր ծեն տալուն մընում է»:  
Բըլբուն ասաց. «Զիմ կանա գա, պուշպուծես լալուն մընում է»:

Վարթըն ասաց. «Իմ բըլբուկին ալ պուշպուծեն վո՞ւս կու խափե.  
Թե խիլք ունիս, դա՛րիբ բըլբուկ, Ե՛լ քու բաղի ծամփեն չափե»:  
Քանի գուգե քընած տիղըն իր թըշնամին կուռըն կապե,  
Ելի վիրչումըն մելդանըն Ռոստոմի-Զալուն մընում է»:

Վարթըն ասաց. «Խա՛յան բըլբուկ, նա՛յաթ ետ քու Ելթիբարին,  
Անցկացավ ապրիլ-մայիսըն, մեկ օր չըհարցըրիր յարին»:  
Չեթուղ թե մուրազին հասնին, տի՛ս ի՛նչ արավ քավթար դարին,  
Փահրադին քըլունգն ըսպանից, Շիրին՝ խանջալուն մընում է»:

Աշխարումըն վարթն է Ելի բըլբուլերի սիրեկանըն,  
Բըլբուկի լիզվով իմ ասում. «Տե՛ր, պա՛հե վարթի նըմանըն».  
Աշխարումըս քանի սաղ իս, Սալաթ-Նովի գերեզմանըն  
Շահ-Աբասի լալի նըման, Շահի՛ վրեն գալուն մընում է»:

## 6 (53)

Մըտա եշխի քուրեն՝ խալիս դառնալու.  
Սիրտըս Ելավ քե ու այիբ, Երկու բեն,                   (քաբաբ)  
Կամով սովիթն մըտա՝ դարդըն բառնալու.  
Ել ո՛ւմ բըռնիմ սե ու այիբ Երկու բեն:                   (սաբաբ)

Դադա պիտի, խոսկըն դադիմի շինե.  
Շարբաբի միչումըն խամ թիլ չըհինե.  
Զորու նըման չասե՝ իմ դեղեն ծին է,  
Մարթ վուր ըլի նու ու այիբ Երկու բեն:                   (նաբաբ)

Ինչպես վուր կըրակին չի դիմանում մում,  
Էսպես սախաթ կուվի, ովոր խոսի հում.  
Սալաթ-Նովեն ասաց՝ Ենդուր չէ պակսում  
Երկու աչկես Երկու այիբ, Երկու բեն:                   (աբ-աբ)

Ես հայերեն դարահեցա է (ծան. Օհանի):

**7(54)**

Այիբ Ա՛ստված սիրիս, Բեն բարի կացի.  
Գիմ գագաթըոտ արա դա ու այիբ թո.      (Դար)   
Եջ երանի չըկա Զա զալում մարթուն.  
Է, Ը էրեսիտ դի թո ու այիբ թո:      (Թար)

Ժե ժամանակ հասավ աչկերիս լալու.  
Ին ինձի գըցեցիր դարդըս վոխպալու.  
Լյուն լալով իմ յիս աշխարիս մընալու  
Ենդուր վա՛խ քաշեցի խե ու այիբ թո:      (Խար)

Ծա ծովումըն մընաց, դուս չէկավ նավըտ.  
Կեն կամով ավելցըրար սըրտի ցավըտ.  
Հո համան կանչում իս ծա ծայնով դավըտ.  
Դաթ դա՛բով կաց ծարիս ճե ու այիբ թո:      (Ծար)

Ռե րուն ծո ցամքիլ Է, Հյուն հունար ունի,  
Փլուր փակեցին դուռըն, Քենը քար ունի.  
Եվ Օ Ֆեն կարթալու Ա՛ստված ծար ունի,  
Հալալ Սալաթ-Նովոն՝ կեն ու այիբ թո:      (Կար)

Ես ալբենական դարահեցա Է, հալերեն (Ժան. Օհանի):

**8(55)**

Ալիբբիմըն կարթացիլ իմ դասեղաս,  
Հասա Ռա, Է, հասա Ջե, հասասե.  
Անգըրծակի մե ծեն էկավ դասեղաս,  
Անգած կալա, չիմացա ինչ հասասե:

Հազար տարին մարթու աչկին թաքավուր.  
Քանի տընանգ, քանի հարուստ, թաքավուր.  
Չի հարցընի ախկատ, հարուստ, թաքավուր՝  
Մահըն վուր կա, առանց կաշառք հասասե:

Ռառնացավ, թըթկեցավ կինքըս, ծովացավ.  
Ախ քաշելեն սիրտըս նընգավ ծովացավ.  
Կաթելով, կաթելով, դարդըս ծովացավ,  
Մե մարթ չըկա, վուր ինձ խըրատ հասասե:

Հազար տարին մարթու աչկին քարասուն.  
Ո՞վ է մնացի աշխարումըս քարասուն,  
Սա՛յաթ-Նովա, տարին էլավ քարասուն.  
Ռուն մահի հիդ, մահըն քիզ հիդ հասասե:

Ես հալերեն թեցնիս Է (Ժան. Օհանի):

1(56)

Թաքավուր իս, դի՛վանս արա, յա՛ր, քու արիվըն կու սիրիս,  
Նըհախ տիղըն մի՛ բարգանա, շա՛ր, քու արիվըն կու սիրիս,  
Կարմիր վարթըս մի՛ փուկ ածի, խա՛ր, քու արիվըն կու սիրիս,  
Ուրոր գընաս՝ ինձ ել հիդըտ տա՛ր, քու արիվըն կու սիրիս:

Վարթըն այվընումըն կուլի՝ նամ-նամ արխին սազ ըլիլով,  
Կանանչ փոթոլըն բացվիլ է՝ կարմիր ու գուգազ ըլիլով,  
Ամեն ժիտ բըլբուկ չի դառնա՝ վարթին փիանդազ ըլիլով,  
Վարթըն ակորվին մի՛ շանց տա, ծա՛ռ, քու արիվըն կու սիրիս:

Վարթըն մալիսին բաց կուլի, փոթոլըն կու տանին խեչըն,  
Քանի վուր գուգե թառամի, պետկական է վարթի չեչըն,  
Քիզ օսկե ամբարչա պիտի, մի՛ նըստի պըղընծի մեչըն,  
Ո՛վ ջավա՛հիր, անգին ալմաս քա՛ր, քու արիվըն կու սիրիս:

Ակուավըն բըլբուկ չի դառնա, քանի գուգե վուր ախ անե,  
Ամեն ոանգի վարթի մեչըն կարմիր վարթըն սիրեկան է,  
Գուր մարթըն մանգալով գուգա, ծից կուտա, տակուն կու իհնե,  
Մի՛ թողնի հասկըտ քաղելու, բա՛ր, քու արիվըն կու սիրիս:

Բըլբուկըն սարեմեն գուգա, իր լիզվովըն բա՛ղ կանչելով,  
Ակըռքնիրըն վեր թափվեցան՝ շատ իլթիմազ, ա՛խ կանչելով,  
Սայաթ-Նովեն բեզարիլ է շատ յարանա խա՛ղ կանչելով,  
Դիթիմազըն է՛սպես կուլի, յա՛ր, քու արիվըն կու սիրիս:

2(57)

Սուսան-սըմբուլ դաստամազըտ երեսիտ խափանգ իս արի,  
Կավիրըտ օլոր, տար ու բիր, արայիշ՝ գուկիանգ իս արի.

**Հանգ իս արի, յա՛ր, ա՛ յար,**  
**Սիրտըս արիր յարա, յա՛ր,**  
**Գըլուխըս մատադ կոնիմ'**  
**Ղաբուկ անիս, յա՛ր, այար.**

Ոմբրիս լարըն ծըքիլ, դադանգ իս արի,  
Վա՛ թե կըտըրվիլ է դափիլ, յա՛ր, ա՛ յար:

Աչկիրըտ ծով, երեսըտ շովի, էշխըս լող կու տա անդայիդ,  
Անքանար ջուրըն իս գըցի, բոլորքըս տալդա, ջըրիդիդ.

**Ջըրիդիդեն նոյ այիբ**  
**Կուր փըրկըվից նու այիբ,**  
**Նոյին գեմին ազատից,**  
**Ինձ՝ Այիբն ու նու այիբ:**

Մեմեկ ինձի տիսուտ թե անիս լայիդ,  
Կու կենամ ջամալիտ մայիլ, յա՛ր, ա՛ յար:

Հասրաթեմետ չուիր նընգած, Սեջլումի պես՝ Լելլու զայաթ.  
Յարալու շեյրանի իս դառի, յիս քու եղնեն՝ ավշի-սայադ.

**Սայաթ-Նովեն իմ, Սայադ.**  
**Անունըս հաշվիր՝ սա՛յ-ադ.**  
**Տիսուտ կարոտ չըթողնիս,**  
**Չասիս՝ սա օտար, սա՝ յադ:**

Կամ թե գուրծավուր իմ, բեզարա խայաթ,  
Արամըտ ինձ չիլի վայիլ, յա՛ր, ա՛ յար:

Կու տամ, ասաց՝ գիրըն առավ.  
Հորդանանու գիղըն տարավ,  
Աթամ վուր էտ շարթըն արավ՝  
Նաթիշում դըժուխկ գընաց շամ:

Զամ հազար տարի անց, Տերն էկավ աշխար,  
Ազատից հոքիքըն, բան չըթողից չամ:

Զամ ու նիդ օրիր տեսան շատ:  
Ով ունեցավ հույս ու հավատ,  
Իդրարին մնացողըն հաստատ  
Տերըն կու հիշե ամեն ժամ:

Ժամըն ու ժամանակն է նիդ.  
Մահըն գուքա ամենան տիդ.  
Կու լինի դադաստան ահիդ.  
Աղաչիմ փրկիչըն՝ հուսամ:

Հուսամ Սալաթ-Նովես, միղկիրըս քավիմ,  
Թե չէ դադաստանին լիս ի՞նչ ջուղաբ տամ:

### 3(58)

Աստուծ խիալ արից. սըվթա  
Ստիդից նախ մարթըն Աթամ,  
Աթամի կուղեմեն քաշից,  
Յիվան տըվից նըրան համդամ:

Համդամ գուզիք՝ էս ծիգ դարար,—  
Տերըն ասաց,— չո՛ւտիք էս բար,  
Թե չէ կու տեսնիք մինձ զարար,  
Վուր առիլ իք էս պըտդի համ:

Համ առնիլըն ուզից նախամար Յիվան,  
Զարըն գըթավ նըրան, տըվին իրար կամ:

[Կամով նընգավ չարի թոռըն],  
Քաղից արքիլված խընձորըն,  
Խափից Աթամ նախահորըն,  
Կերան ու դառան մերկանթամ:

Մերկացան ու ամանչեցին,  
Փոշման դառան ու լացեցին,  
Տերըն վուր էկավ՝ խափեցին.  
Թե՝ օցըն էր արավ սիթամ:

Սիթամ արից Տերն էլ, քըշից դըրախտեն,  
Քանի վուր պատվիրքըն չըպահին թամամ:

Թամամ մութ բըռնից աշխարըն,  
Ի՞նչ է Աթամ-Յիվի ծարըն.  
Սատանեն գըթավ հընարըն.  
Ասաց՝ գուզիք, ծիգ լուս կու տամ:

**4(59)**

Աշխարեմեն բեզարի իմ, ել բերնումըս համ չըկա, չէ՛,  
Թռամիլ է սըրտիս վարթըն, սափա, զող ու դամ, չըկա, չէ՛,  
Ամեն մարթ ի՞րան է քաշում, դարդիման համդամ չըկա, չէ՛,  
Բոլորթըն դամքաշ ին դառի, ուրախ սիրտ անգամ չըկա, չէ՛:

Դառըն խոսկով սիրտըս խուցից, վարի ծեռնե՛մեն գուլամ լիս,  
Դոստիրըս ողուշման ին դառի, յարի ծեռնե՛մեն գուլամ լիս,  
Մեկ չէ, երկու չէ, աշխարում շատի ծեռնե՛մեն գուլամ լիս,  
Ելթիբարըն վիրացիլ է, ասկ ու բարեկամ չըկա, չէ՛:

Ե՛ ադալաթ հուցմի-հե՛քիմ, սուզըս ի՞նչ է, ա՛սա ինձի,  
Վուր հաքցըրիր իմ չուզեցած սիվ ու սութ լիբա՛սըն ինձի.  
Խըմցըրեցիր անմիղ տիղըն էս աղոփ թասըն ինձի.  
Հոքուտ մեչ ի՞նսափ, սօրտումըտ շընութ ու քարամ չըկա, չէ՛:

Թե ոուխսաթ տան, սիրտըս բանամ, կու տեսնիք՝ դարդիրըս ծով ա,  
Դովրանեմեն դուս ին գըցի, իմ տիղըս բըռնողըն ո՞վ ա,  
Ասում ին՝ տարքըտ թամամից, լա՛ց ու վո՛ւսպա, Սա՛յաթ-Նովա,  
Հե՛յ վա՛խ, ել ծեռիս քամանչա, մեջլիսումըն ջամ չըկա, չէ՛:

**5(60)**

Իղրար ու ամագ չունեցող յարի ծեռնե՛մեն դադ կոնիմ,  
Բըլրուկին վարթեմեն զըրգող խարի ծեռնե՛մեն դադ կոնիմ.  
Մարթուս Ելթիբար չըմընաց, դարի ծեռնե՛մեն դադ կոնիմ.  
Դիփ խառնակիչ ու ավիրող չարի ծեռնե՛մեն դադ կոնիմ:

Ել հոքեվախ կըրոնավուր, մարթասեր իշխան չըմընաց,  
Զորըն անզորին կերիլ է, մարթկանց վըրա ջա՛ն չըմընաց.  
Էս զամանի գոզալներուն ախրաթ ու իման չըմընաց,  
Քա՛նի կանչիմ դադ ու փիրյադ, զարի ծեռնե՛մեն դադ կոնիմ:

Փիքըր ու խիալըս հարգահ աշխարքի ցափի մասին է,  
Խիդմի, նաշարի, տընանգի, բարու ու լափի մասին է,  
Սայաթ-Նովու խոսկըն իրավ ու անիրավի մասին է,  
Յոխսուկին զըրգող, բեհնսափ վարի ծեռնե՛մեն դադ կոնիմ:

**6(61)**

Ամեն մե մըտիկ տալով տարար խիթըս, քամալըս.  
Ե՛յ նազա՞նի, ուա՞հմ արա, դուն մի՛ դառնա աջալըս.  
Հենց ծեռովըտ կապեցիղ, էնպես բաց էր իղբալըս,  
Էշխեմետ հիվանդացա, չիս հարցընում իմ հալըս.  
Քիզիքիզ մըտիկ արա, փոշմանելու վախտըն է:

Իմ թալնիլըն քու բանն էր, չասիր, թե ի՞նչ իմ անում.  
Սըրտով սիրածըս դո՛ւն իս, էլ ինչի՞ իս արմանում,  
Ուրիշներու խոսկիրով կապաժ յարես հիդ անում.  
Աչկըս ձանապարիտ է, ինչի՞ իս շատ ուշանում.  
Մե խալվաթ օթախումըն բարիշելու վախտըն է:

Զու պատվական գըլուխըն դուն ավարա մի՛ անի,  
Էս իմ խունի ջիգարըն հազար փարա մի՛ անի,  
Իմ ու քու սըրտի բանըն դիփ աշկարա մի՛ անի,  
Արութինի շախ սիրտըն մեկ էլ յարա մի՛ անի.  
Կամով ու ծիդ անելով փաթաթվելու վախտըն է:

**7(62)**

Գելն ու չոբանըն մեկ-մեկու ոաստ էկան.  
Չորանն ասաց. «Յիս քու հալըն շանց կու տամ,  
Թե բարով կու գըցիմ չոմբախիս տակըն՝  
Աղվեսի պես ցընկցընկալըն շանց կու տամ»:

Գելն ասաց. «Մուլափ տամ գեղինըն մըթնի,  
Ուսուլով ման գուգամ, բինետ կու գըթնիմ.  
Քու շըներու հաչոցեմեն չիմ խըրթնի,  
Առուտեհան խերն ու շառըն շանց կու տամ»:

Չորանն ասաց. «Հենց գիդիս դուրթ քո՛ւն ունիմ,  
Մե աչկ ու անգածըս քու կըլոնումն ունիմ,  
Ամեն դոչի գըլիսին մեմեկ շուն ունիմ.  
Շըդիտ երկըթե կըրկալըն շանց կու տամ»:

Գելն ասաց. «Վուր ամբըն վեր գա ծըմակին,  
Ակոնքըս կու գըցիմ դոչի դըմակին.  
Վուրըն կու խիխտիմ, վուրն էլ իմ քամակին  
Մեմեկ, մեմեկ դիմաց սարըն շանց կու տամ»:

Սայաթ-Նովեն ասաց՝ լիս կարմիր կով իմ,  
Կովկիթըս կոտրիլ իմ, հարսից խըռով իմ,  
Գիլի հիդ բան չունիմ, չոբնին կու գովիմ.  
Մե գամ էլա կաթսի համըն շանց կու տա:

## 8(63)

Մախուին ու ոխչըրի միսըն կըռվեցան,  
Ամեն մեկըն ասում էր՝ «Մազեն յիս իմ,  
Քու մեջըն ի՞նչ դըվաթ կա, ի՞նչ իս դուս տալի,  
Մարթու դըվաթ տըվողն ու փազեն յիս իմ»:

Մախուին ասաց. «Օխտըն շափաթ պաս ունիմ,  
Գըլխիս ծառա օխտըն նորահարս ունիմ.  
Համիմ, սըլտոր, պիտնա ու պըռաս ունիմ,  
Աթամորթու սըրտի մուրազըն յիս իմ»:

Ոխչըրի միսն ասաց. «Իմ մեջն է համըն.  
Կու դընին փլավումըն՝ կու քաշին դամըն,  
Ինձ մաթլաբեն կոծին, քիզ կոծին ջամըն.  
Զիգրու կու պատուցնիմ, քու ջազեն յիս իմ»:

Մախուին ասաց. «Քանի փըթվիս, պատըռվիս,  
Պիտի վուր պաս պահիս, հազար փըթըրվիս,  
Միխսկիրիտ դարց գաս ու պիտի հաղորդվիս՝  
Դըժուկին ու դըրախստի յազեն յիս իմ»:

Ոխչըրի միսըն ասաց. «Պակսիլ է օրըն,  
Ղիփունս ինձ ին գովում՝ քաշալն ու քոռըն.  
Քիզ կու քոռացընե իմ մատոյի գորըն,  
Լավաշում փաթաթած թավազեն յիս իմ»:

Սալաթ-Նովեն ասաց. «Խոմ գի՛դիք՝ օց իմ.  
Գուզիք՝ երկսիտ մետի մերճաշ սըղոցիմ.  
Կու վիկալիմ ձիզ, մութըն տիղըն կոծիմ,  
Կողպեքըն կու դընիմ՝ ձիր ուազեն յիս իմ»:

Տղեն ու ախչիկըն մեկ-մեկու դեմ էլան.  
Տղեն ասաց. «Բա՛րով տեսանց, ի՛մ սիրած,  
Թեվուր գովերտ ասիմ, լիզուս չէ պատում.  
Բոյըտ սալբու-չինար՝ դարարին բերած,  
լի՛ս քիզմեն էրած»:

Ախչիկն ասաց. «Գըլխես ուա՛դ լի, տո գա՛դա,  
Նըհախ տիղըն գըլուխըտ մի՛ տա բադա,  
Շատ քիզ պես իմ տեսի շահ ու շահզադա.  
Բոյըտ սալբու-չինար՝ դարարին բերած.  
[դո՛ւն ինձմեն էրած]»:

Տղեն ասաց. «Սիրտըս սըրտիտ կեսըն է.  
Քու ծամփեն դետը չէ, քու ծամփեն դե՛սն է,  
Արի հենց բան բըռնինք՝ օ՛չով չըտեսնե.  
Թամամ էս աշխարքիս մինք կուլինք գոված.  
լի՛ս քիզմեն էրած»:

Ախչիկն ասաց. «Արի մինք չանինք շըփոթ,  
Վախում իմ խարարըն գընա հորըս մոդ,  
Թե հերըս իմացավ, [կուլի միզ ամոթ],  
Կոնտ քիզ մեշտ ի կես. խանչալըն ձեռաց.  
դուն կուլիս մեռած»:

Տղեն ասաց. «Ա՛փսուս, ինչի՛ նազ արիր,  
Շուտով շուր եկար դուն, իլթիմազ արիր,  
Նընգա վուտիտ տակըն, փիանդազ արիր.  
Ա՛խչի, հենց գիդեիր լի՛ս իմ քու ասած.  
ասկու եր անիծած»:

Ախչիկն ասաց. «Սիրտըս խոսկով լըցրեցիր,  
Յիս իմն էի ասում, դուն ավելցրեցիր,  
Քու դուլըն կուլիմ, թեվուր ինձ պըրծեցրիր.  
Թամամ էս աշխարքիս մինք կուլինք գոված,  
լի՛ս քիզմեն էրած]»:

Սալաթ-Նովեն խաղիր կոսեր հանգերով,  
Երկու յարըն կու խաղեին նարդերով,  
Մեկ-մեկու հիդ շանց կու տեհն վարթերով,  
Թաք նըրանց մեջըն յիս էի էլած,  
չըլեի էրած:

**10 (65)**

Յարի ծեռնեմեն դադ կոնիմ, փըշին գերի բըլբուլ իմ լիս,  
Խնձ համա դըռնիրըն փակ ին, վանքի դուռըն մե դուլ իմ լիս,  
Խոսկիր չիմ գըթնում, վուր ասիմ. սազըն ծեռիս մալուլ իմ լիս,  
Կըրակի կողքին բուացըրած, թառամած մե սըմբուլ իմ լիս:

Վունց արևից երված ծաղիկ, երված իմ լիս իմ յարեմեն,  
Երված յարիս դիդ չըղըրից իր փիրուզետ խաս կըռնեմեն,  
Չանի լացի, աչկըս թացի, անց չըկացավ միր դըռնեմեն,  
Չահիլ կինքըս տանուլ տրված, մե փըշըրված բըլբուլ իմ լիս:

Նո՞ւր կու լաս դուն յարիտ համա, օրիրըտ դար, Սա՛յաթ-Նովա,  
Ո՞վ կու հարցնե, թէ յար չունիս, խաղիրըտ՝ յար, Սա՛յաթ-Նովա,  
Վարթ ուգեցիր խաս բաղչեմեն, քիզ տըվին խար, Սա՛յաթ-Նովա,  
Ասա՛ չունիմ ումբը ու արիվ, ծըմիո չանցած կու հալիմ լիս:

**11 (66)**

Յա՛ր, քու կարոտըն քաշում իմ անմահական ջըրի նըման,  
Ռա՛հմ արա, դուռըտ եմ եկի օջախի ու փըրի նըման,  
Մերըտ սիրտըս կես է արիլ ջահվարդարի թըրի նըման,  
Եշխիտ ալավըն ինձ երից բարելական հըրի նըման:

Էլ քանի գըցիս սարեսար, ուա՛հմ արա, յա՛ր բեմուրվաթ,  
Վո՞ւ աչկումըս լուս է մնացի, վո՞ւ գարդանումըս թաղաթ,  
Թե դադ կոնիս, ես էլ շատ է, սպանեցիր ինձ թամամ թաքաթ,  
Երված սիրտըս հովցընելու բըխի՛ր դու ախպուրի նըման:

Վունցոր կարոտ մե ովստավուր դուռտ է եկել Սայաթ-Նովեն,  
Անց է կացիլ ամեն չարկապ, ամեն արկել Սայաթ-Նովեն,  
Թեվուր կորցնիս էլ չիս գըթնի նորից մեկ էլ Սայաթ-Նովեն,  
Նա մի հատ էր՝ աշխար եկավ քանց մե դարիբ հուրի նըման:

**12(67)**

Յիս մե ղարիբ բըլբուկի պես,  
Դուն մե գուշան բաղ ի՞ս աջաբ,  
Յիս են գըլխեն իմ վերանա.  
Դուն բինադան վաղ ի՞ս աջաբ:

Մինա է գարդանըտ բարցըր,  
Լիզուտ նուղուկեմեն քաղցըր,  
Գանա օրեն մի օր հարցո՞ւր,  
Իմացա՞ր ահվալըս աջաբ:

Մե չիս ասում՝ Սա՛յաթ-Նովա,  
Ես աշխաքում տերըտ ո՞վ ա,  
Կամ իմանաս ի՞նչ աբով ա  
Իմ քու դուռըտ գալըս աջաբ:

**13(68)**

Բըլբուկի պես ծայն է տալի, ի՞նչ քաղցըր ավագ է անում,  
Մոդ է արի ղուլ-ղարավաշ, կըշտումըն փարվագ է անում,  
Բըլնիլ է վարժի փոթոլըն, գուլին փիանդագ է անում.  
Յիս ի՞նչ անիմ, իմ սիրելին ինձիդ գուլգավագ է անում:

Սալբի բոյըն համամիցըն զալիս տիղըն բեզարիլ է,  
Ունցիրըն դալամով քաշած, աչկիրըն խիթըս տարիլ է,  
Շիդումըն օսկե ամբարչա, յախին մարքարիտ շարիլ է.  
Մուրկարըն գուլաբաթինով զար-ղալամքարըն կարիլ է,  
Զերըն գիմխա գոտկին մեկնած, մինա քամար սագ է անում:

Հաքիլ է սաղրի քոշիրըն, կրունգն երժեթե նալ է գըշի,  
Օսկեթելով բավթեն կարած, ըուանգ-ըուանգ ինալ է գըշի,  
Գոտկի տուտըն մինչև յակեն յաղութ, յաման, լալ է գըշի,  
Շամկիլ է զարլու շարդարըն, գոլիխն քիրման շալ է գըշի,  
Կոսե՛ հալա շեր վախտըն չէ. ուշանում է, նազ է անում:

Էրեսըն գուգագ լալի պես, պըռոշըն լուլա-փարա է,  
Խոսւցնում իմ, ջուղաբ չի տա, են կողմեն սիրտըս յարա է,  
Հաքիլ է զարլու մինթանեն, կու հանե՛ լաշիլ խարա է,  
Կըռնիրըն շիմշատ է քաշած, բոյըն մե քոչկ ու սարալ է,  
Յիս ի՞նչ անիմ, վուր սպանում է, ջալլաթի պես ջագ է անում:

Քաղցըր իխտիլաթ ունի, Մըսըրու ղանդ ու շաքար է,  
Շուտկըն ինձի նորոգիլ, նուր բացված գուլ ու բահար է,  
Շոցի մեշըն մե ջուխտ շամամ, ջավահիր ու ալմաս քար է,  
Ով չէ առի անուշ հուտըն, աշխաքըումըս ի՞նչ կու ծարե,  
Թե հարցընիս, Սայաթ-Նովեն էսպես յարին բանդիվար է.  
Բանդիվան փարվան իմ ելի. նըստած է, Շիրագ է անում:

ՎՐԱՑԵՐԵՆ

ԽԱՂԵՐ



Պայծամու զառելիքացոյն բան եա,  
Ըստու զառու, պահան եա, թշնան եա,  
Հանօղելուու ուսեցու մտան եա,  
Եսենուրու եա, խմանիս եա, բան եա,  
Եղցու նորովու չյօրանո, ռսմո եա.\*

## 1

Ի՞նչ զարբար իմ, ի՞նչ ատլաս իմ, լիս ի՞նչ զար իմ, գիղի՞ն աջաք.  
Սանհշակի, վարթի կարոտ ի՞նչ գեփյուր իմ, գիղի՞ն աջաք.  
Գիշեր-ցերեկ սազը ծեղիս մե նոքար իմ, գիղի՞ն աջաք.  
Քու ժընուղքըտ իմացիլ ին, վուր քի յար իմ, գիղի՞ն աջաք.  
Բա ինչպե՞ս Ե' դուն չիմացար. խելագար իմ, գիղի՞ն աջաք:

Դե արի ինձ անգած արա, թե աշխարը վունց ման Եկա.  
Լելումի թայ յար կորցըրի՝ Մեջլումի պես հա՛ ժուռ Եկա.  
Բըլըուկի պես վարթ պըտրեցի, մեկ Ել չայիր-չիման ընկա'  
Վարթիս ծամիեն Ել չըգըթա՛ մինչի վիրչը զուր ման Եկա.  
Արիվ տեսքըտ շա՞նց տուր, վառված մինութար իմ, գիղի՞ն աջաք:

Ես իմ սըրտի դարդ ու ցավըն իմաց տըվի իրանեթին,  
Արիվիքին, արիվմուտին, թաքավուրին, ժողովուրթին,  
Ել ի՞նչ կանամ ավել անիլ՝ յարի շեմքին ինձ կու մորթիմ.  
Եսքան իլթիմազն անում Ե ծար ու ծըրաք մե մոր վուրթին.  
Մաշկեցա, հալկեցա պըրժա՛ լիս շաքար իմ, գիղի՞ն աջաք:

Աշունքվա վախտըն հասիլ Ե, ինչի՞ հիդ մընամ շըվարած,  
Քու վարթըն ինչրու կու բացվի, լիս Ել... ո՞վ սադ, յա ո՞վ միուած,  
Երգեն ումբըր կունենայի, վուր չըլեի Եշխետ երած,  
Ես գիշեր քու մոդ իմ գալու, մա՛տադ իմ քի, ունքիրըտ բա՛ց,  
Շուտ-շուտ չասիս՝ «Վի՛կաց, գընա՛», լիս քի հյուր իմ, գիղի՞ն աջաք:

Սալաթ-Նովեն գանգատ ունե, վուր ման Եկա թուր չըգըթա՛,  
Ուգում իմ թե սիրտըս խուցիմ՝ պըտրեցի մե թիր չըգըթա՛,  
Շուցիտ պահած ջուխտ նըռնիրուն համսելու մե դուր չըգըթա՛,  
Սըրտիս, գըլիսիս բըռնած ցավին մե շարա, մե դիդ չըգըթա՛,  
Բերում իմ զար աղլուխնիրըն, լիս խումար իմ, գիղի՞ն աջաք:

## 2

Կոկոնի պես ծիժ ես կերիլ, Են կաթից Ե, վուր սիրուն իս.  
Շուշան գունքիտ ո՞վ կու հասնե, Են հացից Ե, վուր սիրուն իս.  
Շիրազի-Շամախու սո՛ւրահ, տեսակից Ե, վուր սիրուն իս.  
Լավ քուրայում հալած օ՛սկի, կրակից Ե, վուր սիրուն իս:

Դուրսըն քի մինծ շառ Ե սպասում, դուրս արի տե՛ս, սովթան-խան իս.  
Բաղումըն ալ վարթ ու նարգիզ, սարումըն սըմբուկ-սուսան իս.  
Օսկեթիլի վըրեն շարած մաքքարիտի թանգ շարան իս.  
Պըրընձե քարկի թաքուհու մանյակից Ե, վուր սիրուն իս:

Ես մե յանումն արար աշխար, Ես մե յանում դուն իս սազում.  
Շուցիտ մեշըն՝ վարթի փնչեր, բերնումըն՝ բըլըուկի լիզուն.  
Քի պես փերի-հուրիզադա հենց մե՛ գամ տեսա երազում.  
Ես օրվանեն հա՛ ասում իմ՝ հրիշտակից Ե, վուր սիրուն իս:

Հիռու տիղանց Եկած մաթահ, Հնդու շավզ ու հիլ, միխակ իս.  
Ենդու համա թանգ հախ ունիս, վուր զարբարով սիլա հակ իս.  
Նաղշած օսկե դութում պահած հեքիաթներու անգին ակ իս.  
Սիրուն սալբու, սադափ շարած, տախտակից Ե, վուր սիրուն իս:

Մե չի՛ս գալի, չի՛ս ասում, թե ի՞նչ իս լալի, Սա՛լաթ-Նովա.  
Զըրեն դուրս Եկ ինգլիզի նա՛վ, չուրս բոլորքըտ անտակ ծով ա.  
Ցերեկն արիվ, գիշերն աստըդ, քու թարիփըտ աշխարով ա.  
Տասնուիինգ օրըն բոլորած լուսնակից Ել դուն սիրուն իս:

Մատաղ իմ քի, արի ինձ մի՛ չարչարի,  
Մի՛ շըփոթի ինձ ու ինչ-վուր օտարի.  
Ես հանգի սուս չեի լըսած մե տարի՝  
Հենց գիդեի դուռըն բաց է իմ յարի՝  
Տեսա քընած, դուռն էլ փակ բեհորարի:

Մարմար հե՛քալ՝ քարզահ քաշած ու նախշած,  
Օսկե սիմ իս, մավթովի պես դուրս քաշած.  
Ի՞նչ կույի, վուր մե գամ հյուր գաս ինձ հիշած,  
Վուր մինչի լուս նըստինք, խոսանք համաշա.  
Եշխն ինձ վառից, շատերին էլ կու վառի:

Սուրմի համա ուզում իս օսկե միլըն,  
Զառ շուրերուտ՝ Լահիշանի թանգ դիլըն,  
Տերիտ բըռնած ունիս միխակն ու հիլըն,  
Ո՞վ էր տեսի քու ես վախտի քնիլըն.  
Դե ի՞նչ էրազ տեսար, ա՛սա ծըշմարիտ:

Ալ ծիծու իմ, գինըս վուղչին այան ա,  
Ժողում պահած սերկնիլ իմ մե դանա.  
Յիս կու մըրսիմ՝ դուն ինձ պահի տաքանամ,  
Մանիշակ իմ՝ քու շուրջին չիմ դիմանա.  
Թե դուն վարժն իս՝ ինձ թայգովըն համարի:

Երեխու պես ետ ի՞նչ ժին ու ժանգ ունիս.  
Ժովի միշին գեմու նըման լանգ ունիս.  
Աչկիս քո՛ն թի՝ խաշխաշ ունիս, թանգ ունիս.  
Սայաթ-Նովուց է՛լ ավելի հանգ ունիս,  
Դուն գոզալ իս՝ լիս էլ նըման նոքարի:

Եսպես իր դոստը խաբել է և դուռը փակել. ցավալիորեն մնացել է վշտացած, նրա վրա է  
ասել է. (Երգչի որդի Օհանի ծանոթ.)

Եշխն սիրտըս, հենց էն գըլխեն, քու սըրտի հիդ կարիլ է,  
Վունցոր խալիս իին երժաթըն օսկու հիդ հարմարիլ է.  
Ակրոքնիրըտ մարքարտի պես կոսիս մեկըն շարիլ է.  
Զինար բոյով շըվաք կոնիս, վունցոր ամպին վայիլ է,  
Արիվի պես լուս իս տալի խուղին էլ, աշխարին էլ:

Լուսին տեսքըտ շա՛նց տու, տեսնիմ, թեվուր իմ լավ յարն իս դու  
Խսանիեն եկած, գարնան քամու բարեբարն իս դու.  
Օսկեթիլըն միչըն քաշած Վենետիկի գարն իս դու...  
Օսկեզըրած զարնըշանըն մարմինըտ զարթարիլ է:

Տիսուտ կարոտ հա՛ լաց կուկիմ, արուն-արտսունք հուսելով.  
Օսկեթերնով շնուք կու տաս՝ քաղցըր ասիլ-խոսելով...

Քի պես դաշտի ջերան-մարալն իր եղիվեն, ասելով,  
Ինձ պես շատ վուրսուրթ չոլերում, ման աժիլ-չարչարիլ է:

Սիրուն ասիլըն քիզ քիչ է, խալխըն տեսքետ գերված է.  
Ինչ ուանգի էլ զարբար հաքնիս, կոսիս քիզիդ մերված է.  
Յիս չիմ սիրի խային յարին, սիրտըն դաղեն երված է.  
Քիզ հիշելուցն է, վուր լիզուս ցամքած ու հիդերված է.  
Յա՛ր, կարոտըտ Սայաթ-Նովուն սելավի պես տարիլ է:

Յարիս բաղըն մըտա, խիլքըս կորցըրի,  
Մեկ էլ դուռըն փակ տեսա հիդ գնալիս.  
Բան չիմացա, մենակ շիվար մընացի...  
Բաղում սալիք ծառիրն էին լանգ տալիս:

Ասի՝ զա՛լում, լավ է սպանիս նոքարիտ,  
Վատ բան ասիլ մի՛ տա, լիզվիս կա բարիք.  
Ուրախ լավ է, կինքըտ ուրախ երկարի,  
Զանըս մատաղ իմ տըվի քու ցավին յիս:

Մե քիչ մընա՛, ա՛նգած արա իմ խոսկին,  
Ե՛կ նուրմեկանց ծեռըտ դիր իմ աչ ծեռին.  
Յաղութ, ալմաս, լալ ու գոհար իս անգին.  
Չոլումն ազատ թողած ջերան, մարալ իս:

Յիս մե խոնդքար էի, ջառըս կորցըրի.  
Մե սովդաքար էի, զարըս կորցըրի,  
Իմ աննըման, գոզալ յարըս կորցըրի,  
Էլ վո՛նց գըթնիմ ժովումըն պահածին յիս:

Արարմունքըտ արմանք բան է ինձ ամա.  
Ուստում-Զալի թուրըտ մահ է ինձ ամա.  
Յիս հիվանդ իմ, լացըտ շահ է ինձ ամա.  
Աչկըս ծամփիտ ջուր է կըտրի, Ե՛կ ինձ տիս:

Արիվ-լուսին երեսըտ է հայելի.  
Մա՛տաղ իմ քիզ, ուրիշը թող պետք չըլի,  
Թե ուզում իս եշխի խաղիր գովելի,  
Սայաթ-Նովեն մե փիլի բիո կուտա քիզ:

Բաղըն բըլբովով լըցվիլ է, վարթ-գուլգազըն չէ պակասում.  
Բացվիլ ին զառ ծաղկընիրըն, սիրուն նազըն չէ պակասում.  
Յասամաննիրն էլ ին ուրախ, լավ երազը չէ պակասում.  
Շամիրըն շամդանում վառած, գիրանդազը չէ պակասում.  
Սարքին, լիքըն մելիդանումըն քանդիրբազըն չէ պակասում:

Չընեղանաս, ա՛յ իմ ազիզ, իմ խոսկիրքըն առակնիր ին.  
Հազար իիդ «քիզ մա՛տաղ» ասի, բա յիս քանի գըլխի տեր իմ.  
Վուր ինձ չասիս սիվերես իմ, ղոկ իմ դառի քու դըռներին.  
Ես գիշեր դուն միզ մոդ արի, անգած կալ իմ խաբարներին.  
Ամենքըն միզ մոդ ին եկի, վուր բազազըն չէ պակասում:

Քանի գիղըն լի ու շեն է, անքեփ, անսազ ինչպես կովի.  
Ջու թարիփի համա խոսկն ու խաղըն պակաս ինչպես կովի.  
Թե մառանում գինին թափվի, առանց լի թաս ինչպես կովի.  
Մեջիսն ինչքան սարքով ըլի, վուր դուն չըկաս, ինչպես կովի.  
Պըտըտվում ին օսկե թասիր, լելլում-նազըն չէ պակասում:

Էսէնց հարսնիք, նըշանդըրիք Շահն էլ չարեց Զալի համա.  
Ինչ վուր արից սա իր հալալ ախչկա-գոզալի համա.  
Ես ի՛նչ գըլխոքըս անցկացավ, վուղչն իմ տարքոտ հալի համա.  
Քամանչալի նայի համա, դավուկի դավալի համա.  
Չուրս բոլորքըս խաղ ին ասում, սանթուր-սազըն չէ պակասում:

Բոյըտ վունցոր բուսած դամիշ, քի սազ գութա քիրման շալըն.  
Ակըքնիրըտ շար մարքարիտ, Հընդու սիվ բիբար է խալըտ.  
Ուուն փակիսաննիր իս ախտում, վունց գովական Ուստում-Զալըն.  
Արի գընանք դատաստանի, թեվուր չըլի միզ մոդ գալըտ.  
Սայաթ-Նովու թաքավուրին Շահբազ-Երեկլե ին ասում:

7

Եսօր լիս էնդուր խստեցի,  
Կուր սիրուն շելրանըն տեսա.  
Հուրի-փերին մեջըն պառկած,  
Օսկե օռորանըն տեսա:

Գիր գրբեցի, Վուր խընալիս,  
Մե զամ շուր զաս ու ինձ նալիս.  
Փա՛ռք Աստղե՛ռ, Վուր հիմա լիս  
Եկա ու քիզ տանըն տեսա:

Ասի՛ թե քիզ հուրն է Տընի,  
Ինձ մի՛ վառի, մի՛ չորցընի,  
Արիվն ի՞նչ է, վուր քի անցնի՝  
Ծերի հուրիկանըն տեսա:

Թե ինձ արժան թայ իս գալի,  
Արի խաղանք գոյի-գոյի.  
Բանանք Վարթի խաս փոթոլի.  
Գովսնզգովոյն շուշանըն տեսա:

**Սայաթ-Նովեն** քի ղոկ դառնա.  
**Սուրաթըտ** լուսնակից լավն ա.  
**Անունըս** սե ու թու տառն ա.  
**Կը-ի Վիրչումն** անի-ն տեսա:

Սա գարեհիլի ծալնով է ասվեամ (Օհանի ծան.):

8

Անգած կը տրած դուքս յիս իմ՝ ուրիշ նողարն ի՞նչ իս անում.  
Ինձ պես քիզ ո՞վ կանա սիրե, Ել խալին յարն ի՞նչ իս անում...

Հընդու թաքավուրի թախտն իս, սարքած անգին դիբա-զարով,  
Երա՞նի քու դուկ-Շառային, ծուցըտ լիքըն մուշկ-ամբարով.  
Օսկե տախտակնիր ին սազում քոշկ-ամարաթիտ՝ մարմարով.  
Դուն մե փութըր, սիրուն բերթ իս՝ գուրի նիո որուն ինչ իս անզում:

Գըլիսին սիպտակ ծուն դրած սա՛ր, բոլորքը զար-մանիշակում.  
Շիմշատի ծա՛ն, մերու Նըման թերթերուկը շուք է ծըքում.  
Հունիս ամսի բաղ ու բա՛ղչա՛ վզրետ բըլբուկ է Ծըկօրկում,  
Նուր բաց էլած կոկոր ա՛լվարթ, սիրեկան խարն ի՞նչ իս անում:

Արի խոսկ տուր, Ես աշխարհում մենք իրարից ձեռ չըքաշինք,  
Սիրուն ծուցիս ուժանըն միր Երկրսիս մեջ փայ անինք,  
Ե՛րնեկ մինակ օթախումըն համաշա յիս ու դուն ըլինք,  
Սալաթ-Նովեն Ե աղաքում, Էլ ավել օտոն ի՞նչ իս անում:

Սիրուն չոնգուր-չանգ իս, լար իս սազավուր.  
Քու դիլդարին խուցող յար իս նիզավուր.  
Սալբու ժառ իս, բարի բար իս վազավուր,  
Անտակ ծով իս, բոլորքըտ զար-խասավուր.  
Անգին լալ իս օսկե դութում ռազավուր:

Ծովի գոված ռաշ իս ու ցելրան իս դուն.  
Աստղի փալլով ալմաս ու մարջան իս դուն.  
Միշտ վառ շամ իս, բըրոլե շամդան իս դուն.  
Սուրծն ծեռիտ մե երեկե խան իս դուն,  
Փեհլով-փենջով, դովով օյինբազավուր:

Լուս իս տալի՝ լուսնակից էլ պայծառ իս,  
Ե՛րնեկ մութըն չընգնի՝ օրվա պես վառ իս.  
Շուղք ու տիրեն առատ սիրուն մե ծառ իս,  
Կանանչ դաշտ իս, հով շըվաքով անտառ իս,  
Լի հավերով, ջուրա-ջուրա սասավուր:

Գարունքվա նուր մանիշակ, սմբով իս դուն.  
Գոված, հուտով պատվական թալգով իս դուն.  
Հավատարիմ ծառա իս դուն, դով իս դուն.  
Սա՛յաթ-Նովա, ի՞նչ դարիբ բլրով իս դուն.  
Առուտեհան ծըկծըկում իս նազավուր:

Քի սազ գուքա զարբար ու զար, օսկե կոճակ շարան-շարան.  
Կոսիս ծեռիտ տակըն ըլի Աղըրբեշան, Իրան-Թուրան.  
Արի դուն ինձ մի՛ սըպանի ծեռիտ թըրով էտ հուրիուրան.  
Խիղօ բըլբուլըն լաց է ըլում, վո՞ւս իս փետով քըշում նըրան.  
Սիրած յարօտ խուր քընիլ է, հալբաթ ազդիլ է քու «նա՛-նա»-ն:

Դո՛ւս եկ յարով, դո՛ւս եկ շառով՝ ժանկած բաղումըն ման գալու.  
Բըլբուլն էնթի ծամփետ պահած, «Բարի լուս» ունե քիզ տալու.  
Քիզ ո՞վ բերեց էտ աչկիրով, էտ քու բոլով արմանալու.  
Բեզարիլ իմ գովք անելում՝ շատերին մահ տըվիր, զա՛լում.  
Յիս քիզ ամա խաղիր ունիմ, վուխը հարուր քառսուն խանա:

Էտ շիրմայի վըզով, գիղի՛ս, մե բրոլե սուրահ իս դուն.  
Պուն լուսին իս, էլ հայլուն ինչի՞ համա կու նայիս դուն.  
Զուկի ու հուսիտ համա ծեռիտ օսկե մըկրատ կու պահիս դուն.  
Անմիղ տիղըն ինձ մորթելով, ա՛սա, թե ի՞նչ կու շահիս դուն.  
Յա գըլուխըս ինչի՞ պիտի քու խանջալին արժանանա:

Մահու ծանգեն ի՞նչպես փախչիմ. գիղիմ, վուր էլ դուս չիմ գա լիս.  
Արար-աշխարն էլ իմն ըլեր, վիրչումն էլի հուր չըկա ինձ.  
Զար ու զարբար, դալամքարի նախշած շուրիր հաքած ունիս.  
Աչաբ գիղի՛ս, թե էտ անգին գուքսըտ ի՞նչպես սազ գուքա քիզ.  
Ինձ ավա՛տա, չիմ գողացի, լիս գըթիլ իմ գըլսիտ շանան:

Սուր ասիլըն լիս չիմ գիղի, երազումըտ տեսած բան է.  
Էտքան հուտով ալ վարթիրըն ո՞վ է բերի, շեմքիտ ցանե.  
Վուր աշխարը լիզու առնե, քու թարիփըն դըժար կանե.  
Զուր իս լալի, Սա՛յաթ-Նովա, էտ խիալըն մըտքետ հանե.  
Թովուզի թախտն ո՞վ կուտա քիզ, դուն էտ ցավեն չիս դընջանա:

Ի՞նչ կովի, յա՛ր, օրից մե օր միր տուն գաս.  
Ուրիշներու Նըման չըգաս՝ թաքուն գաս.  
Վիրեն վեր գաս՝ լուսնակի պես ինձ հյուր գաս.  
Վուր պատկիրքըտ ամեն յաղի ցույց չըտաս.  
Տիժեռնակի պես միր դըռնեն դուս գընաս:

Գուզիմ ծեքի արիվ ըլիմ, վառ ըլիմ,  
Զիր բակումըն մե շըվաքով ծառ ըլիմ,  
Կացնով չըտաս, թուղլի հա՛ դալար ըլիմ,  
Քի հարևան, քի միշտ յարիքար ըլիմ,  
Վուր միր տուն գաս՝ քու տան պես՝ յիփ ուզենաս:

Սոանց մահի քիզնից մարթ չի հիուանա.  
Ա՛սա, քիզնից վըրես ի՞նչ միդ կու մընա.  
Իմ դարդըն քու սըրտում յի՞փ տիդ կունենա.  
Քու ետ սիրուն գունքըտ էլ միշտ չի մընա,  
Աստղերու պես թեգուզ երգինք բացրանաս:

Սայաթ-Նովեն զարբարի պես, զարի պես,  
Յա՛ր, ծըտովըտ գըցած ըլեր շալի պես,  
Վա՛ թե վիրչում իմ ասլին հավան չըլես՝  
Քու դըռանըտ յիս կու պառկիմ դովի պես՝  
Հողի նման ինձ կոխ տալով անցկենաս:

Սայաթ-Նովան մի սրտակից, ազիզ բարեկամ է ունեցել, այս խաղը նրա վրա է սազաց-  
րել: Պեսց է երգի մուխամմազի եղանակով: (Օհանի ծան.):

Աստղերու պես յիրգընքի հըրաշ իս դուն.  
Կարմիր վարթ իս, դաշտի ալ-ղումաշ իս դուն.  
Գարնան սիրուն ծաղիկներեն բաշ իս դուն.  
Սանթուր իս դուն, քամանչա իս, տաշ իս դուն.  
Հուր-հըրեղեն, ծովի ջելրան, ուաշ իս դուն:

Աջաբ վուչ մե լալի մոդ չըկըրթվեցի՛ր,  
Վուր ինձ Նըման խիղճ եսիրին մորթեցիր.  
Դիղի համա քու ջադվարից տըվեցին.  
Քի սազ նաղաշ չելավ, ինչքան փորցեցին՝  
Հնդըստանի դալամի նաղաշ իս դուն:

Կինքըս առանց քիզ մահի է Նըմանում,  
Էշխիտ դամբ ու զինջիլին չիմ դիմանում.  
Զիմ գիդի, թե էլ ինչի՞ իս սըպանում.  
Ինձ տեսնում իս, յիս քիզ իսկի չիմ տեսնում.  
Բրոլե դութում նըստած հե՛րիք մաշիս դուն:

Արդալու պես սար ու քոլիր կու սիրիս,  
Ամբի Նըման ծով ու գոլիր կու սիրիս.  
Զելրանի պես ազատ չոլիր կու սիրիս.  
Զուրա-ջուլա զարբար շորիր կու սիրիս,  
Քու տեսնողի համա «ա՛խ ու վա՛շ» իս դուն:

Յարըս Հընդու Շահի իխտիար ունե,  
Ամեն հուցմըն գըլուն բերող ծար ունե.  
Բրոլե սինով անգին ակ ու քար ունե.  
Սըրով, նիզով դուռը պահող ջառ ունե...  
Ո՞վ իս, Սա՛յաթ-Նովա, մե չարքաշ իս դուն:

Եսքան «չե» խոսք չէ ունեցի օչով իր դիլդարի համա.  
Զուր գըլուխըս մահու տըվի իմ ես անջիգարի համա.  
Քի մոդ քանի մարթ իմ ողոքի Հընդու դալամքարի համա.  
Հընդու դալամքար իմ պըտրում զար ու զարբար զարի համա:

Մատնիր ունիս՝ կոկած մումիր, կոսիս քաշած կա փարգարըն.  
Վի՛կաց, պա՛ռէ կաքավի պես, զրընգում է օսկե լարըն.  
Օսկե կոճակնիր իմ պըտրում, հատըն չունե լավ զարգարըն.  
Ա՛զիզ, գիղի՞ս, են ծարում իմ քու երժայք քամարի համա:

Միշկըտ բուած դարդուղամիշ, բոյըտ վունցոր չինարի ծառ.  
Երեսըտ՝ մե սիրուն լուսին, գունքըտ գարնան արիվից վառ.  
Քի պես գողալ մե հըրիշտակ ջեր չէ տեսած արար-աշխար.  
Թաքավուրնիրն երնեկ կուտան քու մե հատ դիդարի համա:

Ակուտեհան հուսով եկա՝ քու պատկիրքիտ լիս թամաշա,  
Վառ երեսըտ բաց չըտեսա՝ վըրետ խաս յորդան եր քաշած.  
Ի՞նչ անտ իսիդ Սայաթ-Նովեն, ջուխտ աչկիրըն թաց համաշա.  
Գիշերնիրըն աստղերու պես անքուն, լուսին-յարի համա:

Ի՞նչ կուլի վուր յա ինձ կանչիս, յա հալալ իս, արի տեսնիմ.  
Ի՞նչ լաղութ իս, ինչ ալմաս իս, յա ինչ լալ իս, արի տեսնիմ.  
Վախում իմ, թե դուն ինձ բըռնիս, թե ջալալ իս, արի տեսնիմ...

Յիս բըլքով իմ, վարթ իմ պըտրում, թե ալալ իս, արի տեսնիմ:

Չընեղանաս, ա՛յ իմ ազիզ, քու իխտիարով դուս արի.  
Փիանդազըն քի սազ գուքա, զարբար ու զարով դուս արի.  
Վուր քիզ օչով չընըկատե, չաղով, հունարով դուս արի.  
Մե ոուբայաթ գուգիմ ասի, հենց մե թահարով դուս արի.  
Հողեղեն իս թե հըրեղեն, թե մարալ իս, արի տեսնիմ:

Դուս գաս թե չէ, կու ծանանչիմ, քու աննման ջանիտ մատաղ.  
Հուսած, անհուս զար մազերուտ, զուկիւրուտ ու ջանիտ մատաղ.  
Բարակ միշկիտ, չինար բոյիտ, շիրմայի գարդանիտ մատաղ,  
Դոշլուղիտ զմրուխտ կոճակին, զուքսիտ, ալ-մարշանիտ մատաղ:  
Մարքարիտով օսկե միլ իս, թե ինչ լալ իս, արի տեսնիմ:

Ինձ վուր եսենց հիուացըրի, ո՞ւմ իիդ իս դուն կինքըտ կիսում.  
Ես պատվական քու գըլուխըտ մահաջարի մեչ իմ տեսնում.  
Օսկե օղըն վո՞նց իս պահում խամ քաթանի մումած քիսում.  
Թե կապիլ իս խարայումըն, փաթաթիլ իս խաս ատլասում.  
Ինչ իս պահի թանգ բոխչումըտ, թե դալալ իս, արի տեսնիմ:

Վաղուց գարունքըն եկիլ է, օթախից դուս գալու վախտ է.  
Բացվիլ է շուշանն ու վարթըն, իիմի բաղ գընալու վախտ է.  
Թութն ու բալըն լավ հասիլ ին, բաղմընչուն ծեն տալու վախտ է.  
Ծառի շըվաքըն քաշվում է, կեսօրըն մողնալու վախտ է.  
Սայաթ-Նովեն հով է ուզում, թե վըրան իս, արի տեսնիմ:

Հենց իմացար սո՛ված էի, լի սեղանի համա էկա՞.  
Քիզիդ խոսիլ էի ուզում՝ մողքտ դամի համա էկա.  
Ասի, քիզիդ լուսացընիմ, ուրախ ժամի համա էկա.  
Սոռացիլ իմ... լավ միտըս չէ, թե ինչ բանի համա էկա:

Դուն մե թաքավուրի թագ իս, յիս էլ... հա՛ ծուրտի դարումըն.  
Դուն համաշա զարթարած իս դիբայումն, անգին զարումըն.  
Միրուն բըրոլե շուշա իս՝ սանդալե թանգ փանչարումըն.  
Երեսըտ՝ օսկե հալիլա, քի մոդ ջամի համա էկա:

Էնդու համա թանգ հախ ունիս՝ դիբա իս, զարբաք ու զար իս.  
Խորասանու ջավարդեն իս, Հնդըստանի դալամքար իս.  
Յիս մե դարիբ սովդաքար իմ, դուն Մարանդի շեն բազար իս.  
Չունքի զարի գինըն չունիմ, Էնդու խամի համա էկա:

Իմ աչկի լուս, պարտկ դի վըրես, լիզուս քի պարտկի տիդ կուտամ.  
Գըլումըս քի բարաթ կուտամ, մեջլիսի քեփ ու զող կուտամ.  
Համաշա քու տիսըն գուքամ, իմ ջանըս քի մատաղ կուտամ.  
Յա ինծ կի՞նք տու, յա սըպա՞նի, դադաստանի համա էկա:

Թեգուզ աշխարքըս հավաքվի, քու թարիփըտ ի՞նչպես կարվի.  
Ի՞նչ Հնդըստան, Փուանգըստան, քու նըմնանըտ վո՞նց կու ծարվի.  
Ես ջըրատար Սայաթ-Նովեն աղաչում է վուղչ աշխարին.  
Թողի Հալաբն ու հիոացա, քի մոդ Շամի համա էկա:

Արար աշխարքըն զըմայլվեց, մաթ մընաց  
Լուսնի պես քու վառ նըկարի համա, յա՛ր,  
Վըգիտ օսկե բարակ գինչիլ կա գըցած՝  
Ռոշիտ խաչի ու գոհարի համա, յա՛ր:

Քու կարոտըն ինծ գերեզման կու տանի.  
Ինծ միդ գալուց սար ու ծորըն սուք կանի.  
Ով չէ տեսի, նըրան կուտա Երանի,  
Կուր մեռիլ է քու դիդարի համա, յա՛ր:

Զանըս, հոքիս կամով ցավիտ բախչեցի,  
Զահել կինքըս ծանապարիտ մաշեցի.  
Զասիս, միթամ թէ քիզնից ձեռ քաշեցի՝  
Յիս կու մեռնիմ իմ իղրարի համա, յա՛ր:

Էս աշխարըն կոսիս միզնից խըռով ա,  
Էնդուր աչկըս թաց ու լիզուս խորով ա,  
Աստծու առչիվ միդավուր Սայաթ-Նովան  
Մեռնում է իր անսիրտ յարի համա, ձա՛ր:

Սա թեքնիսի Եղանակով է (Օհանի ժան.):

Դարդ ու ցավըն ի՞նչ օքուտ, վուր չիս գիղի.  
Վուրն է հինըն, յա վուրըն նուր, չիս գիղի.  
Վիզըս ինչի՝ կըտրեցիր գուր, չիս գիղի.  
Աչկըս դառած արնի ախպուր, չիս գիղի.  
Անունըս էլ դուն իսկապես չիս գիղի։

Դուն էլ ինձ պես մե Աստըծու արարած՝  
Լիզուտ միղը է, խոսկիրքըտ էլ շաքարած.  
Զենիտ փուշ պիտի՝ դուշմանիտ դեմ արած.  
Ամառ, ծմիռ քիզ ամա դուն մեկ արած՝  
Վուրն է զատիկ՝ բարիկենթան, չիս գիղի։

Յիս բռըուլ իմ, ո՛ւրիշ հավե չիմ քիզ ամա.  
Հիռու ծովեն էկած նավ չիմ քիզ ամա.  
Օտարական սիվ արաբ չիմ քիզ ամա.  
Լա՛վ իմացի, յիս չարկամ չիմ քիզ ամա,  
Էլ ինչի՝ իմ քի հարևան, չիս գիղի։

Յիս վառ շամ իմ՝ քու շընչովըտ կու մարիմ,  
Հոքուտ սիրըն, արի ա՛սա ծըշմարիտ,  
Հենց բան կոսիմ՝ կու նըմանի շաքարի...  
Սա՛յաթ-Նովա, էլ նըման չիս նոքարի.  
Չունքի վալի, թաքավուր, խան չիս գիղի։

Աստղալուսով ծովըն ինչպե՞ս կու ցամքի,  
Մաղով թրոի ջուրըն ինչպե՞ս կու չափվի.  
Քանի գուգե քամին փըշե մինծ ուժով,  
Ժեր քարեմեն լի՛փ կանա մե բան տանի։

Գուցե մորթե, ծըկնեմեն ծեն չիս լըսի,  
Իշի վուտքին էն ո՞վ հինա կու քըսի.  
Բամբակին էլ ավազըն վո՞նց կու հասնի,  
Թեգուզ լըցնիս մեշըն դութնի յորդանի։

Պղնձե թասըն վուրքան ուզես կըլեկի,  
Քըսանն էլի չարժե երժաթի մեկին,  
Լավ շուշին էլ չին տա հին ալմասի գին,  
Թեգուզ շուշին քաշիս օսկե մատանի։

Մարթ կա իսկը վունց սատանի մե մըշակ,  
Չար սատանի տունըն դառնա բըրիշակ.  
Կարկաժըն վո՞նց կուփի Շիրազի շուշա,  
Ինչքան բարցըր թարեքումըն տիղ անին։

Դուն չասիս, թե էս խիղծ սազա՛նդարն ո՞վ ա.  
Խոսկիս տերն իմ, հունարըս էլ գըրով ա.  
Արո՛ւթինն իմ, ինձ կոսին Սայաթ-Նովա.  
Հենց բան կոսիմ, վուր ամբերում ծեն հանի։

Իմ էս ցավի նըման ցավըն թուղ վուր ամեն մարթու բըռնե.  
Լիրթ ու թոքըն կու չորցընե, ում սըրտումըն սա բուն դընե,  
Ում տունն ընգնե՝ ախպեր, ծընող, դիփ իրարից կու բաժանե.  
Երկու խոսկով անգիր ասիմ՝ սերը վուր կա՝ դըժար բան է:

Լիզուն թերնում մեոցընում է՝ Էլ չիս կանա մե բառ ձարի,  
Վազնի ծուղքից կապիր ունե՝ պինդ կու կապի, կու չարչարի,  
Աստված շանե մե գամ յիրթվիս, Էլ փրգվիլըն խիստ դըժար է,  
Իմ լավ հալին ինքըն՝ Տերըն թող օչովի արժան շանե:

Աշխարըս քիզ թարիփ կոնե՝ դուն սիրուն իս ջեյրանի պես,  
Ենդու համա աղաչում իմ՝ սիրտ ունենաս իմինի պես.  
Ե՛րնեկ ըլի քու սիրաժին՝ սիրտ կունենա ասլանի պես.  
Ոհստոմ-Զալն էլ չըպատահե էն թըրին, վուր նա կու հանե:

Եկ մե փութըր անգած արա, քու Եշխեմեն Էլավ դարդըս.  
Էլ ինչի՝ իս հադա տալիս՝ առանց էն Էլ նաշար մարթ իմ.  
Դուն մե քաղզըր կաթնախպուր իս, առուտեհան բացված վարթ իս,  
Ալ ու ալվան տերիվներով, հուտըր արար-աշխար կառնե:

Գիշերնիրըն դուսն իս ըլում՝ չիմ գիղի տանն ո՞վ է մընում.  
Չինի թասն ինձ բան չի անի... լիս զարթուն իմ՝ սիրտս է քընում,  
Մեռնիմ էն սուրփ փիրի հոքուն, լիս խումար իմ, չիս իմանո՞ւմ,  
Էն «Հայ-հոլին» Սայաթ-Նովեն կու դիմանա՛ ինչ Էլ անեն:

Բաղում թութի դուշն է կանչում՝ լիս բըլբուկի ծայլն իմ ուզում.  
Երազումս ծարն ասեցին՝ լիքըն գովաբդան իմ ուզում.  
Բըլբուկն ասաց՝ «Յիս լալիս իմ՝ վարթիս թուփ ու թաղն իմ ուզում»,  
Յիս Էլ սարիր անցա Եկա՝ իմ ազիզ վաթան իմ ուզում:

Քի պըտրիլով ջանըս մաշից, արին-քըրտինքով թաց Ելա.  
Վարթըս տեսա քաղած, թափած, բըլբուկի պես խիստ լաց Ելա.  
Դուն մե գոված օսկե դութի՝ մեչըն լիքըն պահած է լալ,  
Յիս ուզեցի, մեկըն չասից, թե ինչի էտ բանն իմ ուզում:

Դո՛ւս Եկ, պահված դաշտի մա՛րալ, քի պահապան ծառիտ Երնեկ,  
Գունքըտ կոկած թուղթ-մաքաղաթ, մարմար դիդարիտ Ե՛րնեկ.  
Դուն մե թազա Զինումաչին՝ ինչպէ՞ս չասիմ, յարիտ Ե՛րնեկ:  
Հին քարիսանի զար ու զարբար՝ ինձ ամա քու խամն իմ ուզում:

Զու նամակըտ լիս կարթացի, իմն ինչի՝ դուն չըբացեցիր.  
Սե գամ Ելա ինձ չիս հիշում, ինչի՝ Էտենց ինձ ատեցիր.  
Սիթամ մե խիղճ եսիր իմ լիս, գիրըս կա՛րթա ու իմա՛ցիր.  
Հիվանդ իմ, ծածկվելու համա քու ատլաս յորդանն իմ ուզում:

Նամարդութին լիս չիմ անի, ինձ ավա՛տա, ա՛ իմ ազիզ,  
Եկ նուրմեկանց ինձ մի՛ վառի, հենց էն գըլխեն երած իմ լիս.  
Սայաթ-Նովեն քիզ ասում է՝ «Յիս բըլբուկն իմ, դուն վարթըն իս».  
Ինձ դիր օսկե ղափազումըն, շաքարով բադամն իմ ուզում:

Երկու գիղի միշտիղումըն սար է, կոսին, ծըշմարիտ է.  
Բաղըտ լիքըն ծաղկած ծաղիկ-ծառ է, կոսին, ծըշմարիտ է.  
Բաղիտ ծամփին բըլբուլնիրու շար է, կոսին, ծըշմարիտ է.  
Շատ երգըրնիր-ծովիր տեսա, վուրը կոսին, ծըշմարիտ է.  
Միրուն է Զին թաքավուրի քուրը, կոսին, ծըշմարիտ է:

Եե մեկնեցի, ծակծեկեցիր մոշի փըշուտ քոլի նըման.  
Սատնիրեմես արուն կաթից կարմըրագուն լալի նըման.  
Յիս էս ցավին չիմ դիմանա, սիրսու ելավ մըսխալի նըման.  
Ինչ քիզանից հիրացիլ իմ, աչկիրը են ալի նըման.  
Աստված վրկա յիս նընգիլ իմ հուրը, կոսին, ծըշմարիտ է:

Ա' շավարդեն, ի՞նչ իս թըռչում մե քերթած աղվեսի համա.  
Կըտուց ունիս՝ օցերին մահ, աչկիրըտ ալմասի նըման.  
Հընի եղիկ թև մի՛ բանա, դուն թըռի նո՛ կր վուրսի համա.  
Ինչի՛ նըստած հա՛ լաց ըլիմ, մե դարդի չէ՛ տասի համա.  
Իմ ցավեն դուս քըսան ցավ էլ նուրը կոսին, ծըշմարիտ է:

Ով գալիս է, տիղ ին բանում, խիւթի վըրեն նուր ին դընում,  
Սըրտի միշեն նիտ ին քաշում, վըզին սըրփած թուր ին դընում,  
Փըշանում է, լա փըթում է. իժում վարար ջուր ին գըցում.  
Յա մե ջաղցի քարով ծածկած հեստի ջըրի հուր ին գըցում,  
Վուր ընգնողն էլ դուս չի գալի, խուր է, կոսին, ծըշմարիտ է:

Ծամփես կորավ, ափ դուս չեկա ծովի ծածկած խուր տիղի պես.  
Հիմի վախով թանն իմ փըչում՝ լիզուս վաղից տաք շիլի պես.  
Մինչի կեսըն փոսի մեծն իմ, միշեն կոտրած հին քիլի պես.  
Հե՛ռ վիկալեք, խունացիլ իմ մինծ ջուր նընգած քիչ լիլի պես.  
Սալաթ-Նովուն Գուրգեն խանի դուրըն կոսին, ծըշմարիտ է:

Էնենց մարթ կա, փըչես, տիղում վեր կընգնե՛  
Ռոշաղ մարթու ուժն ու հալըն կու փըտնե՛,  
Ջիբում մե քոռ, ժանգուտ դանակ չիս գըտնի՛  
Խորասանու սուր խանջալըն կու փըտնե՛:

Մարթ էլ կա, վուր չունե օջախ ու բինա,  
Սուրթըն ընգնի չի իմանա ուր գընա.  
Հընդու խուրմեն կու գիղենա կաղին ա'  
Բաղ մըտնելիս, հասած բալըն կու փըտնե՛:

Մե ուրիշն էլ ծով կու մըտնե նավի պես,  
Գորտըն աչկին կերևս աժդահի պես.  
Մարթ էլ կա, վուր չուում թըրչված հավի պես'  
Իրենց տանը Ռոստոմ-Զալին կու փըտնե՛:

Չոբանըն ի՞նչ կոնե ալմաս-ջավահիր,  
Ուրախ կուկի՝ միշտ ունենա նուր պանիր.  
Բալիշը քար, միշկին կապած մե քանդիր՝  
Բեքտաբեգի քիրման-շալըն կու փըտնե՛:

Խոզըն ինչպե՞ս կանա ծառըն բացրանա.  
Ես աշխարում չար մարթ պիտի չըմընա.  
Սալաթ-Նովեն յիփոր մեջլիս կու գընա,  
Քեֆ կու սիրե՛ դալմաղալըն կու փըտնե՛:

Ով հարևնին բարի աչկով կու նայե,  
Հարևանն էլ չիլի խալին, անբարի,  
Զար մարթն էլ միշտ մարիփաթից գուրգ կուլի.  
Լավ ծնուղբին ուշունցով կու զարթարի:

Մարթ կա, ծիծվի պես սողալով կու գընա,  
Միշտ բերնումըն օցի լիդի կունենա.  
Զարի ցավըն չարութենից կու մընա,  
Ես առած է, լիս ինձնից չիմ իընարի:

Նամարդ մարթըն մե լեշի բաբաթ կուլի,  
Նըրա գըլիսին գըղակն անսազ զարթ կուլի,  
Ով էլ մարմնով ուղտի պես անհարթ կուլի,  
Շոտ վիզըն թող հա՞ կարմընցին հարմարի...

Կավե ջամըն վո՞նց կուլի մե թանգ չինի,  
Ամեն ժառ էլ կըլեա չի տա դարչինի.  
Սայաթ-Նովուն պահե, տընետ դուս չըլի՝  
Նըրա պես դու դուն կինքումըտ չիս ծարի:

Քո՞ւ, դուն կոսիս պըխտուրվիլ իս Արազով՝  
Յիս քու սիրըտ չիմ իմանա իմ սազով.  
Դիբա ու զարբաք իս՝ զարով, գուզազով.  
Աչկ ու ունքըտ դալամ քաշած հավասով.  
Յիս ի՞նչ ունիմ, վուր տիսըտ գամ թանգ մազով:

Մարթ կա, կինքըն գինու թասումն է տեսնում.  
Ենենցն էլ կա՝ քեփերում ու մեջիսում.  
Իմ լիզոն էլ ազատ խոսիլ է ուզում...  
Սիրտըս լալով աղաչում է ու ասում.  
Ա՛ ծիու ծանջ, վարթըս թող ինձ իմ արզով:

Քու թարիփըն ծովի չափ դավթար կուլի.  
Քու տեսնողըն մեբաշ սարեսար կուլի.  
Աշաբ ամեն մարթ վուր ուզե, յար կուլի'.  
Տիսուս կարոտ մեկըն չէ՝ աշխար կուլի.  
Ամբի տակեն դո՞ւ եկ, ա՛րիվ, քու նազով:

Ե՛ Բաղդադի կըոր՛նկ, Ե՛րնեկ ըսպասիս,  
Հնդըստանի թութի դուշի պես խոսիս.  
Ի՞նչ կուլի վուր մե գամ ելա ինձ լըսիս.  
Փահրադի-Շիրինի կինքի դուն վալիս.  
Ա՛ չար միշնո՞ր, ինձ մաշեցիր քու ջազով:

Կա՛ քի, թեվուր նարդու մե շարքըն քաշիս,  
Մարդին մորթիս, նամարդի կինքըն բախշիս.  
Բըլքով լացացընիս, վարթից հուտ քաշիս...  
Կինքըտ Ե՛րնեկ մե մարթու համա մաշիս,  
Ա՛ դու անբախտ Սա՛յաթ-Նովա թափազով:

Ի՞նչ իմանամ, լիվ կուփի ինձ մոդ գալըտ.  
Ի՞նչ արիր են կարմիր վարթըն աննըման.  
Ասի՝ երնեկ բացվէ միշկիտ քամարըն.  
Մե հարցըրեք, թե ի՞նչ ասի էլ սըրան:

Շուկի նըման գըժվի իմ, լա՛վ իմացի,  
Վուր մըտիլ իս բախչեն, մե տի թաք կացիլ.  
Ա՛յ սուտասան, էլ ինչի՞ ինձ խափեցիր.  
Յի՞փ կուփի վուր ինծիդ խոսիս մե բերան:

Լիղնուրթ է պետք՝ ջըրեն հանե մարքարիտ.  
Արիվ գուզինք, կարոտ ինք վառ դիդարիտ.  
Ով քիզ տեսնե, մե բաշ կուփի սարսարի,  
Թեվուր ինձ պես սիրտըն բանա քու դըռան:

Մե պատվական օսկե մատնու ակ իս դուն,  
Քու վըզով ու վըզնոցով մե հատ իս դուն.  
Սայաթ-Նովեն իմ լիս, չըլի ատիս դուն,  
Ուրոր գընաս, պիտի հիշիս դու նըրան:

Ես թեջնիսը թարգմանված է թաթարերենից (այսինքն՝ հեղինակը վրացերենի է փոխադրել  
իր աղբբեցաներեն այս խաղը): Ծիանի ծանոթ.:

Արի, գո՛զալ, բաղչեն գընանք ման գալու.  
Բաղն անուշ է, վարթն անուշ է, ծառն անուշ.  
Խոսկ տուր մինչ լուս էնտիդեմեն դուս չըգանք,  
Լուսնակն անուշ, օրն անուշ, դիդարն անուշ:

Գինին խըմինք, լավ արաղըն էլ մերն է.  
Սազանդար ու մեջլիս, սաղին էլ մերն է.  
Եկ բաղմընչուն քըշի՞նք, բաղըն էլ մերն է.  
Քեփն անուշ է, ժամն անուշ, նուբարն անուշ:

Վարթըն բացված, բըլբուլն խիստ լաց կուփի,  
Հալբաթ վարթին չար խարըն նըստած կուփի.  
Սելրանգահում մանիշակ փըռված կուփի.  
Զուրն անուշ, ընգիրն անուշ, դիդարն անուշ:

Ճի սազ գուքա ծեքի գունքի ծիրանին,  
Չինար ծառըն բար է տըլիլ ծիրանի,  
Մայիս ամսին վուխչըն կուտան երանի,  
Հուտն անուշ է, սիրտն անուշ, դիլդարն անուշ:

Սայաթ-Նովեն իմ, ուժըս ձալիս մեչն է,  
Ե՛կ, փըռիլ իմ Խորասնու խաս խալիչեն.  
Հի՛ռու մընաս են միշնուրի չար աչկեն.  
Սազն անուշ է, տերն անուշ է, լարն անուշ:

Ինծ սըպա՞նիր, պըրծնիմ, ա՛լ սիկ ծամա՞վուր.  
Յաղութ-ալմաս ու շավահիր, լալա՞վուր,  
Զար ու զարբար, սիրոն գործած, շալա՞վուր,  
Ղալամ քաշած սիկ ունցիրով, խալա՞վուր.  
Մոշի նըման աչկիր ունիս՝ սիվավուր:

Դուն համաշա վունցոր թազա մե նուբար.  
Ես աշխարում ել ո՞վ կա քիզ բարեբար.  
Խոսրովի թա՛խթ, Տըրդաթի ցիղի դու բար,  
Վուղ աշխարըն դակ իս շինի քիզ համար՝  
Հա՛ վառում իս, ա՛լ դու չախմախ-քարա՞վուր:

Ասի՛ գինի լից քու ծեռով ետ գոված,  
Մե բաշ սուփրեն հավաքեցիր խըռոված.  
Տե՛ս ինչպե՞ս իմ էշխետ երած-խորոված,  
Նիտի պես ել մի՛ թըռցընը շիգըռված,  
Ա՛յ դու ոռւսի թաքվուրի պես զորա՞վուր:

Սայաթ-Նովեն խոսկ է ասում հին ծիվով.  
Չիս սըպանում, բայց դաղում իս քու ծիռով.  
Օրըս գիշեր արիր՝ սիրուս խանձիլով.  
Բաղումըն բաց կովիս հարփած վառ սիրով,  
Վունցոր ալ-վարթ, սուր փըշա՞վուր-փոթլա՞վուր:

Դրախտեն էլած մե անսըման վարթ իս դուն.  
Գուզիմ սուփրիտ վըրա ըլիմ մազա լիս.  
Զինար բոյով, տիսքով, կինքի զարթ իս դուն,  
Են ինչն է, վուր մաշից, շինից վագնը քիզ:

Ինչ պատահից, ինչի՞ պիտի տըխուր լաս.  
Ի՞նչ կուլի վուր քու ահվալից մե լուր տաս.  
Ե՛րնեկ օրից մե օր հիշիս, ինծ հյուր գաս,  
Շամփիտ փիանդազ դառնամ, վուր սազա քիզ:

Աչկիրըտ ին ալմասնիր՝ յաղութումըն,  
Շումկ ին տալի ունցիրուտ տակ, մութումըն.  
Դուն ակնակապ ջի՛ղա՝ օսկե դութումըն,  
Վայիլ է սիրմա-արծաթե ուազա քիզ:

Քիզ դուրեկան կաքավի սասն ըլեի.  
Չերիտ բըռնած բըռոլե թասն ըլեի.  
Ախըր ամեն բանով դուն կաս գովելի.  
Արժիկ տիղըտ ի՞նչը շինից բազա քիզ:

Էշխըտ վառից, նուր կըրակի տիդ չունիմ.  
Աղաչում իմ, ուրիշ ծար ու դիդ չունիմ.  
Սայաթ-Նովեն կոսե՝ վուչ մե միդ չունիմ,  
Հե՛րիք երիս ու տաս եղքան ջազա միզ:

Ինձ ավատա, ուժերավելե բառ թե կա,  
Շատ հասարակ էրկարի համա կոսին.  
Փետե ամանն ինչքան էլ օսկեջըրես,  
Նըրան էլի մե վառվող պի՛նա կոսին:

Խոսկըտ ասա կարքով՝ հավասար զոլով.  
Սատանա է, ով ծածկվի ծըխի տոլով.  
Կամ՝ գունքովըն կու ծանչնան կամ՝ փոթոլով,  
Ամեն խոտի յի՛փ է, վուր իհ՛նա կոսին:

Զարբաբըն թե մաշվե, գընա ա՛ռ շալըն.  
Վա՛յ խամին, վուր վընաս կուտա լըվալըն.  
Տովին, սազ գուքա ալմասըն ու լալըն.  
Կեղծ օսկուն է, վուր մարթիք մի՛նա կոսին:

Մարթ կա կոսե՝ ազնիվ ցիղի զարմն իմ յիս.  
Ուտենին էլ կոսե, մարխի ծառն իմ յիս...  
Վըրաց թաքավուրի սազանդարն իմ յիս,  
Ինձ Սալաթ-Նովա-Արո՛ւթինն ա, կոսին:

Արթար դատե, չէ՛ վուր թաքավուր իս դուն.  
Վըրաստանում տեր ու զորավուր իս դուն.  
Մեկն ինձ կոսե՝ «Գընա», մաշված շուր իս դուն»,  
Մեկն էլ կոսե՝ «Մե հոտած շըրհուր իս դուն...»:

Վո՛յ հարսնախոս ունիմ, վո՛յ էլ կողակից.  
Մեջիսումն էլ նուր խաղք արին, ծաղրեցին,  
Յիս ուամիկ իմ, ինձի վուխչ-վուխչ թաղեցին.  
Ում առաջ էլ սըրտիս ցավըն մաղեցի,  
Վուխչն ինձ ասին՝ «Մե անպատիվ հյուր իս դուն»:

Սազըն քոքած, ծեռիս բըռնած, հազըրված,  
Թաքավուրի մոդ գընացի զարթըրված.  
Ինձ հիդ տվին, վունցոր փուշըս կոտըրված.  
Է՛րնեկ լիզուն չիմանայի լիս նըրանց.  
Ասին՝ «Գընա, էրեսըտ սիվ մուր իս դուն»:

Աստծու կամոք մարթըս օղորմած պիտի.  
Սարն էլ սարին կու հանդիպի, ո՛վ գիտի.  
Է՛րնեկ մենակ ինձ ծեծելով խըրատիր,  
Կամ քու ծիռով ինձ հիդ տալիր, անպատվիր,  
Իմ հոքեուր մինձ ծընուլըն վուր իս դուն:

Թեգուզ ջարթին, ջանըս փետով վեր հատին,  
Շունչըս բիրնիս լիս ինձ քիզնից չիմ զատի.  
Շովըն կընգնիմ, թեվուր թուռն ինձ ազատի...  
Սա՛յաթ-Նովա, քու լիզվովըն ցավ դատի,  
Հալբաթ դարդ ու ցավի մե ախպուր իս դուն:

Զեռը վի՛կալ, վաղ մարթութին չիմ ուզում.  
Ես աշխարում փարթամութին չիմ ուզում.  
Վաղ բան ասիլ, յա վադութին չիմ ուզում.  
Յիս մարթ մարթ իմ՝ նամարդութին չիմ ուզում...  
Յիս ուամիկ իմ՝ թափադութին չիմ ուզում:

Եկ մի՛ վիթի իմ արունըս թասերով.  
Թանգ առած իմ քու ահագին ծախսերով.  
Մողըտ գուցամ իրանական ծեսերով,  
Դուն ինձ պահի՛ր ատլասով ու խասերով,  
Միկ կաբայում սըքվորութին չիմ ուզում:

Ասածնիրըս քիզ ամա ծիշտ թուղ ըլին,  
Փեշիցըս ել ինձ բըռնելու տիղ ըլի.  
Իմ գըլուխըս քու վուտի տակ խուղ ըլի,  
Բաղըս բաղիտ կից ու միատիղ ըլի՝  
Արանքըն պատ՝ բաժանութին չիմ ուզում:

Դովրանեմետ նընգար, ա՛վաղ, Սա՛յաթ-Նովա.  
Ել ի՞նչ կոնիս հա՛ «ա՛խ ու վա՛խ», Սա՛յաթ-Նովա...  
Ուրիշնիրըն կուկին ուրախ, Սա՛յաթ-Նովա,  
Ե՛կ, մի՛ գընա գըլուխըտ կախ, Սա՛յաթ-Նովա.  
Աղ ու հացիտ ախպերութին չիմ ուզում:

Իմ խիղճ գըլուխ, քիզիդ էս ի՞նչ պատահից.  
Վուխչ աշխարում ծաղր ու տընազ քի պատից.  
Ուրոր փախար, Ենթի բախսըտ սոթ տըվից,  
Վիրչումն ել տի՛ս, թե վո՛նց բեդովլաթ ելար.

Դե ել լիս ո՞մ միղ դընիմ, ինչի՞ց էլավ.  
Ես ամենըն հենց իմ էս խի՛լից էլավ:

Աշխարումըս դուն պատվական ու գոված,  
Շուշի նըման օսկե ղութումըն պահած.  
Աչաբ իիմի դուն ժեռ քարից ի՞ն շինած.  
Անգըրծակի էս ի՞նչ արին, ի՞նչ էլավ.

Դե ել լիս ո՞մ միղ դընիմ, ինչի՞ց էլավ.  
Ես ամենըն հենց իմ էս խի՛լից էլավ:

Թաքավուրաց կամքով մեշլիս կանչվողիս,  
Թաքադնիրուց միջըրվող ու հարգվողիս.  
Կարմիր կաբան արք ու փառքով հաքնողիս  
Աքիղայի սիկ քուրծըն բաժին էլավ.

Դե ել լիս ո՞մ միղ դընիմ, ինչի՞ց էլավ.  
Ես ամենըն հենց իմ էս խի՛լից էլավ:

Բըրինծ եի, գարի դառնալն ինչի՞ս եր,  
Յիս աղավնի, նուր լոր դառնալն ինչի՞ս եր.  
Ա՛սեք, կըրոնավուր դառնալն ինչի՞ս եր.  
Վա՛յ թե դա հենց իմ անբախտ օրիցն էլավ.

Դե ել լիս ո՞մ միղ դընիմ, ինչի՞ց էլավ.  
Ես ամենըն հենց իմ էս խի՛լից էլավ:

Հիմի Ենթի, հիովում սելիր ին լըծում,  
Փռանգըստանու բերած սազիր ին ածում,  
Ալթմիշլուղը սանթուրի համա գըցում.  
Իմ տունըս էլ վուր Եսօր Ես խուցն Էլավ.

Դե էլ լիս ո՞ւմ միդ դընիմ, ինչի՞ց Էլավ.  
Ես ամենըն հենց իմ Ես խի՛լքից Էլավ:

Սայաթ-Նովուն դուս մի՛ անի՛ պահպա՞նի,  
Էլ չի գընա Շահի մողն ու Սովորանի.  
Նա միր սուփրի զարթն Եր, գոված-անվանի.  
Փետե սազով նա գործ տեսավ Ենքան լա՛վ...

Դե էլ լիս ու՞մ միդ դընիմ, ինչի՞ց Էլավ.  
Ես ամենըն հենց իմ Ես խի՛լքից Էլավ:

33

Զեոը վի՛կալ իմ վարթեմեն, դուն ծիու Շա՞նց, սիրտըտ խային...  
Դիփունքըն քիզ ին կարոտում, ծաղկած ա՞միս գարնանային,  
Դուն վարթի փո՛ւնց, սիրուն թա՛լքու, հա՛ստատ մընա քու իղրարին,  
Մինչի ծեքըն ծըկընքում իս, քա՛ղցըր բըլքու, աշկըտ արին:

Անգած արա, իմ սիրե՛լի, գիշեր-ցերեկ դուն իմ դարդն իս,  
Յիս բըլքու իմ Եշխի նընգած, դուն Ել իմ սիրական վարթն իս,  
Խա՞ն կու կանչիմ, խա՞ն կու նայիմ. Վա՛յ թե դուն Ել մե նամարդ իս.  
Մեջիսնիրու մեչ գովական սանթուր-քամանչա իս անգին:

Հաքիտ ունիս դիբա ու զար՝ վըրեն ոանգեռանգ նախշ արած,  
Ով քու սուրաթըն տեսիլ է, խիլքըն գըլիսեն ունի տարած,  
Փըռանգըստանում հանիլ ին սիրուն պատկիրքըն նըկարած,  
Գործված իս դուն օսկեթիլով, մաթ կու շինիս նաղաշքարին:

Վո՛ւնց քընած իմ, վո՛ւնց զարթուն իմ, չիմ գիրի թե ծեռիս սա՞զ է,  
Միշնուրին քու տըկած սերըն ինչ մաքուր, ի՞նչ նազենազ է,  
Միշտ, համաշա իմ գըլովսըն ծամփիտ վըրա փիանդազ է.  
Դուն ջըրատար Սա՛յաթ-Նովա, Էրված-Վառված յարի ծեռին.:

**ՄԶԵԱԱՐՈՒԿ ՕՐԲԵԼԻԱՆԻՒՑ**

Արագվն անցնինք կարմունչեն,  
Ուղտի միշկին կա խուրջին.  
Նայեք ես մինձ դահլիճին.  
Հո՞ի հո՛, հո՞ի հո՛:

Ել չիմ ասի ավել բան,  
Թեզուզ փետով ջարթըս տան,  
Ծակելու մարքրիտ-մարջան.  
Հո՞ի հո՛, հո՞ի հո՛:

**ԱՆՏՈՆ ԴԱԹՈՂԻԿՈՍԻՆ**

Ո՛վ պատրիարք դու սըրփազան,  
Գուզիմ գովք անիլ քիզ արժա՛:  
Կոսին ջիբոմդ ունիս մե բան.  
ի՞նչ արիր:

Քաշեցիր իմ սիրտըն թոփի.  
Անունով ինձ կոսին սովի,  
Կորցըրիլ իմ իմ կոլոփին.  
ի՞նչ արիր:

# ШАГЫРДАШЕРДЕ КУЛБАР



Шұқын явуз оғырланыбыш, ғим ону дәндүрә билемез,  
Сәррағ олан бир ләле шаштын ганаңда билемез,  
Нәр һүгрәмдә шин бұта өар, дил ону дәндүрә билемез,  
Көнілүштің құлжанасы өар, сел дүшес сәндүрә билемез.  
Шанрың се өзиң арбыш масын, яндырыңыр, нардыр шұқын\*

Եշխի ծովի միշեն հանած լալ ու գոհար է բիոըս.  
Սիպտակ, կանանց, խաս ու դումաշ, զար դալամքար է բիոըս.  
Օչով ունգըն չի հասկանա՝ ուրիշ թահար է բիոըս.  
Աչկ ունեցող չըտեսնողին ահ ու դահար է բիոըս:  
Հիլ ու միխակ ու զանշափիլ, սաբր ու դարար է բիոըս:

Ինչքան ուստադ կա աշխարում, թուղ հավաքվին թամաշի,  
Հընդըստանից դալամքար զա, մաթ կու մընա իմ նախշին:  
Մաթ կու մընան իմ մարջանին, իմ ակներուն անհաշիվ.  
Դիքա ու ենգիդունյա է, սելր արեք իմ դումաշին,  
Սիրմա թիլով չինչին արած, զարբար ու զար է բիոըս:

Բիոըս Ենքան մինձացիլ է՝ փիլըն տանիլ չի կանա.  
Կուչ մե սարափ մե հատ լալիս գինըն ծարիլ չի կանա.  
Ամեն հուչըրիս հազար կապ կա, ել բաց անիլ չի կանա.  
Սելավ էլ գա, սըրտիս քուրեն ելի մարիլ չի կանա՝  
Աստծու սիրուն չըմոդենաք՝ կու վառե, նար է բիոըս:

Ե՛լ աղանր, վախում իմ լիս թալանշիմեն ու գողեն՝  
Բիոըս մեմեկ բաց իմ անում, շանց իմ տալիս եկողին.  
Իմ գըլուխըս մատաղ ըլի առնողին ու չառնողին.  
Համս ու հուտըն աշխարք բըռնից, խիստ դուր գուքա խըմողին՝  
Դոշաբ, շարբաթ, նուղլ ու նաբաթ, դանդ ու շաքար է բիոըս:

Ժեռ քարիրըն ալմաս դառնան, աշկըս վըրեն չի մընա.  
Թե մարթիք իմ տիսըն չըգան՝ ուրիշի մոդ չիմ գընա.  
Հեստի Եշխի կըրակ ունիմ. իսձ մոդենալ չին կանա.  
Սայաթ-Նովուն չըհավատաք, չուն իսկըն ես մեկըն ա,  
Չըլի թե արևուն դընիք, կու հալվե՝ ծյուն է բիոըս:

Էսպես լավ մուխամբազ. Արութինի ասած. ապրիլի 10-ին, քրոնիկոնի 440-ին (1752):

Ծովեն ելած թանգ մարքարիտ ու մարջան՝  
Գինըտ լալի ու գոհարի արանքում,  
Լիզուտ միղըր, յա՛ր, բերանըտ մե վընջան.  
Պըռունգիրըտ նուշ՝ շաքարի արանքում:

Գո՛զալ, արի պատճառ մի՛ դառ իմ մահին,  
Ակըռքնիրըտ՝ մարքարիտ ու շիրմայի.  
Սազիրըտ է շարբաթ, զուկիւրտ՝ սիրմայի,  
Պատկիրըտ է շամս՝ դամարի արանքում:

Սարի սիրուն կաքավի իս նըմանած.  
Ծոցիտ բաղում քաղցըր շամպ կա ցանած.  
Հենց իմացա հաղիդադից է հանած  
Բարակ միշկըտ, քիրման շալի արանքում:

Փոանգի զառ իս շահի բաժից փախցըրած.  
Մանիշակ իս բեհիշտ-բաղումըն ծըլած.  
Զալ աչկիրըտ վարթ-կոկոնից բաց ելած,  
Ղուշի շի՛ղա՝ ներկած ալի արանքում:

Ես կըրակըն Եշխի քուրիցն իմ առի,  
Սըրտիս խուցըն յարիս թիրիցն իմ առի,  
Սայաթ-Նովեն կոսե՝ փիրիցն իմ առի...  
Բութես դուն իս նընգի փալի արանքում:

Ես դափիան Արութինի ասած է, ով որ սովորի թողություն շնորհի, ամեն: Հունիսի 1-ին,  
քրոնիկոնի 430-ին (1742):

## 3

Թեվուր նազլու յարի խալըն հարցընիս՝  
Մե խալն արար-աշխարին է բանդ արիլ,  
Մեկըն էլ, վուր արժե իրան-թուրանին,  
Իրա անձար, խիղճ յարին է բանդ արիլ:

Մեկըն բանդ է արիլ ծով ու օվկիանին,  
Են մեկելըն վուսք դունիալի բինային.  
Մեկըն բանդ է արիլ Գումուշխանային,  
Մեկն էլ ի՞րա մադանին է բանդ արիլ:

Մեկըն բանդ է արիլ հարամ-հալալին,  
Են մեկելըն՝ սարում սիրուն մարալին.  
Մեկի մոդ չին նայի յաղութ ու լային,  
Մեկն էլ անգին գոհարին է բանդ արիլ:

Մեկըն բանդ է արիլ ծամփուրթ բանդալին,  
Մեկն աշխարի ամեն յանի սավդալին.  
Մեկըն՝ Թիֆլիս քաղկի հայտնի մելդանին,  
Մեկն էլ յարի ջանանին է բանդ արիլ:

Մեկից պայծառ աստղ ու արիվ կամանչին,  
Մեկն էլ կառնե դունի շատին ու քըշին...  
Մեկն՝ աշուղի բըլբուլ լիզվին, քամանչին,  
Մեկն էլ Սայաթ-Նովային է բանդ արիլ:

Էս Արութինի ասած է. խալի վրա-յարանա:

## 4

Նազլու յարըն հաքած ունե զարըն լիբասի վըրա.  
Պըռունգնիրըն էն տեսակ ին, վուր շաքար քըսի վըրա,  
Նաղաշքարին ասի, թե սիվ խալ տա երեսի վըրա.  
Ակըռքնիրըն՝ լալ, մարքարիտ, սարքած ալմասի վըրա:

Գովականըս ինձ խիկցըրից, գըժվեցըրից մերաշ ինձ.  
Ուշկ ու միտկըս իրար շաղից, խիլքըս գըլխես դուս քաշից.  
Աղաչեցի, հի՛դ չըդառավ, հոքիս ջանումըս մաշից.  
Աչկերեմես արուն կաթից են ջինի թասի վըրա:

Գիշեր-ցերեկ մըտկի ծովում, ցավըն սիրտըս հարիլ է.  
Նըստած էշխի հըրեղեն ծին, յարըս խիլքըս տարիլ է.  
Հաքած կանանչ, կապուտ, կարմիր, ի՞նչ լավ էլ հարմարիլ է.  
Զար ու զարբաբ, խաս ու դումաշ քաշած ատլասի վըրա:

Ցըրիկ տըված սիվ մազիրըն քամին չուրս յան կու տանե.  
Շուռ իմ գալի էշխի հըրին, վունց վառ շամին փարվանեն.  
Թաք վուր յարըն սիրտըս փըշրե, չի՛ ավիրվի, ի՞նչ անե.  
Վուր քիզ օտար աչկ չըդիբչի, հո՛տութ առ, ասի, վըրադ:

Սա՛յաթ-Նովա, ա՛սա, խո՛սե, էշխի փեշեն կախվիլ իմ.  
Առաշ մըտկի էշխի բազար, լալ յաղութըս ծախսիլ իմ.  
Փակուկի պես էշխի դամումըն քընիլ ու միխվիլ իմ,  
Ե՛րնեկ ըլի ման գա յարըս, վուր զարթնիմ սասի վըրա:

Էս իլահին Արութինի ասած է:

**5**

Լիզուն սուտիկ, սիրտըն՝ խային, գարունքեն դես չե գալի.  
Կասկածելով ջանքս մաշից. անշիգարըս չե գալի:  
Գըլխոքըս էլ օրթում կերա, էլի կոսիս չե գալի,  
Աղաչում իմ, հուր իմ կանչում, նազով յարըս չե գալի:

Գիր գըրեցի գոզալ յարին. «յիս քու մե դուկն իմ», ասի,  
«Գըլխիտ շուր գամ փարվանի պես, ղարիբ բըլբով իմ», ասի,  
«Բաղչումըտ շատ կուկի ծաղիկ, ամա յիս գուկն իմ», ասի.  
Զանք ռըրեցի, բաղ գըրեցի՝ թազա բարըս չե գալի:

Հաքած կանանչ, կապուտ, կարմիր. «յիս ուրիշ ռանգ իմ», կոսե.  
Իլահի-մոլխամմազ կոնե. «մե ուրիշ հանգ իմ», կոսե.  
Կոծե սանթուր ու քամանչա. «պատվական չանգ իմ», կոսե.  
Մե դըժար ծամփի ռաստ էկած, սազա բարըս չե գալի:

Եշխով լի վըրան է խըփի՝ աշուղներու բանդն է սա.  
Ինձի վառիլ, խորովիլ է, հալբաթ յարի անդն էս ա.  
Բառըն քաղցըր, լիզուն շաքար, ի՞նչ աննըման դանդ տեսա.  
Պըռունգներուն միուր քըսած, մազա բարըս չե գալի:

Զարմըտ գիղիմ, յա՛ր, ծընվիլ իս հուրի-փերի մորեմեն.  
Սատիտ օսկե մատնիք դըրած, ձեռըտ կարմիր՝ խինեմեն.  
Չանգլու-փիրի էս տըվածով եկ խո՛սինք աշխարեմեն,  
Սայաթ-նովեն վո՞նց ա՛խ չանե՛ գոզալ յարըս չե գալի:

Էս իլահին Արութինի ասած է:

**6**

Եշխի բաղըն մըրքով լիքըն, ամեն մե բարն էստի է.  
Հուտըն լիրգինք-գեղինքն առած, մուշկի-ամբարն էստի է.  
Մանիշակըն նուր բաց էլած՝ վարթ, սուսանքարն էստի է.  
Գարունքվան վախտըն դեռ չեկած թազա նուբարն էստի է:

Հըլա ջահիլ խիվ իմ, եշխով կըրակ մի՛ տու իմ հոքին.  
Առանց էն էլ ուշկըս տարար, անմիջ տիղն էլ մի՛ զուքվի.  
Վիզըտ մարալ-ջելրանի է, էլ անտիդի մի՛ ծըզի.  
Շըվաքն արար-աշխար առած սալբի-չինարն էստի է:

Կարմիր վարթով լի բաղչումըտ բըլբովնիր կու թըովըռան.  
Մե գամ տեսա, ջունուն դառա, աշկըս մընաց ծիր դըռան.  
Ցիփոր յարիս նափասն առա, քընած տիղըս վիր թըռա.  
Սուս մըտիլ է Եշխի դովրան, Եշխի խոնթքարն էստի է:

Յարըս Եշխի նիտով խուցից, յարա թողից իմ սըրտիս,  
Աղաչեցի, վուր դիդ անե իմ էս ցակիս, իմ դարդիս,  
Դիդ տալու տիդ զալումն ասից՝ «Տարին մե գամ արի տիս».  
Ազուղներու դաստը մըտած, Եշխի քափուրն էստի է:

Յարըն, կոսին թե թողիլ է՛ սուտ ասոդ է Սայաթ-նովեն,  
Զունուն էլած, սազըն ծեղին սազ ածոդ է Սայաթ-նովեն,  
Թե դարայի ապրանք ունիս, խաս առնոդ է Սայաթ-նովեն.  
Եկ, բա՛ց արա Եշխիտ հուցրեն, զար-խըրիդտարն էստի է:

Էս իլահին Արութինի ասած է:

Յարիս բաղի չորս կուռն առած  
Ման գամ անձար պըտուտ տալով.  
Զըմոան դարիբ բըլբուկ դառած,  
Կարթիս համար պըտուտ գալով:

Բըլբուկն աչկըն թաց, վարթ տեսավ,  
Լիզուն բացվեց. «Ա՞խ, վա՛րթ», ասավ.  
Կարոտալի տարու հասավ,  
Աչկըն դառավ պուտ-պուտ ալով:

Բըլբուկին զըրգից գուշանից,  
Չուսու աչկիրըն արնակալից.  
Ախըր քիզ ինձանից հանից  
Մէ չար հիմար, պըտուտ գալով:

Քու սըրտումըտ ի՞նչ կար, մա՛լագ,  
Վուր միզ բերիր եւես քալագ.  
Միզնից գընաց չարխի-փալագ,  
Գլուխն անդաթար պըտուտ տալով:

Խոսկին հաստատ Սայաթ-Նովեն  
Աշխարն առանց յար ի՞նչ կոնե.  
Հիդ դառավ, ի՞նծ դիբավ, ինձմեն  
Գըցած քարըն, պըտուտ գալով:

Թասլիբ

Նազլու յարի նախշըն տե՛սեք, դալամի դաշեն բաց էլած.  
Մէ թիլն երժաթ, մեկելն օսկի, հուսիրըն դոշին բաց էլած...

Յար, վուտըտ դիր իմ երեսին, վուտիտ տակի քուզտ լիս իմ.  
Համաշա քու դըռանն ընգած, տուսաղ արած դուզտ լիս իմ.  
Արի մետի բաղըտ գընանք, քու բանդա բըլբուզտ լիս իմ.  
Աչկիրըտ վունց կարմիր կոկոր, վարթի պես շաղեն բաց էլած:

Աշուղներուն ջունուն կոնե, բըլբուկ լիզուն թե բարբառի.  
Ջիշ է մընում սըրտիս շուշեն անշհգարըն խըփե քարի.  
Պատկիրքըն արիվից վառ է, էնդուր իմ դառի սարսարի.  
Տեսնողնիրըն ասում ին, թե էշխի կըռակեն բաց էլած:

Չունուն դառած ման իմ գալի, ուշկ ու միտկըս իրար շաղած.  
Պըռունգներուն քաղցըր շաքար, դանու ու նաբաթ ունե մաղած.  
Բերնում սիրուն ակըռքնիրըն մարքարիտի նըման շարած.  
[Ով տեսնում է, ես է ասում՝ «Հընդու նաղաշեն բաց էլած»]:

Հուտըն յիրգիրն, աշխարն առած մանիշակի դա՛ստին մըտիկ.  
Ուզում է, թե միզ ըսպանե, անողորմի դաստին մըտիկ.  
Չունուն մի՛ դառ, Սա՛լաթ-Նովա, նազլու յարի նաստին մըտիկ.  
Զար ու գարբաթ, ալ ու կանանչ, խաս ու դումաշեն բաց էլած:

Դաստա-բեղաստա թարփանուր-ի հանգով:

Հընդու դա՛լամ, քու նախշըն չի փըշանա.  
Մըսրու թերած զար իս, ուանգըտ է կիրմիզ.  
Գարնան յասաման իս, փոթլով աննըման.  
Սարումըն մանիշակ՝ բաղչումըն նարգիզ:

Գոզալ, շանց տու քու սիվ խալի դուզանին,  
Շող-շափաղըտ չի հիուանում միզանից.  
Վո՞նց ըսպանից, վո՞նց սաղ թողից նազանին՝  
Լողմանի պես ասի՝ «Քի՛չ էլ, քի՛չ...», ա՛զիզ:

Մարալ բոյըտ տեսնողին տամ երանի,  
Շաքարն ի՞նչ է հասնե քու քաղցըր համին,  
Գոզա՛լ, արի վատ անուն դու մի՛ հանի՝  
Մեջլումի պես չոլ մի՛ գըցի անյար միզ:

Զուկիտ թիլըն ջըգիլ իմ հանց մե շանա.  
Ոուն արիվ իս, լիս էլ մե գով՝ սամսանա.  
Յա՛ր, էշխեմետ լիս դառիլ իմ դիվանա,  
Փահլուկի պես մընացիլ իմ լիս աջիզ:

Սայաթ-Նովուն չըսպանե իր ջանանը.  
Նըրան մատաղ ըլի թող Հընդըստանը,  
Ղում, թաշան, թիրմանն ու Արաղստանը,  
Ամեն ծամին արժեն Ղըբըրզ ու Սակիզ:

Էս Արութինի ասած է. վարսաղ:  
Էսպես դափիա. Արութինի ասած. ով որ սովորի, բարի հիշի:

Ասեցին, թէ Շախաթա՛յի, լիս կանչում իմ հա՛խ, մա՛դաթ.  
Ինչ արնով վուր ներկված ըլիս, ետ գըրած կուլի հալբաթ.  
Փերիներու էշխն ընգնողըն իր խիլըն քամ կու տեսնե,  
Օրըն մեկ է, ցավըն՝ հազար, դալն էլ շատ գամ կու տեսնե:

Շատ անուս մարթ էշխի կընգնե՝ խոսկըն խոսկին չի կապի,  
Վարպիտին ով աշկիրտ չըլի, վիրչումըն դամ կու տեսնե:  
Կողըտ քըսե փորցաքարին՝ սառափըն դալըն իմանա.  
Գուզիմ սիրտըտ շանց տաս, տեսքըտ ամեն մարթ հա՛ կու տեսնե:

Անգած արեք, աթամո՛րթիք.  
Վուշ սիվ բուրթըն ալ կուլի,  
Վուշ սոնեմեն կաթ կու կըթվի,  
Վուշ արաքին խալ կուլի.  
Վուշ ծըտերին գոհար կուլի,  
Վուշ ակոնափին լալ կուլի.  
Վուշ ծառերին շուշա կուլի,  
Վուշ էլ ուղտին նալ կուլի.  
Վուշ թըրթուն աբրեշում կուտա,  
Վուշ սիվ ծանցին պալ կուլի.  
Վուշ հարամըն հալալ կուլի,  
Վուշ էլ ջահնամ կու տեսնե...

Վուշ աշկերիս քուն է գալի, վուշ զարթուն իմ աշխարում.  
Կինքում էսքան բաներ կուլի, Սայաթ-Նո՛վան կու տեսնե:

Էս դիվանին Արութինի ասած է:

Վունց վուրսնուրթի ծեռից փախած մե մարալ,  
Համ ամոռով, համ արով յարն է գալի.  
Պըռունգնիրըն միղըր, սիրուն չանին խալ,  
Սիշկըն օսկե քամարով յարն է գալի:

Ման իմ գալի, սիրտըս եշխի մեջ վառած,  
Եշխի փոլադ գինչիլի տակ դուզ դառած.  
Աշխարով մեկ շոտքըն արիվիցն առած,  
Կերպարանքըն դամարով յարն է գալի:

Ինքը հրիշտակ, բա մոր շընուրքըն տեսեք.  
Սարքարտի պես ակուեի շարքըն տեսեք.  
Զեռի սանդրը, ծամի օլորքըն տեսեք,  
Սիվ զուկփիրըն շահմարով յարն է գալի:

Դոշիս վըրա յարսն եշխի նիտ ցըցից,  
Զունուն արից, սըրտիս միջըն հուր լըցից.  
Բուշ ու բորանն անմիջ հոքու մեջ գըցից.  
Զըմըռվան պես զահմարով յարն է գալի:

Հուաըն՝ սըմբով, զուկփըն պատկիրքին վայիլ.  
Ըստիղծված է իսկը գոզալին դայիլ.  
Ռափիդ Սալաթ-Նովեն դառավ հըմայիլ,  
Շուրըն դալամքար՝ գարով յարն է գալի:

Ես դափիա է. Արութինի պսած:

Դարիբ իմ, արուն իմ լալի,  
Դրժար դարի հանդիբելով.  
Տե՛ր իմ կանչում կըսկըծալի,  
Կինքում չարի հանդիբելով:

Զու ծեռով գինին խըմեցի,  
Վաթանեմես ծեռ քաշեցի,  
Փարվանայի պես երվեցի,  
Հուր ու նարի հանդիբելով:

Վաթանեմես յարն ինձ հանից,  
Դարիբ տիղում սիրտըս հալից,  
Փահրադի պես ցավն ինձ կալից,  
Մե մինձ դարի հանդիբելով:

Վուրսնուրթի պես չոլից ընգա,  
Սոնայի պես գոլից ընգա.  
Բըլբովի պես գոլից ընգա,  
Փուշ ու խարի հանդիբելով:

Սալաթ-Նովեն իմ եշխ արած,  
Էրեսըտ ծամփիտ փարշ արած.  
Կինքիս կանանչ թաղն ավիրած,  
Անսիրտ յարի հանդիբելով:

Ես թասլիբն Արութինի ասած է:

Փոշման կովի, ովոր յարի անուն տա՝  
Դարդըս հավաքվի, մե ամբար է դառի.  
Տեսա աշխարի զարթ, տեսա նովչիվան,  
Տեսա նազլուն շամս ու դամար է դառի:

Ամեն գուփին մե-մե օլրած նիտի պես.  
Ակրօքնիրըն յաղութ, մարցարիտի պես.  
Փահմով անջաղ ճանաշիս, թե հանդիբես.  
Հիսի տեսքըն, տեսա, շամար է դառի:

Տեսա բոլրած լուսնակի նըման կանգնից,  
Արիվի պես շուղքըն գքցից, յան կանգնից,  
Թերթերուկին ալմասի պես բան կանգնից,  
Զուխտ աչկիրըն, տեսա, խումար է դառի...

Եշխի փերուն տեսա, խիլքըս պակասից,  
Աչքըս փակվից, արտասունքըս վեր հուսից.  
Արիվ դառած էն յարի պայծառ լուսից,  
Սայաթ-Նովեն, տեսա, դամար է դառի:

Ես Արութինի ասած է. շահմոհըրլա-յարանա:

Դուն համաշա աշուղնիրու փիքրին իս,  
Զու վառ ամալեմեն վառած իմ, վա՛ռած:  
Արեգացի նըման շուղք իս գըցում միզ,  
Զու մահ-ջամալեմեն վառած իմ, վա՛ռած:

Մահ-ջամալըտ դառած օսկե վարադով.  
Զերիտ ունիս լիքը փընջան՝ արադով.  
Յա՛ր, շիմ տեսի քի պես խիլքում շաղախով.  
Թաքուն խիալեմեն վառած իմ, վա՛ռած:

Յիս քիզի վո՛նց նըմանցընիմ շինարի,  
Զուն շինարըն կըրակումըն կու վառի,  
Նախշըտ փոխում իս հազար մե թահարի,  
Ակուցիտ լալեմեն վառած իմ, վա՛ռած:

Յա՛ր, զու էշխով դուն իմ սիրտըս վարի իս.  
Զունուն արիլ, խիլքըս գըլխես տարիլ իս,  
Լալ, մարցրիտըն բիրնիտ հատ-հատ շարիլ իս,  
Զու էտ սիկ խալեմեն վառած իմ, վա՛ռած:

Նազլու յարի մոդ է սիրտըս սիրավուր,  
Դոշիս մեշըն սուր-սուր նիտիր թունավուր.  
Սայաթ-Նովեն իմ յարեմեն վիրավուր,  
Միշտ յարի ծեռնեմեն վառած իմ, վա՛ռած:

Ես վարսաղն Արութինի ասած է:

Նազլու յարըն բաց է ելի վարթի պես,  
Հուսըն վարթ է, երեսըն վարթ, խալըն վարթ.  
Մե վարթին բըլբով կու սիրե, մեկին՝ խար,  
Աչկըն վարթ է, ունքըն վարթ, ջամալըն վարթ:

Թե վուրսնուրթ իս, սարի մարալ դուն բըռնե.  
Թե սովհաջար իս, սըվթային ծեռ մեկնե.  
Յարըն հաքին խաս-ատլասե շուր ունե.  
Միպտակըն վարթ, կանանչըն վարթ, ալճն վարթ:

Գիշեր-ցերեկ աչկես արուն է կաթում.  
Զալումն ուշկըս տարիլ է մե սրիաթում.  
Բերնեն լալ է թափում, ինձի խըրատում.  
Բառըն վարթ է, լիզուն վարթ, խընդալըն վարթ:

Պատվական տեսնելու նովաբու նաջար.  
Բըլբովին ըսպանող թոփ վարթի սաջար.  
Սալբու նըման ամառ-ձըմին կանանչ ծառ.  
Շոշըն վարթ է, ժողըն վարթ է, շալըն վարթ:

Գուգիմ յարն ինձ չըգըցէ իր դիդարեն.  
Գուգիմ եշխի թըրով սիրտըս պատառե.  
Սայաթ-Նովուն յարի եշխըն թող վառե,  
Հուրըն վարթ է, կըրակըն վարթ, փալըն վարթ:

Արութինի ասած վարսաղ է, ուզամա:

Յիս իմ յարին իլթիմազով ասեցի՝  
Սառքիլն ինձնից, բառէն քիզնից, բաղ քիզնից.  
Թեվուր դեմ չէ, դաբով կոնե բաղմընչին՝  
Կըտրիլն ինձնից, շամամ քիզնից, թաղ քիզնից:

Բեմուրվաթ յա՛ր, աջար ի՞նչ կա դաստումըտ.  
Աչալի պես հոցիս բըռնած դաստումըտ.  
Եշխըտ չէթուլ ժուռ գամ կանանչ բաղչումըտ,  
Բըլբովին ինձնից, կոնչեն քիզնից, շախ քիզնից:

Եշխնետ ջունուն, թամամ բեքար իմ դառիլ,  
Դուն իմ դոշիս լիզվիտ նիտիրն իս շարիլ,  
Էսքան ցավիրն իմ սըրտումն իմ յիս տարիլ,  
Ուկունս ինձնից, դամգեն քիզնից, դաղ քիզնից:

Պըռունգնիրետ միղը ու շաքար իս ժորում,  
Քու պատկիրին կարուտ յարին չարչարում.  
Ինձ երեցիր եշխիտ վառած հուր-նարում,  
Փարվանն ինձնից, կըրակ քիզնից, շամ քիզնից:

Վուրսնուրթ էի, թառլանըն բանդիս դիբավ,  
Սարալին նըշան առա՝ նիտն ինձ դիբավ,  
Սայաթ-Նովեն ասաց, թե դանդ իս դու լավ,  
Շարբաթն ինձնից, շաքար քիզնից, շավդ քիզնից:

Եսպես յարանա, լավ ուզամա, Արութինի ասած:  
Ովոր սովորի թողուգյուն շնորհի. ամեն:

Արունըն մե կըռնեն, ցավըն մեկելեն.  
Իմ էս յարեն ազալից է, գոզալից.  
Տակոին սըրտիս՝ դոշիս բերան ունե լեն.  
Իմ էս յարեն ազալից է, գոզալից,  
Գոզալից, յաղի գոզալից:

Մեջլումի պես Լելլու համա խիվացած,  
Ցիս բըլով իմ, զոռով վարթես հիուացած.  
Շատ մարդ կուտ՝ դուգուն դաղեն պիվացա.  
Այս իմըս ազալից է, գոզալից...

Հա՛ լալիս իմ, ինձ մե ուրախ օր չելավ.  
Էս ցավեմեն փախչելու հընար չելավ.  
Շատ ման էկա, դարդիս դիդ ու ծար չելավ,  
Չունցի յարեն ազալից է, գոզալից,  
Գոզալից, յաղի գոզալից:

Գըրած գիրըս յարիս ծեռըն չի ընգնում,  
Ղան-դամարըս բաց է՝ կապող չիմ գըրնոմ.  
Ենդուր ջարեն վըրեն մըհլամ չի դընոա,  
Վուր իմ յարեն ազալից է, գոզալից...

Սայաթ-Նովեն կարթացիլ է մինչի լամ.  
Ախ քաշելեն կորուրիլ է խիւք ու փահմ.  
Փիլթբըն միշտ դըրած՝ չէ կանգնում մըհլամ՝  
Իմ էս յարեն ազալից է, գոզալից,  
Գոզալից, յաղի գոզալից:

Էս յարանա Ծիրվանի հանգով Արութինի ասած է. յավն է:

Անդուտ, անհիրը մե հուցրա է միր հոցին,  
Միցինը յա ջավահիր է, յա դանա.  
Անգետ մարթըն չի հասկանա, կու կոտրե՝  
Լալ մի՛ ծախի՛ ովոր դադրըն շիմանա:

Փառք տուր հազար ու մե անուն հազրաթին՝  
Գահի դուտըն բանա, դըսմաթ վեր թափի.  
Հայալ հերըն վո՞նց կու մորթե գուրիարին,  
Վուրթին միոնի, յի՞փ սութ կունե յադ անան:

Ես անցավուր միր աշխարըն չէ կըշռած,  
Աշղութենի քաշըն կըշիռք չէ քաշած.  
Փիր-ուստադի դահրըն ովոր չէ քաշած,  
Չուրք վուտանի յա մե հորթ է, յա դանա:

Տերն ըստիղծից արար-աշխար, կինք ու մահ.  
Փակ աշկիրով բելթիրըս չին հասկանա.  
Սայաթ-Նովու հոր վաթանից հարց կու տան.  
Ասում է, վուր Հալաբն է, յա Աղանան:

Թեշնիս

19

Կինքըս մընաց դարդ ու ցավի ծանգոմըն,  
Սիրտն էլ անվիրչ գուզե սուր<sup>\*</sup>, Սա՛յաթ-Նովա,  
Աչկեմես չէ պակսում ալ-արտասունքըն,  
Մեկը չասից՝ մընա լուտ, Սա՛յաթ-Նովա:

Մատաղ ըլիմ ամոթ-արին ինձ տըրված.  
Նասիմի պես իմ մորթուս մեչ լըջըրված.  
Ոե վուր նավըտ խուր ծովին իս հասցըրած,  
Ղա՛ստ արա, չըլըցվե ջուր, Սա՛յաթ-Նովա:

Խիվ սի՛րտ, անմիղ դարդ ու դամին ընգար դուն.  
Փարվանի պես վառած շամին ընգար դուն.  
Վուրսնուրթի պես դե վուր սարիրն ընգար դուն,  
Մարալ տեսնիս, նիտով տո՛ւր, Սա՛յաթ-Նովա:

Ալիփըն ու բիմըն անգիր սովորեցիր,  
Քու գոզալին սազական զառ գործեցիր.  
Կորցըրեցիր յարստ՝ խիլքից զըրգվեցիր,  
Էլի, փառք տուր Աստըծոն, Սա՛յաթ-Նովա:

Անմահական ջուրն ինձ ջամոմ տըրվեցիր,  
Հուր ու կըրակ քուրես քամուն տըրվեցիր...  
Յարսուն տարվա կինքըտ մահուն տըրվեցիր,  
Խիլքըտ գըլիսիտ պահիր դո՛ւն, Սա՛յաթ-Նովա:

Ես թեշնիս ե:

20

Դոշիս վըրա արնուտ դուգուն-դաղ ունիմ, դաղ ունիմ,  
Աչկըս մընաց նազլու յարի տիս գալուն.  
Յարիս համա գըլիսիս վըրա տիդ ունիմ, տիդ ունիմ,  
Աչկըս մընաց նազլու յարի տիս գալուն:

Բնմուրպաթ յա՛ր, ա՛սա, յիս քիզ ի՞նչ արի, ի՞նչ արի,  
Ես խիվ սիրտըս եշխի մեշըն հասցըրի.  
Փահլուկի պես Եշխի դամս ինձ նիևչ էրիտ,  
Աչկըս մընաց նազլու յարի տիս գալուն:

Դարդ է տըվիլ, դարդիս դարման չէ գըթնում.  
Զեռնեմեն շիմ պըրծնում, ցավըս չէ հատնում.  
Սոնաս հիուու նընգավ գոլից՝ չէ հասնում.  
Աչկըս մընաց նազլու յարի տիս գալուն:

Լիդնուրի դառած խուր ծովիրում մաշվեցի.  
Փահրադի պես սարին քըլունգ քաշեցի,  
Մեջումի պես Լելլու համա գըժվեցի,  
Աչկըս մընաց նազլու յարի տիս գալուն:

Սիվ ջիգարըս մուտըս թաքուն պահում է.  
Ղան-դամարըս բաց է՝ սիրտըս դողում է.  
Սայաթ-Նովեն լալով հա՛ նըվաղում է,  
Աչկը դըրած նազլու յարի տիս գալուն:

Ես լավ վարսադ է, Արութինի ասած.  
Ով սովորի, թողություն շնորհի:

\* Խրախօսնք (պարսկ.):

Հոգով, սըրտով գուզիմ տեսնի պատկիրըտ.  
Փարվանայիտ արի մի՛ վառի, դու նա՛ր,  
Միկ իմ հաքի, յա՛ր,  
Նընգիլ իմ աշխար:  
Աշխարումըս էլ լավ ու վատ չըմընաց,  
Վուր չասեի լիզվով անողորմ յարին,  
Իմ անցիգարին,  
Լալ ու գոհարին:

Լալ-գոհարը բիրնում շարված տեսա լիս.  
Զար մազիրըն ուսին փըռված տեսա լիս.  
Վարթ ու միխակ ձիուն բըռնած տեսա լիս.  
Արի դուն սեյր արա կանանչ թաղերուն,  
Շաղկած բաղերուն,  
Շանանչ տիղերուն:

Տիղ կա, հոքիս մե ժամ հանգիստ չէ ծարում,  
Չունքի նա՛զլուս է ինձ վառում, չարչարում  
Անհանգչիլի հուրը սըրտիս չէ մարում.  
Տեսա վուր նա անխիջ մե սըրտակեր ա,  
Կովի հետ սեր ա,  
Կանչեցի՝ մեռա՛...

Մեռնելուս էլ չի հավատա իմ յարը,  
Չի հավատա, չի հասկանա իմ ծարը.  
Էլ չըմարից սիրտըս էրող հուր-նարը.  
Թեվուր միղըս էս եր, մո՛րթեք ինձ թըրով,  
Կա՛խեք դանարով,  
Նամուսով, արով:

Նամուս-արը փառք ու պատվի հիմքըն է,  
Աշուղներու էշիս թասըն լիքըն է,  
Սալաթ-նովեն քիզ ի՞նչ արից կինքումըն,  
Վուր դուն նըրան հասցըրեցիր կըսկըծի.  
Բազար իս գըցի,  
Փայ չանիս օցի:

Ես Արութինի ասած է. եղագամա (-զինքիրլամա):

Խիվ սի՛րտ, արի ա՛նգած արա խըրատիս.  
Բարի լիզվով անիծն տըվող չըլիս դուն.  
Վուշ դուն շարին վազե, վուշ էլ շարըն՝ ցիզ.  
Սատանի հիդ ընգիր ըլող չըլիս դուն:

Մելիդան մըտիր, թեվուր գիղիս կու շահիս.  
Փիրի ծամիից թե դուա զաս, կու շիվարիս.  
Դոքըտ կընգնիս, թե ուրիշին հուր փորիս.  
Պարզն ու լավը կինքում թաղող չըլիս դուն:

Մարթ կա իսկը հայվանի պես կարածե,  
Դալդա տիղն էլ ծախու գոհար ման կածե,  
Ամեն մարթու հոքում ասլան քընած է.  
Փուշ կա. աչկըտ փակ վարթ քաղող չըլիս դուն:

Ամեն մարթ իր սըրտին հավասար կուի.  
Անեա իրեն բարին բարեբար կուի.  
Ով էլ կինքում քիզ միշտ ամագոար կուի,  
Նիղն ընգնիլիս հիովից նալող չըլիս դուն:

Ո՞վ կու հասնի անց կացած էն մինձ մարթկանց,  
Սիր պապիրի խոսկըն լավ է լալըն կանց.  
Ժառի վուրթն իր մեշեն կուի գոյացած,  
Սա՛յաթ-Նովա, չար բան ասող չըլիս դուն:

Ես Արութինի ասած է. օգութլամա:

Քաղցըր խոսող, յա՞ր, բըլրով իս ինձ ամա,  
Քու պես փերու գովքըն ո՞վ ինձ պես ասից.  
Զի տեսնելուց յիս դառիլ իմ դիվանա,  
Խիւքը թըրիլ, ո՞վ գիդէ ո՞ւր է հասիլ:

Դուն իմ սըրտի սիրու իշխանն իս դառիլ,  
Էշխիտ պեծըն ջանըս գըցիլ ու վառիլ.  
Աշխարով մեկ ինձ խայտառակ իս արիլ,  
Արի ա՛սա, թէ ռառիփիըն ի՞նչ խոսից:

Ծոցիտ միշին բաղչա ունիս, բաղ ունիս,  
Հեռիտ օսկէ թասը լիքն արաղ ունիս,  
Պըռունգներուտ սաղի ու դոնաղ ունիս,  
Յարաք տանըտ ո՞վ է խըմիլ էտ թասից:

Մա՛տաղ ըլիմ թուկն աչկիրի կամարին,  
Միչկին կապած չարքազի զար քամարին,  
Արիվի դեմն առնող սիրուն դիդարին.  
Հաքինը շեր սադա էր, վուչ՝ ատլասից:

Յարիս ծոցի ջուխտ նըռներից վազ անցա,  
Բըլրովի պես վարթի խարից վազ անցա,  
Են զամանն է, վուր իմ յարից վազ անցա,  
Չուրգ մընացի յարիս ջանից, նախասից:

Ես Արութինի ասած է, յարանա վարսաղ:

Դարդըս շատ է ասիլ չիլի աշխարին.  
Արգ իմ գըրիլ, թողիլ խանի ումուտին,  
Արթար կըտրի, դիվանըս արթար անի,  
Միդ ունենամ՝ ինձ տա կանի ումուտին:

Ոե վուր արզուհալըս ծեռըտ առար դուն՝  
Բաղեշխանի լալըս դուն իս ու կաս դուն:  
Ես է գըրած արզուհալիս իմ թըղթում.  
«Կինքըս մատաղ յարիս-ջանիս-ումուտիս»:

Ժեռ քարումըն տակոփի չի տա ալ վարթըն.  
Առանց լիդի կու հանգէտ վառ ծըրագըն՝  
Ակուավին ի՞նչ պետք է բաղ ու բաղաթըն՝  
Բըլրովըն կովի գուշանի ումուտին:

Ով հասնում է, գալիս է ծով-ումմանով,  
Իրեն տեսնում ու մընում է գումանով.  
Լավութինը ովոր իիդ տա յամանով,  
Կընգնի պատվից ու սեղանի ումուտից:

Միր էս ծամփեն փիր-ուստադից միզ մընաց,  
Էնդու համա սիրտըս էշխով է լրցված.  
Սալաթ-Նովուն հենց վուր տեսնիք մահացած,  
Տարեց, թողեք գերեզմանի ումուտին:

Ես դափիան Արութինի ասած է, ապրիլի 20-ին, քրոնիկոնի 441-ին (1753):

Դե վուր կոսին էս աշխարջս ունայն է,  
Ենոյու համա սոյբաթ-սազից վախում իմ.  
Բըլուկըն\* վուր թըռչե, գընա իր բունը,  
Դարդակ թողած՝ էն դափազից վախում իմ:

Չըլինի թէ նիտվանիդըտ բոշցընես,  
Ազալն իսկովն հոքուտ դըռնից կընգնե ներս,  
Կինքի թիլըն ծեռը կառնե, խաղցընե.  
[Էտ խաղերից], էտ ջանքազից վախում իմ:

Ուզում է գա, կինքիս բինին հասանի,  
Ամեն անթամ, ամեն դամար կես անի.  
Խամըն թող տա, աբրեշում ու խաս տակի՝  
[Վուշը չառնե, էտ դազազից վախում իմ]:

Ազալըն գա, ինձ ահուզար կու բերե,  
Հուզմըն ուսե, ջանիս ազար կու բերե.  
Հինգ արշին կըտավըն բազար կու բերե՝  
Ջոռ սովդաքար էտ բազազից վախում իմ:

Սայաթ-Նովեն կոսե՝ խաթեն հասնում է,  
Միղաուրնի՛ր, զուզումաթըն հասնում է.  
Փա՛ռք հախ տիրուն, արթար դատըն հասնում է՝  
Միղը չափող էն թարազից վախում իմ:

Էս լավ հախանա-դափիա է:  
Ով սովորի բարի հիշի. ամեն:

\* Հոգին (Փոխար.):

Մե մարալ վուր ասլանի մորթի մաշկն,  
Էլ խիղօ վուրսնուրթն էնենց ավին ի՞նչ անե.  
Թե ուզենա փանդով ցանցի մեջ քաշե,  
Հիդ փախչիլս «Հարալիրեն» ի՞նչ անե:

Հեստի մարթ կա, խիւըն վուտցի միշտուն է,  
Հիռու քաշված, կինքից խաբար-բան չունե.  
Օց կա, պոշի ծերըն միշտ անգածուն է,  
Նրան ջաղութարի դուլեն ի՞նչ անե:

Զոշկ շինելու համա լավ միմար պիտի,  
Ամեն բանում շատ լավ խաբարդար պիտի.  
Աշուղն էլ շատ փորցված քամանդար պիտի.  
Չաղ կըրակին անիդ թալէն ի՞նչ անե:

Ծատ-շատիրն ին ընգի յարի հավասին.  
Էշխի նընգար, շիս ազատվի էլ բասից.  
Շիրինը մաթ մընաց քըլունցի սասին.  
Փահրադի պէս սար հատանիլն ի՞նչ անե:

Հիմի ու՞ր է Նադիր-Շահ ու Տեր Պազար.  
Էն վախտի մելիքըն՝ Աղա Մինիշկար.  
Ո՞ւր է էնենց դիվան, ո՞ւր է էնենց Շահ,  
Չըկան, հո՛քիս, Սայաթ-Նովեն ի՞նչ անե:

Էս դափիա է:

ՄԵ գուզիմ, թե ուրիշ յարի թուշ ըլիմ,  
Վախում իմ, թե արանքըն բաս գա, գընա.  
Յարիս ծամփին կանգնիմ, սիրով սելր անիմ՝  
Վա՛ թե չար աչկ, ծաղր ու տընազ գա, գընա:

Սիրտըս երից, կըրակ ունիս, նար ունիս.  
Հայա ունիս, ադար ունիս, ար ունիս.  
Ե՛կ, ինձ ա՛սա, թեվուր ուրիշ յար ունիս,  
ՄԵ գիր գըրե, թող վազեվազ գա, գընա:

Արարիչըն զարմ ու ցիղըտ պահպանե.  
Վարպետ պիտի՝ սիրուն տեսքիտ գովք անե.  
Վուրդի ել վուր նազլու յարըն սուք անե,  
Ենթի քաղցըր սոյբաթ ու սազ գա, գընա:

Մատաղ ըլիմ քու ջիգարին, ա՛չկի լուս,  
Կինքըս առնե թող ժեռ քարին, ա՛չկի լուս.  
Հա՛ստատ մընա քու իղրարին, ա՛չկի լուս.  
Յարի օրըն թող հազիկիազ գա, գընա:

Գո՛զալ, եկ ինձ մի՛ գըցի ետ ջանջալին.  
Դոշըս դեմ առավ քու եշխիտ խանջալին.  
Սայաթ-Նովու օրիրըն վուր դինչ ըլին՝  
Պիտի ուաղիկին իր ջանից վազ գա, գընա:

Էս դափիա է. Արութինի ասած:

Միտկըտ ի՞նչ է, իմ նազանի, ա՛զիզ յար,  
Չըշքիոթվիս դուն միր էս խոսկիրեմեն,  
Ախ քաշելեն լիրթ ու թոքըս զայ ելավ,  
Արուն-արտսունք հուսից միր աչկիրեմեն:

Յա՛ր, գիդիմ, վուր եշխովըտ ինձ կու վառիս,  
Սըրտիս միշին սուր-սուր նիտիր կու շարիս,  
Ու ի՞նչ կուկի, բարի աչկով մե նայիս.  
Վո՞նց եսքան շուտ հիուացար քու յարեմեն:

Առանց ջուղաբ դուն իմ հոքին հանում իս,  
Լիմոնի պես հե՛րիք քամիս արունըս,  
Աղաշելուց շան շըմընաց շանումըս,  
Եկ մի՛ գըցի ադաբեմեն, արեմեն:

Տեսնելուս ել մե բառ ելա չի ասում.  
Զաղած վարթըն ել նուրմեկանց չի բըսնում.  
Ել միր բըռնած գուրծըն տիդին չի հասնում՝  
Ուժը կորավ միր աղեմեն, սուփրեմեն:

Գուզիմ եշխի մեշ տապակվիմ ու խորվիմ,  
Ծուռ գամ շամիտ փարվանի պես ու վառվիմ,  
Սայաթ-Նովեն կոսե՛ թուղլի լիս երվիմ,  
Թաք քիզ պեծ չըղիբչի միր վառ քուրեմեն:

Էս լավ դափիա է. Արութինի ասած:

Սիրս մենակ էստում եր, վուր ասի՝ յա՞՛՛,  
Ըսպանում է ես քու վաս նիաթըն ինծ.  
Եւ շիմացած, թե իմ ջուղաբն ինչ ելավ,  
Ասի՝ գո՛զալ, տար էշխի գագաթըն ինծ:

Անըր էշխըն ինծ դեմ արից ժեռ քարի,  
Խայտառակից, կինքըն նիտի փալ արից,  
Ուշկ ու միտկըն տարավ, շինից սարսարի,  
Եփ բաց չէ թողնում վարթ սուրաթըն ինծ:

Գուգիմ էշխի քուրումն անվիրչ խորովվիլ,  
Բըլբովի պես վարթի շուրջը բուրովիլ.  
Յարիս շամին փարվանայի պես երվիլ,  
Վուր սիրուց զատվիլ չըտա հախ դադըն ինծ:

Գոզա՛լ, եկ աչկիրըս արուն մի՛ լցի,  
Սիրտըս էշխիտ սուր նիտիրով մի՛ խուցի.  
Ուրոր գընաս, տա՛ր. ել չոյիր մի՛ գոցի,  
Թէ չէ կու սպանե քու հասրաթըն ինծ:

Յարն ինծ թողից, ել յիս վո՞ւնց ուրախ ըլիմ.  
Զէ՛ սա կոկոր վարթ է, յիս ել բըլբով իմ,  
Սայաթ-Նովեն կոսե, թե յիս դաբով իմ,  
Թաք դըսմաթըս բերե իմ հավատըն՝ ինծ:

Ես վարսաղ է. Արութինի ասած:

Սիրտըս յարա, դոշըս դաղած,  
Նազլու յարի գերին իմ յիս.  
Շիրտըս գըցած, կոտըս կապած,  
Նազլու յարի գերին իմ յիս:

Շուղըն արեգագից առիլ,  
Էրեսըն շող-շափաղ արիլ,  
Նայվածքով աչկիրըս վառիլ,  
Նազլու յարի գերին իմ յիս:

Դադըս բաց է, խուր վերքըս բաց,  
Էշխի գինչիլ վիզըս գըցած,  
Ման իմ գալի ինծ կորցըրած,  
Նազլու յարի գերին իմ յիս:

Վիրավուր ինչպէ՞ն ծիծաղիմ,  
Մէ բըլբով իմ՝ քըշած բաղեն.  
Շեմքիտ կապած թող նըվաղիմ:  
Նազլու յարի գերին իմ յիս:

Բաղումըն վարթ, սարում՝ լալա,  
Քու տեսնողին դարդ ու բալա.  
Սայաթ-Նովեն կոսե՛ վա՛լլա,  
Նազլու յարի գերին իմ յիս:

Ես Արութինի ասած է. թասլիք:

Անգած արեք ձիր ծառայի բանքերուն,  
Միզնից գըլուխ շատ վարպիտնիր էլ չըկան,  
Չըհավատաք, աշխարն էլթիբար չունե,  
Շատ աշուղնիր՝ էշխի դոստիր, էլ չըկան:

Քա՞նի լիզու լալկից, բարին չըմընաց,  
Քա՞նի աշուղ մեռավ, լարին չըմընաց,  
Աշխարըն մինձ հսկանդարին չըմընաց,  
Հուզրեն լիքը զար-զարբարնիր, էլ չըկան...

Հին վերքիրըս էն վախտըն ինձ կու մաշին,  
Յիփ դոստիրըս ինձ մե կորած մարթ հաշվին,  
Ասկ-բարեկամ մեմեկ իհոռու կու քաշվին,  
Ա՛փսուս մոր արտսունք-պատկիրին, վուր չըկա:

Ով գալիս է, աննըման իք ասում դուք,  
Հարցընողին ազնիվ ջան իք ասում դուք,  
Թեվուր Սայաթ-Նովային իք ասում դուք.  
Մընաք բա՛րով ասից, գընա՛ց, էլ չի գա:

Ես հաղանա-դափիա է. Արութինի ասած:

Գըլխովըտ ման տամ լիս, քու ցավըտ առնիմ,  
Զեռըտ տուր ինձ, նազ ունիս դուն, նազ ունիս.  
Քու սանդրած հուսիրին, քու շանին միոնիմ,  
Զեռըտ տուր ինձ, նազ ունիս դուն, նազ ունիս,  
ալա գյոզ ունիս:

Յիս քի համա դուկ իմ, դուն էլ՝ իմ աղեն,  
Գուզիս կու տամ քի հաստատած մե ռաղամ,  
Էս աշխարում քանի վուր դիու լիս սաղ իմ,  
Զեռըտ տուր ինձ, նազ ունիս դուն, նազ ունիս,  
ալա գյոզ ունիս:

Դոշիս վըրա դուգուն կապած դաղ ունիմ.  
Քու ծոցըն էլ էն ջաննաթի բաղըն է.  
Քանի դեռ քու սիրունության չաղըն է.  
Զեռըտ տուր ինձ, նազ ունիս դուն, նազ ունիս,  
ալա գյոզ ունիս:

Դարդըս շատ է, օչով կեսն էլ չի տանի.  
Հիդըտ տար ինձ, քիզի կարոս մի՛ սպանի.  
Քանի լիս կամ, ուրիշ խիալ մի՛ անի.  
Զեռըտ տուր ինձ, նազ ունիս դուն, նազ ունիս,  
ալա գյոզ ունիս:

Փիրից շընուրք առա, սազըն աժեցի.  
Կըրակից էլ կըրոակ առա, մընացի,  
Սայաթ-Նովեն քու ցավին է տիրացի.  
Զեռըտ տուր ինձ, նազ ունիս դուն, նազ ունիս,  
ալա գյոզ ունիս:

Ես շիրվանի հանգով լարանա է. Արութինի ասած է. լավ տեղ ասված: Մարտի 2-ին, քրո-  
նիկոնի 442-ին (1764):

Սիրտը բարուն ու արթարին ման գուքա.  
Ովոր մեղան մըտնե, արին ման գուքա,  
Աչկըս Եփ գոզալ լարին ման գուքա,  
Թռ չէ կըրակ կու մաղի Սայաթ-Նովեն:

Դուն ինձ ուստա, լիս էլ քի յար, քի ջանան,  
Ինչ վուր կոսիմ, պիտիս դըրուստըն իմանա.  
Կարջըն էս է, պիտիս վառվի ինձ ամա,  
Չուն լիս շամն իմ՝ փարվանան՝ Սայաթ-Նովեն:

Իիվ սի՞րտ, ցավի ծանգում չորցար-խաշվեցիր,  
Էշխի նընգար, քըրքըրվեցիր, մաշվեցիր.  
Զիգ մե հայտնի մինձ վարպիտ կու հաշվեին.  
Ո՞վ ասից, ծամփից շեղվի Սայաթ-Նովեն:

Ինչ- վուր Նուրի կոսե՝ լի՞ս իմ քիզ ջանան,  
Հա՛ ախ քաշե, չընընդա թող իմ նանան.  
Զիգ իմ սիրում, կանց կու սիրեր Շահսանամ.  
Բուրեն փիրից առավ ջամ Սայաթ-Նովեն:

Էս Սայաթ-Նովան ինքը և իր սիրուին, որ էն ժամանակ խոսել են, էն է. ինչ որ վրացե-  
րեն ասել են իրար, գրված է էս տաս տուն երգի մեջ: Լավ վարսաղ-յարանա, ով որ սովորի,  
բարի հիշի կամ ողորմի ասի Արութինին. ամեն: Էս երգը գրվել է հունիսի 7-ի վերջին (‘)  
քրոնիկոնի 444-ին (1756):

Թեվուր բանդա դուկու հալըն հարցընիս.  
Գըլուխըն թող տա քարին Սայաթ-Նովեն.  
Ախ ջաշելեն ջանս ու հորին քալքայից.  
Հա՛ գուլա արտսունք-արին Սայաթ-Նովեն:

Յար ունենաս, էս խաբարըն չիմանա,  
Թող աչկիրըն չանե նամ Սայաթ-Նովեն.  
Լիզուս ուրիշի մոդ, միտկըն քիզ վըրա,  
Թող չըղաղվէ, չանե դամ Սայաթ-Նովեն:

Պատկիրքիցըտ չըկըշտացա դիտելով.  
Բաղ գրցեցի, բարօս մընաց ուտելու.  
Ենքան դարդ սըրտումըս մընաց այտնելու,  
Կարոտ մընաց ընգիրի Սայաթ-Նովեն:

Տարին վադ էր, էս հենց վադ վախտից էլավ.  
Բըլբուի պես մահեցտ քու վարթից էլավ,  
Էւքան մուրը քու լիզկից՝ բախտից էլավ:  
Էշխի նընգավ խիլըն ջամ Սայաթ-Նովեն:

Ի՞նչ անիմ, մաշվեցա ահուզարեմեն.  
Սիրտըս հալից յարիս ինթիզարեմեն,  
Կու մեռնիմ, հիդ շիմ կենա իղրարեմեն,  
Թող մեռնի քու հուզիրին Սայաթ-Նովեն:

Մե ծար չըկա, վուր քի մոդ գամ, քի տեսնեմ,  
Վախում իմ, թէ աշխարն ինձ կու բամբասե.  
Հուս կա վիրչում, վուր քու յարըտ է՛լ լիս իմ,  
Դէ թող քընե խաթըրչամ Սայաթ-Նովեն:

Խաս դաշտերում, խաս զարթերով խաս ալ ձի,  
Թափվում է խաս, վուտքերեն խաս, խողըն խաս.  
Խաս նազանին, խաս նըստիլ է խաս բարձին,  
Թամբըն խաս է, սարքըն խաս, նըստողըն խաս:

Խաս աշխարում խաս տիդ գըթնիմ, խաս մընամ.  
Խաս սըրտիս մեչ խաս հուր-կըրակ, խաս ալամ.  
Խաս գըրիլ է խաս գուխստան, խաս դալամ,  
Երկու լրուն խաս, այիփը\* խաս, տողըն խաս:

Խաս աշխարում խաս լավութին, խաս փափագ.  
Խաս քըրտինքով խաս գըթնըլիր խաս վաստակ.  
Խաս եռում է խաս անկըրակ խաս կաթսան\*\*.  
Չուրըն խաս է, ախպուրըն խաս, լիղըն խաս:

Խաս յարի հիդ խաս ապրեինք խաս օրիր,  
Խաս նազանին խաս հացիլ է խաս շորիր,  
Խաս հուրընկալ, խաս ժառանիր, խաս հյուրիր.  
Կուկուկեն խաս, սեղանըն խաս, սաղին խաս:

Խաս ժամանակ խաս բանքիրըն խաս գըրվեց,  
Խաս ծակտիցըն խաս քըրտինքըն խաս թափվեց.  
Խաս արարչեն խաս պատկիրըն խաս տըրվեց,  
Սալաթին խաս, Նովային խաս, ցիղըն խաս:

Ես շահմոհըրլա-թեշնիս է. Արութինի ասած:

\* Լալ:

\*\* Մեռոնի կաթսան:

Ասի՛ գր՛գալ, դարդըս ասիլ չիմ կանա,  
Շահ-դամարիս միլ տարար, ա'ման-աման.  
Քու արածըտ դավթար անիլ չիմ կանա՝  
Յարալու է սիրտըս, Ծար, ա'ման-աման:

Մատաղ իմ քու սիվ մազերուն, սիվ ծամին,  
Կարոտիլ իմ բարգ երեսիտ իիս շամին.  
Անգըրծակի դիբա Եշխիտ վառ շամին,  
Փարվանին մի՛ վառի, նա՛ր, ա'ման-աման:

Արնուտ մարալ իմ, սարեմեն զըրգվիլ իմ,  
Եշխի թաս խըմած, սաղեմեն զըրգվիլ իմ.  
Դարիբ բըլբուլ իմ, բաղեմեն զըրգվիլ իմ,  
Կոկոնըս զալ շանիս, նա՛ր, ա'ման-աման:

Համփուր շառած բերնիտ պալին կարոտ իմ,  
Վարթ երեսիտ ջուխտակ խալին կարոտ իմ,  
Ուսիտ զըցած թիրման շալին կարոտ իմ,  
Դուն գարբաբ հաքնող իս, զա՛ր, ա'ման-աման:

Ա՛յ սիրտ, յարը ցավ կու բերե քիզ մե օր,  
Կու խուցե, յա դավ կու բերե քիզ մե օր,  
Ախըր յարը մահ կու բերե քիզ մե օր,  
Սայաթ-Նովու պես կաց, յա՛ր, ա'ման-աման:

Ես թավիր է. Խստարամ դոլանում բաշընա յարուն [խաղի] հանգով քրոնիկոնի 446-ին  
(1758):

Դըրուատ է, վուր յարին մուրվաթ չելած.  
Հոքու տունը քանոից՝ դառա մե անձար.  
Ունքիրն անիդ, զուկփըն մե-մե նիտ օլրած,  
Սիրտըն խուցից, ծեռին բըռնած մե խանջալ:

Խիլքս թըռած, Բալս ու Բուխարա նընգած.  
Սիրտըն քաբաբ՝ Եշխի բուխարան նընգած.  
Նազլու յարըն զարբաբ ու խարան հաքած,  
Տես, թե վունց էլ լավ սազում է կանանչ-ալ:

Արտսունքն աչքիս յիս ընգիլ իմ չոր չոփիր,  
Սիր դուշմանի մըտկինը թող փուչ ըի,  
Թեվուր ինձնում եստուց ավել սուչ ըի,  
Դուն հաստա՛տիր, գո՛զալ, արի իմ շանն ա՛ռ:

Ասի՛ գո՛զալ, եկ իմ արզըն իմա՛ցի,  
Կարթացի լամ, կինքում արզու մընացի,  
Եշխի հիշրանհցըն հարզըն մընաց ինձ,  
Եկ դադ արա, ինձ հասիլ է խան աջալ:

Սալաթ-Նովուն պետք չե շահի շահ-մալըն,  
Փիրից խըմած ունե շախու շամ-ալըն,  
Թեվուր զուզիս տեսնի Են սուրփ շամալըն,  
Պիտիս քաշի Են խալիլի պես տանջանք:

Ես թեցնիսն Արութինի ասած է. լավն է:

Յիփոր սարի լալեն կանանչ բաղ ընգնե,  
Կու բացրանա Շուղքին, «սուսան իմ», կոսե.  
Խաբար չառած կոկոր վարթ ու լալեմեն,  
Բըլբովի պես ինքն իրան սանամ կոսե:

Դավրիշին ո՞վ կուտա քոչկ ու սարայը,  
Խամ քաթանը ներկիս, չի՛լի դարայի,  
Ենդու համա չի պակսի իմ հարայը,  
Վուր ամեն մարթ «յիս էլ Հասան իմ», կոսե:

Են ի՞նչ նիտ է, վերքեն արուն չի հուսի,  
Նիրկարարըն դուշ է՝ առանց կարասի,  
Անփիր մարթի լիզվից անիծկ չի պակսի,  
Ետենց մարթն էլ իրան «հսան իմ», կոսե:

Ճեստի մարթ կա, ժեռ քարին էլ հավան չե,  
Վուր քամին տա, բըլբովի պես կու թըռչե.  
Մարթ էլ կա, վուր ծիծու տեսնե կու փախչե՝  
Աժդահայի գըլխին «ավսան իմ», կոսե:

Ես խիվ սիրտըն Եշխի միշին թաղվիլ է.  
Եշխում թաղվիլ, հարուր տիղից դաղվիլ է.  
Սալաթ-Նովեն Ենդուր լալով շաղվիլ է,  
Վուր աղվեսըն «ասլան բասան իմ», կոսե:

Ես Արութինի ասած է. օգութլամա:  
Էսպես օգութլամա. Արութինի ասած. լավ դափիա:

Աթամո՛րթի, ա՛նգած արա ես բանիս,  
Ծեքը չէլած, գիշերն արիվ դուս չի գա.  
Շառըտ քաշի սատանայից՝ ցավ չառնիս՝  
Հոքուտ դըռնով չար հարամին հյուր չըգա:

Հախ ծըրաքըն վա՛նի, քուքուրթը մա՛րի,  
Միխսըտ սըրփե՛, հոքիտ արթար, սո՛ւրփ պահի,  
Լիզվով օրինանք կու տան՝ ուշունցից փա՛նի՝  
Մե ախաքրից էրկու տեսակ չուր չի գա:

Ուրբթ ին ասի՛ տըղեն քեռուն կու քաշե,  
Չինարըն բար չի տա՝ բոյըն կու քըշե,  
Խոտն արմատից կովի՛ սոյըն կու քաշե.  
Ուռու ժառից դարշինի հուտ-համ չի գա:

Մե ազնիվ յար չիմ գըթնում ես աշխարիս,  
Էնդու համա հա՛ կանչում իմ հարա լիս,  
Հոր չիմ փորիլ. վուր ընգնիմ ետ հորը լիս.  
Կըրակ ել տաս, ծըշմարիտին մահ չըկա:

Սալաթ-Նովեն կոսէ՛ ցավից հիոավուր.  
Ժեռ քարեմեն քամին ի՞նչ կու տանե վուր,  
Հոքուտ տունը շինե ամուր-հիմնավուր՝  
Նոյի նըման՝ հեղեղիցն ել ահ չըգա:

Ես Արութինի ասած ե. օգութլամա:  
Էսպես օգութլամա-վարսաղ ե. Արութինի ասած:

Պըռունգնիրըտ բըլբուլի պես բաց արա,  
Վուր բերնումըտ ատամըտ չըվընասվե.  
Շուղքեն շաղ է կաթիլ՝ մազըտ թաց արիւ,  
Սալաղ մընա, վուր ժամըտ չըվընասվե:

Զու համփուրիտ կարոտ, ծարավ մեռա լիս.  
Ե՛կ, մըհլամ դիր վերքիս, թեվուր ջարա իս,  
Վարթըն թօփից պիտի է՛նենց դու քաղիս՝  
Անգին ակըն մատնումըտ չըվընասվե:

Դարդըս շատ է, ասիլ չիլի են խուրքեն.  
Ա՛մուր կապե, արուն չըգա իմ վերքեն.  
Հեստի անցկաց բաղչի դորի արանքեն՝  
Վարթի չառնե, գըլուխըտ չըվընասվե:

Դագաղ դըրեք, մինչի թաղիլս ասե՛ցեք.  
Էշխի ծեռից էսենց դաղվիլս ասե՛ցեք,  
Յիս չիմացա, ծիգ մատաղ լիմ, ասե՛ցեք,  
Վուր լուսնակըն շափաղեն չըվընասվե:

Փիրեմեն փիր առած թալիշ իմ դառի,  
Ա՛յ սիրտ, փարդեն պա՛տոե, էշխումըն վա՛նվի,  
Սա՛յաթ-Նովա, դուն ել հեստի գործ բըռնի՝  
Աղ ու հացըտ, սեղանըտ չըվընասվե:

Ես դափիա ե. Արութինի ասած. գրված է մարտի 19-ին. քրոնիկոնի 446-ին (1758):

Այսիրտ, ովոր քիզ մե լաման բան կուտ,  
Ցիդ դառ անա՝ «Յիս քիզ ամա ջան կու տամ»。  
Թաք դուն արով ըլիս, թող հա՛ վատ ասեն,  
Դուն լավութին դադիր՝ խաթիրջամ կու տան:

Տերն իստակին ու անմիջին կու նայե,  
Վունցոր վառվող փիլթեն յիդին կու նայե.  
Բարով ժառըն տակի հոդին կու նայե,  
Աչաղ մարթի վիրչըն կուլի ջահանդամ:

Արի անգած արա բելթիս ու առ տա՛ր.  
Ել մի՛ ասի՛ համ կանանչ կար, համ ալ կար.  
Քանի վուր քու ծեռին էսօր հընար կա,  
Հոցուտ համա մե տուն շինե ջաննաթում:

Թե մարթի մեչ դոդրու մարդըն երևա՛  
Սոնեմեն ել կըթված կաթըն կէրևա.  
Միոքըն դառն է, ամա քաղցըր կէրևա,  
Էնդու համա դրախտեն էլավ ջան-Աթամ:

Սա՛յաթ-Նովա, դուն էս բանըն կատարի՛  
Սիշտ գոհ մընա բարեկամից, օտարից,  
Պիտիս մոռնա, հենց վուր մահըն պատահից,  
Գուզե հարուր տարի քաշիս ջանիտ դամ:

Էս Արութինի ասած թեցնիս է. գրված է մարտի 19-ին, քրոնիկոնի 446-ին (1758):

Օղո՛րմի էն կարմունջ շինող վարպետին՝  
Անց կենողըն քար կու դընե, կու հիշե.  
Խալխի համա կինք մաշեցի, ջան տըվի՛  
Տապանիս քարն է՛լ ախպերըս կու քաշե:

Իգիթն էն է, ում աղ-հացըն չի հատնի,  
Ով ծառս կուլի, կապանքնիր կու կըտըրտի.  
Ամա հիմիկ ով քիչ արծիծ կու գըտնի,  
Շուտ վազ կու տա սարափխանի, փարաշի:

Զարխի փալագըն չարխն էնենց շուտ երիտ,  
Վուր մինձատան վուրթին մընաց դըոներին.  
Ով էլ մե հին շալ չէր հաքած տոներին,  
Հուցըն լիքը՛ ծեռ է մեգնում դումաշի:

Տե՛ր, ազա՛տիր կիղծավուրից, անբանից,  
Հիմարներեն, անտաշներեն պահպանի,  
Էնդու համա չիմ նիդանում դուշմանից,  
Վուր սըրտումըս դադիր ունիմ սիրդաշեն:

Ի՞նչ քըլեռկ իս, վուր փարվազըտ չին տեսնի,  
Սերըն չէլած տիդը սազըտ չին տեսնի,  
Սա՛յաթ-Նովա, ել գըրածըտ չին տեսնի՛  
Ամեն էկոհ դալամ առած կու նաղշե:

Դափիա. Արութինի ասած է. մարտի 19-ին, քրոնիկոնի 446-ին:

Ինչքան էլ վուր ասլանն աղվես տապալե,  
Ելի հանկարծ, յա մե ուրիշ փանդ է պետք.  
Մե հատ լիզըն լըթիւ չի ըլի կալին.  
Գութնին էլ վուր մինչ տասնվից հատ է պետք:

Փորցված մարթըն խոսկի եղնեն ման չի գա,  
Անփորցըն էլ լավ ու վաղին ման չի գա.  
Գիշի գըլսին ավիտարան սազ չի գա.  
Մարիփաթից զուրգին ինչ խըրատ է պետք:

Միղավուր արարքըն կուլի տերեմեն.  
Խիթըն գըլսին թըռչի, կուլի յարեմեն.  
Թե լավ, թե փուչ վուրթին կուլի մորեմեն,  
Լավ վուրթուն էլ արթար, հալալ կաթ է պետք:

Թե ցավ շանցնե ինն ամսըվա վաթանին\*,  
Թեզուզ յաղութ ու գոհարի հանք անին,  
Խուրթ զավակին սուտ կու սիրե խուրթ նանին.  
Պորտից պորտը մերկ ու ամուր կապ է պետք:

Յիս չիմ գիղի վըրես էն ո՞վ աղ արից,  
Ախպորից ու մորից զըրգից, դաղ արից,  
Սալաթ-Նովուն ովոր բեդամաղ արից.  
Տիրոչ ձամփին նըրան արթար դադ է պետք:

Էս օգութաման Արութինի ասած է. ապրիլի 20-ին, քրոնիկոսի 446-ին (1758):

\* Արգանդ:

Աշուղ ըլին ինձ ամա մինձ ցավ դառավ՝  
Զեռըս Զանգլու-փիրեն կապածի պես է.  
Ուշկըս շաղվից, լիի եշխի հուրն ինձ առավ՝  
Հենց գիղին, թե խիթըս պահածի պես իմ:

Զանք դրուցի՝ հացըս աղի հասցըրի,  
Զորից դու բերի՝ դուզ տիղ հասցըրի,  
Զոռով հարուր ցավ ու դաղի հասցըրին՝  
Տակեն քոք՝ վըրեն թաղ բըռնածի պես է:

Օղորմի Էն փիր-ուստաղին, վուր անցավ,  
Հըլա կանանչ, չոր չոլիրում չորացա,  
Սըրտիս մեչըն եշխի կըրակ գոյացավ,  
Էնդուր դոշըս խուրեն դաղվածի պես է:

Աչկես արուն հուսից, նամի մեշ ընգավ,  
Գիշեր-ցերեկ դարդ ու դամի մեշ ընգա.  
Փարվանի պես վառած շամի մեշ ընգա՝  
Թիվիրըս էլ կոսիս երկածի պես է:

Ախըր տե՛սեք, եշխըն ջալալ շինից ինձ.  
Բազարի մեշ գըցից, դալալ շինից ինձ.  
Տեսնողնիրն էլ Էնենց խիալ կոնին միշտ,  
Թե էս Սալաթ-Նովեն հարփածի պես է:

Էս վարսաղ է. Արութինի ասած. հուսիսի 10-ին քրոնիկոսի 446-ին (1758):

Ես եշխըն ինձ փիրն է տըվի՝  
Երկեցի, վառվեցի ծեռքին.  
Նազլու յարըն մազիրն օլրիլ,  
Ա՛չկի լուս, զար է կապիլ սիվ բարեքին,  
Չուրս բոլորքին, սիվ բարեքին:

Միդ ունենամ, արին կու տամ,  
Կինքըս, հոքիս յարին կու տամ,  
Զանքս մատաղ անիլ կու տամ,  
Ա՛յ հավատ, իմ գոզալի թուխ աչկ-ունքին,  
Լուսին տեսքին, մարալ տեսքին:

Բըլբուկ իմ, բաղ կարոտեցի,  
Սեբաշ վարթի փաթաթվեցի,  
Արանց կամի փոթոթվեցի,  
Ա՛յ անգին, լիս մընացի եշխիտ ծանգին,  
Եշխիտ ծանգին ու արանքին:

Յիս բըլբուկ իմ, վարթըս ծախած,  
Զուխստ աչկիրըս լացից ծաքած,  
Սըլիամըն կըրակով սարքած,  
Անշի՛ զար, դըրեցիր իմ ծանըր վերքին,  
Իմ խուր վերքին, սըրտիս վերքին:

Դագաղիս դիբել է խարաթ,  
Աջալից էկիլ է բարաթ,  
Էլ չթհասավ քոշկ-ամարաթ  
Սայաթ-Նովու դըրած ջանքին,  
Աղաչանքին, պաղատանքին:

Քանդվում է հոքուս աշխարը,  
Մինչի յարըս ման չի գալիս  
Մե հատ է յարիս թահարը,  
Միրե՛լիս, մինչի նաղաշ չընըկարի,  
Չընըկարի, չընըկարի:

Յարըս գոզալներու թագն է.  
Ակներու մեչ անգին ակն է.  
Շարբաթն էլ ինձ ամա դառն է,  
Միրե՛լիս, թե համփուրիս հիդ չիմ առի,  
Հիդ չիմ առի, հիդ չիմ առի:

Եշխետ հարփած չիմ դընջանա,  
Վարթ պատկիրետ չիմ կըշտանա.  
Մեջլիսներեն չիմ հիուանա,  
Միրե՛լիս, թեփն ինչքան էլ վուր երկարի,  
Վուր երկարի, վուր երկարի:

Գինըտ շահիրն էլ չին ծարի.  
Եշխեմետ լիս չիմ բեզարի,  
Սուսան մազըտ հուս չի արվի,  
Միրե՛լիս, մինչև զարըն չըզարթարի,  
Չըզարթարի, չըզարթարի:

Զուկիով ուշկըս դուն չիս խըլի,  
Թե վարթըտ սըրտիս չըժըլի.  
Յա՛ր, ունքիրըտ բաց չին ըլի,  
Սայաթ-Նովեն թե չընայի,  
Թե չընայի, թե չընայի:

Ես երկուսն էլ մեջլիսի ոռվանի-թասիր է՝ մի եղանակով. Արութինի ասած է. հունիսի  
10-ին, քրոնիկոնի 446-ին (1758):

Եշխեմետ յիս դառա խաստա.  
Ինծ զոռով նաշաղ իս արի.  
Սիվ մազիրըտ դաստա-դաստա,  
Ա՛չկի լուս, վարթ-մանիշակ բաղ իս արի,  
բաղ իս արի:

Բըլըուկ իմ, խարին կաղաչիմ,  
Բաղեմեն զըրգված կու փախչիմ,  
Սիվերես արիր՝ կամանչիմ,  
Զանըմ յա՛ր, քու երեսըն պարզ իս արի,  
պարզ իս արի:

Յա՛ր, գինի տուր ինծ մինչի լիս,  
Քու զովփերուն մատաղ լիմ յիս,  
Սըրտիս քուրեն դուն զըթի իս,  
Սիրե՛լիս, Եշխիտ հուրըն չաղ իս արի,  
չաղ իս արի:

Չիմ գիդի վո՞նց գովիմ յարին՝  
Կարոտիլ իմ լուսին թահրին.  
Աչկիրըս լըցրիլ իս արին,  
Բեմո՞րվաթ, սիվ չիզարըս դաղ իս արի,  
դաղ իս արի:

Լաց իմ ըլում՝ դարդըս ժով ա.  
Սիանց միդի Սայաթ-Նովան  
Քու լիզվի նիտից խորով ա.  
Զուր տիկը նասաղ իս արի, սաղ իս արի,  
սաղ իս արի:

Ես եւ կոռքի (նախորդ) խաղերի եղանակով:

Մահըս իրա վուտով գուքա, յիս տիղիս իմ ման գալի.  
Մեռածին օղորմի տալով, սաղիրիս իմ ման գալի.  
Անցած օրըն չիմ ափսուսոմ, վաղիրիս իմ ման գալի.  
Մուխաննաթըն օր չըտեսնե, Են սիրիս իմ ման գալի:

Յիս չիմացա վո՞նց փաթարվից աշըղութինն իմ գըլիսին.  
Ինծ դիվանա Մեջլում շինից, յիդ դըրից իմ կըրակին.  
Ինսըն ամիս ածեցրիլ է, լուս դառնա իմ մոր հոցին,  
Բայքամ կաթի հիդ իմ մըթի, Են շիրիս իմ ման գալի:

Աշըղութինն ել ջաղցի պես չի կանա անջուր բանի,  
Ախըր ինծի ջունուն կունե, խիլըս գըլիսես կու հանի.  
Եշխըն հազար ծաղիկ ունե, նըմանած մե գուլշանի.  
Չիմ ուզում հա՛ բացըր նայիմ, ցածրիրիս իմ ման գալի:

Եշխի ժովի մեչն իմ ընգի, չիմ դիմանում լանգին էլ.  
Զանումըս ել ջան չըմընաց, չիմ գալի Են ուանգին էլ.  
Շատ իմ ջանք դըրի՝ չիմ հասի աշըղութենի դանգին էլ,  
Ենդուր հըլա մե աշկիրտ իմ, իմ փիրիս իմ ման գալի:

Աշըղութինը կըրակ է, սիրտըս արած մե քուրա.  
Զանս ու հոցիս վարից, թողից՝ չիմ գիդի խիլըս ուր ա.  
Լաց ու ո՛խպա, Սա՛յաթ-Նովա, խիալ անիլըս զուր ա,  
Ես նիդ վախտին թուղ զալ չըլի, իմ շիրիս իմ ման գալի:

Ես իլահին Արութինի ասած է. հովիսի 9-ին, քրոնիկոնի 446-ին (1758):

Դոստը, յարը, մեկ էլ ընգիրն աշխարքում...  
 Մեկը վարթ կու քաղե, Են մեկելը՝ փուշ.  
 Մեկը թութակ կովի, մեկն էլ՝ մե բըլով,  
 Մեկը կուտա շաքար, մեկը՝ լաբլաբու:

Սարթ կա ուրախ, մարթ կա տըխուր ու փոշման.  
 Մեկին մըսխալ, Են մեկելին՝ հինգ բաթման.  
 Երկու բան կա իրար դուշման հավիտյան,  
 Մեկը կինքն է, մեկն էլ մահն է անկըշտում:

Վուրըն ախկատ, վուրըն օսկով մե զանգին,  
 Վուրին գինի, վուրին աղու մե բանզի.  
 Մեկը կոծե սազ, Են մեկն էլ իր չանգին.  
 Մեկին դամ ու վայիթք, մեկին՝ ցավ ու սո՛ք:

Մեկը քընած, մեկը զարթուն՝ աչկը բաց.  
 Վուրըն օյաղ, վուրըն հարփած՝ գինով մաստ.  
 Մեկըն անվուտ, մեկըն կըռնատ՝ մի շիքաստ,  
 Մեկն էլ հենց նուր ծըվից յախու է կապում:

Սալաթ-Նովու վաթանիցըն հարց կու տան.  
 Մեկը կոսե Հինդն է; մեկը՝ Համադան...  
 Վաթանըս Թիֆլիսն է, կողմը՝ Վրաստան.  
 Մերըս Հավլաբարցի, հերըս Հալաբլու:

Էս Արութինի ասած է. դափիա:

Վարպետներու հայտնի խոսկը  
 Հըրաման է՝ փիրի գըրած,  
 Մեմեկ քաշած հաղիդադից,  
 Օսկե թիլի նըման շարած:

Առանց ընգիր էս աշխարում  
 Աչկըտ կովի լիքը արուն.  
 Ակուքըն վուր կա բերանում,  
 Զուր չին ասի ջանի ջաղաց:

Լաց լիմ մենակ օրի համա.  
 Ման զամ սիրդաշ-յարի համա.  
 Լավ ընգիրն ընգիրի համա  
 Դարդի դարման-ձար է էլած:

Մե տիղում վուր ջալալ ըլի,  
 Կախտե՝ հազար դալալ ըլի.  
 Մարթըս թեվուր հալալ ըլի,  
 Կալից կառնե միշտ օրահաց:

Աղոթրանին ով ուշ նայե,  
 Զի ազատվի ախ ու վայեն.  
 Սալաթ-Նովեն ինքը հայ է,  
 Իր հավատքին ամուր կանգնած:

Էսպես Արութինի [ասած] դուբելթ. մայիսի 20-ին, քրոսիկոնի 446-ին (1758):

Բեզարիլ է հոքիս մարմնից, հա՛ տանջվում է վունց զահրից.  
 Աղոթում իմ Արարիչին՝ ես ցավեն ինձ ազատի,  
 Փիր-ուստաղին աղաչում իմ անգած անե իմ զարին.  
 Մարդի համա ա՛խ իմ քաշում, նամարդից իմ բեզարի.  
 Անգետ մարթըն շուշես կոտրից. կոտրածն էլ չի սաղանա,  
 Մե գամ քաշողն էլ չըցած իմ ես քաշած ազարից:  
  
 Մենակ, անդիր իմ մընացի, վուրփին բաբա ըլողըն գա.  
 Բերանըն սուրփի, լիզվին աղոթք, աչկում բիբ ունեցողն գա.  
 Ուստաղեմեն ուսում առած, բաբլոփին բաբ ըլողըն գա.  
 Եշիսի դուքան իմ բաց արի, սիմ ու շարբաք առնողըն գա.  
 Հենց էնդուր իմ ջունուն դառի՝ հուշրես լիքն է լալ-ջավակիր,  
 Զարմանալի տիդ բաց արած ես շահրադել շեն բազարին:  
  
 Սըրտիս մեշըն կըրակն ընգած երում է ինձ շամ-շիվ արած.  
 Գիշերնիրըն լուսնակի հիդ, ցերեկն ուշկըս շամսի վըրա.  
 Էնդու համա ջունուն դառած կանչում իմ վա՛շ-վա՛շ, շիվարած.  
 Շըպնիրըն Հինդն է բանդ արիլ, գուրծվածկըն էլ Ծամ շըհարը,  
 Ամեն թիլըն հազար ունգի, ամեն ունգը հազար փայլի,  
 Ուրումելում չելած մա՛թահ, ամենուն պետկ է ես զարից:  
  
 Ինչքան էլ վուր դուն մինձանաս, խոնարութինն աչկըտ կալ.  
 Փիր-ուստաղի դահրը քաշե, քու ալմասին չասիս լալ.  
 Շշմարտության դուռըն բա՛ց միշտ, ծեռըտ շառնիս հարամ մա...  
 Ենդիդունումըն գոյացած՝ Փոանգըստանու գործ է լավ.  
 Սազ գուքա ամեն արհիստի, արժանի է բազարի:  
  
 Մե իգիթ վուր անխիլք դուս գա, Սալաթ-Նովեն ի՞նչ անե.  
 Մե վուրսնուրթ վուր սար չըդուս գա, Սալաթ-Նովեն ի՞նչ անե.  
 Ամեն քալից խոսկ դուս գուքա, Սալաթ-Նովեն ի՞նչ անե...  
 Փիր-ուստաղի արթար ծամփին անարժան մարթ շատ կուլի,  
 Էնդու համա գիշեր-ցերեկ չիմ ազատվում ահզարից:

Էսպես թեցնիս-մուխամբազ. Արութինի ասած:

Ինչքան էլ վուր դուն մինձանաս, բարե՛կալ,  
 Էլի զարնիշանչու նախշիրըն կոսին.  
 Գուզե Հընդու Էկած դալամքար ըլի՝  
 Զարբար ու զար լավ դումաշնիրըն կոսին:

Դըրուստ ծամփա ընգնողըն դամ չի քաշի.  
 Մեկը զարբաբ, մեկելըն խամ կու մաշի.  
 Գեղնի տակին ինչ էլ ըլի չին հաշվի,  
 Պատի տաշած քարե շարքիրըն կոսին:

Թե փուչ խոսիս վարպիտի հիդ, թավ չիլի.  
 Վուրսնուրթն առանց սար, սարն առանց ավ չիլի:  
 Փետից չախմախ, չախմախից էլ դավ չիլի,  
 Լավ պողկատի քուրեն, հանքիրըն կոսին:

Սիրուն գուլփը գոզալներու զարթըն է.  
 Մարթուս զարթն էլ նըրա մարիփիաթըն է.  
 Նամարդ մարթըն թույնի խոտի հատըն է,  
 Չոմարդի էլ աչկ ու ունցիրըն կոսին:

Շատ մարթ Եշիսի կընգնե ես աշխարքումըն,  
 Սիուզարն էլ պակաս չիլի կինքումըն.  
 Վըրաստանու կողմի Թիֆլիս քաղկումըն  
 Սալաթ-Նովուն Եշիսի ընգիրըն կոսին:

Օգութլամա

Աստծու սիրուն, խո՞սի, ա՞յ իմ սիրուիս,  
Բաղրտ քաղըր, պըռունգնիրդտ հանց նաբաթ.  
Գո՞զալ, թեվուր աղուացըրն սի՞րում իս,  
Եկ ինձ մի՛ տու էլ ամոթանք-խըջալաթ:

Առուտեհան ժանոթ բաղըն թեքվեցի,  
Բըլբուկ ծենին վարթի թուփըն թեքեցի.  
Սեբաշ տեսա յարս է, իսկովն չոքեցի,  
Խիւթս թռոավ գըլիսես՝ տեսքեն էլա մաթ:

Մարմար դոշին մարչան կախելիս տեսա,  
Պըռունգներին շաքար մաղելիս տեսա,  
Զալում յարիս վարթըն քաղելիս տեսա,  
Պըտըտվում իմ էնդուր, վունցոր մե սայաթ:

«Հա ու չէ»-ով ինձ գըրգեցիր հավատից,  
Օրն էլ իինգ հետ խաթետ պակաս չէ խաթից.  
Յա՛ր, ազա՛տիր ինձ յադ յարի մունսաթից.  
Լա՛վ չէ, գո՞զալ, մի՛ անի վատ ադալաթ..:

Էշետս հիվանդ իմ, յա՛ր, դուն ինձ պահպա՞նի.  
Քու ծիոցին է. մողըտ գամ դիդ-դարմանի.  
Եկ մի՛ սպանի Սայաթ-Նովու նըմանին.  
Յա՛ր, ինձ խըղճա՛, փըրկի՛ր, հարա՛յի-մա՛դաթ:

Էսպես Արութինի ասած յարանա-վարսաղ է:

Մեջիսումըն սինին լի ու շեն տեսա,  
Սադու ծեղին շուշա, կողքին մե տըկօնուք.  
Յարիս վիզը բացված յախեմեն տեսա,  
Դոշին լալ ու գոհար, ծոցում՝ մե-մե նոտ:

Աչկիրեմեն արտսունց գութա՝ ռանգն ալ է.  
Յարիս կանանց շուրի կարըն ծալ-ծալ է.  
Վուտքիրինը յա թիմաց է, յա շալ է.  
Ամեն վուտն էլ... շիրմային ո՛ր, մարմարն ո՛ր:

Թե հարիֆ իս, բաղըս հա՛շվի, դե՛մ խոսա.  
Մեկ լի՛ս ասիմ, կանաս, մեկն էլ դրւն ասա.  
Մարթի դուշման լիրիք փութըր բան տեսա՝  
Մեկ սիվ ծանչը, մեկ մոծակը. մեկ էլ՝ լուն:

Թաքավուրի խոսկըն փարմանա պիտի.  
Վառվող շամի վըրա փարվանա պիտի.  
Յարիս բաղի բարն էլ ինձ համա պիտի,  
Ես թաղիրեն մեկը քիզ թող, մեկն ինձ տուր:

Սա՛յաթ-Նովա, աստուծըտ չըկորցընիս,  
Կինքի կարըն էլ փորցվածին կու հարցընիս.  
Լավութենին ով վատութին դարցընի,  
Վիրչումն անտեր շան պես կընգնե դըռնեդուռ:

Էսպես յավ թեջնիս:

Թե վարպետ իս ու վարպետի զավակ իս,  
Մելդան մըտար, խոսի վունցոր իմաստուն.  
Մելդանը շահինն է, արհիստն ուստինը,  
Լալըտ բազար հանե, լիփ հուս ունիս դուն:

Աշխարումըս թե՛ վատ, թե՛ լավ վարպետ կա,  
Ազնիվ խոսկին հուս ու հավատ էլ պետկ ա,  
Դե վուր քամանդար իս, ծիռիտ լավ նետ կա,  
Շերըն պահե համաշա սուր, պըսպըղուն:

Թեվուր գուզիս վարպետնիրու պես ապրիլ,  
Էշխի մելդան մըտար, շուշա մի՛ կոտրե.  
Վարպետնիրու անիծկի տակ մի՛ մըտնե,  
Անփուրց խոսող մարթըն շուտ է փոշմընում:

Փառք տուր Տերին, վուր տիրաշեն գործ արվե.  
Թեվուր գուզիս սիրտըտ էշխի հիդ փարվե,  
Սազու խոսի, վուր աշխարին հարմարվե'  
Բերանըդ լեն մի՛ բաց, խո՛սի դու սահուն:

Սա՛յաթ-Նովա, խոսկը տիղին կու բերեն,  
Քիզ նըվիրտ վարպետնիրուն ու փիրին.  
Նիտ-աղիղըտ մի՛ տու խուր-խուր ծովիրին.  
Ժիղըտ հի՛ռու պահե՛ պէծ չառնե ղավուն:

Սա վարսադ է:

Զամալըտ հալի է, մարթու կայրե ողջ,  
Զիոացող ու էշխետ լիս դառիլ իմ մունչ.  
Զըրատար քու դուկին արից ցավատանչ,  
Զամար օսկի էի, դարդն արավ ինձ թուց:

Զահ երեսըտ տեսա, դառա անիլլաջ.  
Զեր Ստամբուլն ինչ է, ա՛շխար աժիս դինչ.  
Զոկ բան իս դուն՝ Հընդու ջավա իս, ջիղա-թաջ,  
Զամ-այնաբանդ քոչկ իս, վարաղըտ' նարինչ:

Զա՛նում, թաք իմն ըլիս՝ հազար թուման խարջ,  
Զանք կոնիմ, թե էլի էտքան էլ պահանջ.  
Զամ աշխարքըն հենց քիզ համա կու գա մարջ  
Զուխտ աչկիրըտ' արիվ, մազըտ' ծաղկեփունչ:

Զեյրան կապսըդ տեսա, խիլքըս էլավ վեջ.  
Զո՛տաք արա, գո՛զալ, մի՛ թող ցավի մեջ.  
Զունուն դառած, էշխետ կու երբիմ անվերջ.  
Զիգարըս խաշիլ իս՝ չիմ անի տրտունչ:

Զաբրով զառ գըցողին չէ ընգնի շեշ-փանչ.  
Զոշխուն էշխըտ ինձի շինից մե կիսլանչ.  
Զահել Սալաթ-Նովէն յար կու սիրե քաջ,  
Զե-ի վըրա դինչ կու գըրե «սկիզբ ու վերջ»:

Ես Արութինի ասած է. ավալ-ախր:

Յարիս կարոտ ծամփա ընգա տեսնելու.  
Տեսա, հիովից, զուքված՝ հաքած զար ու խաս.  
Խաս խիալով մոտեցա բան ասելու,  
Ասի՝ գո՛զալ, պըռունգնիրետ միղըր տաս:

Միղրահամ պըռունգքտ գովիմ, ի՞նչ ասիմ.  
Եշխիտ թուրը քաշիմ սըրտիս մեշ, կիսիմ.  
Յա՛ր, քու ծամփի հողին էրեսը քըսիմ,  
Բալքամ քիչ խըղծի գաս, խոսիս դուն մե բաս:

Բաս մե հարց ու փորց չանի՞ս, մե բան չասի՞ս,  
Յա՛ր, քիզ մա՛տաղ, կարոտ իմ բըլբուլ սասիտ,  
Չըլի՛ թե դուն ինձ գըցի իս հավասից,  
Մ'ստուժ սիրիս, ժամանակն է՝ խիլքի գաս:

Խիլքըս Եշխիտ կըշիոքում դիր, դարդ չի դա.  
Են էլ իմաց՝ աշուղեն սուր մարթ չըկա,  
Գիոյիմ, քիզնում վուշ մե կորեկ խարթ չըկա,  
Չուն գոհար իս, մաքուր լալ իս ու ալմաս:

Լալ ու ալմաս իս, իմ ջանանն իս անգին.  
Ես աշխաքում մե՛կ չիս, տա՛սն իս իմ աչկին.  
Սայաթ-Նովեն շունչը փըշից քու ծանգին,  
Մագամ չունի՞ս դուն աղուհաց, խըղծի մաս:

Ես Արութինի ասած է. զինչիլլամա:  
Եսպես զինչիլլամա-լարանա. Արութինի ասած:

Լիրթըս էրվից վունցոր քուրան գըցած կավ,  
Թե հեքիմ իս, բուժե, ցավեն պըրծընիմ.  
Ես դարդըն ինձ իմ վաթանեն դուս արավ,  
Վախում իմ թե մինչի Սուրիա հասցընի:

Եկ լա՛վ պահե ամոթ-ադարն արի հիդ,  
Աղ ու հացըտ կիսի միշտ արթարի հիդ.  
Չըլի՛ թե մե յադ հանդիրի յարի հիդ,  
Ես չար վախտըն գախտնիքնիրըս թընցընի:

Եշխըտ սիրտըս կըտրից, թամամ կես արավ.  
Բախտն ինձ շուր էրիտ, յարից անտես արավ.  
Ինձ թափ տըվի, ամա կինքն ենպես արավ,  
Կուր յիրգընքի Բուլքի պես չիս դարցընի:

Լավ կուլի, վուր սիրտըտ իստակ պահպանիս.  
Ամոթ-արըն վաղվա համար քիզ պահիս.  
Ասա տե՛սնիմ, իմ մահով ի՞նչ կու շահիս՝  
Արնիս տակը կընգնիս, էլ չիս պըրծընի:

Աչկըս թաց է, ծովի նամին է ընգիլ.  
Սիրտըս կիսված՝ Եշխիտ դամին է ընգիլ.  
Սայաթ-Նովեն դարդ ու դամին է ընգիլ.  
Մե դարդիման չըկա, հալըս հարցընի:

Թեշնիս

Ենդուր կուլամ՝ սիրտը կոտրած առյուծըն  
Գող աղվեսեն է իր վերքըն ըստացիլ.  
Ազնիվ մարթըն ապրուստի է ման գալի,  
Ամեն գյաղա զարբարի է տիրացիլ:

Ի՞նչ անտառ է, կըրակն ընգած չէ վառվում,  
Քաֆուր է նա, ովոր սա չէ հասկանում.  
Զարդի-փալագն էնդուր հիմա չէ դառնում,  
Վուր աշխարքըն հիմա շատ է նիդացիլ:

Տերըն միդըս հալբաթ զանց կոնե մե օր,  
Ոչխարն եծեն կու բաժանե նա մե օր.  
Էս դուռ փակողն, ինքը բաց կոնե մի օր՝  
Մուխաննաթի երեսըն է սիվացիլ:

Սոդիկըս յադ դառավ, ա՛ման չըմընաց,  
Աղուհացըն պակսից, գուման չըմընաց,  
Էլ ծըշմարիտ, արթար իման չըմընաց,  
Ենդուր սիրտըս փարա-փարա է դարցիլ:

Դարդըս ասիմ, մե բիո դարած, Են գըլիսեն.  
Վերքըս բուժե՛ արուն կալած, Են գըլիսեն.  
Էս քու լիզվից խուցված, վառված Են գըլիսեն,  
Սայաթ-Նովեն կըրակումն է մընացիլ:

Օգութամա-վարսաղ.

Էսպես Արութինի ասած, մայիսի 20-ին, քրոնիկոսի 446-ին (1758):

Ասեցին թե, Շախաթա՛յի, արար-աշխար ըստի՛ղծող.  
Չելածեն էլածն արեցիր, բարբառ ու բառ ըստի՛ղծող:

Քու էտ բարերար կամոքըն դովն իմ փարվար-ուստադի.  
Փիրն ինձ լըսից ու տիդ տըվից. Եշխըս՝ տըվածն ուստադի:

Հասա դուռըն ծըշմարտության, խըմեցի էս սուրփ գինին.  
Հասկացիլ իմ, ա՛սա, յարա՞բ, արթար գըրածն ուստադի:

Ով վարպիտի նըման խոսե, նըրան կու տամ օղորմի.  
Խնչքան էլ վուր յիս մինձանամ, թողը չիմ մեծն ուստադի:

Ով արթարութենից խոսե, նա ինձ հիդ ընգիր կուլի.  
Նըրան յիս իմ լիզվից կոսիմ, ո՛չ թե՛ ասածն ուստադի:

Սա՛յաթ-Նովա, օղո՛րմի տուր ուստադիտ էլ, փիրիտ էլ.  
Շոռ չըխառնիս քու խոսկիրուն, կուլիս սիրածն ուստադի:

Էս դիվանին Արութինի ասած է:

Ես նազանին, ես սաղին ե, ես զողը.  
Ես կընիք ե, ես դատավոր, ես արթար.  
Ես մարքըրիտ, ես գոհար ե ես տողը.  
Ես աշուղ ե, ես դալամ ե, ես դավթար:

Ես գըցի ե ես իմ ջանը ես հուրը.  
Ես լըցի ե ես թասի մեջ ես նուոը.  
Ես փընչանով ես խաղում ե ես հյուրը,  
Ես շախմա՛թ ե, ես նարդի՛ ե, թէ՛ ես զառ:

Ես վուրսնուրթը ես վուրսն արից ես խափով.  
Ես ցանիլ ե ես հուրն իմ մեջ՝ ես ափով.  
Ես արիլ ե ես առուտուրն ես ջափով՝  
Ես տըկիլ ե ես մարջանին ես հազար:

Ես վարթն օչով ես թուփիցն ես չըքաղից.  
Ես սիրողին ես խուր ծովում ես թաղից.  
Ես Սայաթ-Նովուն ես ցավումն ես թողից,  
Ես պա՞տիժ ե, ես զո՞կում ե, թէ՛ ահզար:

Ասեցին թե, Շախաթա՛յի, լիս կանչում իմ շահի-շահ.  
Շառս ե ըլում ես խիվ սիրտըս, դարդի վազում առանց ահ:

Կախ ին ընգի սիվ գուփիրըն՝ վարթ, սուսամբար ին, մա՛դաթ.  
Էրեսը վառ շուղք է տալի՛ շամս ու դամար ե, մա՛դաթ:

Զերի օսկերանգ խընծուրը յարի դարմանն է վուր կա,  
Շոնցի պահած շամամնիրըն՝ թազա նուբար ե, մա՛դաթ:

Իմ սիրածի հաքած շորը յա կարմիր ե, յա կանանչ,  
Շափաղ տըվից, ել չիմացա, ինչ թավուր զար ե, մա՛դաթ:

Ախըր, գո՛զալ, ի՞նչ իս ուզում.  
Խըմորից վո՞նց նիտ կուվի.  
Զըրից վո՞նց մըզրախ կու շինվի,  
Ավազից վո՞նց թոկ կուվի,  
Քարից վո՞նց աղեղ կու շինվի,  
Ուսուց ի՞նչաես միխ կուվի...  
Մաստակից ի՞նչ ասեղ կուվի,  
Ես ի՞նչ խաբար ե, մա՛դաթ:

Ել վո՞ր մեկին գընամ ասիմ յարիս եսքան մահանան.  
Սայաթ-Նովեն ել վո՞ր մեկին ասե, հընա՛ր ե, մա՛դաթ:

Ես դիվանին Արութինի ասած ե:

Նոր խոշանի՞ր, ծըրի մալ տան, չառնիք դուք,  
Ով վուր տեսնե, կոսէ փակլսան ծիզի.  
Կինը չի դիմանա՝ գաղտնիք չասիք դուք,  
Յիս կու միոնիմ, սա մընա նըշան ծիզի:

Դե վուր փիրի տըվաժովն իմ անվանի,  
Անգած արեք, խըրատ ունիմ մե քանի՝  
Հարուր տարի գյաղին հաց տու, պահպանի,  
Մեկ օր Եի կոնե մե չար բան ծիզի:

Ամեն մե ծի նըստող դեռ Զալ չի դառնա.  
Ինչքան Եփիս, մախուսըն պալ չի դառնա.  
Խալսի մալըն քիզ համա մալ չի դառնա.  
Անաղուն լի՞փ չաղցում տիդ կու տան ծիզի:

Ազիզ ջանը դուք ջան տալով պըտրե՛ցեք,  
Անցած օրը հասկանալով պըտրե՛ցեք,  
Մե բան Ել կա, աչկը լալով պըտրե՛ցեք,  
Ես վուր մայրն Ե թողիլ, պատվական, ծիզի:

Սա՛յաթ-Նովա, խոսի հոքուտ ծառերեն,  
Ես ծանփեն քիզ տըրկած է մինծ հալրերեն.  
Պատիվ ուրացողեն, կընկա շառերեն,  
Կոսիմ, Տերըն ըլնի պահապան ծիզի:

Ես օգութամա-վարսադ է. գրված է հունիսի Վերշին, քրոնիկոնի 446-ին (1758):

Սովհաքարի ապրանքըն վուր թալանվի.  
Հիշտ ու հանգիստ Ել հիդ բերիլ կուլի՝ վուր.  
Մե բիրթի դուռ թեվուր ըի երկարի,  
Ուտի սեպով թեգուզ բերիլ կուլի՝ վուր:

Քողըս քա՛շե, վուր նիտիրըտ երևան.  
Շիշտ խաբարը գըժիցն Ե, վուր կիմանան.  
Էրազումըտ թեվուր քիզ մե բարաթ տան,  
Առուտեհան թանիսան ծարիլ կուլի՝ վուր:

Ով ընգիրի համա մե չար բան պըտրե,  
Պատվից կընգնե, իր գըլուխըն կու կուտե.  
Ի՞նչ իմանաս, ո՞վ կու դատե, ո՞վ կուտե,  
Տիրոչ բանեն գըլուխ հանիլ կուլի՝ վուր:

Եսենց արա, չըթոռոմե քու վարթըն.  
Մահըն չի գա, մինչ չըլըցէ գավաթըն.  
Մինչև չըլի Տիրոչ կամքն ու նիաթըն,  
Ծառից թեգուզ տերն ընգնիլ կուլի՝ վուր:

Ես վարթ գունքըտ անհետ կորչելուց հետո,  
Ջուխտ աչկիրըս արնով լըցկելուց հետո,  
Ես ծիր Սալաթ-Նովուն, միոնելուց հետո,  
Լաց ըլելով շընչի բերիլ կուլի՝ վուր:

Ի՞նչ կոնիմ սոյբաթըն, ի՞նչ կոնիմ սազըն,  
Զեռնեմես վեր կոծիմ չանգիրըն մեմեկ,  
Չունցի միզ ուրացար, Ե՛ դադիա՛րար,  
Փահմես կու հիուացնիմ հանգիրըն մեմեկ:

Դուրք ին ասի փիր-ուստաքար-դադիրըն.  
«Ամալիտ չըվագիս, չին գա դըդիրըն».  
«Զափեն լի՛ս քաշեցի, սափեն՝ յադիրըն».  
Ռադիփեն եկավ միզ ուրացիրըն մեմեկ:

Դուգունըն լավացած դադին ի՞նչ անե.  
Մե նոքարըն երկու աղին ի՞նչ անե.  
Մե բաղմանչին երկու բաղին ի՞նչ անե.  
Փելկանդ գուգե թագա տընգիրըն մեմեկ:

Չիմ ասի քալագըն, չիմ անի դալըն.  
Առանց քիզ ի՞նչ կոնիմ աշխարիս մալըն.  
Վունց դերվիշ կու հաքնիմ փոստըն ու շալըն,  
Վզգեմես կախ կոնիմ զանգիրըն մեմեկ:

Բըլքամ մե մարթ տեսնիմ, վուր խըրատ ասե,  
Սնձար իմ դարդերուն մե դարման անե:  
Ռափիդ Սայաթ-Նովեն անյար ի՞նչ անե,  
Չունցի յարեն գուքան չանգիրըն մեմեկ:

Ես դափիան Արութինի ասած Ե՝ ռադիփի կողմից յարին խելու (փախցնելու) վրա:

Ասեցին թե, Շախաթա՛յի, խարար ունի՞ս ալամեն,  
Գըրքի վո՞ր թերթին իս գըրված, ո՞վ է բըռնիլ դալամեն:

Հոցիտ խտակ ու պինդ պահե, վուր արթար հախըն մերն Ե.  
Հուրը մերն Ե, ջուրը մերն Ե, հողմըն ու հողը մերն Ե:

Փա՛ռք Արարիչ-Ըստիղծողին՝ մինծ պահապանը մերն Ե.  
Կինքը մերն Ե, մակը մերն Ե, դըրախտի բաղը մերն Ե:

Իրեք հարուր վաթսունովից սուրփի աղոթքը մերն Ե.  
Հիսուսին միզ Տերն Ե դըրգիլ՝ լուսն ու շափաղը մերն Ե:

Սիոնի սուրփ գերեզմանը, ապրելու տեղը մերն Ե.  
Էջմիածնա մայր աթոռը և ազիզ ցեղը մերն Ե:

Սա՛յաթ-Նովա, դալք բան չասիս՝ սարաֆ-մատյան ունինք մենք.  
Անկըրակ մըհլամ դիր վերքիտ՝ զորավոր եղը մերն Ե:

Ես դիվանին Արութինի ասած Ե:

Յիս չիմ հիշի վատ մասքանը, չուն աշխարջս ունայն ա.  
Անցածն ինչ է, քանի վուր մարթ վունց հուր կերպի, կու գընա.  
Թե հանքցընիմ հախ ծըրաքըն, ինքըս վառվիլ չիմ կանա.  
Սահու թասն էլ թե խըմցընին, հարփածի պես չիմ դառնա.  
Վարթըս թոռմից, դուշըս թըռավ, էլ վունչիչ չիմ իմանա:

Ես աշխարը Տիրոչ ձեռին վունց մե խախալ պըտըտվող.  
Մե՛ռնիմ արթար քարամաթիտ, կինքում մենակ ինձ մի՛ թող.  
Եկ աշխարը մի՛ բաժանի՝ լիրիք չուր է, մեկը՝ հող.  
Աթամո՛րթի, կինքիտ ծամփին մենակ չըլիս ծամփուրթող,  
Վիրչի՛ քունը աչկըտ փակե, էլ վունչիչ չիս ունենա:

Փիր-հայրիրըն պըտուտ էկան էս աշխարի չուրս յանը.  
Վունց բըլըուն է պըտուտ գալի վարթի խարի չուրս յանը.  
Չիմանաս թե է՛ս աշխարում կուկի քան ու մաքյանը.  
Աշխարջս հատ-հատ է՛ մեմեկ դիփ կու հոսե օվկիանը.  
Տեսածըս թե դըրուտ ասիմ, էլ ամորով չիմ մընա:

Ել աղանի՛ր, ծիր առչիվ չեր հեստի զուլում կու չոցի,  
Լա՛վ իմացեք, էն աշխարում դուն աղեմեն չին ջոգի.  
Սահըն գուքա, վարթըտ տանե՛ դըրան վունչիչ չի օտկի.  
Թե սուտ խոսիմ, լիզուս կըտրե՛ք, գուզե արեք բանհոքի,  
Վիրն Աստված, ներքիվըն լիս՝ լիզվիս սուտ չի մոդենա:

Յոթանասուն երկու ազգ է, շուր երիտ մինձ փարվանը,  
Իրեք հարուրվաթսունվից մարքարե է սարվանը,  
Ումուդ կա, վուր Զանգլու-փիրն էլ ջաննաթում տիդ կունենա,  
Սա՛յաթ-Նովա, քոչեքոչ է, ծամփա ընգավ քարվանը,  
Դուք վուշ մընաք, նուր էկողնի՛ր, գընամ, էլ հիդ չիմ դառնա:

Ես մոլխամմազ է. Արութինի ասած:

Փա՛ռք Արարչին, գոյ անողին, սիրով սընող-պահպանողին.  
Դեռ հող ու ջուր, հայտնի եղա լիս էն օսկե սամանդարին.  
Ժամանակըն լիփոր հասավ, ընգա անհող վաթանի մեչ\*.  
Գուցե Տիրոչ կամքըն էր, վուր դալամից ընգա դավթարի:

Իրեք ամիսն լիփոր անցավ, հայտնի եղավ մորըս սըրտին.  
Վկից ամիսըն լիփոր անցավ, սեխմըվեց էն օսկե գոտին.  
Խննը ամիսը լըրացավ, կանչեցի՛ Տե՛րն ինձ ազատի.  
Մարմին դառած, լիս շունչ առա, աչկըս բացի լուս աշխարին:

Մեկ տարեկան, մանկան ուժըս զորավոր լուղիցն\*\* իմ գըթնում.  
Երկու տարուս մեշ, լուլս-մայրըս դեռ իր կաթովն է ինձ սընում.  
Իրեք տարեկան իմ դառնում, դեռ օրոցիս մեչ իմ քընում.  
Շուրս տարեկան լիփոր դառա, գեղսին հաստատ քայլերս արի:

Հինգ տարեկան, արթեն ազատ լիզու առա, բերան բացի.  
Վկից տարեկան լիփոր դառա, նոր ակուեքս ուժն զգացի.  
Յոթ տարեկան, էնքան էլավ, վուր ջանք արի ջըրի, հացի.  
Ութ տարեկան, գարուն ընգա՝ աչկ ածի նոր ծանապարին:

Խննը տարիս լիփոր անցավ, դեռ հայտնի չեր, թե ինչ էի.  
Տասը տարեկան էլ դարցա, դեռ գիծ ու միծ կըշըրտի.  
Տասնըմեկըն էլ լըրացավ, դեռ էնքան էլ խելոք չեի.  
Տասնըերկու տարեկանում ինձ հանձնեցին ուստաքարին:

Տասնըիրեք տարեկանում իմ արհեստում տըվի, անցա.  
Տասնըչորսում, իմ շնորհեռվ, վարպետըս պարքն ըստացավ.  
Տասնըինգում [շատ ջանք դըրի, գիր-դալամին ընգերացա].  
Տասնըվեցըս լիփ բոլորեց, ծանաչեցի չարն ու բարին:

\* Արգանդ

\*\* Սեռոն:

Տասնըյոթ տարիս լըրացավ, դեռ լիս չէի եղել դաստան.  
Տասնութ տարիս լիփի բոլորեց, տեսա և՝ վարթ, և՝ վարթաստան  
Տասնըյինը տարեկանում ման եկա Հաբաշ-Հինդուստան.  
Քըսան տարուց եշխի ընգած, լալ կըժախեմ սովդաքարին:

Քըսանհինգում մելդան մըտած և՝ կըլողամ, և՝ կըթըռչեմ.  
Երեսունըս լիփի լըրացավ՝ աժդահայի պես կըջըրջեմ.  
Երեսունհինգ տարեկանում լավ կըգրում, լավ կըջընջեմ.  
Քառասունում ամեն ինչըս հասավ մինչ երկնուց կամարին:

Քառասուն և հինգից հետո լավ խաբար իմ քըչից-շատից.  
Հիսուն տարիս լիփի բոլորեց, ամոթըն ու արն ինձ պատեց.  
Հիսունհինգըս լիփոր անցավ, ահուզարն էլ ինձ չազատեց.  
Կաթսունիս մեջ բարն տըվին մեծերն իրենց հավասարին:

Կաթսունհինգից հետո արդեն «ախ ու վախըս» է ըսկըսում.  
Յոթանասուն տարեկանից աչկերիս լուսն է պակասում.  
Յոթանասունհինգս անցավ, նորից մանուկ են ինձ ասում.  
Ութսունի մեջ փիրի տըվածն անցնում է էնթի աշխարին:

Ութսուն և հինգ տարեկանից ցավը ջանիս մեջ բուն դըրեց.  
Իննըսունըս լիփի բոլորեց՝ հոքիս մարմնիցըս բեզարեց.  
Իննըսունհինգ տարիս հասավ [Գաբրիելն անունըս գըրեց].  
Հարյուրի մեջ ինքըս հասա հազարամյա մեծ հայրերին:

Հանցավուր իմ, հողեղեն իմ, խիստ մի՛ հիշեք ծիր ծառային,  
Վինքում ո՛վ է անմիջ մընում՝ ըսպասեցեք Սողոմոնին...  
Ժամանակըն լիփոր հասավ, ո՛վ կըհարցնի Սայաթ-Նովին.  
Ես աշխարօս ընդունայն է՝ ա՛նեծկ մարթու էլյթիբարին:

Հունվարի 3-ին, քրոնիկոնի 438-ին (1750):

68

Ալբըն-Ա՛ստված, վուր քու ծեռքով աշխարքին հիմք դըրեցիր.  
Սը-սովթանը լավ կիմանա, թէ երգրում ինչ արեցին:

Խաթա բերող խոսկ մի՛ ասե, դաբուլ չունե զալոմըն,  
Հոքիտ խստակ պահե դուն միշտ, լիզիտ հալըն իմա՛ցի:

Զու խոսկերին շոռ չըխառնիս, սադայիլի գործ չանիս,  
Ցուրտ ծըմեռվա դադրըն քաշե, անբան կինքեն վա՛զ անցի:

Խոսկըն վուր կա, լա՛վ իմանաս, այբուբենով թամամ է,  
Լալ-գոհարըն լավ սովորած Սա՛յաթ-Նովա հալարցի:

Ես դիվանին Արութինի ասած է:  
Ես իլահին Արութինի ասած է:

Ասեցին թե, Շախաթա՛ք, թեվուր հիմքն ըլի խարաբ,  
Վարպետըն վո՞նց գըլուս հանե, վո՞նց դըրըստ է՛լ, յա՛րաբ:

Սերն ու սովորն Տերն է ստեղծիլ, տըվել մարթուն՝ հավիտյան,  
Ինքն է հայբար այսն արիլ թագ ու թախտըն Շահ-շահին:

Իմ խիալըն դեռ վիրչումն է, Ե՛լ զուկումնիր ըստի՛ դժող,  
Հորիս նըրա ծամփին դընիմ, ովստըս անիմ դարգահին:

Սըրտանց, մաքուր փառք ու պատիվն առավոտից տուր հախին,  
Սարաֆի պես խսկն իմա՛ցիր՝ խոսկըտ քաշե քարգահին:

Զուկումաթի, արթար դադի ամենազոր մադանն է,  
Փիր-ուստադըն աղոթում է արարչագործ Էտ գահին:

Սա՛յաթ-Նովա, դարդ մի՛ անի՛ իրավ խոսկ իս ասում դու,  
Լալ-գորիար իս մեկ-մեկ շարիլ, վուր ամենքին դուր գալին:

Էս դիվանին Արութինի ասածն է:

Ե՛լ լըսե՛ցեք ծիր բանդային, աղանի՛ր,  
Եշն ոուբայի լըսիլ գուգե, կանա՛ վուր.  
Ավագից շատ բելթըս կանան համբարիլ,  
Վուշչ աստղիրըն իաշվիլ ուգեն, կանան վուր:

Սուտը գուգե դուրթեմեն մե մաս գըթնի,  
Որթը գուգե օցերի հիդ բաս մըտնի,  
Ագռավն էլ ջանք կոնե, վուր դափաս մըտնի,  
Բըլբուկի հիդ լաշվիլ ուգե, կանա՛ վուր:

Ասլանի սարն աղվեսն էկիլ է վուրսի.  
Սորմոնչիրն էլ էկիլ, փիլ մաշկիլ կուզին,  
Ուուր Շուկսկն էլ սուր դանակին կու քըսվի,  
Կացինը ժայռ տաշիլ գուգե, կանա՛ վուր:

Ի՞նչ օքուտ՝ դինսըզին ջամիին պտուտ տան,  
Յա նամարդի դոշին դամեն պըտուտ տան.  
Մորեխն ինչքան վառվող շամին պըտուտ տա,  
Փարվանի պես խաշվիլ ուգե, կանա՛ վուր:

Սալաթ-Նովեն կոսե՛ էշխի կու վազիմ,  
Կաթիլ-կաթիլ արտսունքի գետ կու հոսիմ.  
Ամեն էկող կոսե՛ «թյուրքի» կու խոսիմ,  
Գերեզմանն էլ ծեն տալ գուգե, կանա՛ վուր:

Լավ բաղլամա է, Արութինի ասած:

Ես մըրքիրըն զարթ ին ամեն մե բաղի,  
Մեկ խընծուրն է, մեկելը՝ նուռ, սերկնի.  
Ես իրեքն էլ պետկ են ամեն օջախի՝  
Մեկ միխակը, զանջաֆիլը, մեկն էլ՝ հիլ:

Կուրսնուրթն առանց դաշտի, սարի չի լինի.  
Վարձքով մարթըն առանց արի չի լինի.  
Սադաղն առանց իրեք բանի չի լինի՝  
Մեկն՝ անիղը, մեկը՝ լարը, մեկը՝ թիր:

Արջտ պահե՝ սըրտի դիդն է, պետք գուքա.  
Վաղն ինձ՝ եսօր քիզ իմ տիդըն պետկ գուքա.  
Ես իրեքն էլ մարթուս ցիղին պետկ գուքան՝  
Զուրն է, հուրն է, են մեկն էլ դուն իմացիր:

Ի սկզբանե չունքի ե՛ր Նա արարող,  
Բաժան արից՝ երկինք, գետինք, ջուր ու հող.  
Ես իրեքն էլ սիվով գորած կա՝ տող-տող՝  
Ավիտարան, Դուրան, մեկն էլ՝ Գիրքը հին:

Սա՛յաթ-Նովա, հոքիտ հախին ամա՞նաթ,  
Չունքի սիվ օցն աչկ ունե վունց ականաթ.  
Աշխարքըն չի մընա քիզ՝ մուլք-ամարաթ.  
Հազար տարի չիս ապրելու, հասկա՛ցիր:

Եսպես լավ ոչչամա-թեջնիս է. Արութինի ասած. ով սովորի օղորմի ասի:

Շուշա իս Շիրազի, մում՝ Հընդըստանի,  
Ամա էշխըտ դարիլ է մե հուր անշեջ.  
Զախողվիլ է աշուտներու դաստանը՝  
Ուստադեն դաս առած, չիմ անի խամ վեճ:

Վեճ-թեջնիս, բայաթին մուաադասումն է,  
Դրո՛ատ կաց, հոքիտ քանի վուր դափասումն է.  
Չունքի էշխըն բաղ է, ծաղկի դասումն է,  
Բաղըն՝ բեշարողին, բեշարի բեշ-բեշ:

Բաղ բեշարողն է հենց իրավունքի տեր.  
Եկ զորքա Զալ մի՛ դառ, սի՛րե գիր-գըրքեր.  
Չունքի վերուստ կան գըրված գոհար խոսքեր.  
Կետով, անկետ քանի բառ կա սըրա մեչ:

Քանի-քանիսըն զըմվիլ ին Լելլու պես.  
Լավ է ուստիտ վուտքի հողըն համփուրես,  
Թե չէ աղուհացըն կու կուրացնե քեզ.  
Նովցիվան իս, ափսուս տըղա իս՝ բեշ-բեշ:

Ես բեշարա Սայաթ-Նովեն քուրումն է,  
Սե հարցընող չըկա, թե ի՞նչ օրումն է.  
Սիվ-սիպտակըն ջոգիս՝ լիզուտ միղրումն է,  
Կարթացողի արած գործըն վո՛նց թե հեչ:

Եսպես գինչիրլամա. Արութինի ասած. մայսի 5-ին, քրոնիկոնի 441-ին (1753):

Թար ունքով, թար աչքով, թար լանջով, լանջով.  
Թար տեսքին թար կըտա, թար ըռանգ-ըռանգ.  
Թար սիվըն՝ թար խալըն, վուր չունե օչով,  
Թար նորեն թար դաշեց, թար ա'վաղ՝ զուր շանք:

Թար կոկոննիր, թար նայեցին, թար ծերին.  
Թար հյուսքիրըն թար ծանրացան թիկունքին.  
Թար գոզալը թար զար-շուրիր թար հաքին,  
Թար առանձին, թար կըշըրժ՝ կուտա լանգ:

Թար նազանին, թար կու խընդա, թար կու լա,  
Թար աչ ծեռին, թար սիրտ խուցող թար գուլլա,  
Թար ծախ ծեռին թար գինով լի թար կովա.  
Թար արիվըն, թար կըցոլա, վարթին՝ շանգ:

Թար սիրելին թար զարթարված, թար զուքված,  
Թար չորս յանին, թար ծաղկունքը թար ցըրված.  
Թար իրավունք, թար ունենանք թար գըրված՝  
Թար հայրերի, թար հետքերով, թար գընանք:

Թար յարի թար դարոից, թար Սա՛յաթ-Նովա,  
Թար չելրան թար ո՛րսա, թար Սա՛յաթ-Նովա,  
Թար ծովին թար հասնինք, թար Սա՛յաթ-Նովա,  
Թար վունցոր թար սայադ, թար լողանք, լողանք:

Եսպես Արութինի ասած. դոդադ-դամա թեցնիս է:

Նազանի նազլուն տըվից հըրաման,  
Պըռունգըն շարժից, լիզվին տըվից խաղ.  
ի՞նչ էլակ նահախ.  
Նահախ արից ուստեն, վուր քաշից զարնիշ,  
Նազլուի դեմքին խալ դըրից մե շախ,  
յարն էլ դըրից դաղ:

Ես դաղը թողից նազանին սըրտիս,  
Վուր էշխումն էրվիմ, հա՛ տապակվիմ լիս,  
Դիդարին կարոտ ման գամ գըժի պես.  
Զա՛լում, ուա՛հմ արա, մե գամ նա՛յե նախ,  
հետո վառե սաղ:

Սաղ երից, վառից ջիգարըս, ջանըս,  
Փալագն էլ փակից աղոթարանըս.  
Ես չո՛գան, ես սա՛զ, ես էլ մե՛յդանըս.  
Խոսկ ասա, վունցոր կըրակ ու չախմախ՝  
հատ-հատ ու անվախ:

Անվախ իմ խոսկըս խորթ է հիմարին,  
Վունց վարժապիտը՝ լալիկ անձարին,  
Վունց ավարա զուշ՝ վարթի սաշարին.  
Ղարիբ բըլբուն է, վուր կու պըտրե բաղ՝  
կընգնե վարթի թաղ:

Հենց վարթի թաղ է՝ յարիս վարսերը,  
Խիլքից կու հանե նազ ու դամզերը.  
Եկ, Սա՛յաթ-Նովա, ե՛րգե քու սերը,  
Թեգուզ խիղճ չունե էս նազլուն շարմաղ՝  
օսկումըն շաղաղ:

Ես եղագամա-զինչիրլամա է. Արութինի ասած:

Փիր-հայրիրը միր մըտքումն ին տիդ գըթած՝  
Խըրատնիրը՝ մե-մէ ղամչի, մե ապտակ.  
Ամեն դուշ էլ անումը բըլբուկ դըրած,  
Չի հարցընի, թե վո՞ւրն է վարթի ծամփան:

Աշղութինըն եստից Բո՛րսա կու վառե.  
Վարպիտը թե հըրաման տա, թե լըռե՝  
Շուկու տըղիրքըն սելրանգահը փոխ կառնեն.  
Վո՞ւնց բար կուտա ծառը տարին յոթ անգամ:

Զանի սաղ ինք, արի մենք էլ դամ քաշինք՝  
Միր ես ցավը վուչ մե ծահ էլ չի քաշի.  
Ես ունայնում, խիդժ դարվիշը, թե հաշվինք,  
Ունե քաշկով, դուրան, մեկ էլ՝ իր կաբան:

Կաշիտ հանե օցի նըման՝ Շուռ ու մուռ.  
Թե հարիփ իս, խոսկըս ի՞մաց՝ ջո՛ւղաբ տուր.  
Եկ մի՛ պըտրե մե ախազըրում երկու ջուր՝  
Մեկըն քաղցըր, մեկն էլ ըի դառնահամ:

Սայաթ-Նովեն ցավի մեջ է մընացիլ,  
Աշղութինըն էլ հոքու հիդ է գոյացիլ.  
Հայր Աբրամը քառսուն օր է ծոմն անցիլ,  
Արի յիս էլ թեզուզ մե՛կ օր ծոմ մընամ:

Ես թեջնիսն Արութինի ասած է:

Վարթն ու բըլբուկը եսպես խոսեցին.  
Վարթն ասից բըլբուկին. «Իմ բաղը մի՛ գա՝  
Վուչ ծիշտ լիզու ունիս, վուչ հաստատ իդրար.  
Բաղմընչին դարուկ չէ,  
Իմ թաղը մի՛ գա»:

Բըլբուկն ասից վարթին. «Ա՛ կարմիր կոկոր,  
Յիփ գալիս իմ՝ գարնան նազըն ինձ հիդ է.  
Ծախ-շուկը գըցում իմ բաղի չուրս յանը.  
Սարթիկ սեյր են անում՝  
Սազըն ինձ հիդ է»...

Ալբոն-Աստված սիրիս, ո՞վ մարթ-արա՛րած,  
Հեսց բան արա, վուր քիզ շասին՝ անարթար.  
Ժակող, արուն հանող վարթըն մի՛ սիրե,  
Անփուշ վարթըն թուփեն պոկե, քիզիդ տար:

Հեստի խոսե, զալումնիրըն չիմանան,  
Վուր էրեսիտ ջուրն ու գունքըն դիմանան.  
Թեվուր քաղկումն օրենք-տեր չըհիմնանա,  
Վատն ու սուտըն կիշխեն՝ գուքա միշտ զարար:

Անբան մարթը խերից, շառից կու փախչի,  
Ազնիվ մարթուց նամարդը չի ամանչի.  
Յուլսըզն ուղիղ մե ծամփա չի ծանանչի,  
Կիրչում ծամփին կոսե. «Ես ինձ ո՞ւր տարար»:

Դուն չիս տանի եսնց բիոըն քու ճըտիտ,  
Խոսկըտ ասա, վունց անիդից թըռած նիտ,  
Կարպետի հիդ ով խոսե խակ ու անմիտ,  
Կիսքումըն չի կանա գըթնի մե դարար:

Քանի գընաց, խոսկիրըտ մեմեկ հալվից,  
Ա՛փսուս, դեռ շիվ, բոյըտ միշիցըն ժալվից.  
Սալաթ-Նովեն հեյից դեպի վով քալիից,  
Ինչ վուր գըրեց՝ անգին քար, լալ ու գոհար:

Ես երգը ալիֆլամա-դարահեցա է. շատ լավն է. Արութինի ասած:  
Ով որ սովորի, ողորմի ասի, գրված է մարտի 4-ին, քրոնիկոնի 443-ին (1755):

Նազլու լարին տե՛սեք, հաքած զար, խարա,  
Նալչեն օսկի, գըլիսին կարմիր շիղա-թաջ.  
Յա՛ր, ալվանիտ հալելին լավ զարթարած,  
Շուշեն գինով լիքը, ծերիտ օսկե թաս:

Ասլան էշխետ լիս օր չունիմ, նա՛զլու լար,  
Բու թըրի դեմ մե զո՞ր չունիմ, նա՛զլու լար,  
Խիլք ու միտքըս վուր կո՞րչում է, նա՛զլու լար,  
Քի տեսնե՛լուցն է, դուն գըթի՛ր, վուր ինձ տաս:

Մատին քաղած ալմաս քարով մատանին,  
Ղաստ է անում, վուր էս օցն ինձ ըսպանի.  
Յիս վուրսնուրթ իմ, թըվանքըն իմ շընադին,  
Գիշեր-ցերեկ սարի մարալ կարոտած:

Դարդըս շատ է, ասիլ չիլի ես տարի՝  
Զուքված նազլուս գուզե է՛լի շարչարի.  
Աչկես էնդուր չէ պակսում արտսունք-արին,  
Վուր գիծ հոքիս չէ սովորում ոչ մե դաս:

Սա՛յաթ-Նովա, միղավուր գործ մի՛ բըռնի,  
Վուր մարմնիտ մեշ առաշ հոցիտ չըմեռնի.  
Յա՛ր, լիս մեռնիմ, վո՞չ մե վընաս քի շառնի,  
Վուր քու ծեռով մե բուր հող գըցես վըրաս:

Ես թեցնիսն Արութինի ասած է:

ԹԵ ուզում իս Հայր Աքրամի պես ապրիս,  
Հաստատ հուկս ու հավատետ անց մի՛ կենա.  
Ինչ գըրած է, են է գալու միր գըլխին,  
Տիրոչ դըրած կարքեն փախչիլ ո՞վ կանա:

Թեվուր մե տիդ լալ ծանանչող չըծարվի՛  
Ավմասիտ խամ քար կոսին ու չին առնի.  
Սովդաքարն էլ զարն ու խամըն թէ խառնի.  
Զար-դումաշըտ նըրա մողըն մի՛ բանա:

Խիվ սի՛րտ, լըսի՛, ես բանը քիզ՝ աղ ու հաց.  
Ես խըրատիս եկ անգաճըտ պահե բաց.  
Գինըտ չիմացողի սուփրից հի՛ռու կաց՝  
Նըրա գինին մե զա՛հար է քիզ համա:

Մահը վուր կա, մե դըժուկսկ է, դըրախտ չէ,  
Գետ մի՛ մըտնի, չասիս կարմունջը մող չէ,  
Արմատ չի տա, կու չորանա, թէ հող չէ՝  
Ժեռ քարումըն սիրմ ցանիլըն գու՛ր բան ա:

Սի՛րտ, աշխարքում թեգուզ ջանն է պաշտելու.  
Աչկըտ մի՛ դիր հարամ ապրանք ուտելու.  
Անգած արա, մե խըրատ էլ կա տալու՝  
Սա՛յաթ-Նովա, կյանքեն շուտ մի՛ հիուանա:

Ես վարսադ է. Արութինի ասած է:  
Եսպես օգութլամա. Արութինի ասած:

Ես աշխարքըն անցավոր է, իմա՛ցեք.  
Եսօր վուղչ ման գուքանք, վաղն ի՞նչ իմանանք.  
Կինքը մարթուս միշտ չէ տըված, հասկա՛ցեք՝  
Աջալն ագահ դիվ է, ել վու՞նց դիմանանք:

Փուչ ելավ, մե բան իր հալին չըմընաց.  
Խիվ սի՛րտ, քիզնից էլ մե տալիք չըմընաց,  
Ես աշխարքըն Ռոստոմ-Զալին չըմընաց,  
Թեգուզ ծեռին պատրաստ ուներ թուր, խաղանգ:

Պատվով, արով ջա՛նք արա ազնիվ բանին:  
Հարըստութին, լալ-աղութ մի՛պահպանի.  
Քաղցըր ջանըս ամանաթ տամ քարվանին,  
Ինքըս հաքնիմ հինգ արշին կըտավ՝ պատանք:

Ա՛յ սիրտ, գընա՛, փա՛խի նըրա ամալից,  
Սատանեն մե դամք է դըրիլ ազալից,  
Թե ծար ունիս, հի՛ռու մընա աջալից՝  
Փեշերըն չին բացվում, վուր գենքն իմանանք:

Շատ վարպետնիր եկիլ, սըրտիր ին վառիլ.  
Հազար-հազար էկիլ, փոշի ին դառիլ.  
Ու վուր կոսին՝ Սայաթ-Նո՛վեն է մեղիլ,  
Էկեք նըրա գերեզմանին տես գընանք:

Ես հաղանա-թեջնին է:

Բախտըս ինչ անի.  
Ըսգիլ իմ ջանից,  
Իմ լավ ջանանից,  
Վարթ-վարթաստանից:  
Ազկես վուղչ տարին  
Հոսում է արին.  
Ենդուր իմ լալի՝  
Միրտըս կես արիր.  
Լիզուա՝ բանալի  
Զի թողնի անբախտ:

81

Շով դառած ցշխըս ծոքում է նավըս.  
Կյանքըս քիզ մա՛տաղ,  
Ե՛ սիրուն դըրա՛խտ.  
Լիզուտ դանդ ու շահթ,  
Միվ խալով զինախթ:  
Աշխարի զուբսն իս,  
Վարթերու ծուխն իս,  
Վարսերի հյուսքն իս,  
Ժեքի վաղ ցուլքն իս՝  
Տալիս իս շափաղ,  
Փալլում ամեն վախտ:

Ամեն վախտ եկ տանք  
Վառ տեսքին հարգանք,  
Զի՛ տա ամոթանք:  
Գըրում է նամակ՝  
Աշխարին զարմանք:  
Խաս խալաթ հաքին  
Նըստում է ուաշ ձին,  
Սարքը ոսկեպատ,  
Թամբը՝ Շահի թախտ,  
Սանձի ժերը լախտ:

Լախտն Ռոստոմ-Զալին,  
Վե՛րչ տու քու դալին,  
Զալում գոզալի  
Զեռքն արնոտ չըլի:  
Լուս է ջամալըտ,  
Աստըդ է խալըտ,  
Եկ բա՛ց քու մալըտ՝  
Զավահիր-լալըտ.  
Խիթըս տարար՝ հաղթ,  
Ել ինձ ու՛ր է բախտ:

Իմ լիզուն վուր կա,  
Շատ փակ կըբանա,  
Լավը կըգըթնի,  
Դավթար կըմըտնի:  
Փիրից թաս առար,  
Գըլխետ վազ անցար.  
Սա՛յաթ-Նովա անճար,  
Ըսգած սար ու քար՝  
Մըսխալն արա նադդ.  
Փի՛ր, մի՛ անի սախթ:

Էս եղագլամա-դոշամա է. Արութինի ասած է:

Մազիր ունիս դաստառեհան՝ նըման միրուն տուանի,  
Ունչիրըտ դալամով քաշած, սազում ին միր գումանին.  
Թերթերուկըտ նիտ ու նաշտար՝ դիրչում է միր քամանին.  
Աչկիրըտ օսկե փիալա, կըրակ նըրից միր շանին:

Կարթ էրեսիտ խալ իս ուրի՝ աստղի նըման հավասար.  
Գունքըտ Հընդըստանի մում է՝ շանս արավ դավար-դավար,  
Լիզուտ քաղցըր, բարուտ քաղցըր, ակըռընիրըտ անգին քար.  
Պըռոշեմետ միրը է կաթում, չի հասնում միր փընջանին:

Երեսըտ է արիվ-լուախն, վիզտ է նըման դարդարի.  
Բուլսախնիրըտ կախ է նընգի՝ ինձ ամա չիս դարդ արի.  
Կուռըտ շիմշատ, մատնիրըտ մում, ղունգտ արավ ինձ սարսարի.  
Գիշեր-ցերեկ էշխի մեչըն կախվիլ է միր դամանին:

Էնդրէ համա ջունուն դառած կանչում իմ ա'ման-ա'ման.\*  
Ածիլ է, ծաղկիլ է ծոցըտ, հուտըն գուցա աննըման.  
Դոշըտ դառած [բաղ ու բաղչա], խալ է գըցի շամաման.  
Կու բըլսեցնե կաթնեախպուր կանանչ չայիր չիմանին:

Թա'րիփ արա, Սա'լաթ-Նովա, գոզալըն աննըման է,  
Մեշկըն հատիդեմեն քաշած՝ մարթու հոքի կու հանե.  
Ինչ իս անում, դա'նլու մարալ, էշխըտ ինձի կու սպանե.  
Մի՛ ըսպանի հասրաթեմետ, եկ տեր մի՛ դառ միր արնին:

Էս Արութինի ասած է. իլահի:

\* Այս և հաջորդ խաղը երկինքպա է՝ հայերեն-աղրքեցաներեն: Ընդգնած կիսատողերը հայերեն են:

Մըշու սովյան սուրփ Կարա'պիտ, երգինք է հասյալ գովեըն քո.  
Գլուխ-վարթապիտ Ցըշմարտուկյան, չըկար հավասար ոքըն քո.  
Խոսկիրըտ անգին շավահիր, լալ իս թափյալ բիրնոքըն քո.  
Որովայնէ երգիր պացիր, արմացյալ ին ծընողքըն քո.  
Անապատեն բարբառեցար հըրաշախոս շըրթնոքըն քո:

Գընացիր գետըն Հորդանան, Տերըն ինքըն մըկըռտեցիր.  
Տիրոչըն դո՛ւ ցուցիր մարթկանց՝ երրորդուքինըն հապնեցիր.  
Յիս վասն ալն ուրախ իմ շատ՝ չար սատանեն կորցըրեցիր.  
Երեսուն ամ ի մեշ այրի, վասն աշխարին աղոթեցիր.  
Մեղքը վայրի վայիլիցար, շատ քաղցըր ին քարոզքըն քո:

Գըրյալ է ի մեշ սուրփ Գըրքի՝ Ովհաննես մեծ ի ծնունդկանանց.  
Զարյամբ քո հոգիք փըրկեցիր, թագ ու պարծան իս կուսանանց.  
Հրիշտակնիրըն իշան յիրգնուց, պըսակ լուսու առիր անանց,  
Խաչապաշտյաց հիմըն դառար, աշտանակ իս ամեն վանանց.  
Մասունքտ ամեն տիդ ծավախ, ամեն տիդ է լուս-շողքըն քո:

Կըռապաշտըն քիզ իյուր կանչից, զորս ամենայն յուր հավաքյաց.  
Բազմությունըն եղն հուզյալ՝ եխպոր ախչիկըն չըխաղաց.  
Երթում կերավ գահի վերա, ինչ որ ուզես, կու տամ՝ ասաց.  
Մարգարեի գլուխըն ցանկաց, շալլաթըն շուտով գըլսատյաց.  
Օխտոն անուն հիշատակեցին, վուր կըտրեցին շըլինքըն քո:

Ի՞նչ հրաշախի կերա ունիր դու, սանթարամիտն գորոք սարսիալ.  
Տարտարուն հայտնի արիր, ավետիս համայն առաքրալ.  
Դրախտի հըրիշտակըն իս դու, սուրբքտ սըրբքոց սիրտըտ մաքրյալ.  
Սայաթ-Նովեն շատ կու վուխպա, աղաչում է երեսն անկյալ.  
Մեղավորաց մեղկըն հա՛լե, լուսով լի է տապանքըն քո:

Էս մուխամմազ է. Արութինի ասած է:

Ես ի՞նչ ելավ ինձ հիդ, տես ի՞նչ իմ արի,  
Դե վիզըտ ծոտ, գընա՛, տանեն դուս արած:  
Խիլքըս տանով տըված լիղնուրթ իմ դառի,  
Գըժված ման իմ գալի, բանեն դուս արած:

Քաղցըր թութըս դառըն լիղի շինեցի,  
Յիս մե միղկ իմ արի՝ նաշտար քաշեցի,  
Իմ են արթար կաթիս արուն խառնեցի.  
Բաս է՛նդու համա իմ նանեն դուս արած:

Յիս բըլբուկ իմ, վարթըս փակից ալալըն.  
Տես ի՞նչ արից հուրիզադա ջալալըն,  
Կորցըրիլ իմ ջավահիրըն ու լալըն,  
Մադան չունիս, Բադեշխանեն դուս արած:

Հա՛ լաց ելա, վա՛ կանչեցի անհաշիվ,  
Էլ ի՞նչ օքուտ, ջա՛ն տու, կինքըտ հա՛ մաշի,  
Ես իմ դարդից թուր վուր օչով չըքաշի՝  
Օչով չըլի սիրեկանեն դուս արած:

Արի մի՛ղկ իս, Սա՛յաթ-Նովա, միղանչող,  
Ախապոր ծամփին կինքըս մատադ ըլի թող.  
Սըրան դաքով իմ, Արարիչ-ըստի՛ ղծող,  
Հոքիս չանիս դրախտի ջանեն դուս արած:

Ես դափիան չորս լեզվով է՝ Վրացերեն, պարսկերեն, թուրքերեն, հայերեն, Արութինի ասած.  
Ժարտի 6-ին, քրոնիկոնի 446-ին (1758):

Աշուղներու սիրտըն միշտ էլ տըխուր է.  
Մինք համաշա պիտի էս դարդըն քաշինք.  
Աշղութինըն էրվող քուր է, հուր է.  
Աստըծու հախ-իրավունքին ծանանչ ի՞ք:

Հասնիլ գուցե պըստի օրթունքըն օծին,  
Խըսիր գործողնիրըն որթ կու գործածին,  
Զիապանըն չի հասցընում խանի ծին,  
Յարամազ է շունչըն, շընանալս է միոք:

Լավ աշուղն իր սըրտին անգաճ կու դընե,  
Լավ ուստես իր ծաղկեփունքըն կու բաժնե,  
Խամ հաքնողըն զարն ի՞նչ անե. զալ կոնե,  
Ենդու համա խավըն խավեմեն ջո՛գինք:

Գործի մեշ մըտնողըն գիղե ահ ու զար,  
Ուստադըն քիզ կու պարքիվե նամուս, ար,  
Լավ սայադըն դամբով կու մըտնե անտառ,  
Գիշեր-ցերեկ արի վար ու ցանք անինք:

Չարխի-փալագըն միզանից խըռով ա,  
Փիրեմեն փիր դառա, ինձ հասնողն ո՛վ ա.  
Օղորմի տոդր ուստադիտ, Սա՛յաթ-Նովա,  
Նըրա համա աղի արտասունք թափինք:

Ես լավ դարահեցա է. Արութինի ասած:

Մաղրոսեն ո՞վ ծաքեց՝ Նոյի վուրթին՝ Զամ,  
Մո՛ւկափ տուր ինձ, գըրիմ խոսկիրըս մե գամ,  
Մաքուր զինու համա հասավ օսկե ջամ,  
Ման գուքամ լիս էլ Նըրա պես, ման գուքամ:

Մալագ պատկիրըստ լիս տեսնիլ կու ցանկամ,  
Մեջլումի պես սարիրն ընգած կու մանգամ,  
Մո՛ւրվաթ արա, լարիս վըրա դիր մահլամ.  
Մետաքսե զար աղլուկըն քիզի կուտամ:

Մա՛րքիտ ու լա՛լ, քու շընչով է, վուր լիս կամ,  
Մում ի՞ս վառվող, ինձ դուր կու գաս ամեն ժամ,  
Մատնեցիր ինձ քու կըրակին, պայծառ շա՛մ.  
Մեջլիսներում էշխի ընգա լիս անդամ:

Մարշանով լի սինին քու դեմ կու բանամ,  
Մի՛ փախչի էշխեմեն, ա'զիզ-քարեկամ,  
Մատահ կոնիմ գըլուխըս քիզ, իմ հա՛մդամ,  
Մարմար շեմքիտ առաչ կինքիս վիրչ կուտամ:

Մըշու սովթանի մոդ ուխտի կու զընամ,  
Մե զընչղոկ իմ՝ բազային գոհ կու դառնամ,  
Մըղկըտում է Սալաթ-Նովեն, աչկը՝ նամ.  
Մակամ, Ա՛ստոճ, լի՞ս էլ կու հատնիմ, կերթամ:

Էսպես դարահեծա. Արութինի ասած, ավալ-ախըր:

Մի՛ ծըքի անիղըտ, մի՛ բաց թող նիտըտ.  
Կու կոտրիս ժեռ քարում դու քու թիրըն թանգ.

Չիս գըթնի խաթանգ,  
Ե՛լ դանգի դա՛բանգ,  
Միշտ անում իս շանգ,  
Քու խըմիչըն է բանգ,  
Սիրտըտ է մահանգ՝  
Գիղիմ վուրն է դալբ:

Աշուլըն էնդուր է միշտ տցիրում էսպես.  
Միշտ ա՛խ է անում,

Հոքուց է հանում,  
Չոքեչոց անում,  
Աչկիրը նամում,  
Սըքում, սիվանում:  
Տե՛ս ինչ է ասում  
Իմ օսկե լիզուն.  
Գիղիմ ինչն է դալբ:

Սըրտիս քոչկ-սարայըն խարաբ չա՛նիս դու,  
Թեվուր դալբ բան ունիս, սարաֆին շանց տու,  
Տեր-Արարիչին՝ Աստօնուն փա՛ռք տու,

Ցորեկ ու գիշիր  
Արտա՛սունք թափիր,  
Ո՛վ լի՛րգինք կանչիր,  
Պա՛տիվ ծանանչիր,  
Հաղիդեն քա՛շիր  
Խոսկիր սիմ-շարբար:

Ամեն էկողին էլ դըսմաթ կու տա Տերըն.  
Էնդու համար էլ կիսատ է իմ քեռըն.  
Հընդու թանգ ապրանք է իմ դալամքարըն,

Գին ո՞վ կու ծարի.  
Հարիր հազար է,  
Շատ իմ բեզարի,  
Ըսգա ազարի,  
Էշխի բազարի,  
Ապրանքըս զար է,  
Տե՛ր, քու ծառային  
Նա՛յիր գըթությամբ:

Գըլսից ձեռ կու քաշե էշխի ընգնողըն,  
Ենդուր կու հանե նա երեսի քողըն,  
Փիր-ո՛ատադ, դուն իս ինձ ուսում տըվողըն.

Բախտըս իս բացիլ,  
Ինձ ողորմացիլ,  
Չոգան խաղացիլ,  
Ինքըս սըրկացիլ,  
Հոքիս իս լօցիլ,  
Դիփունեն անցիլ,  
Ախտիլ քաջությամբ:

Ասփուրց թա՛բիբ, էշխի պահակըն դուն ի՞ս.  
Գըցած քարըտ դիբավ իմ էշխի շուշիս.  
Սայաթ-Նովի մոդ ի՞նչ կորած բան ունիս.

Ման գամ, կու գըթնիմ,  
Սիրտըս մում շինիմ,  
Էշխի մեշ էրվիմ,  
Քիզնից վախ չունիմ,  
Էլ լիս ա՛խ չունիմ,  
Ուստամ-Զալը չիմ,  
Վուր սպանիմ Զոհրաբ:

Էս Արութինի ասած է. եղագլամա:

88

Աշուղըն մե վուրսնուրթի պես հայտնըվից.  
Ո՛վ նազանի, փա՛խիր՝ նըման մարայի.  
Աշուղ իմ, յարն իմ յարի.  
Թաք իմ կուրծքը պատա՛ռի,  
Լըսեցի, սիրտըս խընդաց,  
Վուր յարի դրստն իմ դառի:  
Վուրսնուրթի պես մարադ մըտավ, թաքնըվից.  
Թուղթ կու գըրե նազլու յարն իր դիդարին:

Մանիշակին էլ դոստըն դաստա կոսե.  
Կախ զուլփերուն էլ դոստըն դաստա կոսե.  
Սըմբուլին դաստա կոսե,  
Սուսանին դաստա կոսե,  
Փետով գեղնին չըխըփիս.  
Գեղնին էլ դաստա կոսե:  
Ինքը դոստըն ինձի իենց դա՛ստի կոսե.  
Թուղ միզանում չըլի վուշ մեկը խային:

Իմ գոզալին տեսա վունցոր էրազում,  
Քիզիդ խաթրով, պատվով խոսիլ իմ ուզում.  
Խալը քի շատ է սազում,  
Խաթը քի շատ է սազում,  
Շակատիտ մազըն, գո՛զալ,  
Տե՛ս ինչքան լավ է սազում:  
Տե՛ր կու դառնանք, գո՛զալ, քի բան իմ ասում.  
Հազիր-պատրաստ դուկն է սազում տերերին:

Զար ու զարբար կաբայով իս զարթարվի.  
[Քու համդամի դամն ու դովրանն իս դառի]  
Խալըտ դեմքիտ է վայիլ,  
Խաթըտ դեմքիտ է վայիլ,

Սիրուն կուժն ու կովան է  
Եշխի ալվանին վայիլ:  
Սարաֆնիրն ին լալիտ, լաղութիտ մայիլ.  
Մըտի՛կ արա առնողնիրու շարանին:

Նոքիս դառըն ափսուսանքով է լրցվել,  
Զու ծոցումըն շամամ ու նուռ է բացվել,  
Հեյ վա՛խ էտ երկըսին էլ,  
Մա՛դաթ էտ երկըսին էլ,  
Սայաթ-Նովու գըլուխըն  
Մա՛տաղ էտ երկըսին էլ:  
Թե ինձ երկու տարվա կինք է մընացել,  
Ելի հաստատ կու մընամ նամուս, արին:

Էս Արութինի ասած է. թեզլիս-բայաթի:

89

Հալալ մարգրիտ ին ակուեքըն գոզալի.  
Զավահիր իմ բարցիլ ուղտերուն հազար.  
Կանչում իմ Տեր-բարցրյալին,  
Յաղութ, մարջան ու լալին,  
Քուրա մըտնող ուստա՛քար,  
Զո՞գիր հարամ-հալալին:  
Թե թալիի իս, նա՛յի լուսնի հիլալին,  
Նրա՛ն, ովոր ունի հայա, նամուս, ար...

Էս Արութինի ասած է. թեզլիս-բայաթի:

225

Այիբ-Աստված էր, վուր դըրից բունիաթըն.  
Օրենք գըրից, ասաց՝ արհի՛ստով գբաղվիր,  
Վուշ աշխարըն հանձնից նահապետ Նոյին.  
Նիտըտ արցա՛կիր աշխարին ու ա՛պրիր:

Հայր Աբրամըն տեր Աստծուն ծանաչեց.  
Չարին ախտեց, քառասուն օր ծոմ պահեց,  
Տերըն գըթաց ու իր դըռնիրըն բացեց.  
Չավակ տըլվեց նըրան, ասաց՝ թըլպա՛տիր:

Սինա սարի վըրեն Տերըն լուս կաթաց.  
Ծեքի լուսով Մովսեսի ծամփեն էր բաց.  
Հողըն եղնի օխտըն բանեն կազմըված.  
Ծանա՛նչիր իմ ջամալըն, ինձ աղո՛թիր:

Մարքարենիրուն լիրգընքեն ասաց նա.  
Սուտ ու ունայն ես աշխարքըն չի մընա,  
Սուրփ գըրքերում գըրեցին խոսկը նըրա.  
Վա՛րիր, ցա՛նիր, արթար ու բա՛րի եղիր:

Սայաթ-Նովեն իմ յիս, կարթացիլ իմ լամ,  
Թիփիկում իմ. ծարտար խոսկիր կիմանամ,  
Ուստարմիրըն ունին մե ազատ դալամ.  
Ասեցի յիս՝ լալ ու գո՛հար ըստեղծիր:

Ես Արութինի ասած ե. ալիֆլամա:

Յարիս ասի՝ ախըր էլ չիմ դիմանում,  
Փարվանի աես գըցի՛ր ինձ քու վառ շամին.  
Զու դըռանըտ դառիլ իմ յիս բանդա-դուկ.  
Ա՛նգած արեք իմ հազար դարդ ու դամին:

Գունքըս թըռոավ, ընգիլ իմ մե ազարի,  
Ա՛ստված վըկա, ման իմ գալի սարսարի,  
Յա՛ր, քու էշխեն թափառական իմ դառի,  
Չունքի խըմեցի յիս քու լիդի շամեն:

Ասի՝ թող իմանա իմ էշխի մասին,  
Ու ռաղիփի վիզըն թող ծըռվի, ասի,  
Կարթացիլ իմ յիս լամ ու միմ ու մի սին.  
Դե՛ն գըցի դու գըրված կետիրըն ամեն:

Երթում տըլվի, ինձ ծանա՛նչի, գոզա՛լ լար,  
Միրտըս խոցված, վիրավոր իմ, ա՛րա ծար,  
Արի ռա՛հմ արա, փախցըրու՛, հիդըտ տա՛ր.  
Սելրան իս դուս եկիլ՝ հեծած ծին Շամի:

Սա՛յաթ-Նովա, դուշմաննիրուտ իս սիրել,  
Ամպ ու զամպոտ սըրտումըտ էշխն է տիրել,  
Չունքի կինքըտ գոզալին իս նըվիրել,  
Պա՛ռկիր դըռանը քու լարի, համդամի:

Ես թեցնիսն Արութինի ասած ե. ով որ սովորի. բարի հիշի. ամեն:  
Ես թեցնիսն Արութինի ասած ե. ով որ սովորի. բարի հիշի. ամեն:

Նըկարված է աջայիբ Են դալամով  
Վարթ երեսըն՝ կամար ունցիրով կիսված.  
Եշխիտ քուրումըն ինձ Ե՛րիր քու նարով,  
Նըշտար լիզվով սիրտըս խուցելով, Ա՛ստված:

Ինձ ավա՛տա, յա՛ր, տօրված իմ ահզարին,  
Մա՛տաղ ըլիմ քու հաքած կարմիր զարին,  
Էնդու համար է աչկըս լալիս արին,  
Վուր սըրտիս մեշ մե խուրըն վերք է բացված:

Վիկացավ նա, շուրջը նայից շանթահար,  
Եշխիս քաղաքըն կործանից բախտըն չար,  
Անունը իմ հասիլ է չուր Բախտիար.  
Քի՛զ կու տենչա լիրգիրն Հընդկաց, Արաբաց:

Եշխի ծովում լո՛ղ տու լիդնուրթի նըման,  
Թե թալիփ իս, դեմքըտ մի՛ շուտ տու մե յան,  
Մե ջոմարդին հարիր նամարդըն դուրբան.  
Թեվուր Տիրոչ օամփին դըրուտ է կանգնած:

Թե իլահի, հաղանա խաղիրն ասիմ,  
Մուխամբազն ու զարթարված թեշնիսն ասիմ,  
Սա՛յաթ-Նովա, չասիս՝ Տիրոչն ի՛նչ ասիմ.  
Անկեղծ կանչե՛ Ա՛ստված իմ, Տե՛ր ողորմած:

Ես Արութինի ասած է. թեջիս:

Պոշաբ ու շաքար իս, նաբաթ իս ու դանդ,  
Դուն սիմ խոսկիր ունիս, բերանտ է հաղիդ,  
Դամ արա, քու լիզուն ունե հազար փանդ,  
Դարցիլ իս մինձ վարպիտ, հետևկիր փիրիդ:

Դադա իս պատվական, քի՛զ ունիմ ումուտ,  
Դիբա, զար կու առնիս, կու ծախիս մահուտ,  
Դուքանդար իս փանդով, լավն է մաթահեդ,  
Դարայի-խարա է տեսակն ապրանքիդ:

Դաստան էլար, պիտիս երքի դուն հինգ բանդ,  
Դո՛ւրս եկ գրցում իմ լիս թամքը ոսկեզարդ,  
Դարդի՛ման, չասիս թե լիս գըթա փըրսանդ,  
Դա՛րցի եկ, ծանա՛չի դու քու համքարիդ:

Դըրո՛ատ կաց, հետևկի՛ր դուն մարթուն ջոմարդ,  
Դոշըտ թող ըլիսուց մե անդարման դարդ,  
Դաղկեց, երվեց սիրտըս, ցիմ անի փիրյատ,  
Դոստի սիրտըն դակ է. կարոտ համփուրիդ:

Դովա կոնիս, հո՛կ, ջո՛ւր ու օ՛թ կոսիս, մա՛րդ,  
Դառավ հոքիս մաս-մաս, էլավ քար ու քանդ,  
Դե վուր, Սա՛յաթ-Նովա, մարթն ըլի նամարդ,  
Դառըն խոսկիր կոսե, կու կըպչե լախիդ:

Ես ավալ-ախօր է. Արութինի ասած:

Վուսոր շամը փարվանին,  
Ինձ կերի էշխի հուրքըն:  
Դարիբութինըն մաշից իմ ավուրքըն.  
ՄԵ ծա՛ր արա, մարթըս օղորմած կուի:

Դեմքիտ գունքըն կորցըրեցիր դուն, Սա՛յաթ,  
Դո՛քս արի հանդ, թեվուր ավչի իս՝ սալադ,  
Հաշկիր անունըն՝ սա՛յ-ադ,  
Պատիվըտ չանիս զայաթ,  
Ել չի կանա վուրս անիլ,  
Չունքի բազան ընգավ բանդ:  
Սայաթ-Նովուն թողից յարը բեմուրվաթ,  
Էնդու համա սըրտիս խուցըն բաց կուի:

Արութինի ասած լավ թեջնիս-բայաթ:

Աա՛յ թէ ախտի յարեմեն հուսըս կըտրեմ.  
Նա գիդե, վուր իս դարիբ իմ, լաց կուիմ.  
Կանչում իմ՝ կուրժընս պա՛տուե  
Իմ դարդիրըն ու՞մ պատմեմ,  
Սիրտըս նըման է շուշի.  
Յաղի ծեռըն կու կոտրե:

Հովսեփի պես, վուր աշխար կու պըտըտեր,  
Գիշեր-ցերեկ իմ աչկիրըն բաց կուին:

Թէ վուխս տարին տեսնիմ պատկիրքըտ սիրուն,  
Թող ուաղիփըն ինչքան ուզի, թափե թուզն,  
Չու պալատըն կանչի դուն,  
Սի՛ սըպանի խիղճ մարթուն,  
Կանցնի օրն ու գիշերըն,  
Աշուղն երվում է դարդում:  
Գըլխիս վըրա չունքի նըստիլ է սիվ բուն,  
Էնդու համա վո՛չ չադ, վո՛չ զաբնած կուիմ:

Անգած արա առակավուր իմ բառին,  
Մըտի՛կ արա ալվան վարթի սաշարին,  
Մէ յան կանչե, տի՛ս յարին,  
Սի՛ տա քու սիրտը դարին,  
Սիրունութինը քիչ է,  
Նա՛յիր նամուս ու արին:  
Գունքըս թըռավ, դեմքըս դեղին է դառի.  
Էշխի դամբումն իմ՝ չանըս մաշած կուի:

Դարիբության մեջ անցկացավ իմ կինքըն,  
Աչկերիցըս հոսում է ալ արցունքըն.  
Ո՞ւր ին անցած տարիքըն,  
Վուր փուչ էին կամ լիքըն,

Մըտա էշխի բազար, թարազի ընգա,  
Իրեք ջեր կըշուցի ինձ միզնի ծերին.

Կանչեցի՛ Տե՛ր իմ,

Իմա՛ցիր սիրն իմ,

Իմ սիրըն ջըշմարտին արա բարեբար:

Խփի՛ր, գե՛ղնին զարգ անհոքի չարին.

Պատիվըս պահիմ,

Իրավ— արթար իմ:

Իրավ ու արթար բանիր գըրե, դա՛լամ,

Կու գընամ, ման գուքամ աշխարըն ալամ,

Թեվուր ուսում ունիս, կա՛րթա ալիֆ-լամ.

Էշխի սար փորողնի՛ր, նայե՛ք Փահրադին,

Խոնա՛րվեք գեղին,

Կա՛նչեք փըրկովին:

Փըրկութինըն գուքա լիրգընքեն, կա՛նչիր,

Խըրատ լըսող էղիր, սըտեն ամա՛նչիր,

Փարդեմեն դո՛ա արի, փիրին: Տանա՛նչիր.

Դո՛ա եկ համարցակ, խոսկըտ մե՛լդան գըցի,

Ասխիդշ մի՛ դարցի,

Տիղ թող կասկաժի:

Հկասկաժի թող իմ խոսկերուն ուստեն,

Հախ-Տերըն կու կոտրե իմ էշխի շուշեն,

Խոսկըտ մավթուլի պես քաշի հադիդեն.

Թե գուզիս, վուր հընչե նըման արժաթի,

Հետևիր ուստին,

Իր մարիփաթին:

Մարիփաթն էտ է, գիդե Սայաթ-Նովան,

Յի՛րգինքըն կարցակի էն նիտըն մահվան,

Տի՛ս արթեն եռում է էն ծովըն արյան.

Կու հասնի իսանըն մինձ դիամաթին,

Արարչի դադին,

Սովին ու խաթին:

Էս զանջիրլամա-եղագլաման Արութինի ասած է:

Ճըշմարտութինըն գովելիս,  
Խո՛սիր դու ձենով բըլբովի,  
Մի՛ վիծիր փիր-ուստադի հիդ,  
Մի՛ նըմանվի խիվ-մալովի:

Ճըշմարտութին կընտրի փիրըն,  
Պալամըն կու շարէ գիրըն,  
Պալատի լավ օթախնիրըն  
Կու տեսնիս բիրթում թարովի:

Փիրից իմ արի ամեն բան,  
Կըռիվ կու տամ, մըտած մելդան,  
Յիս քիզի կու սիրիմ Ե՞նքան,  
Վունցոր մե հալալ ծընուղի:

Սըրտիտ խորքեն քու հոքին տու,  
Սիշտ պարքիվե ջոմարդ մարթու,  
Խսկ նամարդի օշախեն դու<sup>ւ</sup>  
Մի՛ կախվե, մոխիր չիս ըի:

Սա՛յաթ-Նովա, կա՛մանց երեն,  
Փի՛րըն կու տա ուղիդ խոսքեր,  
Են ծառային մարքա՛րեն էր,  
Վուր նըստեցրե իր Դուկդովին:

Էս դուբեյրս Արութինի ասած է:

Շագիրդըն իր վարպետն կու քաշե ղամ,  
Չունքի վունչից չի գիղի, խիղծ կու նայի:

Սա՛յաթ-Նովա, կա՛նչե՛ Արա՛րիշ արթար...  
Խոզ մի՛ Եղի, քու վարպիտին ա՛նգած կալ.  
Վարպիտի խոսկն է գոհար,  
Անում է ղավար-ղավար,  
Թե գուզիս վարպիտ դառնալ,  
Վարպիտից խիլք-շընո՛րք առ:  
Թուրքերեն է՝ զո՞ւ վեր, պարսկերեն՝ բռգզա՛ր,  
Աղվաներեն՝ փեղա՛ւ, բելուշերեն՝ բրի՛հի՛:

Էս հաղանա-վարսաղ է, Արութինի ասած:

Հե՛յ ուստաքար-հայրե՛ր, լսե՛ք իմ բանքըն,  
Գոզըն գուգա, լիփ աշխարքի վիրչն ըլի,  
Կու բացվին միր արարքըն,  
Զին հերիքի տանջանքըն,  
Կելսի կըրակ ու քամի,  
Կու տանի ես աշխարքըն:  
Կու նայի, շատ կուրախանա էն չարքըն.  
Գոգի ընգիրըն էլ Մազոզըն կովի:

Հազարանուն Տիրոչ փառքըն-իմա՛ցի,  
Ով է մարմնին տալիս հոքի, իմա՛ցի,  
Խոսկըս թանգ է, իմա՛ցի,  
Հուտն ու համքը իմա՛ցի,  
Շառա՛յէ մինձ վարպիտին,  
Խոսկի հանքը իմա՛ցի:  
Թե վարպետ իս, ես հանե՛լուկն իմա՛ցի.  
Են վո՞ւր թըղթում կու հանդիբիս «ջուց» բառին:

Անփիր խոսկըն չի գըրվի, չի դառնա բառ,  
Չի յոլըրկի, ով ընտրե ծիշտ ծանապար,  
Լիդին չի դառնա շաքար,  
Շուշեն չի դառնա շըքար,  
Բեղասըւը չի փոխվի,  
Պըղինձը չի դառնա զար:  
Մե տիղ օթըն տաք կովի, մե տիղ էլ՝ սառ.  
Բաղում սալբի կածե, սարումըն՝ գիհի:

Գուրծի խուրքըն մըտնողըն չի ըլի քամ,  
Ովոր վարպիտ չի տեսե, կու խոսե խամ,  
Մեհմանդարըն կոնե դամ,  
Սաղին կառնե գինու ջամ,  
Էշխի ծովը մըտնողըն  
Կու հանե լամ ալիփ լամ:      (լալ)

• Բոլորն էլ նշանակում են՝ թո՞ղ:

Վուր խոսկին բոց չըղիթքե,  
Փիրին ել փիր պետկ կովի:  
Ակոավն ինչքան ել վուր զոյ տա ոտքերին,  
Կաքավի պես շորորալ չի կարենա:

Սայաթ-Նովա, ա՛րի, վի՛կալ իմ նուուըն,  
Պահպանե քու նամուսն, ադաբն ու արըն,  
Սայաթ-Նովեն է փարըն,  
Չիմ ցուց տա իմ հունարըն,  
Ուղտի վըրա բարցեցի  
Իմ հազար ցավ ու դարըն:  
Թաք ինս ընմ Զանգլու-Փիրի նոքարըն.  
Գըլուխ գովանըն գովական չի դառնա:

Ես թեշնիս-բայաթին Արութինի ասած է:

98

Յարն ալվանեն ելավ. նա՛յիր Աստղուն,  
Սըրտումըս քու եշխով վերքիր մի՛ բանա,  
Յա՛ր, մուրվաթով էղի դուն,  
Զա՛լաթ, ա՛րա զըթություն,  
Ողորմած, ա՛րթար էղի.  
Կարոտ իմ իխ քու սիրուն:  
Լիզուն քաղցըր է, մե նա՛յի պոռշնիրուն.  
Իմ նազանի յարըն խաթին չի դառնա:

Սըրտումըս խուր վերքիր բացից քու սերըն,  
Փիլթի պես երվում ին սըրտին խուցիրըն,  
Կա՛րթա իմ գըրածնիրըն,  
Տեսնիմ քու շամամնիրըն,  
Հա՛յ կանանչ է, հա՛մ սիվ է  
Յարիս հաքած զարիրըն:  
Թեվուր Շիրինըն չըհասնե սարիրըն,  
Փահրադըն էն սարը ծեղկիլ չի կանա:

Չուն բախտըն ինձ մատնից ամոթ ու խաղկին,  
Թո՛ղ արա, փի՛ր, ծեռով երեսըն ծածկիմ,  
Կա՛րթա բախտըն իմ ծակտին,  
Բըլբո՛վ, վա՛յ տու իմ կյանքին,  
Նընգած էշխի ծովի մեչ,  
Հուկսըտ դի քու թիակին:  
Ո՞ւմը պատմիմ, իխ ի՞նչ ասիմ իմ բախտին.  
Ցավըս շատ է, վո՛չ մեկըն չի հասկանա:

Աշղութինըն մե՛կ դամ ունի, մե՛կ չունի,  
Գընամ Զանգլու-փիրի գահըն համփուրիմ:  
Կարթն է տերըն բըլբովի,  
Դոստն է կապել թայգուին,

Միխկըս էն եր, վուր ասեցի՝ խըղծա յա՛ր,  
Եշիի քաղաքն իս գըրավիլ, ի՞նչ գուզիս,  
Հա՞ն էշիի խանջալն, ինձ խուցե, յա՛ր,  
Չինի խաս իս հաքիլ, գո՛զալ,— ասի յիս:

Սովն ինձ գրցից գոզալ յարի թաքարին,  
Զերիտ սազում է նամ տերիվ ու բաղիդ,  
Յարիս դըռանը կանչեցի դառնադի.  
Դուրս եկավ յարն, ասաց՝ միզնից ի՞նչ գուզիս:

Եշիի նընգա իմ յարի քաղցըր լիզվից,  
Աղաչեցի, ասեցի՝ յա՛ր, խըղծա՛ ինձ,  
Պըրծեցրու ինձ բամբասանքի խոսկերից,  
Ուղիփնիրուն պա՛տժ ու ազա՛տե միզ:

Ասաց նա ինձ՝ ուսիմ իման ու իդրար,  
Ա՛սուօծ վըկա, չուսիմ քիզմե ավել յար,  
Վի՛կաց, գընա՛, ել մի՛ դարցի խելագար.  
Զանըս կըրվի Եշիի ծովոմ, ի՞նչ գուզիս:

Տես հաքիլ է յարըն ալ, Սա՛յաթ-Նովա,  
Ի՞նչ իս կանգնիլ մունց ու լալ, Սա՛յաթ-Նովա,  
Դե մի՛ոիր, ել պէտք չէ լալ, Սա՛յաթ-Նովա,  
Չուն էս դարդըն քիզ տանչողն է տըկիլ քիզ:

Էս Արութինի ասած է. թեջիս:

Էն ի՞նչ լիդնուրթ էր, վուր նավում էր նըստած,  
Շովի խորքում որոշեց գինըն լալի,  
Ինսը ամիս մե խոսկ չասից արմացած,  
Չանգին է, վուր լալին միզու է տալի:

Արարիչ Տերըն Աթամին ստեղծեց,  
Կողըն քաշեց ու կողակից ստեղծեց,  
Մարքարեաց խոսկըն անգին ստեղծեց,  
Ծընեց Մարիամըն անարատ էն լալին:

Ակմըտ հատ-հատ կամ դաստեքով դուս հանի,  
Ի՞նչ չոր փետ էր՝ նըմանվեց կանանչ դալի,  
Աբրահամըն ապրեց վից հարուր տարի.  
Հյուրի խաթիր թըլապատից նա իր լալին:

Դարդ ու ցավըս շատ է, ասիլ չիմ կանա,  
Թեվուր ասիմ հարուրի կու մոտենա,  
Իմ ուզամըն նազլու յարի մեշկըն ա.  
Նըրա ծոցում կու պըտոիմ ալ լալանիր:

Դարդըս ո՞վ կու քաշե, դամբն ել չի հանի,  
Յաշի, գուզագ, ծերմակ խարա չի հաքնի,  
Սալաթ-Նովեն միունելիս ա՞ն չի անի,  
Թաք յարըն գա, դագաղիս մոդ լաց ըլի:

Էս թեջնիսն Արութինի ասած է. մալիսի 10-ին. քրոսիկոսի 446-ին (1758):  
Էս թեջնիսն Արութինի ասած է. մալիսի 10-ին. քրոսիկոսի 446-ին (1758):

Փիլթեքըն դըրած էշխի օըրաքի մեջ,  
Կու վառվի փարվանեն ետ վառման շամում,  
Սիրտըս խաշվիլ է էշխի կըրակի մեջ,  
Խունի ջիգարիցըս արուն է քամում:

Ասին իր յարեմեն դառիլ է դալի,  
Ակութըն նըման ին յաղութ ու լալի,  
Չիմ գիղի էս ցավըն վլ՞որ վերքն է տալի,  
Էսդուր գիշեր-ցերեկ արցունք իմ թափում:

Ե՛ աղանե՛ր, տեսեք ի՞նչ դավի մեջ եմ,  
Յա՞ր, վայիլիմ շաքար լիզուտ, կաղա՛չեմ,  
Յարի ծեռնեմեն չիմ գիղի ուր փախչեմ.  
Կու թախսկենամ յիս Հալաբում, յա Շամում:

Տե՛ս սարիրըն ծերմակիլ ին, ի՞նչ ձուն է,  
Զեղիտ բըռնած թայգուլըն ի՞նչ սիրուն է,  
Հընդու դալամի նըկարն ի՞նչ նախչուն է,  
Մե կանանչ շուշա իս՝ սարքած Շիրազում:

Ինծ ավա՛տա,— երթում տըվի իմ յարին,  
Փո՛րցիր սիրտըս, մի՛ ավատա դու չարին,  
Սայաթ-Նովեն ասաց՝ յա՛ր, ինծ հիդ արի,  
Թող կատաղին միր ուղիփնիրըն բազում:

Ես Արութինի ասած է թեջիս:

Արարիչըն սըվթա մարթուն ըստիղթից,  
Նուուն կերան, ակամա միխկ գործեցին,  
Միխկ գործեցին ու քըշվեցին դըրախսից,  
Նըրանց պես ետ նուուն շատիրն ոգեցին:

Ովոր ուգեց, գընաց, ցիխըն գըլորվեց,  
Խալիլըն ծով պահեց, Տիրոչն ընթունեց,  
Օրենք ըստիղթեցին հայրիր միր մեծ,  
Վիցըն տեսան Տերին, շատըն ցավ քաշին:

Ցավ քաշողին շարա է դըրգիլ Աստված,  
Գուցե արունըն բաց թողնի նուրմեկանց,  
Սիկն ու սիպտակն էլ է Տիրոչ ուղարկած,  
Ուժով խփել, խոցել է նա Սատանին:

Սատանին նա խոցել է ու կապկըպել,  
Դուս է քըշել ու մուր զընդանըն քանդել,  
Աթամո՛րթի, արի կանչե՛ ո՛վ իմ Տե՛ր,  
Ու քու միտկըն ուրդե դարգահըն վերին:

Վիրեն կըրակե հուր շողիր ին կախված,  
Լուսակի շոկսկ ունե, արիվ է բացված,  
Ու եկ, Սայաթ-Նովա, կանչե՛ ո՛վ Աստված,  
Քիզ պես շատի համա փորիլ ին շիրիմ:

Ես դոդաղդագմազ-զանջիրլամա է:

Շամս ու դամարըն յիրգընքում ին սազում.  
Աշխարին ու մարթկանց լուս կու պարքիվեն,  
Փա՛ռք Արարչին, բան ըստիղծող Աստըծու՞ն,  
Ծոռ մի՛ խառնե խոսկիտ, վարպետիտ հա՛րգե:

Տիրոց կարքըն է, վուր շահըն հաքնե զար,  
Գիշեր-ցերեկ էշխետ կերպին սար ու քար,  
Բազեն կիշնե, բա՛դ, քու գըլիսին արա ծար,  
Ով տըխուր է գիշերն երազ կու տեսնե:

Հարփած չըլիս, փիրի ծամփից չըթեքվիս,  
Նիտըտ ջարթվի, անիդըտ զուր չըճըշիս,  
Պիտի ուրախ, եռ գալով մերտան մըտնիս,  
Ու՛րախ եղի, դարդ ու ցավիտ շի՛շ քաշե:

Շախշախի պես բըլբովն ուրախ ծեն կու տա,  
Քաղաք տիղըն բայդուշըն չի դիմանա,  
Խուփըն ծածկե, խոսկըտ դառիլ է շիլա,  
Դիվըն փարդեն պատոիլով գործ չի անե:

Քաղցըր պըռունգնիրուտ հոսիլ է խաշխաշ,  
Գինով լի շուշա իս, խըմիլ իմ մեքաշ,  
Սա՛յաթ-Նովա, շին-ով ե՛րք դուն մի բաշ,  
Խոսկիտ եզրը Շիրազ-կարով զարթա՛րե:

Ես Արութինի ասած ե. ավալ-ախըր:

Արի խո՛սե, հասկանո՞ւմ իս փարանվար,  
Անփիր մարթուն թո՛ղ, ուստի ծեղըն պա՛չե,  
Փըլկած սիրտըն շի՛նե, փիրից փալըտ ա՛ռ,  
Ես փուչ կինքում չուրի ժեքըն դուզ քա՛լլե:

Կարթա փելն ու քափը, տառերն ամենան,  
Փանդով մըտի էշխըն, դարցի մե ասլան,  
Խե՛լոք եղի, մի՛ կորցրու ոչ մի բան,  
Զգուշ կացի՝ էշխի ծովըն լանգ կոնե:

Փիլթեն էշխըն է, լիով փիրն է աժիլ,  
Մարող օքրաքըս հուր-կըրակ է դարցիլ,  
Փուչ աշխարքեն շատ աշուղ է անց կացիլ,  
Փահրադըն սար ծեխսից, ամա բախս չուներ:

Մեջլումի պես փո՛ստ հաքի, դա՛րցի թալիփ,  
Էշիփ տունքս չավերես, ա՛սա մովսալիփ,  
Ըստամբոլ մինձ քաղաքին կոնին թարիփ,  
Փաղիշահի թախսի մոտ Ալա-Սովին է:

Փիր-սո՛վթան, իմ անշուք բելթին կըրա՞կ տու,  
Թևավուր խոսկ ունիս ու ծարտար լիզու,  
Սա՛յաթ-Նովա, սադափեն է սազըն քու,  
Փիրըն խոսկըտ կատարյալ կու դարցընե:

Ես Արութինի ասած ե. ավալ-ախըր: Մարտի 6-ին. քրոնիկոնի 441-ին (1753):

Ինչրու բազեն չանհետանա յիրգընքեն,  
Բաղը չի մըտնի գու, չի անի դա՛-դա՛,  
Ենդու համա արին գուքա իմ աշկեն,  
Վուր չիմ գըթում վերքիս համա մե ջարա:

Սիրտըս դադ կոնե՛ կըրծքիս տակ սեխմըված,  
Աչկըս փակ է՛ տարիներեն թուլացած,  
Չունքի ջուրըս ակունքեն է չուրացած,  
Գորոի նըման ինս միայն կու կըռկըռամ:

Զարթնեցրո՛ւ ինձ, պանկած իմ Փակուկի պես,  
Կրծքիս փա՛րքէ, Եշխնեմեն հարփած իմ ես,  
Թաք մի անգամ իմ դունեմեն մըտնիս ներս,  
Մեռնող սիրտըս նորածնի պես ծեն կու տա:

Յարիս նըստած տեղին ըլիմ լիս դուբբան,  
Շըշի վըրեն իմ լիրթըն կոնիմ բիրյան,  
Հընդու դալամքարին պետք չի նիշաստան,  
Դիմացկուն է, էլ փորցելու պետկ չըկա:

Ա՛փսուս, անցկացան իմ գոզալ տարիքըն,  
Արին-արցունքով ին աշկիրըս լիքըն,  
Բանդա Սա՛յաթ-Նովա, վո՞քն է քու միղոքըն.  
Մագար քիզի համա էլ մե ներում կա՞:

Էս թեջնիսն Արութինի ասած է. գրված է մարտի 8-ին, քրոնիկոնի 446-ին (1758):

Տարին բոլոր մինակ դուն իս լուս տալի,  
Ենդուր կոսին՝ հըրաշքի նըման իս դուն,  
Ուրիշ է թակի ու ուանգըն քու քարգահի,  
Վու՛ր մե յիրգի զար ու զարնըշան իս դուն:

Ծատ մարթերանց կոնիս սարեսար, գո՞զալ,  
Ծատի սիրտըն կու գըցիս ահզար, գո՞զալ,  
Թե հանդիքի քիզ մե յաղի յար, գո՞զալ,  
Կոսիս՝ թե մե արնուտ կախաղան իս դուն:

Նազանի յարին կու տեսնիս վաղ ծեցին,  
Յա՛ր, սազում է ալվան գոտին քու մեջքին,  
Արժանի չէ նաքազ մարթըն քու տեսքին,  
Արվ ու սիպտակ խառնող [աննըման իս դուն]:

Թեվուր ուրիշ մարթկանց մասին խոսկ ասիս,  
Խնքըտ պիտի նամուս-արըն պահպանիս,  
Վուչինչ չի կանա սուր նիտըն անիլ քիզ.  
Վըրետ քաշած ասլանի մորթ ունիս դուն:

Սա՛յաթ-Նովա, վո՞ւ քանդող իս, վո՞ւ շինոր,  
Յա՛մըր խոսե, լալիրըն քիզ լըսին թող,  
Քու թիկունքեն չի անցնի նիտըն ծակող.  
Քիզի կաշվէ փարով կու պաշտպանիս դուն:

Էս դոդաղդեգմա-թեջնիս է. Արութինի ասած. մայիսի 10-ին, քրոնիկոնի 446-ին (1758):

Աշախիք հաքնըվի, ու զարթարվիլ իս,  
Մեչկիտ կապիլ իս մե գոտի աննըման,  
Աշխըրքին լուս կու տաս, սիրուն-գոզալ իս,  
Մահշամալըտ գանձ է դառիլ պատվական:

Շատըն լալի պես մինչի մուտ չին ապրի,  
Կու կանգնին Հալապում, Շամին չին հասնի,  
Մորեխըն վառ շամի շուրջըն չի թըռչի,  
Չունքի կու տեսնե խիղճ փարվանին բիրլան:

Թող օղորմի ինձ, թող ըսպասե յարըն,  
Թող պահպանի նա իր աղաքն ու արըն,  
Թող բաղմանչին հսկե իր բաղի բարըն,  
Վուր բաղչեն չըմբտնի մե անսիրտ իսան:

Յիփոր նազլու յարըն գընա դիվանի,  
Հեր ու վուրթի գուլան, մերըն սուք կանի,  
Մահշամալըտ մարթու՝ խիլքըն կու տանի,  
Պտաբաց ման գուքա Փակլուկի նըման:

Աշախիք նաղշուն իս, պահե նաղշըն քու,  
Պըռոշըտ շաքար է, անուշ մեղր իս դու,  
Գերեզմանըն փո՞րիր էս Սալաթ-Նովու.  
Ինձ վըրա թող բացկին վարթիրըն ալվան:

Էս թեջնիսն Արութինի ասած է:

Արարիչըն զորութենով արից իր գործըն, նազա՞նի,  
Տարավ, դըրախտում հաստատից մարթ-արարաժին, նազա՞նի,  
Նըրա կողեմեն դուս քաշից խորհըրդատու կին, նազա՞նի,  
Դիվըն օց դառավ, շանց տըվեց իր ակըռքնիրըն, նազա՞նի,  
Տիրոշ պատվիրքըն մոռացան ու անիթվեցին, նազա՞նի:

Անիթվեց կինը՝ Յիվան,  
Նընգավ ծոցը գիշիրվան,  
Իրան հանձնեց չար դիվին,  
Դառավ Սատանի ծառան:

Ու նորից էն չար Սատանեն մարթկանց սըրտիրըն պըղտորեց,  
Յիփոր խարեն անցավ, Տերըն նոյին սարեն իշեցըրեց,  
Զըրիիդիլ կու գա աշխըռքին՝ իր ծենը նա իընչեցըրեց,  
Արթարներուն ազատ թողից, աշխըռքի միխսիրըն ջընչեց,  
Նորեն ծեն տըվեց՝ էլ միխսիր թող մարթիկ չամին, նազա՞նի:  
Մարթիկ էին միխսական  
Տիրոշ պատիժն ըստացան,  
Պայման կապեց Աստուծըն.  
Նըշան տըվից ծիածան:

Միվ օխչըրին շինից ծերմակ ու հաց ուզից իրիք անգամ,  
Քառասուն օր սոված մընաց՝ ըսպասեց, վուր դունադըն գա,  
Դիվըն չուրս կողմըն մուխ արից, խանգարիլ էր ուզում էնքան,  
Պոնաղն էկավ Խալիլի մոդ, ուզեց ինքը նըրա մանկան,  
Սառայի իհու զըրուց արից ու որոշեցին, նազա՞նի:

Որոշում արին սըրտանց,  
Սըպանիլ վուրթուն իրանց,  
Ազրախիլըն իիրզընքեն  
Օխչըրին տըվից նըշանց:

Էս գըլիւն Տեր-Արարիչըն մարթկանց համա մահ է դըրգել,  
Արի հա՛րց տու, դիվանա սի՛րտ, աշխըռքում ո՞վ է մընացել,

Ո՞վ է մընացել աշխըրքում, լիփոր մահվան չանգն է հընչել,  
Կոսին, թե Սկանդար-Զուլղարըն ծովեմնն խարջ է վերցըրել,  
Պըտուտ է եկել չուրս լանը, տիրել աշխըրքին, նազա՞նի:

Աշխըրքի տերը դառավ.  
Մահըն էկավ ու տարավ,  
Վուր իր ծիու հիդ գընա,  
Մահից իրավունք առավ:

Կա՞նչե Տիրոչըն օքնության, փա՛ռք տու էն արթար յիրգընքին,  
Պիտիս տանցի քու մարմինը, վուր լավ պահպանիս քու հոքին,  
Էն կինքում շատ հարցընող կա, հոքիտ կու դընին կըշեռցին,  
Դուն էլ ա՛պրի, Սա՛յաթ-Նովա, էլ մի՛ մընա ծովի լանգին,

Յիփոր վիրչին փողըն հընչե, սարիր կու հալչին, նազա՞նի:  
Մար ու քար քով կու դառնա,  
Դիվըն Շուլդով կու դառնա,  
Միղավուրըն վա՛յ կոնե,  
Մուրփ հոքին գով կու դառնա:

Մուխամմազ-բալաթի-դողաղդեգմա. Էսպես Արութինի ասած. լավս է. ապրիլի 1-ին, քոռ-  
նիկոնի 442-ին (1754):

109

Էնդու համա գըլխիս չիմ տալի, խիվ սի՛րտ,  
Վուր բափիա չըմընաց, էլ ո՞ա միղ դընես,  
Շատ-շատիրըն գըլխի չընգան մինչև վիրչ,  
Իզն ու թոզն էլ չըկա, անցան աշխարես:

Լավ աշուղըն անգիր կոսե երք ու խաղ,  
Ի՞նչ քաղաք է՝ չուրս յանն ունե հազար թաղ,  
Յիրգընքի դիղն էլ ինձ չի օքնե, ա՛վաղ,  
Կո՛չ իմ խուցըն կու բուժե, վո՛չ էլ յարես:

Սուտասանն ու կընիկըն թեթև կովին,  
Կընիկըն շուտ կու ծերացնե իգիթին,  
Ամեն գործում անպակաս է չար դարին.  
Յիս էլ սարը կու ծեխկիմ Փակրադի պէս:

Թեվուր գոռող, գըլոխգովան մարթ է նա.  
Գուգե դադա ըլի, ինձ չի հասկանա,  
Թե անգետ է, իմաստըն վո՞ւնց իմանա.  
Կո՛չ Լելլու Սեջում իմ, վո՛չ էլ յար եմ ես:

Կարթացողնիրըն գըրածըս կիմանան,  
Հանցագործ իմ, թաթախված մեչըն արյան,  
Սա՛յաթ-Նովա, մե աշկիրտ իս բանդիկան,  
Կո՛չ ոռոքալի-քառյակ, վո՛չ էլ բեյթ գիրես:

Էս լավ թեջնիս է:

Ասծուց մե շող իչավ սարին ու քարին.  
Զըվառվեցին են անտառնիրըն. ինչի՞,  
Տերըն Մովսեսին օրենքնիր թելադրից.  
Զենթարկվեցին սիվէրեսնիրըն. ինչի՞:

Սարն ու քարըն հայր Աթամի ջուրաթն է,  
Են շողըն էլ մինձ Հիսոսի ղըվաթն է,  
Անտառըն էլ կուս Մարիամի սուրաթն է,  
Զին հավատա շիմացոլնիրըն. ինչի՞:

Գըրած է սա ու հայտնի է սուրփ գըրքից,  
Սարում Մովսեսըն պըղընծեն օց սարքից,  
Զախ կողմեն աչ խաչի նըշանըն կընքից.  
Զին հասկանա անհավատնիրըն. ինչի՞:

Միղավուրըն ինչի՞ գըլխին վայ չի տա,  
Արյան մեշ էլ արթարին արատ չըկա,  
Ովոր Հիսուս Աստըզուն չի հավատա,  
Լիզուն լալկվի. նա ամոթ չունի. ինչի՞:

Ավիտարանում մարքարիտ խոսկիր ին,  
Էնդու համա իմ գըլուխըս կորցըրիլ,  
Սայաթ-Նովեն Զանգլու-փիրիցն է խըմիլ.  
Էնդուր վեջըն չէ վուչ մե բանըն. ինչի՞:

Էսպես Քրիստոսին աստված ծանաշելու մասին վարսաղ է. Արութինի ասած. հունիսի  
10-ին, քրոնիկոնի 446-ին (1758):

Աշխարն ո՞ւմն է մընացիւ, ո՞ւմ կու մընա,  
Ո՞ւր է Զանգի-փիրի տըված ադաբըն,  
Ո՞ւր է փիր-ուստաղըն, ո՞ւր է փիրզադեն,  
Ո՞ւր է մարթկանց միջի են ազնիվ կապըն:

Ո՞ւր է քաջըն, վուր Միպտակ ոիվին սպանեց,  
Ո՞ւր է յարքարեն, վուր սուրփ գիրըն շարեց,  
Ո՞ւր է նա, վուր գութանով ծովըն վարեց,  
Տասներկու իմամի թագն ու պարծանքըն:

Ո՞ւր է Ռոստոմըն, ո՞ւր է զորքը նըրա,  
Ո՞ւր է ուաշ ծին, վուր թըոցընում էր նըրան,  
Ո՞ւր են յարին ու աշուղնիրն իսկական,  
Ո՞ւր է Շիրինն ու սար ծեղկող Փահրահըն:

Ո՞ւր է էն զըրուցըն, ու՞ր է էն հայան,  
Ու՞ր է արթար դադաստան ու հըրաման,  
Ո՞ւր է էն սարվանըն, ո՞ւր է էն արըն:

Ո՞ւր է էն խայիփըն, մինձ տերըն ո՞ւր է,  
Վուր կառուցեց քոշկ-սարայնիրըն, ո՞ւր է,  
Սահիբ-դիրան արքա Նադիրըն ո՞ւր է,  
Ո՞ւր է, Սայաթ-Նովա, Ասծուն նայողըն:

Էսպես վարսաղ, Արութինի իրամալած (\*)

112

Խիվ սի՞րտ, շիկացած խարանով իս փորցվել,  
Հայա-նամուսով, աղաբ-արով խո՞սի,  
Ես աշղութինըն քիզի դարդ է դարցել,  
Բայի պես լող տու, արաբերեն խո՞սի:

Ես թեջիս Արութինի ասած ե:

113

Այգանեն իշնող յա՞ր, նա՞իր դարբասին,  
Դուն դարիք սիրող իս, լիս՝ դարիք դոնաղ,  
Թու եշխեն հիվանդ իմ, քրտինքս է հոսում,  
Փա՛ռ Ասծու, վուր լիս քի տեսա սափ ու սաղ:

Ես Արութինի ասած ե. յարանա:

114

Ղեմքըն սիմպուկ փարդով Շածկող Տերն ա՛րթար  
Կու ողորմա աշխաթիքին, կու գըոգօռա.  
Սուր կեծակով, կու խըփե Սատանին չար,  
Սընունդ կու տա՛ անձրիվըն կու չըռչըռա:

Ես ավալ-ախըր ե. Արութինի ասած ե:

115

Տերն իր զորութենով ըստեղծից մարթուն,  
Ըստեղծից լուս, Աթամին լուս, կինը լուս,  
Սիվ Սատանն էն օցի ծիվն ընթունից,  
Կերցըրեց նուռ, պըտուղըն նուռ, հատըն նուռ:

Ես Արութինի ասած ե. հաղանա-ուչլամա:

116

Անգած մի՛ կալ անփորցին ու անգետին,  
Գիտելիքըն չունքի ըլնում է ջաբրով,  
Թե գուզիս, վուր հայտնի ըլնիս աշխըրքին,  
Ի՞նաց կաց, վուր լավըն ըլնում է աբրով:

Ես Արութինի ասած ե. օգությամա-յարանա:

117

Արթար Տերըն կարքի բերից աշխարքըն,  
Ազրալիլըն վիրեն գըլորից դիվին,  
ազատվից հոքին,  
Արթար հոքինիրըն ընգան դըրախտըն,  
Տես վո՛նց հաստատ մընաց Խալին իր ովստին,  
դիմացավ ծոմին:

<sup>1</sup> Ես Արութինի ասած ե. ով որ կարդա, օղորմի ասի: Ես ովսեգ-դոդաղդեգմա ե. Արութինի  
ասած ե:

253

## ՀԱՎԵԼՎԱԾ

1 (118)

Նազլու յարից խաբար էկավ, թե «Ել չիմ սիրի», կոսե.  
«Աչկը լալով մողըս էլ գա, արտսունքին տեր չիմ», կոսե:  
«Թաքուն պահած սըրտիս սիրըն չավ է արել աշխարին՝  
Ել չիմ հիշի, էլ չիմ խըղծա, թող գընա կորչի», կոսե:

Ունքիր ունե լարած անիդ, թերթերուկըն մե-մե նիտ,  
Հիռու տիղըն սելր է անում, մոդ չէ գալիս ինձ մե հիդ.  
Ե՛յ աղանիր, դարդ իմա՛ցող, ես ջա՛նանին մե մըտիկ,  
Աստծու բարուկըն տալիս էլ՝ «Դրան էլ կարոտ չիմ», կոսե:

Սիրուց գըժված բըլբովի պես, դոշիս խուցիր շարած է.  
Ես աշխարի գոզալսերու սիրտըն կոսիս քարած է.  
Թե իմանաք, Սայաթ-Նովեն եշխեն երած, կորած է.  
Աղաչեցի, թե խըղծի գա՝ «2Ե՛, ու ծանոթ չիմ», կոսե:

2 (119)

Դա՛դ քու ծեռին, ա՛յ անխիղօ փա՛րի,  
Աշաբ դուն չի՛ս հուրիան-բիրյան անողըն.  
Թաքուն լիս մաշվում իմ էս ահուզարից,  
Աշաբ դուն չի՛ս սիրըս բայան անողըն:

Իմ վաթանից, ժողովուրթից գըրգեցիր,  
Շամփես հիռու, օտար յիրգիր գըցեցիր,  
Հասակըս ծըմբրեցիր, մեշկըս ծըկեցիր,  
Աշաբ դուն չի՛ս բոլըս քաման անողըն:

Մեշլումի պես ա՛յս իմ քաշում չոլիրում,  
Փահրաղի պես դաստան էլա խաղիրում,  
Սայաթ-Նովուն չոր-անապատ տեղիրում,  
Դուն չի՛ս, աշաբ, խիղօ փերիշան անողըն:

### 3 (120)

Փորցված վարպետներու մոդ մե ծառա իմ,  
Խիղճ ու դեվեր մարթկանց հարգողներից իմ.  
Թեվուր խալխին հասնե՝ կատարյալ իմ լիս.  
Սովորողին ուսում տըվողներից իմ:

Իգիթ մարթըն խոսկըն էրեսին կոսե.  
Էշխի ծովըն մըտնողըն խուր կու սուզկե.  
Դարդըս շատ է՝ մինչ հարուրի կու հասնե՝  
Սիրտըս կոտրած, կինքըս զոհողներից իմ:

Միրք առնելուս դըրուստ դադըն ծանանչիր.  
Ասգին քարի դըրուստ հատըն ծանանչիր.  
Սա՛յաթ-Նովա, փիր-ուստադըն ծանանչիր.  
Խըրատ տըվող-ուշկի բերողներից իմ:

Թեշնիս

### 4 (121)

Եշխի գերի իմ դառի լիս մե նովչիվանի սիրու,  
Խումար աչկով, նիտ թարթիչով, ունքըն քամանի սիրու.  
Բըլբովի պես փախս իմ տըվի մե գուլխանդանի սիրու,  
Դոշը մարմար, բոյով չինար, ծոցըն գուշանի սիրու:

Խաչըս ամոթի է փոխվիլ՝ փահմըս կորած սար իմ լիս,  
Յարիմեն էս մուտը քաշած, նամուս, դելրաթ, ար իմ լիս.  
Թուշար դառա, ցավ դադեցի՝ անփուր խըրիդդար իմ լիս,  
Դարդ ու ցավին ընգիր դառա ափաթ-դովրանի սիրու:

Էս վըրաց թավադներու մեչ ջիվան կինքըս մաշեցի.  
Էս սիվասիրտ լարի ծեռին արուն-արտսունք թափեցի.  
Անարկվածի նըշան ծակտիս, խալխի նամուս քաշեցի,  
Սալաթ-Նովեն իմ բանաստեղծ՝ ռահմի-ջանանի սիրու:

**5 (122)**

Գիշեր-ցերեկ ա՛խ իմ քաշում խըղծալի,  
Ով կու տեսնե, կոսե՝ սա ի՞նչ զա՞յիլ է.  
Չիմացողնիրըն վա՛շ կոնին ինձ ամա.  
Չին ասի, թե մե գոզալով մայիլ է:

Պաղատեցի, անգած չարեց իմ խոսքին,  
Ասի՝ ա՛փսուս իմ, վիրչ մի՛ տա իմ կինքին,  
Մե հըրիշտակ էկավ առնի իմ հոքին.  
Աչկով-ունքով Գաբրիել, Միքայիլ է:

Յիս բախչեքի սիրահար իմ նովջիվան,  
Ռաստ է անում ինձ ետ յաղին անիման...  
Սայաթ-Նովեն, յա՛ր, քու դուզն է հավիտյան,  
Ինչ էլ ասիս, նա քիզ հավան-դայիլ է:

**6 (123)**

Յաղին գաղտնիք չասիս, հի՛ռու նամարդեն,  
Մե օր շառ-փորցանքի մեջ կու գըցին քիզ,  
Թեվուր աչկ չըղընիս ուրիշի մալին,  
Քոշկ ու սարայնիրըն կու պարքիվին քիզ:

Առավոտ, իրիգուն փառք տու անդաթար,  
Ինչքան էլ բանցրանաս, էլի նա՛յե վար,  
Յիրգինքըն քու հերն է, հողըն է քիզ մալր,  
Ցած կիշնե քիզի մոր, նա կու գըրկե քիզ:

Կապիրըտ մի՛ կըտրե իիդ ազնիվ մարթու,  
Եղնես խոսողին շատ մի՛ լըսե դու,  
Հանգիստ քընած օցի պոչըն մի՛ կոխ տու,  
Հանգարծ շոտ գուքա նա ու կու կըժի քիզ:

Շատ հարգանք ու պատիվ արա Շերերին,  
Օղորմութին արա խիղճ նաշարներին,  
Լավ ծառա՛յե, օ՛քտ դարիբ-հյուրերին.  
